Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

208.21
U-79

23 SEP 2009
15 FEB 2013
506-Աւ
208.21
Ա-79

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
1004
19586

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1905—ՌՅԾԴ

15 FEB 2013
3823

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ՆԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մատթէոսի գրեալ է, զի ինքն Մատթէոս աշակերտ Տեառն գրեաց զաւետարանս զայս եւ պատմէ մեզ ի սկզբանն զըստ մարմնոյ ծնունդ Փրկչի ի զաւակէ Դաւթի. վասն որոյ եւ զազգահամարն ժողովէ մինչեւ ի Քրիստոս՝ ազգս քառասուն եւ երկու, Բերէ ըստ կարգի եւ զմկրտութիւնն Յովհաննու, եւ ի լերինն ի դիւաց զփորձութիւն, եւ նշանս եւ զարուեստս մեծամեծս ի Փրկչէն եղեալ. եւ զընտրութիւն աշակերտացն, եւ վասն խորհրդոյ մատնութեանն. եւ զկատարածն, զի մատնեցաւ Պիղատոսի, եւ խաչեցաւ մարմնով, եւ մարմինն եդաւ ի նոր գերեզմանի, եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. Նոյն եւ զերրորդ աւուր յարութիւնն. եւ զպատուէր աշակերտացն՝ աշակերտել զա-

մենայն հեթանոսս եւ մկրտել զնոսա· պատուիրեաց լինել ընդ նոսա զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի։

Մատթէոս գրեաց զաւետարանս իւր յԵրուսաղէմ քաղաքի[41] ի լեզու եբրայեցի· զկնի ութ ամի համբառնալոյ Փրկչին՝ ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղէմի։

Մատթէոս թարգմանի՝ Երգ կենաց։

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

	Գլ.	հմր.
Վասն մոգուցն . .	Բ	1
Վասն կոտորածի մանկանցն .	Բ	16
Վասն յառաջընթաց քարոզութեանն Յովհաննու Մկրտչին .	Գ	1
Վասն վարդապետութեան Փրկչին	Դ	23
Վասն երանութեանց . .	Ե	2
Վասն բորոտին . .	Ը	2
Վասն հարիւրապետին .	Ը	5
Վասն զոքանչին Պետրոսի .	Ը	14
Վասն բժշկութեան ամենայն ցաւոց	Ը	16
Վասն՝ որ ոչ ետ հրաման երթալ զկնի . .	Ը	19
Վասն սաստելոյն ի վերայ ջուրցն	Ը	26
Վասն դիւահարացն . .	Ը	28
Վասն անդամալուծին .	Թ	2
Վասն Մատթէի .	Թ	9
Վասն դստեր ժողովրդապետին	Թ	18
Վասն տեռատեսին .	Թ	20

Վասն երկուց կուրացն . Թ 27
Վասն խօսլ և համր դիւահարին Թ 32
Վասն առաքելոցն իշխանութեան Ժ 1
Վասն առաքելոյն ի Յովհաննէ ԺԱ 2
Վասն՝ որոյ ձեռն գօսացեալ էր ԺԲ 10
Վասն կոյր և համր դիւահարին ԺԲ 22
Վասն՝ որ խնդրէին նշանս . ԺԲ 38
Վասն առակացն . . ԺԳ 3
Վասն Յովհաննու և Հերովդի ԺԴ 1
Վասն հինգ հացին . . ԺԴ 17
Վասն երթալոյն ի վերայ ծովուն ԺԴ 22
Վասն անցելոյն զպատուիրանաւն Աստուծոյ . . . ԺԵ 3
Վասն կնոջն քանանացւոյ . ԺԵ 22
Վասն բժշկելոյ զժողովուրդն ԺԵ 30
Վասն եօթն հացին . . ԺԵ 32
Վասն խմորոյ փարիսեցւոցն . ԺԶ 6
Վասն՝ որ ի Կեսարիա հարցմանն ԺԶ 13
Վասն այլակերպութեան Տեառն ԺԷ 1
Վասն լուսնահարին . . ԺԷ 14
Վասն խնդրելոյ զերկդրամեանն ԺԷ 23
Վասն հարցանելոյ՝ թէ ո՞ է ի մէնջ մեծ . . . ԺԸ 1
Վասն առակի հարիւր ոչխարին ԺԸ 12
Վասն թողլոյ զբիւր քանքարն ԺԸ 24
Վասն անցանելոյն, թէ արժան է

արձակել առն զկին . ԺԹ 3
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս . . . ԺԹ 16
Վասն վարձկանութեան մշակացն Ի 1
Վասն որդւոյն Զեբեդեայ Ի 20
Վասն երկուց կուրացն . Ի 30
Վասն իշոյն և յաւանակին . ԻԱ 1
Վասն կուրացն և կաղացն . ԻԱ 14
Վասն չորանալոյ թզենւոյն . ԻԱ 18
Վասն հարցանելոյ զՏէրն քահանայապետացն և ծերոց . ԻԱ 23
Վասն երկուց որդւոյն առակաց ԻԱ 28
Վասն որդւոյն առակի . ԻԱ 33
Վասն կոչելոց ի հարսանիսն . ԻԲ 3
Վասն դահեկանին, որով փորձեցին զՏէրն . . . ԻԲ 18
Վասն Սադուկեցւոցն . . ԻԲ 23
Վասն օրինականացն . . ԻԱ 34
Վասն Տեառն հարցանելոյն զփարիսեցիսն . . . ԻԲ 41
Վասն վայ տալոյ դպրացն և փարիսեցւոց . . . ԻԳ 13
Վասն կատարածի . . ԻԴ 3
Վասն աւուրն և ժամուն . ԻԴ 36
Վասն տասն կուսանացն . ԻԵ 1
Վասն զտաղանդսն տալոյ . ԻԵ 14

Վասն զալստեանն Տեառն . ԻԵ 31
Վասն օծանելոյ զՏէրն իւղով ԻԶ 9
Վասն պատրաստելոյ զպասէքն ԻԶ 17
Վասն հաղորդութեան խորհրդոյն ԻԶ 26
Վասն մատնութեան Տեառն . ԻԶ 47
Վասն ուրացութեանն Պետրոսի ԻԶ 69
Վասն Յուդայի զղջմանն . ԻԷ 3
Վասն խնդրելոյ զՏէրունական մարմինն . . . ԻԷ 57
Վասն իւղաբեր կանանց . ԻԸ 1

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ

ՄԱՏԹԷՈՍԻ

---

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիս-
տոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրա-
2 համու: Աբրահամ ծնաւ զԻսահակ,
Իսահակ ծնաւ զՅակոբ, Յակոբ
3 ծնաւ զՅուդա եւ զեղբարս նորա:
Յուդա ծնաւ զՓարէս եւ զԶարա ի
Թամարայ, Փարէս ծնաւ զԵզրոմ,
4 Եզրոմ ծնաւ զԱրամ: Արամ ծնաւ
զԱմինադաբ, Ամինադաբ ծնաւ զՆա-
5 ասոն, Նաասոն ծնաւ զՍաղմոն:
Սաղմոն ծնաւ զԲոոս ի Ռաքաբայ,
Բոոս ծնաւ զՈվբէդ ի Հռութայ,
Ովբէդ ծնաւ զՅեսսէ, Յեսսէ ծնաւ
6 զԴաւիթ արքայ: Դաւիթ արքայ ծնաւ
7 զՍողոմոն ի կնոջէն Ուրիայ: Սողո-
մոն ծնաւ զՌոբովամ, Ռոբովամ ծնաւ

8 զԱբիա, Աբիա ծնաւ զԱսափ. Ասափ
ծնաւ զՅովսափատ, Յովսափատ ծնաւ
9 զՅովրամ, Յովրամ ծնաւ զՕզիա: Օզիա
ծնաւ զՅովաթամ, Յովաթամ ծնաւ
10 զԱքազ, Աքազ ծնաւ զԵզեկիա: Եզե-
կիա ծնաւ զՄանասէ, Մանասէ ծնաւ
11 զԱմոն, Ամոն ծնաւ զՅովսիա: Յով-
սիա ծնաւ զՅեքոնիա և զեղբարս
նորա առ գերութեամբն Բաբելացւ-
12 ոց: Յետ գերութեանն Բաբելացւոց
ծնաւ Յեքոնիա զՍաղաթիէլ. Սաղա-
13 թիէլ ծնաւ զԶօրաբաբէլ: Զօրաբաբէլ
ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵ-
ղիակիմ, Եղիակիմ ծնաւ զԱզովր:
14 Ազովր ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ
15 զԱքիմ, Աքիմ ծնաւ զԵղիուդ: Եղիուդ
ծնաւ զԵղիազար, Եղիազար ծնաւ
զՄատթան, Մատթան ծնաւ զՅա-
16 կովբ: Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն
Մարեմայ՝ որում խօսեցեալ զՄարիամ
կոյս, յորմէ ծնաւ Յիսուս, որ անուա-
17 նեալ Քրիստոս: Արդ՝ ամենայն
ազգքն յԱբրահամէ մինչև ի Դաւիթ՝
ազգք չորեքտասանք. և ի Դաւթէ
մինչև ի գերութիւնն Բաբելացւոց
ազգք չորեքտասանք. և ի գերութե-

նէն Բաբելացւոց մինչև ի Քրիստոս՝
ազգք չորեքտասանք:
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր
այսպէս: Խօսեցեալ զմայր նորա Մա-
րիամ Յովսեփու, մինչև եկեալ առ
միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն
19 սրբոյ: Եւ Յովսէփ այր նորա, քանզի
արդար էր, և ոչ կամեցաւ առակել
զնա, խորհեցաւ լռելեայն արձակել
20 զնա: Եւ մինչդեռ նա զայս ածէր
զմտաւ, ահա հրեշտակ տեառն ի
տեսլեան երևեցաւ նմա՝ և ասէ.
Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր
առնուլ առ քեզ զՄարիամ կին քո,
քանզի որ ի նմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն
21 սրբոյ է: Ծնցի որդի, և կոչեսցես զա-
նուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ
զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց:
22 Այլ այս ամենայն եղև, զի լցցի որ
ասացաւն ի Տեառնէ ի ձեռն Եսայեայ
23 մարգարէի: Ահա կոյս յղասցի և ծնցի
որդի, և կոչեսցեն զանուն նորա
Էմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ
24 Աստուած: Եւ զարթուցեալ Յովսէփ
ի քնոյ անտի՝ արար որպէս հրա-
մայեաց նմա հրեշտակն Տեառն, և առ

25 յինքն զկինն իւր։ Եւ ոչ գիտէր զնա,
մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ.
և կոչեաց զանուն նորա Յիսուս։

ԳԼՈՒԽ Բ.

1 Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթ-
ղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի
արքայի, ահա մոգք յարևելից եկին
2 յԵրուսաղէմ, և ասեն. Ո՞ւր է որ
ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք
զաստղն նորա յարևելս, և եկաք
3 երկիրպագանել նմա։ Եւ իբրև լուաւ
արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, և ա-
4 մենայն Երուսաղէմ ընդ նմա։ Եւ
ժողովեալ զամենայն զքահանայա-
պետս և զդպիրս ժողովրդեանն, հար-
ցանէր ի նոցանէ, թէ ուր ծնանիցի
5 Քրիստոսն։ Եւ նոքա ասեն ցնա. ի
Բեթղեհէմ Հրէաստանի. զի այսպէս
6 գրեալ է ի ձեռն մարգարէին։ Եւ դու
Բեթղեհէմ երկիր Յուդայ, ոչինչ
կրտսեր ես յիշխանս Յուդայ. ի քէն
ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժո-
7 ղովուրդ իմ զԻսրայէլ։ Յայնժամ

Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և
ստուգեաց ի նոցանէ զժամանակ
8 աստեղն երևելոյ։ Եւ արձակեաց զնոսա
ի Բեթղեհէմ, ասէ. գնացէք, ստուգե-
ցէք վասն մանկանն, և յորժամ գտա-
նիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի և ես
9 եկեալ երկիրպագից նմա։ Եւ նոքա
իբրև լուան ի թագաւորէն՝ գնացին.
և ահա աստղն՝ զոր տեսին յարևելս՝
առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ
եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն։
10 Իբրև տեսին զաստղն, խնդացին յոյժ
11 ուրախութիւն մեծ։ Եւ իբրև մտին ի
տուն, տեսին զմանուկն հանդերձ
Մարիամաւ մարբն իւրով. և անկեալ
երկիրպագանէին նմա. և բացեալ
զգանձս իւրեանց, մատուցին նմա
պատարագս, ոսկի և կնդրուկ և
12 զմուռս։ Եւ հրաման առեալ ի տես-
լեան չդառնալ անդրէն առ Հերովդէս,
ընդ այլ ճանապարհ գնացին յաշ-
13 խարհն իւրեանց։ Եւ իբրև գնացին
նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն
երևէր ի տեսլեան Յովսեփու և ասէր.
արի՛ առ զմանուկն և զմայր իւր՝ և
փախիր յԵգիպտոս, և անդ լինիջիր

ցորժամ ասացից քեզ. քանզի ի
խնդիր է Հերովդէս կորուսանել զմա-
14 նուկդ։ Եւ նա յարուցեալ առ զմա-
նուկն և զմայր իւր ի գիշերի՝ և գնաց
յԵգիպտոս, և անդ էր մինչև ցվախճան
15 Հերովդի։ Զի լցցի ասացեալն ի Տեառ-
նէ ի ձեռն մարգարէին որ ասէ. յԵ-
16 գիպտոսէ կոչեցի զորդի իմ։ Յայնժամ
իբրև ետես Հերովդէս թէ խաբեցաւ
ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և
առաքեաց կոտորեաց զամենայն ման-
կունս, որ էին ի Բեթղեհէմ և յա-
մենայն սահմանս նորա՝ յերկեմենից
և ի խոնարհ, ըստ ժամանակին զոր
17 ստուգեաց ի մոգուցն։ Յայնժամ կա-
տարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիայ
18 մարգարէի որ ասէ։ Ձայն գուժեաց
ի Հռամայ, ողբումն և լալումն և
աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զոր-
դիս իւր, և ոչ կամէր մխիթարել՝ զի
19 ոչ էին։ Եւ ի վախճանելն Հերովդի,
ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան
երևէր Յովսեփայ յԵգիպտոս և
20 ասէր. արի առ զմանուկդ և զմայր
իւր, և գնա յերկիրն Իսրայէլի. զի
մեռան որ խնդրէին զանձն մանկանդ։

21 Եւ նա յարուցեալ առ զմանուկն և
զմայր նորա, և եկն յերկիրն Իսրա-
22 յէլի։ Եւ իբրև լուաւ եթէ Արքեղայոս
թագաւորեաց Հրէաստանի փոխանակ
Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ
անդր. և հրաման առեալ ի տեսլեան,
23 գնաց ի կողմանս Գալիլեացւոց։ Եւ
եկեալ բնակեցաւ ի քաղաքին՝ որ
կոչէր Նազարեթ. զի լցցի բան մար-
գարէիցն, թէ Նազովրեցի կոչեսցի։

ԳԼՈՒԽ Գ.

1 Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհան-
նէս Մկրտիչ քարոզել յանապատին
2 Հրէաստանի։ Եւ ասէ. ապաշխարե-
ցէք՝ զի մերձեալ է արքայութիւն
3 երկնից։ Զի սա է՝ վասն որոյ ասա-
ցաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ
ասէ. ձայն բարբառոյ յանապատի,
պատրաստ արարէք զճանապարհ
Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս
4 նորա։ Եւ ինքն Յովհաննէս ունէր
հանդերձ ի ստեւոյ ուղտու, և գօտի
մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր

նորա էր մարախ և մեղր վայրենի։
5 Յայնժամ ելանէին առ նա ամենայն
Երուսաղէմացիք և ամենայն Հրէաս-
տան և ամենայն կողմն Յորդանա-
6 նու։ Եւ մկրտէին ի նմանէ ի Յորդա-
նան գետ, և խոստովան լինէին զմեղս
7 իւրեանց։ Եւ տեսեալ զբազումս ի
սադուկեցւոցն և ի փարիսեցւոց
եկեալս ի մկրտութիւն նորա՝ ասէ
ցնոսա. ծնունդք իժից, ո՞ ցուցց ձեզ
փախչել ի բարկութենէն որ գալոց է։
8 Արարէք այսուհետև պտուղ արժանի
9 ապաշխարութեան։ Եւ մի համարի-
ջիք ասել յանձինս՝ թէ ունիմք մեք
հայր զԱբրահամ. ասեմ ձեզ, զի կա-
րող է Աստուած ի քարանցս յայս-
ցանէ յարուցանել որդիս Աբրահամու։
10 Զի ահաւասիկ տապար առ արմին ծա-
ռոց դնի. ամենայն ծառ՝ որ ոչ առնիցէ
զպտուղ բարի, հատանի և ի հուր
11 արկանի։ Ես մկրտեմ զձեզ ջրով
յապաշխարութիւն, բայց որ զկնի իմ
գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես
չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա.
նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին սուրբ
12 և ի հուր։ Որոյ հեծանոցն ի ձեռին

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная библиотека
7/XI - 1922
1004
19586

իւրում, և արբեսցէ զկալ իւր, և ժո-
ղովեսցէ զցորեանն ի շտեմարանս
իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով։
13 Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի
Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել
14 ի նմանէ։ Եւ Յովհաննէս արգելու
զնա և ասէ. ինձ պիտոյ է ի քէն
15 մկրտել, և դու առ իս գաս։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնա. թո՛յլ
տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ
լնուլ զամենայն արդարութիւն. և
16 ապա թոյլ ետ նմա։ Եւ իբրև մկրտե-
ցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ
անտի. և ահա բացան նմա երկինք,
և ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր
իբրև զաղաւնի և գայր ի վերայ նորա։
17 Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր, դա՛ է
որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ։

ԳԼՈՒԽ Դ.

1 Յայնժամ վարեցաւ Յիսուս յա-
նապատ ի Հոգւոյն՝ փորձել ի սատա-
2 նայէ։ Եւ պահեալ զքառասուն տիւ
և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ։

3 Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա.
եթէ որդի ես Աստուծոյ՝ ասա զի
4 քարինքս այսոքիկ հաց լինիցին։ Նա
պատասխանի ետ և ասէ. գրեալ է,
թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ,
այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի
5 բերանոյ Աստուծոյ։ Յայնժամ առեալ
ածէ զնա սատանայ ի քաղաքն սուրբ,
և կացուցանէ զնա ի վերայ աշտա-
6 րակի տաճարին։ Եւ ասէ ցնա. եթէ
Որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ աստի
ի վայր. զի գրեալ է, թէ հրեշտակաց
իւրոց պատուիրեալ է վասն քո, և
ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի
մի երբեք հարցես զքարի զոտն քո։
7 Ասէ ցնա դարձեալ Յիսուս. գրեալ է,
թէ ոչ փորձեսցես զՏէր Աստուած
8 քո։ Դարձեալ առնու ածէ զնա սա-
տանայ ի լեառն մի բարձր յոյժ, և
ցուցանէ նմա զամենայն թագաւո-
րութիւնս աշխարհի և զփառս նոցա։
9 Եւ ասէ ցնա. զայս ամենայն քեզ
տաց՝ եթէ անկեալ երկիրպագանիցես
10 ինձ։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս.
Երթ յետս իմ սատանայ. զի գրեալ
է, Տեառն Աստուծոյ քում երկիր-

պագցես, և զնա միայն պաշտեսցես։
11 Ապա եթող զնա սատանայ, և ահա
հրեշտակք մատեան և պաշտէին զնա։
12 Եւ իբրև լուաւ Յիսուս՝ եթէ Յով-
հաննէս մատնեցաւ, մեկնեցաւ գնաց
13 ի Գալիլեա։ Եւ թողեալ զՆազարէթ,
եկն բնակեցաւ ի Կափառնաում ի
ծովեզերին, ի սահմանս Զաբուղոնի
14 և Նեփթաղիմայ։ Զի լցցի բանն՝ որ
ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի։
15 Երկիր Զաբուղոնի և երկիր Նեփ-
թաղիմայ՝ ճանապարհ ծովու՝ յայն-
կոյս Յորդանանու, Գալիլեա հեթա-
16 նոսաց։ Ժողովուրդ՝ որ նստէր ի խա-
ւարի՝ ետես լոյս մեծ. և որոց նստէին
յաշխարհին և ի ստուերս մահու՝ լոյս
17 ծագեաց նոցա։ Յայնմհետէ սկսաւ
քարոզել Յիսուս և ասել. ապաշխա-
րեցէք, զի մերձեալ է արքայութիւն
18 երկնից։ Մինչդեռ գնայր Յիսուս
ընդ եզր ծովուն Գալիլեացւոց, ետես
երկուս եղբարս՝ զՍիմոն զկոչեցեալն
Պետրոս, և զԱնդրէաս եղբայր նորա՝
արկեալ ուռկան ի ծով, քանզի ձկնորսք
19 էին։ Եւ ասէ ցնոսա. եկայք զկնի իմ,
և արարից զձեզ որսորդս մարդկան։

20 Եւ նոքա թողեալ վաղվաղակի ըզ-
21 գործիսն, գնացին զհետ նորա։ Եւ
մատուցեալ անտի յառաջ՝ ետես այլ
երկուս եղբարս, զՅակովբոս Զեբե-
դեայ և զՅովհաննէս զեղբայր նորա
ի նաւի՝ Զեբեդեաւ հանդերձ հարբն
իւրեանց, մինչ կազմէին զուռկանս
22 իւրեանց, և կոչեաց զնոսա։ Նոքա
թողեալ վաղվաղակի զնաւն և զհայրն
23 իւրեանց, գնացին զհետ նորա։ Եւ
շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն
Գալիլեացւոց, ուսուցանէր ի ժողո-
վուրդս նոցա՝ և քարոզէր զաւետա-
րանն արքայութեան, և բժշկէր զա-
մենայն հիւանդութիւնս և զամենայն
24 ախտս ի ժողովրդեանն։ Եւ ել լուր
նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց,
և մատուցին առ նա զամենայն հի-
ւանդս, որ նեղեալ էին ի պէս պէս
ցաւս և ի տանջանս, և զդիւահարս
և զլուսնոտս և զանդամալոյծս, և
25 բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ
նորա ժողովուրդք բազումք ի Գալի-
լեէ և ի Դեկապօլեայ և յԵրուսաղեմէ
և ի Հրէաստանէ, և յայնկոյս Յոր-
դանանու, և բժշկեաց զնոսա։

ԳԼՈՒԽ Ե.

1 Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի
լեառն. և իբրև նստաւ անդ՝ մատեան
2 առ նա աշակերտքն նորա։ Եւ բացեալ
զբերան իւր ուսուցանէր զնոսա, և
3 ասէր։ Երանի աղքատաց հոգւով, զի
4 նոցա է արքայութիւն երկնից։ Երանի
սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։
5 Երանի հեզոց, զի նոքա ժառանգես-
6 ցեն զերկիր։ Երանի որ քաղցեալ և
ծարաւի իցեն արդարութեան, զի
7 նոքա յագեսցին։ Երանի ողորմածաց,
8 զի նոքա ողորմութիւն գտցեն։ Երանի
այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի
9 նոքա զԱստուած տեսցեն։ Երանի
խաղաղարարաց, զի նոքա որդիք
10 Աստուծոյ կոչեսցին։ Երանի որ հա-
լածեալ իցեն վասն արդարութեան,
զի նոցա է արքայութիւն երկնից։
11 Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն
զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զա-
մենայն բան չար զձէնջ սուտ վասն
12 իմ։ Ցնծացէք և ուրախ լերուք, զի
վարձք ձեր բազում են յերկինս. զի

այսպէս հալածեցին զմարգարէսն, որ
13 յառաջ քան զձեզ էին։ Դուք էք աղ
երկրի. ապա թէ աղն անհամի՝ իւ-
յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այնուհե-
տեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս, եւ
14 կոխան լինել ի մարդկանէ։ Դուք էք
լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաք-
15 չել՝ որ ի վերայ լերին կայցէ։ Եւ ոչ
լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուա-
նաւ, այլ ի վերայ աշտանակի, եւ լոյս
տայ ամենեցուն՝ որք ի տանն իցեն։
16 Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր ա-
ռաջի մարդկան, որպէս զի տեսցեն
զգործս ձեր բարիս, եւ փառաւորես-
ցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է։
17 Մի՛ համարիք եթէ եկի լուծանել
զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի
18 լուծանել՝ այլ լնուլ։ Ամէն ասեմ ձեզ,
մինչեւ անցցեն երկինք եւ երկիր՝ յովտ
մի, որ նշանախեց մի է, ոչ անցցէ
յօրինացն եւ ի մարգարէից՝ մինչեւ
19 ամենայն եղիցի։ Որ ոք լուծցէ մի
ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի
փոքունց, եւ ուսուսցէ այնպէս զմար-
դիկ, փոքր կոչեսցի յարքայութեան
երկնից. իսկ որ արասցէ, նա մեծ

20 կոչեսցի յարքայութեան երկնից։ Բայց
ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելուցու
արդարութիւն ձեր աւելի քան զդպր-
ացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք
21 յարքայութիւն երկնից։ Լուարուք զի
ասացաւ առաջնոցն, թէ մի սպա-
նաներ՝ զի որ սպանանիցէ՝ պար-
22 տական լիցի դատաստանի։ Այլ ես
ասեմ ձեզ, եթէ ամենայն որ բար-
կանայ եղբօր իւրում տարապար-
տուց՝ պարտաւոր լիցի դատաստանի.
եւ որ ասիցէ ցեղբայր իւր յիմար՝
պարտաւոր լիցի ատենի. եւ որ ասիցէ
ցեղբայր իւր մորոս՝ պարտաւոր լիցի
23 ի գեհենն հրոյն։ Եթէ մատուցանիցես
զպատարագ քո ի վերայ սեղանոյ, եւ
անդ յիշեսցես, եթէ եղբայր քո ունի
24 ինչ խէթ զքէն։ Թող զպատարագն
քո առաջի սեղանոյն, եւ երթ նախ
հաշտեաց ընդ եղբօր քում, եւ ապա
եկեալ մատուսջիր զպատարագն քո։
25 Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում
վաղվաղակի, մինչդեռ իցես ընդ նմա
ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ
ոսոխն դատաւորի, եւ դատաւորն դահ-
26 ճի, եւ արկանիցես ի բանտ։ Ամէն

ասեմ քեզ, ո՛չ ելանիցես անտի՝ մինչև
հատուցանիցես զյետին նաքարա-
27 կիտն։ Լուարուք զի ասացաւ, մի
28 շնար։ Բայց ես ասեմ ձեզ. թէ ամե-
նայն որ հայի ի կին մարդ առ ի
ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ
29 ընդ նմա ի սրտի իւրում։ Եթէ ակն
քո աջ գայթակղեցուցանէ զքեզ,
խլեա՛ զնա և ընկեա՛ ի քէն. զի լաւ է
քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ,
և մի ամենայն մարմինդ քո անկա-
30 նիցի ի գեհենն։ Եթէ աջ ձեռն քո
գայթակղեցուցանէ զքեզ, հա՛տ զնա
և ընկեա՛ ի քէն. զի լաւ է քեզ եթէ
մի յանդամոց քոց կորիցէ, և մի
ամենայն մարմինդ քո անկանիցի ի
31 գեհենն։ Ապաքէն ասացաւ, եթէ որ
արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա
32 զարձակմանն։ Բայց ես ասեմ ձեզ,
եթէ ամենայն որ արձակէ զկին իւր
առանց բանի պոռնկութեան՝ նա տայ
նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝
33 շնայ։ Դարձեալ լուարուք զի ասացաւ
առաջնոցն. մի երդնուցուս սուտ,
բայց հատուցես Տեառն զերդմունս
34 քո։ Այլ ես ասեմ ձեզ. ամենևին մի

երդնուլ, մի յերկինս՝ զի աթոռ է
35 Աստուծոյ։ Եւ մի յերկիր՝ զի պա-
տուանդան է ոտից նորա, և մի յԵրու-
սաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի։
36 Եւ մի ի գլուխ քո երդնուցուս, զի
ո՛չ կարես մազ մի սպիտակ առնել
37 կամ թուխ։ Այլ եղիցի ձեր բան,
այոն՝ այո, և ոչն՝ ոչ. զի աւելին քան
38 զայն ի չարէն է։ Լուարուք զի ասա-
ցաւ, ակն ընդ ական, և ատամն ընդ
39 ատաման։ Այլ ես ասեմ ձեզ, մի կալ
հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ
ապտակ յաջ ծնօտ քո, դարձո՛ նմա
40 և զմիւսն։ Եւ որ կամիցի ոք դատել
և առնուլ զշապիկս քո, թո՛ղ ի նա և
41 զբաճկոն քո։ Եւ որ տարապարհակ
վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա
42 և երկուս։ Որում խնդրէ ի քէն՝ տուր,
և որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի
43 դարձուցանիր զերեսս։ Լուարուք ա-
պաքէն զի ասացաւ. սիրեսցես զընկեր
44 քո, և ատեսցես զթշնամին քո։ Այլ
ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս
ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի
արարէք ատելեաց ձերոց, և աղօթս
ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն զձեզ և

45 հալածեն։ Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ՝
որ յերկինս է. զի զարեգակն իւր
ծագէ ի վերայ չարաց եւ բարեաց, եւ
ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ
46 մեղաւորաց։ Զի եթէ սիրիցէք զայ-
նոսիկ որ սիրեն զձեզ, զի՞նչ վարձ
իցեն. ո՛չ ապաքէն եւ մաքսաւորք զնոյն
47 գործեն։ Եւ եթէ տայցէք միայն ող-
ջոյն բարեկամաց ձերոց, զի՞նչ աւելի
առնէք. ո՛չ ապաքէն մաքսաւորք եւ
48 մեղաւորք զնոյն գործեն։ Արդ՝ եղե-
րուք դուք կատարեալք, որպէս եւ
Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

ԳԼՈՒԽ Զ.

1 Զգոյշ լերուք ողորմութեան ձե-
րում մի առնել առաջի մարդկան,
որպէս թէ ի ցոյց ինչ նոցա. գուցէ
եւ վարձս ո՛չ ընդունիցիք ի Հօրէն
2 ձերմէ՝ որ յերկինս է։ Այլ յորժամ
առնիցես ողորմութիւն, մի հարկաներ
փող առաջի քո, որպէս կեղծաւորքն
առնեն ի ժողովուրդս եւ ի հրապա-
րակս, որպէս զի փառաւորեսցին ի

մարդկանէ. ամէն ասեմ ձեզ, այն
3 իսկ են վարձք նոցա։ Այլ դու յոր-
ժամ ողորմութիւն առնիցես, մի գի-
տասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո։
4 Որպէս զի եղիցի ողորմութիւնն քո
ի ծածուկ, եւ Հայր քո որ տեսանէ ի
ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։
5 Եւ յորժամ յաղօթս կայցես, մի լի-
նիցիս որպէս կեղծաւորքն. զի սիրեն
ի ժողովուրդս եւ յանկիւնս հրապա-
րակաց կալ յաղօթս, որպէս զի երե-
ւեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ,
6 այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու յոր-
ժամ կայցես յաղօթս, մուտ ի սենեակ
քո, եւ փակեա զդուրս քո, եւ կաց յա-
ղօթս առ Հայր քո ի ծածուկ եւ Հայրն
քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ
7 քեզ յայտնապէս։ Եւ յորժամ կայցէք
յաղօթս, մի շատախօսք լինիք իբրեւ
զհեթանոսս, զի համարին, եթէ ի բա-
զում խօսից իւրեանց լսելի լինիցին։
8 Արդ՝ մի նմանիցէք նոցա. զի գիտէ
Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչեւ
9 ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ։ Եւ
արդ՝ այսպէս կայցէք դուք յաղօթս.
Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ ե-

10 ղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն
քո. եղիցին կամք քո որպէս յերկինս
11 և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ
12 տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպար-
տիս մեր, որպէս և մեք թողումք
13 մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր
զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ
ի չարէ. զի քո է արքայութիւն և
զօրութիւն և փառք յաւիտեանս ա-
14 մէն։ Զի եթէ թողուցուք մարդկան
զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայր
15 ձեր երկնաւոր զյանցանս ձեր։ Ապա
թէ ոչ թողուցուք մարդկան զյան-
ցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ
16 ձեզ զյանցանս ձեր։ Եւ յորժամ պա-
հիցէք՝ մի լինիք իբրև զկեղծաւորսն
տրտմերեսք, որ ապականեն զերեսս
իւրեանց, որպէս զի երևեսցին մարդ-
կան թէ պահեցեն. ամէն ասեմ ձեզ,
17 այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու
յորժամ պահիցես, օծ զգլուխ քո, և
18 լուա զերեսս քո։ Զի մի երևեսցիս
մարդկան իբրև զպահող. այլ Հօրն
քում ի ծածուկ. և Հայրն քո որ տե-
սանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտ-
19 նապէս։ Մի գանձէք ձեզ գանձս

յերկրի, ուր ցեց և ուտիճ ապակա-
նեն, և ուր գողք ական հատանեն և
20 գողանան։ Այլ գանձեցէք ձեզ գանձս
յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ
ապականեն, և ոչ գողք ական հա-
21 տանեն և գողանան։ Զի ուր գանձք
ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։
22 Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն
քո առատ է, ամենայն մարմինդ լու-
23 սաւոր եղիցի։ Ապա թէ ակն քո չար
է, ամենայն մարմինդ խաւարին եղի-
ցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ որ ի քեզ է՝
24 խաւար է, խաւարն որչափ ևս։ Ոչ ոք
կարէ երկուց տերանց ծառայել. կամ
զմին ատիցէ՝ և զմիւսն սիրիցէ. կամ
զմին մեծարիցէ՝ և զմիւսն արհամար-
հիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել
25 և մամոնայի։ Վասն այդորիկ ասեմ
ձեզ. մի հոգայք վասն ոգւոց ձերոց՝
զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք.
և մի վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ
ագանիցիք. ոչ ապաքէն ոգի առա-
ւել է քան զկերակուր, և մարմին
26 քան զհանդերձ։ Հայեցարուք ի թռ-
չունս երկնից, զի ոչ վարեն և ոչ
հնձեն և ոչ ժողովեն ի շտեմարանս,

և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ
զնոսա. ո՛չ ապաքէն դուք առաւել էք
27 քան զնոսա։ Իսկ արդ՝ ո՛ ի ձէնջ առ
հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ ի
28 հասակ իւր կանգուն մի։ Եւ վասն
հանդերձի զի՞ հոգայք. հայեցարուք
ի շուշանն վայրենի՝ որպէս աճէ. ո՛չ
29 ջանայ և ո՛չ նիւթէ։ Ասեմ ձեզ. զի
և ո՛չ Սողոմոն յամենայն ի փառսն
իւրում զգեցաւ իբրև զմի ի նոցանէ։
30 Իսկ եթէ զխոտն ի վայրի՝ որ այսօր է
և վաղիւն ի հնոց արկանի, Աստուած
այնպէս զգեցուցանէ. ո՛րչափ ևս ա-
31 ռաւել զձեզ՝ թերահաւատք։ Մի՛ այ-
սուհետև հոգայցէք և ասիցէք. զի՞նչ
կերիցուք, կամ զի՞նչ արբցուք, կամ
32 զի՞նչ զգեցցուք։ Զի զայդ ամենայն
հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ
Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է
33 ձեզ այդ ամենայն։ Խնդրեցէք նախ
զարքայութիւնն Աստուծոյ և զարդա-
րութիւն նորա, և այդ ամենայն յա-
34 ւելցի ձեզ։ Մի՛ այսուհետև հոգայցէք
վասն վաղուի, զի վաղիւն վասն իւր
հոգասցի. շատ է աւուրն չար իւր։

ԳԼՈՒԽ Է.

1 Մի՛ դատէք, զի մի՛ դատիցիք։
2 Զի որով դատաստանաւ դատէք՝ դա-
տիցիք. և որով չափով չափէք՝
3 չափեսցի ձեզ։ Զի՞ տեսանես զշիւղ
յական եղբօր քո, և ի քում ական
4 զգերանդ ո՛չ տեսանես։ Կամ զիա՞րդ
ասես ցեղբայր քո, թո՛ղ հանից զշիւղդ
յականէ քումմէ. և ահաւադիկ ի քում
5 ական գերան կայ։ Կեղծաւոր, հա՛ն
նախ զգերանդ յականէ քումմէ, և
ապա հայեսցիս հանել զշիւղն յականէ
6 եղբօր քո։ Մի՛ տայք զսրբութիւն
շանց. և մի՛ արկանէք զմարգարիտս
ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն
կոխիցեն զնոսա, և դարձեալ երգի-
7 ծուցանիցեն զձեզ։ Խնդրեցէք՝ և տացի
ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բախեցէք՝
8 և բացցի ձեզ։ Զի ամենայն որ խնդրէ՝
առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ
9 բախէ՝ բացցի նմա։ Ո՞ իցէ ի ձէնջ
մարդ, յոր խնդրիցէ որդի իւր հաց,
10 միթէ քա՞ր տայցէ նմա։ Եւ կամ

խնդրիցէ ձուկն, միթէ օձ տայցէ
11 նմա։ Արդ՝ եթէ դուք որ չարքդ էք,
գիտէք պարգևս բարիս տալ որդւոց
ձերոց, որչափ ևս առաւել Հայրն ձեր
որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ
12 որ խնդրեն զնա։ Զամենայն որ մի-
անգամ կամիջիք թէ արասցեն ձեզ
մարդիկ, այնպէս և դուք արարէք
նոցա. զի այն իսկ են օրէնքն և մար-
13 գարէք։ Մտէք ընդ նեղ դուռն. քանզի
ընդարձակ է դուռնն՝ և համարձակ
ճանապարհն՝ որ տանի ի կորուստ, և
բազումք են որ մտանեն ընդ նա։
14 Քանզի անձուկ է դուռնն՝ և նեղ ճա-
նապարհն՝ որ տանի ի կեանս, և սա-
15 կաւք են որ գտանեն զնա։ Զգոյշ
լերուք ի սուտ մարգարէից՝ որ գան
առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի
ներքոյ են գայլք յափշտակողք. ի
16 պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։ Միթէ
քաղիցեն ի փշոց խաղող, կամ ի տա-
17 տասկէ թուզ։ Այսպէս ամենայն ծառ
բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ
18 չար՝ պտուղ չար առնէ։ Ո՛չ կարէ
ծառ բարի՝ պտուղ չար առնել, և ոչ
19 ծառ չար՝ պտուղ բարի առնել։ Ամե-

նայն ծառ՝ որ ոչ առնէ զպտուղ բարի,
20 հատանի և ի հուր արկանի։ Ապա ի
21 պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։ Ո՛չ
ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ
յարքայութիւն երկնից. այլ որ առնէ
22 զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է։ Բա-
զումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ.
Տէր Տէր, ո՛չ յանուն քո մարգարէա-
ցաք, և յանուն քո դևս հանաք, և
յանուն քո զօրութիւնս բազումս ա-
23 րարաք։ Եւ յայնժամ ասացից ցնոսա,
եթէ ո՛չ երբէք գիտէի զձեզ. ի բաց
կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գոր-
24 ծէիք զանօրէնութիւն։ Ամենայն որ
լսէ զբանս իմ զայսոսիկ և առնէ
զնոսա, նմանեսցի առն իմաստնոյ՝
որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի։
25 Իջին անձրևք և խաղացին գետք,
շնչեցին հողմք և բաղխեցին զտունն,
և ո՛չ կործանեցաւ, քանզի ի վերայ
26 վիմի հաստատեալ էր։ Եւ ամենայն
որ լսէ զբանս իմ զայսոսիկ և ո՛չ առնէ
զնոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ
շինեաց զտուն իւր ի վերայ աւազոյ։
27 Իջին անձրևք, յարեան գետք, շնչեցին
հողմք՝ հարին զտունն և անկաւ. և էր

28 կործանումն նորա մեծ յոյժ: Եւ եղեւ
իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն
զբանս զայսոսիկ, զարմանային ժո-
ղովուրդքն ընդ վարդապետութիւն
29 նորա: Զի իբրեւ իշխանութեամբ ու-
սուցանէր, եւ ոչ որպէս դպիրքն նոցա:

ԳԼՈՒԽ Ը.

1 Այլ իբրեւ էջ ի լեռնէ անտի, գնա-
ցին զկնի նորա ժողովուրդք բազումք:
2 Եւ ահա մատուցեալ բորոտ մի, եր-
կիրպագանէր նմա եւ ասէր. Տէր, եթէ
3 կամիս՝ կարող ես զիս սրբել: Ձգեաց
զձեռն իւր եւ հասոյց ի նա Յիսուս՝
եւ ասէ. կամիմ, սրբեա՛ց. եւ վաղվա-
ղակի սրբեցաւ ի նմանէ բորոտու-
4 թիւնն: Եւ ասէ ցնա Յիսուս. զգոյշ
լեր՝ մի՛ ումեք ասիցես. այլ երթ ցո՛յց
զանձն քո քահանային, եւ մատո՛
զպատարագն՝ զոր հրամայեաց Մով-
5 սէս ի վկայութիւն նոցա: Եւ մտեալ
ի Կափառնաում, մատեաւ առ նա
6 հարիւրապետ մի, աղաչէր զնա: Եւ
ասէր. Տէր, մանուկ իմ անկեալ կայ

ի տան անդամալոյծ՝ չարաչար տան-
7 ջեալ: Ասէ ցնա Յիսուս. ես եկից եւ
8 բժշկեցից զնա: Պատասխանի ետ
հարիւրապետն եւ ասէ. Տէր, չեմ
բաւական եթէ ընդ յարկաւ իմով
մտցես. այլ ասա՛ բանիւ, եւ բժշկեսցի
9 մանուկն իմ: Քանզի եւ ես այր մի եմ
ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ
զինուորս, ասեմ սմա երթ՝ եւ երթայ,
եւ այլում թէ եկ՝ եւ գայ, եւ ծառայի
10 իմում թէ արա՛ զայս՝ եւ առնէ: Իբրեւ
լուաւ Յիսուս, զարմացաւ, եւ ասէ
ցայնոսիկ որ զհետն երթային. ամէն
ասեմ ձեզ, եւ ոչ յԻսրայէլի այսպիսի
11 հաւատս գտի երբէք: Բայց ասեմ
ձեզ, զի բազումք յարեւելից եւ յա-
րեւմտից եկեսցեն եւ բազմեսցին ընդ
Աբրահամու եւ ընդ Սահակայ եւ ընդ
Յակոբու յարքայութիւն երկնից:
12 Եւ որդիքն արքայութեան ելցեն ի
խաւարն արտաքին. անդ եղիցի լալ
13 եւ կրճել ատամանց: Եւ ասէ Յիսուս
ցհարիւրապետն. Երթ՝ եւ որպէս հա-
ւատացեր եղիցի քեզ. եւ ողջացաւ
14 մանուկն նորա յաւուր յայնմիկ: Եւ
եկեալ Յիսուս ի տուն Պետրոսի,

ետես զի զզօքանչ նորա անկեալ դնէր
15 տապացեալ։ Կալաւ զձեռանէ նորա՝
և եթող զնա ջերմն. յոտն եկաց և
16 պաշտէր զնա։ Իբրև եղև երեկոյ՝
մատուցին առ նա դիւահարս բա-
զումս, և եհան զայսսն բանիւ, և
17 զամենայն հիւանդսն բժշկեաց։ Զի
լցցի բանն որ ասացաւ ի ձեռն Եսայեայ
մարգարէի. Նա զհիւանդութիւնս մեր
վերացոյց, և զցաւս մեր եբարձ։
18 Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բա-
զումս զիւրև, հրամայեաց երթալ
19 յայնկոյս։ Եւ մատուցեալ դպիր մի
ասէ ցնա. վա՛րդապետ, եկից և ես
20 զկնի քո, յոր վայր և երթիցես։ Ասէ
ցնա Յիսուս. աղուեսուց որջք գոն,
և թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ
մարդոյ ո՛չ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր։
21 Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ
ցնա. Տէր, տուր ինձ հրաման՝ զի
երթայց նախ թաղեցից զհայր իմ։
22 Ասէ ցնա Յիսուս. Եկ զկնի իմ, և
թո՛յլ տուր մեռելոյն թաղել զմեռեալս
23 իւրեանց։ Եւ իբրև եմուտ ի նաւն,
գնացին զկնի նորա աշակերտքն նորա։
24 Եւ ահա շարժումն մեծ եղև ի ծովուն,

մինչ նաւին ծածկել յալեաց անտի,
25 և ինքն ննջէր։ Եւ մատուցեալ աշա-
կերտքն յարուցին զնա և ասեն. Տէր,
26 փրկեա՛ զմեզ, զի կորնչիմք։ Եւ ասէ
ցնոսա. ընդէ՞ր վատասիրտք էք, սա-
կաւահաւատք. յայնժամ յարուցեալ
սաստեաց հողմոյն և ծովուն և եղև
27 խաղաղութիւն մեծ։ Եւ մարդիկն
զարմացան և ասէին. ո՞րպիսի ոք իցէ
սա, զի և հողմք և ծով հնազանդին
28 սմա։ Եւ իբրև անց յայնկոյս յերկիրն
Գերգեսացւոց, պատահեցին նմա դի-
ւահարք երկու՝ ելեալք ի գերեզմա-
նացն՝ չարաչարք յոյժ. որպէս զի
չէր հնար անցանել ումեք ընդ այն
29 ճանապարհ։ Եւ ահա աղաղակեցին
և ասեն. զի՞ կայ մեր և քո, Յիսուս
որդի Աստուծոյ. եկիր տարաժամ
30 տանջել զմեզ։ Եւ էր հեռագոյն ի
նոցանէ երամակ մի խոզից արօտա-
31 կան։ Եւ դեքն աղաչէին զնա և ասէին.
եթէ հանես զմեզ աստի, հրաման
տուր մեզ երթալ յերամակ խոզիցն։
32 Եւ ասէ ցնոսա, երթայք. և նոքա
ելեալ գնացին յերամակն խոզից. և
դիմեաց ամենայն երամակն ի զարէ

33 անտի ի ծով, և մեռան ի ջուրսն։ Եւ
խոզարածքն փախեան, և երթեալ ի
քաղաքն պատմեցին զամենայն, և
34 զիրս դիւահարացն։ Եւ ահա ամենայն
քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրև
տեսին զնա, աղաչեցին զի գնասցէ
ի սահմանաց նոցա։

ԳԼՈՒԽ Թ.

1 Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս
2 և եկն ի քաղաք իւր։ Եւ ահա մա-
տուցին առ նա անդամալոյծ մի, որ
դնէր ի մահիճս. և տեսեալ Յիսուսի
զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն.
3 Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա
ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս.
4 հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ Յիսուսի
զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ընդէ՞ր
խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր։
5 Զի՞նչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին
քեզ մեղք քո, թէ ասել՝ արի և շրր-
6 ջեաց։ Այլ զի գիտասջիք՝ եթէ իշ-
խանութիւն ունի որդի մարդոյ յերկրի
թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցան-

դամալոյծն, արի առ զմահիճս քո՝ և
7 երթ ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց
8 ի տուն իւր։ Իբրև տեսին ժողո-
վուրդքն, զարմացան, և փառաւոր
առնէին զԱստուած զտուիչն այնպիսի
իշխանութեան մարդկան։
9 Եւ անցեալ ընդ այն Յիսուսի, ետես
զայր մի, զի նստէր ի մաքսաւորու-
թեան՝ Մատթէոս անուն. և ասէ ցնա,
եկ զկնի իմ. և յարուցեալ գնաց զկնի
10 նորա։ Եւ եղև իբրև բազմեալ էր նա
ի տանն, և ահա բազում մաքսաւորք
և մեղաւորք եկեալ և բազմեալ էին
ընդ Յիսուսի և ընդ աշակերտան նորա։
11 Իբրև տեսին փարիսեցիքն, ասեն ցա-
շակերտս նորա. ընդէ՞ր ընդ մաքսա-
ւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդա-
12 պետն ձեր։ Իսկ Յիսուս իբրև լուաւ՝
ասէ ցնոսա. ոչ է պիտոյ բժիշկ կա-
13 րողաց՝ այլ հիւանդաց։ Երթայք ու-
սարուք զինչ է՝ ողորմութիւն կամիմ,
և ոչ զզոհ. զի ոչ եկի կոչել զարդարս՝
14 այլ զմեղաւորս։ Յայնժամ մատեան
առ նա աշակերտքն Յովհաննու և
ասեն. ընդէ՞ր մեք և փարիսեցիքն պա-
հեմք յաճախ, և քո աշակերտքդ ոչ

15 պահեն: Ասէ ցնոսա Յիսուս. միթէ
մարթ ինչ իցէ մանկանց առագաստի
սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա
իցէ. այլ եկեսցեն աւուրք, յորժամ
բարձցի ի նոցանէ փեսայն, և ապա
16 պահեսցեն: Ոչ ոք արկանէ կապերտ
անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ.
զի առնու ելանէ զլրումն նորա ի
հանդերձէն. և ևս չար պատառումն
17 լինի: Եւ ոչ արկանեն գինի նոր ի
տիկս հինս, ապա թէ ոչ տիկքն պա-
տառին, և գինին հեղու, և տիկքն
կորնչին. այլ արկանեն գինի նոր ի
տիկս նորս, և երկոքին պահին:
18 Մինչդեռ նա զայս խօսէր ընդ
նոսա, ահա իշխան մի մատուցեալ
երկիրպագանէր նմա և ասէր. դուստր
իմ արդ ևս վախճանեցաւ. այլ եկեալ
դիցես զձեռն քո ի վերայ նորա, և
19 կեցցէ: Յարեաւ Յիսուս և գնաց զհետ
20 նորա աշակերտօքն հանդերձ: Եւ ահա
կին մի՝ տեռատես երկոտասանամեայ,
մատուցեալ յետոյ մերձեցաւ ի գրօշակ
21 հանդերձի նորա: Զանզի ասէր ի մտի
իւրում, թէ միայն մերձենամ ի հան-
22 դերձս նորա՝ փրկիմ: Իսկ Յիսուս

իբրև դարձաւ և ետես զնա, ասէ.
քաջալերեաց դուստր, հաւատք քո
կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն ի
23 ժամէն յայնմանէ: Իբրև եկն Յիսուս
ի տուն իշխանին, և ամբոխս յոյժ,
24 ասէ ցնոսա. ի բաց գնացէք: Զի ոչ
եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ:
25 Եւ ծաղր առնէին զնա. և իբրև ել
ամբոխն ի բաց, եմուտ կալաւ զձե-
26 ռանէ նորա, և յարեաւ աղջիկն: Եւ
ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն
ընդ այն:
27 Եւ մինչդեռ անցանէր ընդ այն
Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք եր-
կու, աղաղակէին և ասէին, ողորմեաց
28 մեզ որդի Դաւթի: Եւ իբրև եկն ի
տուն, մատեան առ նա կոյրքն. և
ասէ ցնոսա Յիսուս. հաւատա՞յք եթէ
կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն
29 ցնա, այո՛, Տէր: Յայնժամ մերձեցաւ
յաչս նոցա և ասէ. ըստ հաւատոց
30 ձերոց եղիցի ձեզ: Եւ բացան աչք
նոցա. և սաստեաց նոցա Յիսուս և
ասէ, զգոյշ կացէք՝ մի ոք գիտասցէ:
31 Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ
32 ամենայն երկիրն ընդ այն: Եւ յել-

նելն նոցա արտաքս, ահա մատուցին
33 առ նա այր մի համր դիւահար։ Եւ
յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և
զարմացան ժողովուրդքն և ասէին. թէ
և ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ
34 յԻսրայէլի։ Իսկ փարիսեցիքն ասէին,
թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։
35 Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն
քաղաքս և ընդ գեօղս. ուսուցանէր
ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զա-
ւետարանն արքայութեան. և բժշկէր
զամենայն ախտս և զամենայն հիւան-
36 դութիւնս ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ
զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա, զի
էին աշխատեալք իբրև ոչխարս՝ որոց
37 ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշա-
կերտսն իւր, հունձք բազում են և
38 մշակք սակաւ։ Արդ՝ աղաչեցէք զՏէր
հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս
իւր։

ԳԼՈՒԽ Ժ.

1 Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտա-
սանեսին աշակերտսն իւր, ետ նոցա

իշխանութիւն այսոց պղծոց հանել
զնոսա. և բժշկել զամենայն ցաւս և
2 զամենայն հիւանդութիւնս։ Եւ առա-
քելոցն երկոտասանից էին անուանք
այսոքիկ. առաջին Սիմոն՝ անուան-
եալն Պետրոս, և Անդրէաս եղբայր
3 նորա։ Յակոբոս Զեբեդեան, և Յով-
հաննէս եղբայր նորա. Փիլիպպոս, և
Բարդուղիմէոս. Թովմաս, և Մատ-
թէոս մաքսաւոր. Յակոբոս Ալփեան,
և Ղեբէոս՝ որ անուանեցաւ Թադէոս։
4 Սիմոն Կանանացի, և Յուդա Իսկա-
րիովտացի՝ որ և մատնեաց զնա։
5 Զնոսա երկոտասանեսին առաքեաց
Յիսուս, պատուիրեաց նոցա և ասէ,
ի ճանապարհ հեթանոսաց մի երթայ-
ցէք. և ի քաղաք Սամարացւոց մի
6 մտանիցէք։ Այլ երթայք առաւել առ
ոչխարսն կորուսեալս տանն Իսրայէլի։
7 Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէք և
ասացէք, թէ մերձեալ է արքայութիւն
8 երկնից։ Զհիւանդս բժշկեցէք, զբո-
րոտս սրբեցէք, զդևս հանէք. ձրի
9 առէք՝ և ձրի տուք։ Մի ստանայք
ոսկի, և մի արծաթ, և մի պղինձ ի
10 գօտիս ձեր։ Մի պարկ ի ճանապարհ,

և մի երկուս հանդերձս, մի կօշիկս,
մի ցուպ. զի արժանի է մշակն կե-
11 րակրոյ իւրում։ Յոր քաղաք մտա-
նիցէք կամ ի գեօղ, հարցանիցէք՝ թէ
ո՞ է ի նմա արժանի. և անդ լինիջիք՝
12 մինչև ելանիցէք անտի։ Եւ իբրև
մտանիցէք ի տունն, ողջոյն տայջիք
նմա և ասասջիք. ողջոյն տանս այս-
13 միկ։ Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ
ողջոյնն ձեր ի վերայ նորա. ապա թէ
ո՛չ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ
14 դարձցի։ Եւ որ ո՛չ ընկալցի զձեզ՝ և
ո՛չ լուիցէ բանից ձերոց, իբրև ելա-
նիցէք ի քաղաքէն յայնմանէ, թօթա-
15 փեսջիք զփոշին յոտից ձերոց։ Ամէն
ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին
Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուրն
դատաստանի՝ քան քաղաքին այն-
միկ։

16 **Ա**հաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև
զոչխարս ի մէջ գայլոց. եղերուք
այսուհետև խորագէտք իբրև զօձս,
17 և միամիտք իբրև զաղաւնիս։ Զգոյշ
լինիջիք ի մարդկանէ. զի մատնեսցեն
զձեզ յատեանս, և ի ժողովուրդս ի-
18 րեանց տանջեսցեն զձեզ։ Եւ առաջի

դատաւորաց և թագաւորաց տանի-
ցին զձեզ վասն իմ ի վկայութիւն
19 նոցա և հեթանոսաց։ Այլ յորժամ
մատնեսցեն զձեզ, մի հոգայցէք, թէ
ո՞րպէս կամ զի՞նչ խօսիցիք. զի տացի
ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսի-
20 ցիք։ Զի ո՛չ եթէ դուք իցէք որ խօ-
սիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ
21 խօսիցի ի ձեզ։ Մատնեսցէ եղբայր
զեղբայր ի մահ, և հայր զորդի. և
յառնիցեն որդիք ի վերայ հարց և
22 սպանիցեն զնոսա։ Եւ եղիջիք ատե-
ցեալք յամենեցունց վասն անուան
իմոյ. իսկ որ համբերեսցէ ի սպառ,
23 նա կեցցէ։ Եւ յորժամ հալածիցեն
զձեզ ի քաղաքիս յայսմիկ, փախիջիք
յայլ. և եթէ յայնմանէ հալածիցեն
զձեզ, փախիջիք ի միւս. ամէն ասեմ
ձեզ, ո՛չ սպառեսջիք զքաղաքս Իս-
րայէլի՝ մինչև եկեսցէ Որդի մարդոյ։
24 Ո՛չ է աշակերտ առաւել քան զվար-
դապետ, և ո՛չ ծառայ քան զտէր իւր։
25 Շատ իցէ աշակերտին՝ եթէ եղիցի
իբրև զվարդապետ իւր. և ծառային՝
իբրև զտէր իւր. եթէ զտանուտէրն
բէեղզեբուղ կոչեցին, ո՞րչափ ևս ա-

26 ռաւել զընտանիս նորա։ Մի այսու-
հետեւ երկնչիցիք ի նոցանէ. զի ոչինչ
է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ
27 գաղտնի՝ որ ոչ ծանիցի։ Զոր ասեմ
ձեզ ի խաւարի՝ ասացէք ի լոյս. եւ
զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք ի
28 վերայ տանեաց։ Եւ մի երկնչիք յայն-
ցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ զոգի
ոչ կարեն սպանանել. այլ երկերուք
դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է
զոգի եւ զմարմին կորուսանել ի գե-
29 հենի։ Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք
դանգի միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ
յերկիր ոչ անկցի առանց հօր ձերոյ։
30 Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ
31 թուեալ է։ Եւ արդ՝ մի երկնչիք, զի
լաւ էք քան զբազում ճնճղուկս։
32 Ամենայն որ խոստովանեսցի յիս
առաջի մարդկան, խոստովանեցայց եւ
ես զնմանէ առաջի հօր իմոյ՝ որ յեր-
33 կինս է։ Եւ որ ուրասցի զիս առաջի
մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի
34 հօր իմոյ՝ որ յերկինս է։ Մի համարիք
եթէ եկի արկանել խաղաղութիւն
յերկիր. ո՛չ եկի արկանել խաղաղու-
35 թիւն՝ այլ սուր։ Բանզի եկի քակել

զայր ի հօրէ իւրմէ, եւ զդուստր ի
մօրէ իւրմէ, եւ զհարսն ի սկեսրէ
36 իւրմէ։ Եւ թշնամիք առն՝ ընտանիք
37 իւր։ Որ սիրէ զհայր կամ զմայր ա-
ռաւել քան զիս՝ ո՛չ է ինձ արժանի.
եւ որ սիրէ զուստր կամ զդուստր
առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի։
38 Եւ որ ո՛չ առնու զխաչ իւր եւ գայ
39 զկնի իմ, չէ ինձ արժանի։ Որ գտանէ
զանձն իւր՝ կորուսցէ զնա, եւ որ կո-
րոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։
40 Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, եւ
որ զիս ընդունի, ընդունի զառաքիչն
41 իմ։ Որ ընդունի զմարգարէ յանուն
մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ.
եւ որ ընդունի զարդար յանուն ար-
42 դարոյ՝ զվարձս արդարոյ առցէ։ Եւ որ
արբուսցէ միում ի փոքրկանցս յայս-
ցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝
յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ,
ո՛չ կորուսցէ զվարձս իւր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս
զպատուէր երկոտասանից աշակեր-

տայն իւրոց, գնաց անտի քարոզել
2 և ուսուցանել ի քաղաքս նոցա։ Իսկ
Յովհաննէս իբրև լուաւ ի բանտին
զգործսն Քրիստոսի, առաքեաց ի ձեռն
3 աշակերտացն իւրոց։ Եւ ասէ ցնա.
դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում
4 ակնկալցուք։ Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ ցնոսա. գնացէք պատ-
մեցէք Յովհաննու, զոր լուայք և տե-
5 սէք։ Կոյրք տեսանեն, կաղք գնան,
բորոտք սրբին և խուլք լսեն, և մե-
ռեալք յառնեն, և աղքատք աւետա-
6 րանին։ Եւ երանեալ է՝ որ ոչ գայ-
7 թակղեսցի յիս։ Եւ իբրև նոքա գնա-
ցին, սկսաւ Յիսուս ասել ցժողովուրդ-
սն զՅովհաննէ. զի՞նչ ելէք տեսանել
յանապատին. եղէգն շարժուն ի հող-
8 մոյ։ Այլ զի՞նչ ելէք տեսանել. մա՞րդ
ի հանդերձս փափկութեան զարդա-
րեալ. ահաւասիկ որ զփափուկսն
զգեցեալ են՝ ի տունս թագաւորաց
9 են։ Այլ զի՞նչ ելէք տեսանել. մար-
գարէ՞. այո՛ ասեմ ձեզ, և առաւել
10 ևս քան զմարգարէ։ Զի նա է վասն
որոյ գրեալն է. ահա ես առաքեցից
զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց.

որ պատրաստեսցէ զճանապարհս քո
11 առաջի քո։ Ամէն ասեմ ձեզ. չէ
յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ
քան զՅովհաննէս Մկրտիչ բայց փոք-
րիկն յարքայութեան երկնից մեծ է
12 քան զնա։ Բայց յաւուրցն Յովհան-
նու Մկրտչի մինչև ցայժմ՝ արքայու-
թիւն երկնից բռնադատի, և բռունք
13 յափշտակեն զնա։ Քանզի ամենայն
օրէնք և մարգարէք մինչև ցՅովհան-
14 նէս մարգարէացան։ Եւ եթէ կամիք
ընդունել, նա է Եղիա՝ որ գալոցն է։
15 Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։
16 Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս.
նման է մանկտւոյ՝ որ նստիցեն ի
հրապարակս, կարդայցեն զընկերս
17 իւրեանց։ Եւ ասիցեն. փողս հարաք
ձեզ՝ և ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ՝
18 և ո՛չ կոծեցարո՛ւք։ Եկն Յովհաննէս,
ո՛չ ուտէր և ո՛չ ըմպէր, և ասեն, դև
19 գոյ ի նմա։ Եկն Որդի մարդոյ, ուտէ
և ըմպէ, և ասեն, ահա այր կերող և
արբեցող, բարեկամ մաքսաւորաց և
մեղաւորաց. և արդարացաւ իմաս-
20 տութիւն յորդւոց իւրոց։ Յայնժամ
սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս

եղեն բազում զօրութիւնք նորա, և
21 ոչ ապաշխարեցին։ Վայ քեզ Քորա-
զին, վայ քեզ Բեթսայիդա. զի եթէ
ի Տիւրոս և ի Սիդովն եղեալ էին
զօրութիւնքն՝ որ ի ձեզ եղեն, վաղու
ես արդեօք խորգով և մոխրով ապաշ-
22 խարեալ էր։ Բայց ասեմ ձեզ, դիւ-
րագոյն լինիցի երկրին Տիւրոսի և Սի-
դովնի յաւուրս դատաստանի՝ քան
23 ձեզ։ Եւ դու, Կափառնայում, մի
մինչև յերկինս բարձրասցիս, այլ
մինչև ի դժոխս իջցես. զի եթէ ի
Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն որ
ի քեզ եղեն, ապաքէն կային ես մինչև
24 ցայսօր։ Բայց ասեմ ձեզ, եթէ երկրին
Սոդոմացւոց դիւրագոյն լինիցի յաւուրն
դատաստանի՝ քան քեզ։
25 Յայնմ ժամանակի պատասխանի
ետ Յիսուս և ասէ. գոհանամ զքէն
Հայր՝ Տէր երկնի և երկրի. զի ծած-
կեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց,
26 և յայտնեցեր տղայոց։ Այո, Հայր,
զի այսպէս հաճոյ եղև առաջի քո։
27 Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ։
28 Եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ
Հայր, և ոչ զՀայր ոք ճանաչէ, եթէ

ոչ Որդի, և ում Որդին կամիցի յայտ-
29 նել։ Եկայք առ իս ամենայն վաստա-
կեալք և բեռնաւորք, և ես հանգու-
ցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ, և
ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խո-
նարհ սրտիւ. և գտջիք հանգիստ ան-
30 ձանց ձերոց։ Զի լուծ իմ քաղցր է,
և բեռն իմ փոքրոգի։

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Յայնժամ գնայր Յիսուս ընդ ար-
տորայսն նոցա ի շաբաթու. և աշա-
կերտքն նորա քաղցեան, և սկսան
2 հասկ կորզել և ուտել։ Փարիսեցիքն
իբրև տեսին՝ ասեն ցնա. ահաւանիկ
աշակերտքն քո գործեն, զոր ոչ է
3 արժան գործել ի շաբաթու։ Եւ նա
ասէ ցնոսա. ոչ իցէ ընթերցեալ ձեր՝
զոր արար Դաւիթ, յորժամ քաղ-
4 ցեաւն, և որ ընդ նմայն էին։ Զիա՞րդ
եմուտ ի տունն Աստուծոյ՝ և եկեր
զհացն առաջաւորութեան, զոր ոչ
էր օրէն նմա ուտել, և ոչ որոց ընդ
նմայն էին, բայց միայն քահանայից։

5 Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ ձեր յօ-
րէնս, զի ի շաբաթս քահանայքն ի
տաճարին պղծեն զշաբաթն, և անմեղք
6 են։ Բայց ասեմ ձեզ. զի մեծ քան
7 զտաճարն է աստ։ Եւ եթէ գիտէիք
զինչ է՝ զողորմութիւն կամիմ և ոչ
զզոհ, ապա ոչ դատապարտէիք դուք
8 զանպարտսն։ Զի տէր է շաբաթու
9 Որդին մարդոյ։ Եւ գնացեալ անտի
10 Յիսուս՝ եկն ի ժողովուրդն նոցա։ Եւ
անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօ-
սացեալ էր. հարցին զնա և ասեն,
եթէ պարտ իցէ ի շաբաթու բժշկել,
11 զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա
ասէ ցնոսա. ով իցէ ի ձէնջ մարդ՝
որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի
այն ի խորխորատ ի շաբաթու, միթէ
12 ոչ ունիցի և յարուցանիցէ զնա։ Իսկ
արդ՝ որչափ ևս՝ առաւել է մարդ քան
զոչխար. ապա ուրեմն պարտ է ի
13 շաբաթու բարիս գործել։ Յայնժամ
ասէ ցայրն. ձգեա զձեռն քո, և նա
14 ձգեաց՝ և եղև ողջ իբրև զմիւսն։ Իսկ
փարիսեցիքն ելեալ արտաքս խոր-
հուրդ արարին զնմանէ՝ թէ որպէս
15 կորուսցեն զնա։ Եւ Յիսուս իբրև

գիտաց, մեկնեցաւ անտի. և գնացին
զհետ նորա ժողովուրդք բազումք, և
16 բժշկեաց զամենեսեան։ Եւ սաստեաց
նոցա՝ զի մի՛ յայտնեսցեն զնմանէ
17 ումեք։ Զի լցցի զոր ասացաւն ի
18 ձեռն Եսայեայ մարգարէի։ Ահա մա-
նուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի
իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից
զոգի իմ ի վերայ նորա և իրաւունս
19 հեթանոսաց պատմեսցէ։ Ո՛չ հակա-
ռակեսցի և ոչ աղաղակեսցէ, և ոչ
ոք լուիցէ ի հրապարակս զբարբառ
20 նորա։ Զեղէգն ջախջախեալ ոչ փշ-
րեսցէ, և զպատրոյգն առկայծեալ ոչ
շիջուսցէ, մինչև հանցէ ի յաղթու-
21 թիւն զդատաստանն։ Եւ յանուն նորա
հեթանոսք յուսասցեն։

22 Յայնժամ մատուցաւ առ նա դիւա-
հար մի կոյր և համր, և բժշկեաց զնա
որպէս զի համրն և կոյրն խօսէին և
23 տեսանէին։ Զարմացեալ ամենայն ժո-
ղովուրդքն և ասէին. միթէ սա իցէ
24 Քրիստոսն որդի Դաւթի։ Բայց փա-
րիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ ինչ
հանէ դա զդևս՝ եթէ ոչ բեեղզեբուղաւ
25 իշխանաւն դիւաց։ Իբրև գիտաց Յի-

սուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա.
ամենայն թագաւորութիւն բաժա-
նեալ յանձն իւր՝ աւերի, և ամենայն
քաղաք կամ տուն բաժանեալ յանձն
26 իւր՝ ոչ կացցէ։ Եւ եթէ սատանայ
զսատանայ հանէ, յանձն իւր բաժա-
նեցաւ. արդ՝ զիարդ կացցէ թագա-
27 ւորութիւն նորա։ Եւ եթէ ես բէեղ-
զեբուղաւ հանեմ զդևս, որդիքն ձեր
իւ հանիցեն. վասն այնորիկ նոքա
28 եղիցին ձեր դատաւորք։ Ապա թէ
հոգւովն Աստուծոյ հանեմ ես զդևս,
ուրեմն հասեալ է ի վերայ ձեր ար-
29 քայութիւն Աստուծոյ։ Կամ զիարդ
կարէ ոք մտանել ի տուն հզօրի՝ և
զգործիսն նորա յափշտակել, եթէ ոչ
նախ կապիցէ զհզօրն, և ապա զտուն
30 նորա յափշտակիցէ։ Որ ոչ ընդ իս է՝
հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ
31 իս՝ ցրուէ։ Վասն այսորիկ ասեմ ձեզ.
ամենայն մեղք և հայհոյութիւնք թող-
ցին մարդկան, բայց զՀոգւոյն հայ-
32 հոյութիւն մի թողցի։ Եւ որ ոք ասիցէ
բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա,
բայց որ զՀոգւոյն սրբոյ ասիցէ՝ մի
թողցի նմա, մի յայսմ աշխարհի և

33 մի ի հանդերձելումն։ Կամ արարէք
ըզծառն բարի՝ և զպտուղ նորա բարի,
կամ արարէք զծառն չար՝ և զպտուղ
նորա չար. քանզի ի պտղոյ անտի
34 ծառն ճանաչի։ Ծնունդք իժից, զիարդ
կարիցէք բարիս խօսել՝ որ չարքդ էք.
քանզի ի յաւելուածոյ սրտի խօսի
35 բերան։ Մարդ բարի՝ ի բարի գան-
ձուց սրտի իւրոյ հանէ զբարիս, և
մարդ չար՝ ի չար գանձուց սրտի
36 իւրոյ հանէ զչարիս։ Բայց ասեմ ձեզ,
թէ ընդ ամենայն դատարկ բանի զոր
խօսիցին մարդիկ, տայցեն համար
37 յաւուրն դատաստանի։ Զի ի բանից
քոց արդարասցիս, և ի բանից քոց
պարտաւորեսցիս։

38 Յայնժամ պատասխանի ետուն նմա
ոմանք ի դպրացն և ի փարիսեցւոց՝
և ասեն. վարդապետ, կամիմք նշան
39 ինչ տեսանել ի քէն։ Նա պատասխանի
ետ և ասէ ցնոսա. ազգ չար և շնացող՝
նշան խնդրէ. և նշան մի տացի նմա,
բայց նշանն Յովնանու մարգարէի։
40 Զի որպէս էր Յովնան ի փոր կիտին
զերիս տիւս և զերիս գիշերս, նոյն-
պէս եղիցի և Որդի մարդոյ ի սիրտ

երկրի զերիս տիւս և զերիս գիշերս։
41 Արք Նինուէացիք յարիցեն ի դատաս-
տանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և
դատապարտեսցեն զսա, զի զղջացան
ի քարոզութեանն Յովնանու. և արդ
աւասիկ մեծ քան զՅովնան է աստ։
42 Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաս-
տանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և
դատապարտեսցէ զսա. զի եկն ի ծա-
գաց երկրի լսել զիմաստութիւնն
Սողոմոնի. և ահա մեծ քան զՍողո-
43 մոն է աստ։ Այլ յորժամ այսն պիղծ
ելանէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին
տեղիս. խնդրէ հանգիստ՝ և ո՛չ գտանէ։
44 Յայնժամ ասէ. դարձայց ի տուն իմ՝
ուստի ելի. և եկեալ գտանէ զնա
պարապորդ, մաքրեալ և յարդարեալ։
45 Յայնժամ երթայ և առնու ընդ իւր
եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն,
և մտեալ բնակէ անդ. և լինի յետինն
մարդոյն այնորիկ չար քան զառա-
ջինն. այնպէս եղիցի և ազգիս այսմիկ
46 չարի։ Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն
խօսէր, ահա մայր նորա և եղբարք
նորա կային արտաքոյ՝ և խնդրէին
47 խօսել ընդ նմա։ Եւ ասէ ոմն ցնա.

ահա մայր քո և եղբարք քո կան
արտաքոյ, և խնդրեն խօսել ընդ քեզ։
48 Նա պատասխանի ետ այնմիկ՝ որ
ասացն ցնա, և ասէ. ո՞վ է իմ մայր,
49 կամ ո՞վ են իմ եղբարք։ Եւ ձգեալ
զձեռն իւր յաշակերտսն ասէ. ահա
50 մայր իմ և եղբարք իմ։ Զի որ առնիցէ
զկամս Հօր իմոյ որ յերկինս է, նա է
իմ եղբայր և քոյր և մայր։

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս ի
2 տանէն՝ նստաւ առ ծովեզերն։ Եւ
ժողովեցան առ նա ժողովուրդք բա-
զումք, մինչև մտանել նմա ի նաւն և
նստել. և ամենայն ժողովուրդն կայր
3 առ ծովեզերբն։ Եւ խօսէր ընդ նոսա
4 բազումս առակօք և ասէր։ Ահա ել
սերմանահան սերմանել, և ի սերմա-
նելն իւրում, էր որ անկաւ առ ճա-
նապարհաւ, և եկն թռչուն երկնից
5 և եկեր զնա։ Եւ այլն անկաւ յապա-
ռաժի, ուր ո՛չ գոյր հող բազում, և
փաղփաղակի բուսաւ. առ ի չգոյէ

6 հիւթոյ երկրին: Ի ծագել արեւու տա-
պացաւ, և զի ոչ գոյին արմատք՝
7 չորացաւ: Եւ այլն անկաւ ի մէջ
փշոց, և ելին փուշքն և հեղձուցին
8 զնա: Եւ այլն անկաւ յերկիր բարի,
և տայր պտուղ. էր որ հարիւրաւոր,
և էր որ վաթսնաւոր, և էր որ երես-
9 նաւոր: Որ ունիցի ականջս լսելոյ՝
10 լուիցէ: Եւ մատուցեալ աշակերտքն
ասեն ցնա. ընդէ՞ր առակօք խօսիս
11 ընդ նոսա: Նա պատասխանի ետ և
ասէ ցնոսա. քանզի ձեզ տուեալ է
գիտել զխորհուրդս արքայութեան
12 երկնից, և նոցա չէ տուեալ: Զի որ
ունիցէ՝ տացի նմա և յաւելցի. և որ
ոչն ունիցէ՝ և զոր ունիցին բարձցի
13 ի նմանէ: Վասն այնորիկ առակօք
խօսիմ ընդ նոսա, զի տեսանեն՝ և
ոչ տեսանեն. և լսեն՝ և ոչ լսեն, և ոչ
14 առնուն ի միտ: Եւ կատարի առ նոսա
մարգարէութիւնն Եսայեայ՝ որ ասէ.
լսելով լուիջիք՝ և մի իմասջիք, և
տեսանելով տեսջիք՝ և մի տեսջիք:
15 Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս
այսորիկ, և ականջօք իւրեանց ծա-
նրանս լուան, և զաչս իւրեանց կա-

փուցին, զի մի երբէք տեսցեն աչօք՝
և ականջօք լուիցեն՝ և սրտիւք իմաս-
ցին, և դարձցին և բժշկեցից զնոսա:
16 Բայց ձեր երանի է աչացդ՝ զի տե-
սանեն, և ականջաց ձերոց՝ զի լսեն:
17 Ամէն ասեմ ձեզ, զի բազում մար-
գարէք և արդարք ցանկացան տե-
սանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին,
18 և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան: Եւ
արդ՝ լուարուք դուք զառակ սերմա-
19 նողին: Յամենայնէ՝ որ լսէ զբանն
արքայութեան և ոչ առնու ի միտ,
գայ չարն և յափշտակէ զսերմանեալն
ի սիրտ նորա, այն է՝ որ առ ճանա-
20 պարհաւն սերմանեցաւ: Եւ որ յա-
պառաժին սերմանեցաւ, այն է՝ որ
իբրեւ լսէ զբանն, և վաղվաղակի
21 խնդութեամբ ընդունի զնա: Բայց
քանզի ոչ ունի արմատս յինքեան,
այլ առ ժամանակ մի է, ի լինել
նեղութեան և հալածանաց վասն բա-
22 նին՝ վաղվաղակի գայթագղի: Իսկ որ
ի մէջ փշոցն սերմանեցաւ, այն է՝ որ
իբրեւ լսէ զբանն, և հոգք աշխարհիս
և պատրանք մեծութեան հեղձուցա-
23 նեն զբանն, և լինի անպտուղ: Իսկ

որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն
է՝ որ իբրև լսէ զբանն և ի միտ առնու,
և տայ զպտուղ, է որ հարիւր, և է
որ վաթսուն, և է որ երեսուն։
24 Այլ առակ արկ առ նոսա՝ և ասէ.
Նմանեցաւ արքայութիւն երկնից առն,
որ սերմանիցէ սերմն բարի յագարակի
25 իւրում։ Եւ ի քուն լինել մարդկան՝
եկն թշնամին նորա և ցանեաց ի
վերայ որոմն ի մէջ ցորենոյն՝ և գնաց։
26 Եւ իբրև բուսաւ խոտն և արար պը-
տուղ, ապա երևեցաւ և որոմնն։
27 Մատուցեալ ծառայք տանուտեառնն
ասեն ցնա. Տէր, ո՛չ սերմն բարի
սերմանեցեր յագարակին քում, արդ
28 ուստի՞ ունիցի զորոմնն։ Եւ նա ասէ
ցնոսա. այր թշնամի արար զայն.
ասեն ցնա ծառայքն, կամիս զի եր-
29 թիցուք քաղեսցուք զայն ի բաց։ Եւ
նա ասէ ցնոսա, մի՛. դուցէ մինչ
քաղիցէք զորոմնն, և զցորեանն ընդ
30 նմին ի բաց խլիցէք։ Թո՛յլ տուք եր-
կոցունց աճել ի միասին մինչև ի
հունձս, և ի ժամանակի հնձոցն ասա-
ցից ցհնձողսն. քաղեցէք նախ զո-
րոմնդ և կապեցէք զայդ խրձունս

առի յայրել, և զցորեանն ժողովեցէք
31 ի շտեմարանս իմ։ Այլ առակ արկ առ
նոսա և ասէ. Նման է արքայութիւն
երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ
մարդոյ սերմանեաց յագարակի իւ-
32 րում։ Որ փոքր է քան զամենայն
սերմանիս, և յորժամ աճիցէ, մեծ է
քան զամենայն բանջարս, և լինի
ծառ՝ մինչև գալ թռչնոց երկնից և
33 հանգչել յոստս նորա։ Այլ առակ
խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Նման է
արքայութիւն երկնից խմորոյ, զոր
առեալ կնոջ թագոյց ի գրիւս երիս
ալեր՝ մինչև ամենայն խմորեցաւ։
34 Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս
առակօք ընդ ժողովուրդսն, և առանց
35 առակի ո՛չինչ խօսէր ընդ նոսա։ Զի
լցցի ասացեալն ի մարգարէէն. բացից
առակօք զբերան իմ, բղխեցից զծած-
կեալսն ի սկզբանէ աշխարհի։
36 Յայնժամ թողեալ Յիսուսի զժողո-
վուրդսն՝ եկն ի տուն. մատեան առ
նա աշակերտքն և ասեն, մեկնեա՛ մեզ
37 զառակ որոմանցն ագարակի։ Նա պա-
տասխանի ետ և ասէ ցնոսա. որ սեր-
մանէ զսերմն բարի՝ է Որդի մարդոյ։

38 Եւ ագարակն աշխարհս է. սերմն բարի
նոքա են, որ որդիքն արքայութեան
39 են. իսկ որոմնն որդիք չարին են: Եւ
թշնամին որ վարեաց զայն՝ սատա-
նայ է. և հունձքն կատարած աշխար-
40 հիս է. և հնձօղքն հրեշտակք են: Որպէս
ժողովի որոմնն և ի հուր այրի, այն-
պէս եղիցի ի կատարածի աշխարհիս:
41 Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս
իւր, և ժողովեսցեն յարքայութենէ
նորա զամենայն գայթակղութիւնս,
և զայնոսիկ որք գործեն զանօրէնու-
42 թիւն: Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ.
անդ եղիցի լալ և կրճել ատամանց:
43 Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև
զարեգակն յարքայութեան երկնից.
որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:
44 Դարձեալ նման է արքայութիւն երկ-
նից գանձի ծածկելոյ յագարակի, զոր
գտեալ մարդոյ՝ թագոյց. և ի խնդու-
թենէ անտի երթայ վաճառէ զամենայն
ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն:
45 Դարձեալ նման է արքայութիւն երկ-
նից առն վաճառականի, որ խնդրիցէ
46 մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ
մի պատուական մարգարիտ՝ երթեալ

վաճառեաց զամենայն ինչ զոր ունէր,
47 և գնեաց զայն մարգարիտ: Դարձեալ
նման է արքայութիւն երկնից ուռ-
կանի արկելոյ ի ծով՝ և յամենայն
48 ազգաց ժողովելոյ: Զոր իբրև լցաւ,
հանեալ ի ցամաք և նստեալ ժողո-
վեցին զբարի բարին յամանս, և
49 զխոտանն ի բաց ընկեցին: Այնպէս
եղիցի ի կատարածի աշխարհիս. ելցեն
հրեշտակք և մեկնեսցեն զչարս ի միջոյ
50 արդարոց: Եւ արկցեն զնոսա ի հնոց
հրոյ. անդ եղիցի լալ և կրճել ատա-
51 մանց: Ասէ ցնոսա Յիսուս. իմացա-
րո՞ւք զայս ամենայն. ասեն ցնա. այո,
52 տէր: Եւ նա ասէ ցնոսա. վասն այսորիկ
ամենայն դպիր աշակերտեալ արքա-
յութեան երկնից, նման է առն տա-
նուտեառն՝ որ հանէ ի գանձէ իւրմէ
զնոր և զհին:
53 Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս
զառակս զայսոսիկ՝ փոխեցաւ անտի:
54 Եւ եկեալ ի գաւառ իւր ուսուցանէր
զնոսա ի ժողովրդեանն նոցա, մինչև
զարմանալ նոցա և ասել. ուստի
իցէ սմա իմաստութիւն և զօրութիւնք:
55 Ո՞չ սա է հիւսանն որդի. ո՞չ մայր

սորա կոչի Մարիամ, և եղբարք սորա
Յակոբոս և Յովսէս և Սիմոն և Յուդա։
56 Եւ քորք սորա ո՞չ ամենեքեան առ
մեզ են. և արդ ուստի՞ է սմա այս
57 ամենայն։ Եւ գայթակղէին ի նա. և
Յիսուս ասէ ցնոսա. չիք մարգարէ
անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի և
58 յիւրում տան։ Եւ ո՛չ արար անդ
զօրութիւնս բազումս վասն անհա-
ւատութեան նոցա։

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Յայնմ ժամանակի լուաւ Հերով-
2 դէս չորրորդապետ զլուր Յիսուսի։ Եւ
ասէ ցծառայս իւր. նա է Յովհաննէս
Մկրտիչ, նա յարեաւ ի մեռելոց, և
վասն այնորիկ զօրութիւնք լինին
3 նովաւ։ Քանզի Հերովդէս կալաւ
զՅովհաննէս, կապեաց զնա և եդ ի
բանտի վասն Հերովդիայ կնոջ Փի-
4 լիպպոսի եղբօր նորա։ Զի ասէր ցնա
Յովհաննէս. չէ՛ արժան քեզ ունել
5 զդա։ Եւ կամէր զնա սպանանել, բայց
երկնչէր ի ժողովրդենէ անտի. քանզի

6 իբրև զմարգարէ ունէին զնա։ Եւ իբրև
եղեն ծնունդք Հերովդի, կաքաւեաց
դուստրն Հերովդիայ ի մէջ բազմա-
կանին. և հաճոյ թուեցաւ Հերովդի։
7 Ուստի և երդմամբ խոստացաւ տալ
8 նմա զինչ և խնդրեսցէ։ Եւ նա յա-
ռաջագոյն խրատեալ ի մօրէ իւրմէ,
տո՛ւր ինձ, ասէ, այսր ի վերայ սկտեղ
9 զգլուխն Յովհաննու Մկրտչի։ Եւ
տրտմեցաւ թագաւորն. բայց վասն
երդմանցն և բարձակցացն՝ հրամայ-
10 եաց տալ նմա։ Եւ առաքեաց գլխա-
11 տեաց զՅովհաննէս ի բանտի։ Եւ
բերաւ գլուխ նորա սկտեղբ և տուաւ
աղջկանն, և տարաւ առ մայր իւր։
12 Եւ մատուցեալ աշակերտքն նորա
բարձին զմարմինն և թաղեցին, և
եկեալ պատմեցին Յիսուսի։
13 Եւ իբրև լուաւ Յիսուս, գնաց անտի
նաւաւ յանապատ տեղի առանձինն.
իբրև լուան ժողովուրդքն՝ գնացին
զհետ նորա հետի ի քաղաքաց անտի։
14 Եւ իբրև ել՝ ետես ժողովուրդ բազում,
գթացաւ ի նոսա, և բժշկեաց զհի-
15 ւանդս նոցա։ Իբրև ընդ երեկս եղև,
մատեան առ նա աշակերտքն և ասեն.

տեղիս անապատ է, և օրս տարաժա-
մեալ, արձակեա զժողովուրդդ, զի
երթիցեն շուրջ ի շէնսն, գնեսցեն
16 իւրեանց կերակուրս։ Եւ ասէ Յիսուս.
ոչինչ պիտոյ է դոցա երթալ. տուք
17 դուք դոցա ուտել։ Եւ նոքա ասեն
ցնա. ոչինչ ունիմք աստ, բայց հինգ
18 նկանակ և երկուս ձկունս։ Եւ ասէ
19 ցնոսա. բերէք այսր զայն։ Եւ հրա-
մայեաց բազմեցուցանել զժողովուրդ-
սն ի վերայ խոտոյ. և առեալ զհինգ
նկանակսն և զերկուս ձկունսն՝ հայե-
ցաւ յերկինս, օրհնեաց՝ և եբեկ, և
ետ ցաշակերտսն զնկանակսն, և ա-
20 շակերտքն ժողովրդեանն։ Կերան ամե-
նեքեան և յագեցան, և բարձին
զնշխարս կոտորոցն երկոտասան սա-
21 կառի լի։ Եւ որք կերանն՝ էին արք
իբրև հինգ հազար. թող զկանայս և
22 զմանկտիս։ Եւ ստիպեաց վաղվաղակի
զաշակերտսն մտանել ի նաւ և յա-
ռաջել յայնկոյս, մինչ ինքն զժողո-
վուրդսն արձակիցէ։
23 Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն,
ել ի լեառն առանձինն կալ յաղօթս.
և իբրև ընդ երեկս եղև, անդ էր միայն։

24 Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն
բազում ասպարիսօք՝ ծփեալ յալեացն.
25 քանզի ընդդէմ էր հողմն։ Եւ ի չոր-
րորդում պահու գիշերոյն եկն առ
նոսա Յիսուս գնալով ի վերայ ծովուն։
26 Իբրև տեսին զնա աշակերտքն զի
գնայր ի վերայ ծովուն, խռովեցան
և ասեն, թէ ասաչօք ինչ իցէ. և առ
27 ահին աղաղակեցին։ Եւ վաղվաղակի
խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ.
քաջալերեցարուք, ես եմ, մի երկնչիք։
28 Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ.
Տէր՝ եթէ դու ես, հրամայեա ինձ
29 գալ առ քեզ ի վերայ ջրոցս։ Եւ նա
ասէ, եկ. և իջեալ ի նաւէն Պետրոս
գնաց ի վերայ ջրոցն, և եկն առ Յի-
30 սուս։ Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝
երկեաւ. և իբրև սկսաւ ընկղմիլ՝
աղաղակեաց և ասէ. Տէր՝ փրկեա զիս։
31 Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն
իւր կալաւ զնա և ասէ. Թերահաւատ,
32 ընդէ՞ր երկմտեցեր։ Եւ իբրև ելին ի
33 նաւն՝ հանդարտեաց հողմն։ Եւ որ ի
նաւին էին՝ մատեան երկիրպագին
նմա և ասեն. արդարև Որդի Աստուծոյ
34 ես դու։ Եւ անցեալ եկին ի ցամաք

35 ի Գեննեսարէթ։ Եւ իբրեւ ծանեան
զնա արք տեղւոյն այնորիկ, առաքե-
ցին ընդ ամենայն գաւառն՝ եւ ածին
36 առ նա զամենայն հիւանդս։ Եւ աղա-
չէին զնա, զի գոնէ միայն ի քղանցս
հանդերձի նորա մերձեսցին. եւ որ
միանգամ մերձեցանն՝ փրկեցան։

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Յայնժամ մատեան առ Յիսուս՝
որ յԵրուսաղեմէ փարիսեցիքն եւ դը-
2 պիրք՝ եւ ասեն։ Ընդէ՞ր աշակերտքն
քո անցանեն զաւանդութեամբ ծե-
րոցն, զի ո՛չ լուանան զձեռս՝ յորժամ
3 հաց ուտեն։ Նա պատասխանի ետ եւ
ասէ ցնոսա. իսկ դուք ընդէ՞ր անցանէք
զպատուիրանաւն Աստուծոյ վասն
4 ձերոյ աւանդութեանն։ Զի Աստուած
ասաց. պատուեա՛ զհայր քո եւ զմայր։
5 Եւ որ բամբասէ զհայր կամ զմայր՝
6 մահու վախճանեսցի։ Եւ դուք ասէք.
որ ասիցէ ցհայր իւր կամ ցմայր իւր,
թէ պատարագ է՝ զոր յինէն օգտի-
ցիս, եւ ոչ պատուիցէ զհայր իւր եւ

զմայր իւր. եւ խոտէք զբանն Աս-
տուծոյ վասն ձերոյ աւանդութեանն։
7 Կեղծաւորք, բարւոք մարգարէացաւ
8 ի վերայ ձեր Եսայի եւ ասէ։ Ժողո-
վուրդս այս շրթամբք պատուէ զիս,
եւ սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի
9 է յինէն։ Զուր պաշտեն զիս, ուսու-
ցանեն վարդապետութիւնս՝ զմարդ-
10 կան պատուիրեալս։ Եւ կոչեցեալ առ
ինքն զժողովուրդսն ասէ ցնոսա.
11 լուարո՛ք եւ ի միտ առէք։ Ո՛չ որ ինչ
մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ,
այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն
12 պղծէ զմարդ։ Յայնժամ մատուցեալ
աշակերտացն նորա ասեն ցնա. գի-
տես՝ զի փարիսեցիքն իբրեւ լուան
13 զբանն՝ գայթակղեցան։ Նա պատաս-
խանի ետ նոցա եւ ասէ, ամենայն
տունկ՝ զոր ոչ տնկեաց Հայր իմ
14 երկնաւոր, խլեսցի։ Թո՛յլ տուք զնոսա.
կոյրք են կուրաց առաջնորդք. կոյր
կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ,
եւ երկոքին ի խորխորատ անկանին։
15 Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ.
16 մեկնեա՛ մեզ զառակս զայս։ Ասէ
Յիսուս. տակաւին եւ դուք անմիտք

17 էք։ Եւ ոչ իմանայք, եթէ ամենայն
որ մտանէ ի բերան, յորովայն երթայ
18 և արտաքս ելանէ։ Իսկ որ ելանէ ի
բերանոյ՝ ի սրտէ անտի գայ. և այն
19 պղծէ զմարդ։ Զի ի սրտէ ելանեն
խորհուրդք չարք՝ սպանութիւնք,
շնութիւնք, պոռնկութիւնք, գողու-
թիւնք, սուտ վկայութիւնք, հայհո-
20 յութիւնք։ Այս ամենայն է՝ որ պղծէ
զմարդն, այլ անլուայ ձեռօք ուտել՝
ոչ պղծէ զմարդ։
21 Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց ի
22 կողմանս Տիւրոսի և Սիդոնի։ Եւ ահա
կին մի քանանացի ի սահմանաց
անտի նոցա՝ ելեալ աղաղակէր և
ասէր. ողորմեա՛ ինձ Տէր, որդի
Դաւթի, դուստր իմ չարաչար այսա-
23 հարի։ Եւ նա ոչ ետ նմա պատաս-
խանի՝ և մատուցեալ աշակերտքն
նորա՝ աղաչէին զնա և ասէին. ար-
ձակեա՛ զնա, զի աղաղակէ զհետ մեր։
24 Նա պատասխանի ետ և ասէ. ոչ
ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս
25 կորուսեալս տանն Իսրայէլի։ Եւ նա
մատուցեալ երկիրպագանէր նմա և
26 ասէր. Տէր՝ օգնեա՛ ինձ։ Պատասխանի

ետ նմա և ասէ. ոչ է բարւոք առնուլ
27 զհաց մանկանց և արկանել շանց։ Եւ
նա ասէ. այո՛, Տէր, քանզի և շունք
կերակրին ի փշրանաց անկելոց ի
28 սեղանոյ տեառն իւրեանց։ Յայնժամ
պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ.
ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո,
եղիցի քեզ որպէս և կամիս. և բժըշ-
կեցաւ դուստրն նորա ի նմին ժամու։
29 Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն
ի ծովեզրն Գալիլեացւոց, և ելեալ ի
30 լեառն նստէր անդ։ Մատեան առ նա
ժողովուրդք բազումք՝ որ ունէին ընդ
իւրեանս՝ կաղս, կոյրս, համերս, մի-
ակողմանիս, և այլս բազումս, և ըն-
կեցին զնոսա առ ոտս նորա՝ և բժըշ-
31 կեաց զնոսա։ Մինչև զարմանալ ժո-
ղովրդոցն, որ տեսանէին, զի համերք
խօսէին, կաղք գնային, միակողմանիք
բժշկէին, կոյրք տեսանէին, և փա-
ռաւոր առնէին զԱստուածն Իսրայէլի։
32 Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուսի զա-
շակերտսն՝ ասէ. գթամ ի ժողովուրդդ,
զի արդ երեք աւուրք են, զի կան
առ իս, և ոչ ունին զինչ ուտիցեն.
և արձակել զդոսա նօթիս՝ չկամիմ,

գուցէ նքթիցեն զճանապարհայն։
33 Ասեն ցնա աշակերտքն։ Իսկ արդ մեզ
յանապատի աստ ուստի՞ իցէ այնչափ
հաց՝ մինչ յագեցուցանել զայսչափ
34 ժողովուրդ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս,
քանի՞ նկանակ ունիք. և նոքա ասեն,
35 եօթն, և սակաւ ձկունս։ Եւ հրամա-
յեաց ժողովրդեանն բազմել ի վերայ
36 գետնոյ։ Եւ առեալ զեօթն նկանակսն
և զձկունսն՝ գոհացաւ և եբեկ. և ետ
ցաշակերտսն և նոքա ժողովրդեանն։
37 Կերան ամենեքեան և յագեցան. և
բարձին զնշխարս կոտորոցն՝ եօթն
38 զամբիւղ լի։ Եւ որք կերանն՝ էին
արք իբրև չորք հազարք. թող զկա-
39 նայս և զմանկտիս։ Իբրև արձակեաց
զժողովուրդսն, ել ի նաւ և եկն ի
սահմանս Մագդաղեայ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն և
սադուկեցիք, փորձելով խնդրէին ի
նմանէ նշան յերկնից ցուցանել նոցա։
2 Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա.

յորժամ երեկոյ լինի՝ ասէք, պարզ
3 լինիցի, զի կարմրացեալ է երկին։ Եւ
առաւօտու՝ այսօր մրրիկ, զի չառա-
գունի տրտմութեամբ երկին. արդ՝
զերեսս երկնի կարէք քննել, իսկ
զնշան ժամանակիս ո՞չ կարէք գիտել։
4 Ազգ չար և շնացող՝ նշան խնդրէ. և
նշան մի՛ տացի նմա, բայց նշանն
Յովնանու մարգարէի. և եթող զնոսա
5 և գնաց։ Գնացին և աշակերտքն յայն-
6 կոյս, և մոռացան առնուլ հաց։ Ասէ
ցնոսա Յիսուս. տեսէք և զգո՛յշ լերուք
ի խմորոյ սադուկեցւոցն և փարիսեց-
7 ւոց։ Նոքա խորհէին ընդ միմեանս
8 և ասէին, թէ հաց ո՛չ բարձաք։ Գիտաց
Յիսուս և ասէ. զի՞ խորհիք ի միտս
ձեր, թերահաւատք, եթէ հաց ոչ
9 ունիք։ Տակաւին չիմանա՞ք՝ և ո՛չ
յիշէք զհինգ նկանակն ի հինգ հա-
զարսն, և քանի՞ սակառի բարձիք։
10 Եւ ոչ զեօթն նկանակն ի չորս հա-
զարսն, և քանի՞ զամբիւղս բարձիք։
11 Արդ՝ զիա՞րդ ոչ իմանայք, եթէ ո՛չ
վասն հացի ասացի ձեզ զգոյշ լինել
ի խմորոյ փարիսեցւոցն և սադուկեց-
12 ւոց։ Յայնժամ ի միտ առին, թէ ո՛չ

ասաց զգուշանալ ի խմորոյ, այլ յա-
ղանդոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց:
13 Եւ եկեալ Յիսուս ի կողմանս Փի-
լիպպեայ Կեսարեայն, հարցանէր
զաշակերտսն և ասէր. զո՞ ոք ասեն
զինէն մարդիկն՝ թէ իցէ Որդի մար-
14 դոյ: Եւ նոքա ասեն. ոմն զՅովհաննէս
մկրտիչ, և այլք զԵղիա, և կէսք զԵ-
րեմիա, կամ զմի ոք ի մարգարէից:
15 Ասէ ցնոսա. իսկ դուք զո՞ ոք ասէք
16 զինէն թէ իցեմ: Պատասխանի ետ
Սիմոն Պետրոս և ասէ. դու ես Քրիս-
տոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ:
17 Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա.
երանի քեզ Սիմոն որդի Յովնանու,
զի մարմին և արիւն ոչ յայտնեաց
քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է:
17 Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ,
և ի վերայ այդր վիմի շինեցից զե-
կեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա
19 մի յաղթահարեսցեն: Եւ տաց քեզ
զփականս արքայութեան երկնից. և
զոր միանգամ կապեսցես յերկրի՝
եղիցի կապեալ յերկինս, և զոր ար-
ձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ
20 յերկինս: Յայնժամ սաստեաց աշա-

կերտացն, զի մի ումեք ասիցեն՝ թէ
21 նա է Քրիստոսն: Յայնմ հետէ սկսաւ
Յիսուս ցուցանել աշակերտացն իւրոց,
թէ պարտ է նմա երթալ յԵրուսաղէմ,
և բազում չարչարանս չարչարել ի
քահանայապետից և ի դպրաց և ի
ծերոց ժողովրդեանն՝ և սպանանել,
22 և յերիր աւուր յառնել: Եւ առեալ
զնա մեկուսի Պետրոսի, սկսաւ կագել
ընդ նմա՝ և ասել. քաւ լիցի քեզ
23 Տէր, մի՛ եղիցի քեզ այդ: Եւ նա
դարձեալ ի Պետրոս ասէ. երթ յետս
իմ սատանայ, գայթակղութիւն իմ
ես. զի ոչ խորհիս դու զԱստուածոյսն՝
24 այլ զմարդկան: Յայնժամ Յիսուս
ասէ ցաշակերտսն իւր. եթէ ոք կամի
զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն, և
առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ:
25 Զի որ կամիցի զանձն իւր կեցուցա-
նել՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ
զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա:
26 Զինչ օգտիցի մարդ՝ թէ զաշխարհս
ամենայն շահեսցի, և զանձն իւր
տուժեսցէ. կամ զինչ տացէ մարդ
27 փրկանս ընդ անձին իւրոյ: Զի գալոց
է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ

հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայն-
ժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ
28 գործս իւր։ Ամէն ասեմ ձեզ. զի իցեն
ոմանք ի սոցանէ որք աստ կան, որք
ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն
զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ
իւրով։

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր
Յիսուս զՊետրոս և զՅակոբոս և
զՅովհաննէս զեղբայր նորա, և հանէ
զնոսա ի լեառն մի բարձր առանձինն։
2 Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, և
լուսաւորեցան երեսք նորա իբրև զա-
րեգակն, և հանդերձք նորա եղեն
3 սպիտակ իբրև զլոյս։ Եւ ահա երե-
ւեցան նոցա Մովսէս և Եղիա՝ որ
4 խօսէին ընդ նմա։ Պատասխանի ետ
Պետրոս՝ և ասէ ցՅիսուս. Տէր, բար-
ւոք է մեզ աստ լինել. եթէ կամիս՝
արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ
5 և մի Մովսիսի և մի Եղիայի։ Եւ
մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լու-

սաւոր հովանի եղև ի վերայ նոցա.
ձայն եղև յամպոյն և ասէ. դա է Որդի
իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ, դմա
6 լուարուք։ Իբրև լուան աշակերտքն,
անկան ի վերայ երեսաց իւրեանց և
7 երկեան յոյժ։ Եւ մատուցեալ Յիսուս
բուռն եհար զնոցանէ և ասէ. յոտն
8 կացէք և մի երկնչիք։ Ամբարձին զաչս
իւրեանց՝ և ոչ զոք տեսին, բայց
9 միայն զՅիսուս։ Եւ մինչդեռ իջանէին
ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա
Յիսուս և ասէ. մի ումեք ասիցէք
զտեսիլդ՝ մինչև Որդի մարդոյ ի մեռելոց
10 յարիցէ։ Հարցին զնա աշակերտքն և
ասեն. զիարդ դպիրքն ասեն, եթէ
11 Եղիայի նախ պարտ է գալ։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա.
Եղիա գայ՝ և հաստատեսցէ զամենայն։
12 Այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա եկեալ իսկ
է. և ոչ ծանեան զնա, այլ արարին
ընդ նա զոր ինչ կամեցան. նոյնպէս
և Որդի մարդոյ չարչարելոց է ի նո-
13 ցանէ։ Յայնժամ ի միտ առին աշա-
կերտքն, թէ վասն Յովհաննու մկրտչի
ասաց ցնոսա։
14 Եւ իբրև եկին ի ժողովուրդն, մա-

տեալ այր մի ի ծունր իջանէր և
ասէր. Տէր, ողորմեա՛ որդւոյ իմում,
զի լուսնոտի է և չարաչար հիւանդա-
նայ. բազում անգամ անկանի ի հուր,
15 և երբեք ի ջուր։ Եւ մատուցի զնա
աշակերտացն քոց, և ո՛չ կարացին
16 բժշկել։ Պատասխանի ետ Յիսուս և
ասէ. ո՛վ ազգ անհաւատ և թիւր,
մինչև յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչև
յե՞րբ անսայցեմ ձեզ. ա՛ծ զնա առ իս։
17 Եւ սաստեաց ի նա Յիսուս՝ և ել ի
նմանէ դևն, և բժշկեցաւ մանուկն ի
18 ժամէն յայնմանէ։ Յայնժամ մատեան
աշակերտքն առանձինն և ասեն ցՅի-
սուս. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել
19 զնա։ Եւ նա ասէ ցնոսա. վասն թե-
րահաւատութեան ձերոյ. ամէն ասեմ
ձեզ, եթէ ունիցիք հաւատս քան
զհատ մանանխոյ, ասասջիք լերինս
այսմիկ՝ փոխեաց աստի անդր, և
փոխեսցի. և ոչ ինչ անհնարին լինիցի
20 ձեզ։ Բայց այս ազգ ո՛չ ելանէ,
եթէ ոչ աղօթիւք և պահովք։
21 Եւ մինչդեռ շրջէին նոքա ի Գա-
լիլեայ, ասէ ցնոսա Յիսուս. մատնե-
լոց է Որդի մարդոյ ի ձեռս մարդկան։

22 Եւ սպանցեն զնա, և յերրորդ աւուր
23 յարիցէ. և տրտմեցան յոյժ։ Իբրև
եկին նոքա ի Կափառնաում, մատեան՝
որք զերկդրամեանն պահանջէին՝ առ
Պետրոս, և ասեն. վարդապետն ձեր
ո՞չ տայ զերկդրամեանն, և ասէ՝ այո։
24 Եւ իբրև եմուտ ի տուն՝ յառաջեաց
քան զնա Յիսուս և ասէ. զի՞նչ
թուի քեզ, Սիմոն. թագաւորք աշխարհի
յումմէ՞ առնուն զհարկս կամ զհաս,
25 յորդւո՞ց իւրեանց՝ թէ յօտարաց։ Եւ
իբրև ասաց թէ յօտարաց, ասէ ցնա
Յիսուս, ապա ուրեմն ազատ են որ-
26 դիքն։ Բայց զի մի՛ գայթակղեցու-
ցուք զնոսա, երթ ի ծով և ընկեա
կարթ, և զառաջին ձուկն որ ելանիցէ՝
ա՛ռ և բա՛ց զբերան նորա և գտանի-
ցես սատեր, և զայն առեալ տացես
նոցա ընդ իմ և ընդ քո։

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Յայնմ աւուր մատեան աշակերտ-
քն առ Յիսուս և ասեն. ո՞վ իցէ ի
մէնջ մեծ յարքայութեան երկնից։
2 Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ

մի, կացոյց զնա ի մէջ նոցա և ասէ։
3 Ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ դարձջիք
և եղիջիք իբրև զմանկտի, ոչ մտա-
4 նիցէք յարքայութիւն երկնից։ Արդ՝
որ խոնարհեցուցանէ զանձն իբրև
զմանուկս զայս, նա է մեծ յարքա-
5 յութեան երկնից։ Եւ որ ոք ընկալցի
մանուկ մի այսպիսի յանուն իմ, զիս
6 ընդունի։ Եւ որ ոք գայթակղեցուսցէ
զմի ի փոքրկանցս յայսցանէ յիս հա-
ւատացելոց, լաւ է նմա եթէ կախիցի
երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ և
7 ընկղմիցի ի խորս ծովու։ Վայ աշ-
խարհի գայթակղութեանց, հարկ է
գալ գայթակղութեանց. բայց վայ
մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ
8 գայթակղութիւն։ Եթէ ձեռն քո կամ
ոտն գայթակղեցուցանէ զքեզ, հատ
զնա և ընկեա ի քէն. լաւ իցէ քեզ
միաձեռանի կամ կաղ մտանել ի
կեանս, քան թէ երկուս ձեռս և եր-
կուս ոտս ունել, և անկանել ի հուրն
9 յաւիտենական։ Եւ եթէ ակն քո
գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա
և ընկեա ի քէն. լաւ իցէ քեզ միա-
կանի մտանել ի կեանս, քան երկուս

աչս ունել, և անկանել ի գեհեն հրոյն։
10 Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք
զմի ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ
ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս
հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝
11 որ յերկինս է։ Զի եկն Որդի մարդոյ
12 կեցուցանել զկորուսեալն։ Զինչ
թուի ձեզ, եթէ լինիցի մարդոյ հա-
րիւր ոչխար, և մոլորիցի մի ի նոցանէ,
ոչ թողուցու զիննսուն և զինն ոչ-
խարսն ի լերինս, և երթիցէ խնդրիցէ
13 զմոլորեալն։ Եւ եթէ լինիցի գտանել
զնա, ամէն ասեմ ձեզ, զի ուրախ
լինի ի վերայ նորա առաւել, քան ի
վերայ իննսուն և իննուցն, որ չիցեն
14 մոլորեալ։ Այսպէս ոչ են կամք առաջի
Հօր իմոյ որ յերկինս է, եթէ կորիցէ
15 մի ի փոքրկանցս յայսցանէ։ Եթէ
մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յան-
դիմանեա զնա՝ յորժամ դու և նա
միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շա-
16 հեցար զեղբայր քո։ Ապա թէ ոչ
լուիցէ քեզ, առ ընդ քեզ միւս ևս
կամ երկուս. զի ի բերանոյ երկուց
և երից վկայից հաստատեսցի ամե-
17 նայն բան։ Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ,

ասասջիր յեկեղեցւոջ. ապա թէ և
եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ
18 իբրև զհեթանոսն և զմաքսաւոր։ Ամէն
ասեմ ձեզ. զոր կապիցէք յերկրի՝
եղիցի կապեալ յերկինս, և զոր ար-
ձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ
19 յերկինս։ Դարձեալ ասեմ ձեզ. եթէ
երկու ի ձէնջ միաբանիցեն յերկրի
վասն ամենայն իրաց, զինչ և խնդ-
րեսցեն՝ եղիցի նոցա ի Հօրէ իմմէ
20 որ յերկինս է։ Զի ուր իցեն երկու
կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ
21 եմ ես ի մէջ նոցա։ Յայնժամ մա-
տեաւ առ նա Պետրոս և ասէ. Տէր՝
քանիցս անգամ եթէ մեղիցէ ինձ
եղբայր իմ, և թողից նմա. մինչև
22 յեօթն անգամ։ Ասէ ցնա Յիսուս.
ո՛չ ասեմ քեզ՝ թէ մինչև յեօթն ան-
գամ, այլ մինչև յեօթանասնեկին
23 եօթն։ Վասն այսորիկ նմանեցաւ
արքայութիւն երկնից առն թագա-
ւորի, որ կամեցաւ համար առնուլ ի
24 մէջ ծառայից իւրոց։ Եւ իբրև սկսաւ
առնուլ, մատուցաւ առ նա պարտա-
25 պան մի բիւր քանքարոյ։ Իբրև ո՛չ
ունէր հատուցանել, հրամայեաց զնա

վաճառել տէրն նորա՝ և զկին նորա
և զորդիս և զամենայն որ զինչ և
26 ունիցի՝ և հատուցանել։ Եւ անկեալ
ծառայն երկիրպագանէր նմա և ա-
սէր. երկայնամիտ լեր առ իս, և զա-
27 մենայն հատուցից քեզ։ Գթացեալ
տէր ծառային այնորիկ՝ արձակեաց
28 զնա, և զփոխն եթող նմա։ Եւ ելեալ
ծառայն այն եգիտ զմի ի ծառայակ-
ցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր
դահեկան, և կալեալ զնա խեղդէր և
29 ասէր. հատո՛ ինձ, զոր պարտիսդ։ Արդ
անկեալ ծառայակիցն առ ոտս նորա,
աղաչէր զնա և ասէր. երկայնամիտ
լեր առ իս, և զամենայն հատուցից
30 քեզ։ Եւ նա ո՛չ կամէր. այլ չոգաւ
արկ զնա ի բանտ մինչև հատուսցէ
31 ըզպարտսն։ Իբրև տեսին ծառայա-
կիցքն նորա որ ինչ եղեն՝ տրտմեցան
յոյժ, և եկեալ ցուցին տեառն իւրեանց
32 զամենայն որ ինչ եղեն։ Յայնժամ
կոչեաց զնա տէրն իւր և ասէ. ծառա՛յ
չար, զամենայն զպարտսն թողի քեզ՝
33 վասն զի աղաչեցեր զիս։ Իսկ արդ՝
ո՛չ էր պարտ և քեզ ողորմել ծառա-
յակցին քում, որպէս և ես քեզ ողոր-

34 մեցայ: Եւ բարկացեալ տէրն նորա՝
մատնեաց զնա դահճաց, մինչև հա-
35 տուսցէ զամենայն զպարտսն: Նոյն-
պէս և Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ
ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր
եղբօր իւրում. ի սրտից ձերոց զյան-
ցանս նոցա:

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս
զբանս զայսոսիկ, փոխեցաւ ի Գա-
լիլեէ՝ և եկն ի սահմանս Հրէաստանի
2 յայնկոյս Յորդանանու: Եւ գնացին
զհետ նորա ժողովուրդք բազումք, և
3 բժշկեաց զնոսա անդ: Եւ մատուցեալ
առ նա փարիսեցիքն, փորձէին զնա
և ասէին, եթէ արժա՞ն իցէ ումեք
արձակել զկին իւր ըստ ամենայն
4 վնասու: Պատասխանի ետ նոցա և
ասէ, չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ
հաստատեացն ի սկզբանէ՝ արու և էգ
5 արար զնոսա և ասէ: Վասն այսորիկ
թողցէ այր զհայր և զմայր՝ և երթիցէ
զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան

6 ի մարմին մի: Ապա ուրեմն ոչ են
երկու՝ այլ մի մարմին. արդ՝ զոր
Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկ-
7 նեսցէ: Ասեն ցնա, իսկ Մովսէս ըն-
դէր պատուիրեաց մեզ տալ թուղթ
8 մեկնելոյ՝ և արձակել: Ասէ ցնոսա,
Մովսէս վասն խստասրտութեան ձե-
րոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս
ձեր, այլ ի սկզբանէ ոչ եղև այնպէս:
9 Բայց ասեմ ձեզ, զի ամենայն որ
արձակեսցէ զկին իւր՝ և ոչ վասն
պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ,
և որ զարձակեալն առնիցէ՝ շնայ:
10 Ասեն ցնա աշակերտքն իւր. եթէ
այդպէս ինչ վնաս իցէ ընդ այր և
11 ընդ կին, լաւ է չամուսնանալ: Եւ
նա ասէ ցնոսա. ոչ ամենեքեան բա-
ւական են այդմ բանի, այլ որոց
12 տուեալ է: Զի են ներքինիք՝ որ յա-
րովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս,
և են ներքինիք, որ ի մարդկանէ եղեն
ներքինիք և են ներքինիք՝ որ զանձինս
իւրեանց արարին ներքինիս վասն ար-
քայութեան երկնից, որ կարողն է տա-
13 նել՝ տարցի: Յայնժամ մատուցան առ
նա մանկտի, զի ձեռն դիցէ ի վերայ նո-

ցա՝ և աղօթս արասցէ. և աշակերտքն
14 նորա սաստէին նոցա։ Ասէ Յիսուս,
Թո՛յլ տուք մանկտւոյդ՝ և մի՛ արգելուք
զդոսա գալ առ իս, զի այդպիսեացդ է
15 արքայութիւն երկնից։ Եւ եդեալ ձեռն
ի վերայ նոցա՝ գնաց անտի։
16 Եւ ահա մատուցեալ ոմն առ նա
ասէ. վարդապետ բարի, զի՞նչ բարի
գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանս
17 յաւիտենականս։ Եւ նա ասէ ցնա.
զի՞ հարցանես զիս զբարւոյ, մի է
բարի. եթէ կամիս ի կեանսն յաւի-
տենականս մտանել՝ պահեա զպա-
18 տուիրանսն։ Ասէ ցնա, զո՞րս. ասէ
ցնա Յիսուս, զմի՛ սպանաներն, և մի՛
շնար, և մի՛ գողանար, և մի՛ սուտ
19 վկայեր։ Պատուեա զհայր քո և զմայր.
և սիրեսցես զընկեր քո իբրև զանձն
20 քո։ Ասէ ցնա պատանին. զայդ ամե-
նայն պահեցի ի մանկութենէ իմմէ.
21 արդ՝ ի՞ւ իւիք պակաս իցեմ։ Ասէ
ցնա Յիսուս. եթէ կամիս կատարեալ
լինել, երթ վաճառեա զինչս քո և
տուր աղքատաց, և ունիցիս գանձս
22 յերկինս, և եկ զկնի իմ։ Իբրև լուաւ
պատանին զբանն՝ գնաց տրտմեալ,

23 զի ունէր ստացուածս բազումս։ Ասէ
Յիսուս ցաշակերտսն. ամէն ասեմ
ձեզ, զի դժուարաւ մտցէ մեծատունն
24 յարքայութիւն երկնից։ Դարձեալ
ասեմ ձեզ, դիւրին է մալխոյ մտանել
ընդ ծակ ասղան, քան մեծատան
յարքայութիւն Աստուծոյ մտանել։
25 Իբրև լուան աշակերտքն, զարմացան
յոյժ՝ և ասեն. իսկ ո՞ կարիցէ ապրել։
26 Հայեցաւ ի նոսա Յիսուս և ասէ. առ
ի մարդկանէ այդ անկար է, այլ առ
յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր։
27 Յայնժամ պատասխանի ետ Պետրոս
և ասէ ցնա. ահաւասիկ մեք թողաք
զամենայն և եկաք զկնի քո, արդ
28 զի՞նչ լինիցի մեզ։ Ասէ ցնոսա Յիսուս.
ամէն ասեմ ձեզ, զի դուք որ եկիք
զկնի իմ, ի միւսանգամ գալստեանն՝
յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ
փառաց իւրոց, նստջիք և դուք յեր-
կոտասան աթոռ՝ դատել զերկոտասան
29 ազգն Իսրայէլի։ Եւ ամենայն որ ոք
եթող զտուն կամ զեղբարս կամ
զքորս կամ զհայր կամ զմայր կամ
զկին կամ զորդիս կամ զագարակս
վասն անուան իմոյ, հարիւրապատիկ

առցէ՝ և զկեանսն յաւիտենականս
30 ժառանգեսցէ։ Բազումք եղիցին ա-
ռաջինք յետինք՝ և յետինք առաջինք։

ԳԼՈՒԽ Ի.

1 Քանզի նման է արքայութիւն
երկնից առն տանուտեառն, որ ել
ընդ առաւօտս ի վարձու ունել մշակս
2 յայգի իւր։ Եւ արկ վարձս մշակացն
աւուրն դահեկան, և առաքեաց զնոսա
3 յայգի իւր։ Եւ ելեալ զերրորդ ժամու՝
ետես այլս զի կային դատարկք ի
4 հրապարակս։ Ասէ և ցնոսա, երթա՛յք
և դուք յայգի իմ, և որ ինչ արժան
5 իցէ՝ տաց ձեզ։ Գնացին և նոքա. և
դարձեալ ելեալ զվեց ժամու և զինն
6 ժամու՝ արար նոյնպէս։ Եւ զմետասա-
ներորդ ժամու ելեալ, եգիտ այլս՝ զի
կային դատարկք, ասէ և ցնոսա.
ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դա-
7 տարկք։ Ասեն ցնա, զի ոչ ոք կալաւ
զմեզ ի վարձու. ասէ ցնոսա, երթա՛յք
և դուք յայգին, և որ ինչ արժան է՝
8 առնուցուք։ Եւ իբրև երեկոյ եղև՝

ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր.
կոչեա՛ զմշակսն և տո՛ւր նոցա վարձս՝
սկսեալ ի յետնոցն մինչև ցառաջինսն։
9 Իբրև եկին որք զմետասաներորդ
10 ժամուն, առին մէն մի դահեկան։ Եկեալ
և առաջինքն՝ համարէին թէ աւելի
առնուցուն. և առին մէն մի դահեկան
11 և նոքա։ Իբրև առին՝ տրտնջէին
12 զտանուտեառնէն՝ և ասէին։ Թէ դոքա
յետինքդ մի ժամ գործեցին, և հա-
սարակորդս մեզ արարեր զդոսա, որ
զծանրութիւն աւուրն բարձաք և
13 զտօթ։ Նա պատասխանի ետ միում
ի նոցանէ՝ և ասէ. ընկեր, չզրկեմ
զքեզ, ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր
14 ընդ իս։ Ա՛ռ զքոյդ և երթ. եթէ
կամիմ յետնոյս տալ՝ որպէս և քեզ։
15 Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմս
առնել զինչ և կամիմ, կամ թէ ակն
16 քո չար է, զի ես առատ եմ։ Այսպէս
եղիցին յետինք առաջինք, և առաջինք
յետինք. զի բազումք են կոչեցեալք,
և սակաւք են ընտրեալք։
17 Իբրև ելանէր Յիսուս յԵրուսաղէմ,
ա՛ռ զերկոտասանսն առանձինն, և ի
18 ճանապարհին ասէ ցնոսա։ Ահաւասիկ

ելանեմք յԵրուսաղէմ, և Որդի մարդոյ
մատնեսցի քահանայապետից և դպի-
րաց. և դատապարտեսցեն զնա ի մահ։
19 Եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝
այպանել և հարկանել և ի խաչ հանել,
20 և յերիր աւուր յարիցէ։ Յայնժամ
մատեաւ առ նա մայր որդւոցն Զե-
բեդեայ որդւովքն իւրովք հանդերձ.
երկիրպագանէր և խնդրէր ինչ ի
21 նմանէ։ Եւ Նա ասէ ցնա, զի՞նչ կամիս.
ասէ ցնա, ասա՛ զի նստցին սոքա
երկու որդիքս իմ՝ մի ընդ աջմէ
քումմէ և մի ընդ ահեկէ յարքայու-
22 թեան քում։ Պատասխանի ետ Յիսուս
և ասէ. ո՛չ գիտէք զինչ խնդրէք.
կարէ՞ք ըմպել զբաժակն, զոր ես ըմ-
պելոց եմ, կամ զմկրտութիւն զոր
ես մկրտելոցն եմ՝ մկրտիլ. ասեն ցնա,
23 կարող եմք։ Ասէ ցնոսա Յիսուս. զբա-
ժակն իմ ըմպիցէք, և զմկրտութիւն
զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք, բայց
նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ
իմմէ՝ ո՛չ է իմ տալ, այլ որոց տուեալ
24 է ի Հօրէ իմմէ։ Եւ լուեալ տասանցն
բարկացան ի վերայ երկուցն եղբարց։
25 Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն և

ասէ. գիտէք, զի իշխանք ազգաց
տիրեն նոցա, և մեծամեծքն իշխեն
26 նոցա։ Ո՛չ այնպէս իցէ և ի ձերում
միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ
27 լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ։ Եւ որ
կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի
28 ձեր ծառայ։ Որպէս Որդի մարդոյ ոչ
եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել.
և տալ զանձն իւր փրկանս փոխանակ
բազմաց։
29 Եւ յելանելն նոցա յԵրիքովէ, գնա-
ցին զհետ նորա ժողովուրդք բազումք։
30 Եւ ահա կոյրք երկու նստէին առ
ճանապարհաւն. իբրև լուան թէ Յի-
սուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն.
ողորմեա՛ց մեզ, Յիսուս Որդի Դաւթի։
31 Եւ ամբոխն սաստեաց նոցա զի լռես-
ցեն. և նոքա ևս առաւել աղաղակէին
և ասէին. Տէ՛ր, ողորմեա՛ց մեզ, Որդի
32 Դաւթի։ Զտեղի էառ Յիսուս, կոչեաց
զնոսա և ասէ. զի՞նչ կամիք զի արա-
33 րից ձեզ։ Ասեն ցնա. Տէր, զի բացցին
34 աչք մեր։ Եւ գթացեալ Յիսուս մեր-
ձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի
տեսին և գնացին զհետ նորա։

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Իբրեւ մօտ եղեն յԵրուսաղէմ, եւ
եկին ի Բեթփագէ մերձ ի լեառն
Ձիթենեաց, յայնժամ Յիսուս արձա-
կեաց երկուս յաշակերտացն իւրոց։
2 Եւ ասէ ցնոսա. երթա՛յք ի գեօղդ՝
որ առաջի ձեր է, եւ անդէն գտանէք
էշ կապեալ եւ յաւանակ ընդ նմին,
3 լուծէ՛ք ածէ՛ք ինձ։ Եւ եթէ ոք ասիցէ
ինչ ձեզ, ասասջի՛ք՝ եթէ Տեառն իւր-
եանց պիտոյ են. եւ վաղվաղակի ա-
4 ռաքեսցէ զնոսա։ Բայց զայս ամենայն
եղեւ՝ զի լցցի բան մարգարէին որ ասէ։
5 Ասացէ՛ք դստեր Սիովնի. ահա թա-
գաւոր քո գայ քեզ հեզ եւ հեծեալ
6 յէշ եւ յաւանակի իշոյ։ Գնացին աշա-
կերտքն, եւ արարին որպէս հրամայեաց
7 նոցա Յիսուս։ Եւ ածին զէշն եւ զյա-
ւանակն, եւ արկին զնոքօք ձորձս, եւ
8 նստաւ ի վերայ նոցա։ Եւ բազում
ժողովուրդք տարածեցին զհանդերձս
իւրեանց ի ճանապարհին, եւ այլք
հատանէին ոստս ի ծառոց՝ եւ տարա-

9 ծանէին ի ճանապարհին։ Եւ ժողո-
վուրդքն՝ որ առաջի եւ զկնի երթային,
աղաղակէին եւ ասէին. օրհնութիւն
Որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յա-
նուն Տեառն. օրհնութիւն ի բարձունս։
10 Եւ ի մտանելն նորա յԵրուսաղէմ,
դղրդեցաւ քաղաքն ամենայն, եւ ասէ.
11 ո՞վ իցէ սա։ Եւ ժողովուրդքն ասեն.
սա՛ է մարգարէն Յիսուս՝ որ ի Նա-
12 զարեթէ Գալիլեացւոց։ Եւ եմուտ
Յիսուս ի տաճարն եւ եհան արտաքս
զամենեսին, որ վաճառէինն եւ գնէին
ի տաճարի անդ. եւ զսեղանս հատա-
վաճառացն կործանեաց եւ զաթոռս
13 աղաւնեվաճառացն։ Եւ ասէ ցնոսա.
գրեալ է, տուն իմ տուն աղօթից
կոչեսցի՝ եւ դուք արարէք զդա այրս
14 աւազակաց։ Եւ մատեան առ նա
կոյրք եւ կաղք ի տաճարին, եւ բժշկեաց
15 զնոսա։ Իբրեւ տեսին քահանայա-
պետքն եւ դպիրք զսքանչելիսն զոր
արար, եւ զմանկտին որ աղաղակէին
ի տաճարին եւ ասէին, օրհնութիւն
16 Որդւոյ Դաւթի, բարկացան։ Եւ ասեն
ցնա. լսե՞ս՝ զինչ ասեն դոքա. ասէ
ցնոսա Յիսուս, այո՛. չիցէ՞ ընթերցեալ

ձեր՝ թէ ի բերանոյ տղայոց և ստըն-
17 դեայց կատարեցեր զօրհնութիւն։ Եւ
թողեալ զնոսա՝ ել արտաքոյ քաղաքին
ի Բեթանիա, և անդ ագաւ։
18 Եւ այգուն իբրև դարձաւ անդրէն
19 ի քաղաքն՝ քաղցեաւ։ Եւ տեսեալ
թզենի մի ի վերայ ճանապարհին,
եկն ի նա, և ոչինչ եգիտ ի նմա, բայց
միայն տերև. և ասէ ցնա. մի այսու-
հետև ի քէն պտուղ եղիցի յաւիտեան.
20 և առժամայն չորացաւ թզենին։ Իբրև
տեսին աշակերտքն՝ զարմացան և
ասեն, թէ զիա՞րդ վաղվաղակի ցա-
21 մաքեցաւ թզենին։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնոսա. ամէն ասեմ
ձեզ, եթէ ունիցիք հաւատս և ոչ
երկմտիցէք, ոչ միայն թզենւոյդ առ-
նիցէք, այլ թէպէտ և լերինդ ասիցէք՝
22 բարձիր և անկիր ի ծով՝ եղիցի։ Եւ
զամենայն ինչ զոր խնդրիցէք յաղօթս
23 հաւատով՝ առնուցուք։ Եւ իբրև եկն
ի տաճարն, մատեան առ նա՝ մինչդեռ
ուսուցանէր՝ քահանայապետքն և
ծերք ժողովրդեանն՝ և ասեն. որո՞վ
իշխանութեամբ առնես զայդ, և ո՞վ
24 ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։ Պա-

տասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա.
հարցից և ես զձեզ բան մի. զոր թէ
ասիցէք ինձ, և ես ձեզ ասացից՝ որով
25 իշխանութեամբ առնեմ զայս։ Մկըր-
տութիւնն Յովհաննու ուստի էր,
յերկնից՝ թէ ի մարդկանէ. և նոքա
26 խորհէին ընդ միմեանս և ասէին։ Եթէ
ասեմք յերկնից, ասէ ցմեզ, իսկ ընդէր
ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք
ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդե-
նէն. զի ամենեքին զՅովհաննէս իբրև
27 զմարգարէ ունէին։ Պատասխանի
ետուն Յիսուսի և ասեն, ոչ գիտեմք.
ասէ ցնոսա և նա, և ոչ ես ասեմ ձեզ
որով իշխանութեամբ առնեմ զայս։
28 Բայց զիա՞րդ թուի ձեզ. առն միոջ
էին երկու որդիք. և մատուցեալ առ
առաջինն ասէ. որդեակ, երթ այսօր
29 գործեա յայգւոջ։ Նա պատասխանի
ետ և ասէ. երթամ տէր՝ և ոչ չոգաւ։
30 Մատեաւ և առ միւսն, և ասէ նոյն-
պէս. և նա պատասխանի ետ և ասէ.
ոչ կամիմ, բայց յետոյ զղջացաւ և
31 չոգաւ. յայգին։ Արդ՝ ո՞ յերկուցունց
արար զկամս հօրն. ասեն՝ յետինն.
ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ,

զի մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկ-
32 նից։ Զի եկն Յովհաննէս ճանապար-
հաւ արդարութեան՝ և ոչ հաւատացէք
նմա. և մաքսաւորք և պոռնիկք հա-
ւատացին նմա, և դուք տեսէք՝ և ոչ
զղջացարուք յետոյ հաւատալ նմա։
33 Այլ առակ լուարուք. այր մի էր
տանուտէր՝ որ տնկեաց այգի, և
ցանգով պատեաց զնա, և փորեաց ի
նմա հնձան, և շինեաց աշտարակ. և
ետ զնա ցմշակս, և գնաց ի տար
34 աշխարհ։ Իբրև մերձեցաւ ժամանակ
պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ
35 մշակս՝ առնուլ զպտուղս նորա։ Եւ
կալեալ մշակացն զծառայս նորա,
զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն
36 քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց
այլ ծառայս բազումս քան զառա-
ջինսն, և արարին նոցա նոյնպէս։
37 Յետոյ առաքեաց առ նոսա զորդի
իւր, և ասէ, թերևս ամաչեսցեն
38 յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակքն
իբրև տեսին զորդին, ասեն ընդ միմեանս,
սա է ժառանգն, եկայք սպանցուք
զսա, և կալցուք զժառանգութիւն

39 նորա։ Եւ առեալ հանին զնա արտա-
40 քոյ քան զայգին՝ և սպանին։ Արդ՝
յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զինչ
41 արասցէ մշակացն այնոցիկ։ Ասեն
ցնա. զչարս չարաչար կորուսցէ, և
զայգին տացէ այլոց մշակաց, որք
տացեն նմա զպտուղս ի ժամու իւր-
42 եանց։ Ասէ ցնոսա Յիսուս. չիցէ երբէք
ընթերցեալ ձեր ի գիրս. զվէմն՝ զոր
անարգեցին շինողքն, նա եղև գլուխ
անկեան. ի Տեառնէ եղև այս, և է
43 սքանչելի յաչս մեր։ Վասն այսորիկ
ասեմ ձեզ, զի բարձցի ի ձէնջ ար-
քայութիւն Աստուծոյ և տացի ազգի՝
44 որ առնիցէ զպտուղս նորա։ Եւ որ
անկցի ի վերայ վիմիս այսորիկ՝ փշ-
րեսցի, և յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ
45 զնա։ Իբրև լուան քահանայապետքն
և դպիրք և փարիսեցիք զառակս
նորա, գիտացին թէ վասն նոցա
46 ասաց։ Եւ խնդրէին զնա ունել, բայց
երկեան ի ժողովրդոցն. քանզի իբրև
զմարգարէ ունէին զնա։

ԳԼՈՒԽ ԻԲ.

1 Դարձեալ պատասխանի ետ Յի-
2 սուս եւ ասէ ցնոսա առակօք։ Նմա-
նեցաւ արքայութիւն երկնից առն
թագաւորի,որ արար հարսանիս որդւոյ
3 իւրում։ Եւ առաքեաց զծառայս իւր
կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս, եւ
4 ոչ կամէին գալ։ Դարձեալ առաքեաց
այլ ծառայս եւ ասէ. ասացէք հրաւի-
րելոցն, ահաւասիկ զճաշ իմ պատ-
րաստեցի, զուարակք իմ եւ պարարակք
զենեալք են, եւ ամենայն ինչ պատ-
5 րաստ է. եկայք ի հարսանիսս։ Եւ
նոքա յուլացեալ գնացին ոմն յագա-
6 րակ իւր, եւ ոմն ի վաճառ իւր։ Եւ
այլք կալան զծառայս նորա՝ թշնա-
7 մանեցին եւ սպանին։ Իսկ թագաւորն
իբրեւ լուաւ՝ բարկացաւ, եւ առաքեաց
զզօրս իւր եւ սատակեաց զսպանողսն
զայնոսիկ, եւ զքաղաքսն նոցա այրեաց։
8 Յայնժամ ասէ ցծառայս իւր. հար-
սանիքս պատրաստ են,եւ հրաւիրեալքն
9 չէին արժանի։ Արդ՝ երթայք յանցս

ճանապարհաց, եւ զորս միանգամ
գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիսս։
10 Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս
ժողովեցին զամենեսեան զորս եւ գտին՝
զչարս եւ զբարիս. եւ լցան հարսանիքն
11 բազմականօք։ Եւ մտեալ թագաւորն
հայել զբազմականօքն, ետես անդ այր
մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հար-
12 սանեաց։ Եւ ասէ ցնա. ընկեր, զիարդ
մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ
հարսանեաց. եւ նա պապանձեցաւ։
13 Յայնժամ ասէ թագաւորն ցպաշտա-
ւորսն. կապեցէք զդորա զոտս եւ զձեռս՝
եւ հանէք զդա ի խաւարն արտաքին,
անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։
14 Զի բազումք են կոչեցեալք՝ եւ սակաւք
են ընտրեալք։
15 Յայնժամ գնացեալ փարիսեցիքն՝
առին խորհուրդ զնմանէ, թէ որպէս
16 դնիցեն նմա որոգայթ բանիւք։ Եւ
առաքեն առ նա զաշակերտսն իւրեանց
հերովդիանոսօքն հանդերձ, եւ ասեն.
վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես,
եւ զճանապարհն Աստուծոյ ճշմար-
տութեամբ ուսուցանես, եւ ոչ է քեզ
փոյթ զումեքէ, եւ ոչ հայիս յերեսս

17 մարդոյ։ Արդ ասա մեզ, զիա՞րդ թուի
քեզ, պա՞րտ է հարկս տալ կայսեր՝
18 թէ ոչ։ Գիտաց Յիսուս զխորաման-
կութիւն նոցա, և ասէ. զի՞ փորձէք
19 զիս, կեղծաւորք։ Ցուցէք ինձ զդա-
հեկան հարկին. և նոքա մատուցին
20 նմա զդահեկան մի։ Եւ ասէ ցնոսա.
21 ո՞յր է պատկերս այս կամ գիր։ Ասեն՝
կայսեր. յայնժամ ասէ ցնոսա, երթա՛յք
տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստու-
22 ծոյն՝ Աստուծոյ։ Իբրև լուան՝ զար-
մացան, և թողին զնա և գնացին։
23 Յայնմ աւուր մատեան առ նա սա-
դուկեցիքն, որ ասէին՝ թէ չիք յա-
րութիւն. հարցին զնա և ասեն։
24 Վա՛րդապետ, Մովսէս ասաց, եթէ ոք
մեռցի անորդի՝ արասցէ զկին նորա
եղբայր իւր, և յարուսցէ զաւակ
25 եղբօր իւրում։ Էին առ մեզ եղբարք
եօթն. առաջինն արար կին և մեռաւ.
և զի ոչ ունէր զաւակ, եթող զկինն
26 իւր եղբօր իւրում։ Նոյնպէս և երկ-
րորդն՝ և երրորդն մինչև ցեօթներոր-
27 դն։ Յետ ամենեցուն մեռաւ և կինն։
28 Արդ՝ ի յարութեան ո՞յր յեօթանցն
եղիցի նա կին, զի ամենեքին կալան

29 զնա կին։ Պատասխանի ետ նոցա
Յիսուս և ասէ. մոլորեալք, ո՛չ գիտէք
զգիրս և ո՛չ զզօրութիւն Աստուծոյ։
30 Զի ի յարութեան ո՛չ կանայս առնեն
և ո՛չ արանց լինին, այլ են իբրև
31 զհրեշտակս յերկինս։ Բայց վասն
յարութեան մեռելոց չի՞ցէ ընթերցեալ
32 ձեր զասացեալն ձեզ յԱստուծոյ։ Ես
եմ Աստուած Աբրահամու, Աստուած
Իսահակայ, և Աստուած Յակոբայ.
և չէ Աստուած՝ Աստուած մեռելոց,
33 այլ կենդանեաց։ Իբրև լուան ժողո-
վուրդքն, զարմանային ընդ վարդա-
34 պետութիւն նորա։ Իսկ փարիսեցիքն
Իբրև լուան եթէ պապանձեցոյց զսա-
դուկեցիսն, ժողովեցան ի միասին։
35 Եւ եհարց մի ոմն ի նոցանէ զնա
36 փորձելով, և ասէ։ Վա՛րդապետ, ո՞ր
37 պատուիրան է մեծ յօրէնս։ Եւ Յիսուս
ասէ ցնա. սիրեսցես զՏէր Աստուած
քո յամենայն սրտէ քումմէ, և յա-
մենայն անձնէ քումմէ՝ և յամենայն
38 մտաց քոց։ Այս է մեծ և առաջին
39 պատուիրան։ Եւ երկրորդն՝ նման
սմին, սիրեսցես զընկեր քո իբրև
40 զանձն քո։ Յայս երկուս պատուի-

րանս ամենայն օրէնք և մարգարէք
41 կախեալ կան։ Եւ ի ժողովել փարի-
սեցւոցն՝ եհարց ցնոսա Յիսուս, և ասէ։
42 Զիա՞րդ թուի ձեզ վասն Քրիստոսի.
ո՞յր որդի է. ասեն ցնա, Դաւթի։
43 Ասէ ցնոսա Յիսուս. իսկ զիա՞րդ
Դաւիթ Հոգւովն կոչէ զնա Տէր՝ և
44 ասէ. ասաց Տէր ցՏէր իմ։ Նիստ ընդ
աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս
45 քո պատուանդան ոտից քոց։ Իսկ եթէ
Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի
46 նորա իցէ։ Եւ ո՛չ ոք կարէր տալ նմա
պատասխանի բան մի, և ո՛չ իշխէր
ոք յայնմ օրէ հարցանել զնա և ո՛չ
ինչ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ
ժողովուրդսն և ընդ աշակերտսն իւր
2 և ասէ։ Յաթոռն Մովսիսի նստան
3 դպիրքն և փարիսեցիք։ Զամենայն
ինչ զոր ասիցեն ձեզ՝ արարէք և
պահեցէք, բայց ըստ գործոցն նոցա
մի՛ առնէք, զի ասեն և ո՛չ առնեն։

4 Կապեն բեռինս ծանունս և դժուա-
րակիրս, և դնեն ի վերայ ուսոց մարդ-
կան, և մատամբ իւրեանց ո՛չ կամին
5 շարժել զնոսա։ Եւ զամենայն զգոր-
ծըս իւրեանց առնեն ի ցոյցս մարդ-
կան. լայնեն զգրապանակս իւրեանց,
և երկայնեն զքղանցս հանդերձից
6 իւրեանց։ Սիրեն զյառաջագահս յըն-
թրիս, և զնախաթոռս ի ժողովուրդս,
7 և զողջոյնս ի հրապարակս։ Եւ կոչել
8 ի մարդկանէ՝ ռաբբի ռաբբի։ Բայց
դուք մի՛ զոք կոչէք վարդապետ, զի
մի է ձեր ուսուցիչ. և ամենեքին դուք
9 եղբարք էք։ Եւ հայր մի՛ կոչէք ձեզ
յերկրի, զի ձեր մի է Հայր՝ որ յերկինս
10 է։ Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի
11 ուսուցիչ ձեր Քրիստոս է։ Եւ մեծն
12 ի ձէնջ՝ եղիցի ձեր սպասաւոր։ Որ
բարձրացուցանէ զանձն՝ խոնարհես-
ցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝
13 բարձրասցի։ Վա՜յ ձեզ դպրաց և փա-
րիսեցւոց կեղծաւորաց. զի փակէք
զարքայութիւն երկնից առաջի մարդ-
կան. դուք ո՛չ մտանէք, և որոց մտանեն՝
14 չտայք թոյլ մտանել։ Վա՜յ ձեզ դպրաց
և փարիսեցւոց կեղծաւորաց. զի ուտէք

զտունս այրեաց, պատճառանօք եր-
կարէք զաղօթս, վասն զի աւելի
15 զդատաստան ընդունիցիք։ Վա՜յ ձեզ
դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց.
զի յածիք ընդ ծով և ընդ ցամաք
առնել եկամուտ մի, և յորժամ լինի-
ցի, առնէք զնա որդի գեհենի կրկին
16 ևս քան զձեզ։ Վա՜յ ձեզ, առաջնորդք
կոյրք, զի ասէք՝ որ երդնու ի տաճարն՝
չէ ինչ, բայց որ երդնու յոսկին որ
17 ի տաճարին է՝ արժան է։ Մորոսք և
կոյրք, զի՞նչ մեծ է, ոսկի՞ն՝ եթէ տա-
18 ճարն, որ սրբէ զոսկին։ Եւ որ երդնու
ի սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու
ի պատարագն որ ի վերայ նորա է՝
19 արժան է։ Ցիմա՛րք և կոյրք, զի՞նչ
մեծ է, պատարա՞գն՝ եթէ սեղանն, որ
20 սրբէ զպատարագն։ Իսկ արդ՝ որ
երդուաւ ի սեղանն, երդնու ի նա և
21 յամենայն որ ի վերայ նորա է։ Եւ որ
երդուաւ ի տաճարն, երդնու ի նա և
22 ի բնակիչն նորա։ Եւ որ երդուաւ
յերկինս, երդնու յաթոռն Աստուծոյ՝
23 և յայն որ նստի ի վերայ նորա։ Վա՜յ
ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծա-
ւորաց. զի տասանորդէք զանանուխ

և զսամիթ և զչաման, և թողէք զծանր
ծանր օրինացն զդատաստան և զո-
ղորմութիւն և զհաւատս. զայս արժան
24 էր առնել՝ և զայն չթողուլ։ Առաջնորդք
կոյրք, որ զմժղուկս քամէք՝ և զուղտս
25 կլանէք։ Վա՜յ ձեզ դպրաց և փարի-
սեցւոց կեղծաւորաց. զի սրբէք զար-
տաքին զբաժակին և զսկաւառակին,
և ի ներքոյ լի են յափշտակութեամբ
26 և անիրաւութեամբ։ Փարիսեցի կոյր,
սրբեա՛ նախ զներքին բաժակին և
զսկաւառակին, զի լինիցի և արտա-
27 քինն նոցա սուրբ։ Վա՜յ ձեզ դպրաց
և փարիսեցւոց կեղծաւորաց. զի նման
էք գերեզմանաց բռելոց, որք արտաքոյ
երեւին գեղեցիկք՝ և ի ներքոյ լի են
ոսկերօք մեռելոց և ամենայն պղծու-
28 թեամբ։ Նոյնպէս և դուք արտաքոյ
երեւիք մարդկան արդարք, և ի ներքոյ
լի էք կեղծաւորութեամբ և անօրէ-
29 նութեամբ։ Վա՜յ ձեզ դպրաց և փա-
րիսեցւոց կեղծաւորաց. զի շինէք
30 զշիրիմս մարգարէից, և զարդարէք
զգերեզմանս արդարոց։ Եւ ասէք.
եթէ էաք յաւուրս հարցն մերոց, ոչ
հաղորդէաք արեան մարգարէիցն։

31 Ապա ուրեմն վկայէք զանձանց, եթէ
որդիք էք այնոցիկ՝ որ կոտորէին
32 զմարգարէսն: Եւ դուք լցէք զչափ
33 հարցն ձերոց: Օ՛ձք՝ ծնունդք իժից,
զիա՞րդ փախնուցուք ի դատաստանէ
34 գեհենին: Վասն այդորիկ ահաւասիկ
ես առաքեմ առ ձեզ մարգարէս և
իմաստունս և դպիրս, և ի նոցանէ
սպանանիցէք և ի խաչ հանիցէք, և ի
նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր,
և հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք:
35 Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամե-
նայն արիւն արդար հեղեալ յերկրի.
յարենէն Աբելի արդարոյ մինչև յա-
րիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ՝
զոր սպանէք ընդ մէջ տաճարին և
36 սեղանոյ: Ամէն ասեմ ձեզ, եկեսցէ
այն ամենայն ի վերայ ազգիս այսո-
37 րիկ: Երուսաղէմ, Երուսաղէմ, որ
կոտորէիր զմարգարէսն և քարկոծ
առնէիր զառաքեալսն առ քեզ. քա-
նիցս անգամ կամեցայ ժողովել զման-
կունս քո՝ զօրօրինակ ժողովէ հաւ
զձագս իւր ընդ թևովք, և ո՛չ կամե-
38 ցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ տունդ
39 ձեր աւերակ: Բայց ասեմ ձեզ, թէ ո՛չ

ես տեսանիցէք զիս յայսմհետէ, մին-
չև ասիցէք, օրհնեալ եկեալ յանուն
Տեառն:

ԳԼՈՒԽ ԻԴ.

1 Եւ ելեալ արտաքս Յիսուս ի տա-
ճարէն՝ գնայր. և մատեան աշակերտքն
ցուցանել նմա զշինուածս տաճարին:
2 Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնո-
սա. տեսանէ՞ք զայդ ամենայն. ամէն
ասեմ ձեզ, ո՛չ մնասցէ այդր քար ի
3 քարի վերայ որ ոչ քակտեսցի: Եւ
մինչդեռ նստէր ի լերինն Ձիթենեաց,
մատեան առ նա աշակերտքն առան-
ձինն և ասեն. ասա՛ մեզ՝ երբ լինիցի
այդ, և կամ զինչ նշան իցէ քոյոյ
գալստեանդ, և վախճանի աշխարհիս:
4 Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնո-
սա. զգո՛յշ լերուք՝ գուցէ ոք զձեզ
5 խաբիցէ: Զի բազումք գայցեն յանուն
իմ և ասիցեն, թէ ես եմ Քրիստոսն.
6 և զբազումս մոլորեցուցանիցեն: Լսե-
լոց էք պատերազմունս և զհամբաւս
պատերազմաց. զգո՛յշ լերուք՝ մի խռո-

վեջիք, զի պարտ է լինել այնմ ամե-
7 նայնի, այլ չև է կատարած։ Յարիցէ
ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն
ի թագաւորութեան վերայ. և եղիցին
սովք և սրածութիւնք և սասանու-
8 թիւնք ի տեղիս տեղիս։ Սակայն և
այն ամենայն սկիզբն է երկանց։
9 Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղու-
թիւնս, և սպանանիցեն զձեզ. և եղիջիք
ատեցեալք յամենայն ազգաց վասն
10 անուան իմոյ։ Եւ յայնժամ գայթակ-
ղեսցին բազումք, և զմիմեանս մատ-
11 նեսցեն՝ և ատեսցեն զմիմեանս։ Եւ
բազում սուտ մարգարէք յարիցեն,
12 և զբազումս մոլորեցուսցեն։ Եւ վասն
բազմանալոյ անօրէնութեան, ցամա-
13 քեսցի սէր բազմաց։ Բայց որ համ-
14 բերեսցէ իսպառ, նա կեցցէ։ Եւ քա-
րոզեսցի աւետարանս արքայութեան
ընդ ամենայն տիեզերս՝ ի վկայութիւն
ամենայն հեթանոսաց, և ապա եկեսցէ
15 կատարած։ Արդ՝ յորժամ տեսանիցէք
զպղծութիւն աւերածոյն, որ ասա-
ցեալն է ի ձեռն Դանիէլի մարգարէի,
զի կայցէ ի տեղւոջն սրբութեան, որ
16 ընթեռնուն՝ ի միտ առցէ։ Յայնժամ

որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի
17 լերինս։ Եւ որ ի տանիս կայցէ՝ մի
18 իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ։ Եւ
որ յանդի իցէ՝ մի դարձցի յետս
19 առնուլ զձորձս իւր։ Բայց վայ իցէ
յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնո-
20 սիկ։ Յաղօթս կացէք, զի մի լինիցի
փախուստն ձեր ձմերայնի, և մի ի
31 շաբաթու։ Զի եղիցի յայնժամ նե-
ղութիւն մեծ, որպիսի ոչ եղև ի սկզբ-
բանէ արարածոց աշխարհի մինչև
22 ցայժմ, և ոչ այլ լիցի։ Եւ եթէ ոչ
կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր
ամենայն մարմին. բայց վասն ընտ-
րելոյն կարճեսցին աւուրքն այնոքիկ։
23 Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ ահա-
ւասիկ աստ է Քրիստոսն կամ անդ,
24 մի հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ
քրիստոսք և սուտ մարգարէք. և տա-
ցեն նշանս մեծամեծս և արուեստս,
մինչև մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ
25 իցէ և զընտրեալսն։ Ահա յառաջագոյն
26 ասացի ձեզ։ Արդ եթէ ասիցեն ձեզ.
ահաւանիկ յանապատի է, մի ելանի-
ցէք. և թէ ահա յշտեմարանս է, մի
27 հաւատայցէք։ Զի որպէս փայլակն որ

ելանէ յարեւելից և երեւի մինչև յա-
րեւմուտս, այնպէս եղիցի գալուստն
28 Որդւոյ մարդոյ։ Զի ուր գէշն իցէ,
29 անդր ժողովեսցին արծուիք։ Վաղվա-
ղակի յետ նեղութեան աւուրցն այ-
նոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լու-
սին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք
անկցին յերկնից, և զօրութիւնք երկ-
30 նից շարժեսցին։ Եւ ապա երեւեսցի
նշան Որդւոյ մարդոյ յերկինս, և յայն-
ժամ կոծեսցին ամենայն ազգք. և
տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ
ամպոց երկնից զօրութեամբ և փառօք
31 բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս
իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն
զընտրեալս նորա ի չորից հողմոց՝ ի
ծագաց երկնից մինչև ի ծագս նոցա։
32 Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն.
զի յորժամ նորա ոստքն կակղասցին
և տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է
33 ամառն։ Նոյնպէս և դուք, յորժամ
տեսանիցէք զայս ամենայն, գիտա-
34 ջիք թէ մերձ է ի դուրս։ Ամէն ասեմ
ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև
35 այս ամենայն եղիցի։ Երկինք և երկիր
36 անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն։ Բայց

վասն աւուրն այնորիկ և ժամու ոչ
ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից և ոչ
37 Որդի, բայց միայն Հայր։ Այլ որպէս
աւուրքն Նոյի, այնպէս եղիցի գա-
38 լուստն Որդւոյ մարդոյ։ Զի որպէս
էին յաւուրսն՝ որ յառաջ քան զջր-
հեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս
առնէին և արանց լինէին, մինչև յօրն՝
39 յորում եմուտ Նոյ ի տապանն։ Եւ ոչ
գիտացին՝ մինչև եկն ջրհեղեղն և
եբարձ զամենեսին. այնպէս եղիցի
40 և գալուստն Որդւոյ մարդոյ։ Յայն-
ժամ թէ իցեն երկու յագարակի,
41 մին առցի և միւսն թողցի։ Եւ եթէ
երկու աղայցեն ի մի երկանս, մին
42 առցի և միւսն թողցի։ Արթուն կա-
ցէք, զի ոչ գիտէք յորում ժամու
43 Տէրն ձեր գայ։ Զայն գիտասջիք,
եթէ գիտէր տանուտէրն՝ յորում
պահու գող գայ, հսկէր՝ և ոչ տայր
44 ական հատանել զտան իւրոյ։ Վասն
այսորիկ և դուք եղերուք պատրաստք,
զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝
45 գայ Որդի մարդոյ։ Իսկ ո՞վ իցէ հա-
ւատարիմ ծառայ և իմաստուն, զոր
կացոյց տէր իւր ի վերայ ծառայից

իւրոց՝ տալ նոցա կերակուր ի ժամու։
46 Երանի է ծառային այնմիկ, զոր եկեալ
տէրն գտանիցէ արարեալ այնպէս։
47 Ամէն ասեմ ձեզ, զի ի վերայ ամե-
48 նայն ընչից իւրոց կացուսցէ զնա։ Ապա
թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւ-
49 րում, տէր իմ յամէ գալ։ Եւ սկսա-
նիցի հարկանել զծառայակիցս իւր,
ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս։
50 Գայցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր
յորում ոչ ակն ունիցի, և ի ժամու
51 յորում ոչ գիտիցէ։ Եւ կարեսցէ զնա
ընդ մէջ, և զբաժին նորա ընդ կեղ-
ծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և կրճել
ատամանց։

ԳԼՈՒԽ ԻԵ.

1 Յայնժամ նմանեսցի արքայու-
թիւն երկնից տասն կուսանաց, որոց
առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ
2 առաջ փեսային և հարսին։ Հինգն ի
նոցանէ յիմարք էին և հինգն իմաս-
3 տունք։ Յիմարքն առին զլապտերսն,
և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։

4 Իսկ իմաստունքն առին ձէթ ամա-
5 նովք ընդ լապտերս իւրեանց։ Եւ ի
յամել փեսային, նիրհեցին ամենե-
6 քեան և ի քուն մտին։ Եւ ի մէջ
գիշերի եղև բարբառ, ահա փեսայ
7 գայ՝ ելէք ընդ առաջ նորա։ Յայն-
ժամ յարեան ամենայն կուսանքն, և
8 կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն
յիմարքն ցիմաստունսն, տուք մեզ
յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին
9 լապտերքս մեր։ Պատասխանի ետուն
իմաստունքն և ասեն. գուցէ ոչ իցէ
մեզ և ձեզ բաւական, այլ երթայք
ի վաճառականս և գնեսջիք ձեզ։
10 Իբրև նոքա գնացին գնել՝ եկն փե-
սայն, և պատրաստքն մտին ընդ նմա
ի հարսանիսն՝ և փակեցաւ դուռնն։
11 Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն,
12 Տէր Տէր բաց մեզ։ Նա պատասխանի
ետ և ասէ. ամէն ասեմ ձեզ. թէ ոչ
13 գիտեմ զձեզ։ Արթուն կացէք՝ զի ոչ
14 գիտէք զօրն և ոչ զժամն։ Որպէս այր
մի գնացեալ ի տար աշխարհ, կոչեաց
զծառայս իւր՝ և ետ նոցա զինչս իւր։
15 Ումեմն ետ հինգ քանքար, և ումեմն
երկուս, և ումեմն մի, իւրաքանչիւր

16 ըստ իւրում կարի՝ և գնաց։ Զողա-
վաղվաղակի որ զհինգն առ, գործեաց
17 նոքօք և շահեցաւ այլ ևս հինգ։ Նոյն-
պէս և որ զերկուսն, շահեցաւ այլ
18 ևս երկուս։ Եւ որ զմին առ, գնաց
փորեաց զերկիր, և թաքոյց զարծաթ
19 տեառն իւրոյ։ Յետ բազում ժամա-
նակի գայ տէր ծառայիցն այնոցիկ,
20 և առնէ համարս ի մէջ նոցա։ Եւ
մատուցեալ որ զհինգ քանքարն առ,
մատոյց այլ ևս հինգ քանքար՝ և ասէ.
տէր, հինգ քանքար ետուր ցիս, արդ
աւասիկ հինգ այլ ևս քանքար ի վերայ
21 շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր, ազնիւ
ծառայ, բարի և հաւատարիմ, որով-
հետև ի սակաւուդ հաւատարիմ էս,
ի վերայ բազմաց կացուցից զքեզ.
մուտ յուրախութիւն տեառն քո։
22 Մատուցեալ և որոյ զերկուս քան-
քարսն առեալ էր, և ասէ. տէր, եր-
կուս քանքարս ետուր ցիս, աւասիկ
երկուս ևս այլ քանքարս՝ զորս ի
23 վերայ շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր.
ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ,
որովհետև ի սակաւուդ հաւատարիմ
ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ.

մուտ յուրախութիւն տեառն քո։
24 Մատուցեալ և որոյ և զմի քանքարն
առեալ էր, և ասէ. Տէր, գիտէի զի
այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ
սերմանեցեր, և ժողովես՝ ուստի ոչ
25 սփռեցեր։ Երկեայ, գնացի և թաքուցի
զքանքարն քո յերկրի. արդ աւասիկ
26 քոյդ ցքեզ։ Պատասխանի ետ տէրն
և ասէ ցնա. ծառայ չար և վատ,
գիտէիր եթէ հնձեմ՝ ուստի ոչ սեր-
մանեցի, և ժողովեմ՝ ուստի ոչ սփռ-
27 եցի։ Պարտ էր քեզ արկանել զար-
ծաթդ իմ ի սեղանաւորս, և եկեալ
28 ես տոկոսեօք պահանջէի զիմն։ Արդ՝
առէք ի դմանէ զքանքարդ՝ և տուք
այնմ, որ ունիցի զտասն քանքարն։
29 Զի ամենայնի, որ ունիցի՝ տացի և
յաւելցի. և որ ոչն ունիցի, և զոր
30 ունիցին՝ բարձցի ի նմանէ։ Եւ զծա-
ռայդ անպիտան հանէք ի խաւարն
արտաքին. անդ եղիցի լալ և կրճել
31 ատամանց։ Եւ յորժամ եկեսցէ Որդի
մարդոյ փառօք իւրովք՝ և ամենայն
հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի
32 յաթոռ փառաց իւրոց։ Եւ ժողովես-
ցին առաջի նորա ամենայն ազգք, և

մեկնեսցէ զնոսա ի միմեանց, որպէս
հովիւ զի մեկնեսցէ զօդիս յայծեաց։
33 Եւ կացուսցէ զօդիսն ընդ աջմէ իւրմէ
34 և զայծիսն ի ձախմէ։ Յայնժամ ա-
սասցէ Թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ
աջմէն իցեն. եկա՛յք օրհնեալք Հօր
իմո՛յ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ
ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշ-
35 խարհի։ Զի քաղցեայ՝ և ետուք ինձ
ուտել. ծարաւեցի՝ և արբուցէք ինձ.
36 օտար էի՝ և ժողովեցէք զիս։ Մերկ՝
և զգեցուցէք զիս. հիւանդ էի՝ և եկիք
37 առ իս։ Յայնժամ պատասխանի տացեն
նմա արդարքն և ասասցեն, Տէր, Երբ
տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրե-
ցաք, կամ ծարաւի՝ և արբուցաք։
38 Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ և ժողո-
վեցաք, կամ մերկ՝ և զգեցուցաք։
39 Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ի
40 բանտի՝ և եկաք առ քեզ։ Պատաս-
խանի տացէ Թագաւորն և ասասցէ
ցնոսա. ամէն ասեմ ձեզ, որովհետև
արարէք միում յեղբարցս այսոցիկ
41 փոքրկանց՝ ինձ արարէք։ Յայնժամ
ասասցէ ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն
իցեն. երթա՛յք յինէն, անիծեալք, ի

հուրն յաւիտենական, որ պատրաս-
տեալ է սատանայի և հրեշտակաց
42 նորա։ Զի քաղցեայ՝ և ոչ ետուք ինձ
ուտել, ծարաւեցի՝ և ոչ արբուցէք
43 զիս։ Օտար էի՝ և ոչ ժողովեցէք զիս,
մերկ էի՝ և ոչ զգեցուցէք զիս, հիւանդ
44 և ի բանտի՝ և ոչ տեսէք զիս։ Յայն-
ժամ պատասխանի տացեն և նոքա,
և ասասցեն. Տէր, Երբ տեսաք զքեզ
քաղցեալ կամ ծարաւի կամ օտար
կամ մերկ կամ հիւանդ կամ ի բանտի՝
45 և ոչ պաշտեցաք զքեզ։ Յայնժամ
պատասխանի տացէ նոցա, և ասասցէ.
Ամէն ասեմ ձեզ, որովհետև ոչ արա-
րէք միում ի փոքրկանցս յայսցանէ՝
46 և ոչ ինձ արարէք։ Եւ երթիցեն նո-
քա ի տանջանսն յաւիտենականս, և
արդարքն ի կեանսն յաւիտենականս։

ԳԼՈՒԽ ԻԶ.

1 Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս
զամենայն զբանս զայսոսիկ, ասէ
2 ցաշակերտսն իւր։ Գիտէք, զի յետ
երկուց աւուրց զատիկ լինի, և Որդի

մարդոյ մատնի ի խաչ ելանել։
3 Յայնժամ ժողովեցան քահանայա-
պետքն և դպիրք և ծերք ժողովրդեանն
ի սրահ քահանայապետին՝ որում
4 անուն էր Կայիափա։ Եւ արարին
խորհուրդ՝ զի նենգութեամբ կալցին
5 զՅիսուս՝ և սպանցեն։ Բայց ասէին,
թէ մի՛ ի տօնի աստ՝ զի մի՛ խռովու-
6 թիւն լինիցի ի ժողովրդեանն։ Իբրև
եկն Յիսուս ի Բեթանիա ի տուն
7 Սիմոնի բորոտի։ Մատեաւ առ նա
կին մի, որ ունէր շիշ իւղոյ ծան-
րագնի, և թափեաց ի գլուխ նորա
8 ի բազմականին։ Իբրև տեսին աշա-
կերտքն՝ բարկացան և ասեն. ընդէ՞ր
9 է կորուստ այդ իւղոյդ։ Զի մարթ էր
վաճառել զդա մեծագնի՝ և տալ աղ-
10 քատաց։ Գիտաց Յիսուս և ասէ ցնո-
սա. զի՞ աշխատ առնէք զկինդ. գործ
11 մի բարի գործեաց դա յիս։ Յամե-
նայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք,
բայց զիս ո՛չ հանապազ ընդ ձեզ ունիք։
12 Արկանել դորա զիւղդ ի մարմին իմ,
13 առ ի թաղելոյ զիս նշանակեաց։ Բայց
ամէն ասեմ ձեզ, զի ուր և քարո-
զեսցի աւետարանս այս ընդ ամենայն

աշխարհ՝ խօսեսցի, և զոր արար դա
14 ի յիշատակ դորա։ Յայնժամ գնաց
մի յերկոտասանիցն անուանեալ Յու-
դա Սկարիովտացի՝ առ քահանայա-
15 պետսն, և ասէ։ Զի՞նչ կամիք տալ
ինձ, և ես մատնեցից զնա ձեզ. և նոքա
16 կշռեցին նմա երեսուն արծաթ։ Եւ
յայնմհետէ խնդրէր պարապ՝ զի մատ-
նեսցէ զնա նոցա։
17 Եւ յառաջնում աւուր բաղարջա-
կերացն մատեան աշակերտքն առ
Յիսուս՝ և ասեն. ո՞ւր կամիս՝ զի
պատրաստեսցուք քեզ ուտել զզա-
18 տիկն։ Եւ նա ասէ ցնոսա, երթա՛յք
ի քաղաքն առ այս անուն, և ասացէք
ցնա. վարդապետ ասէ, ժամանակ իմ
մերձեալ է, առ քեզ առնեմ զզատիկ
19 աշակերտօքս հանդերձ։ Եւ արարին
աշակերտքն որպէս հրամայեաց նոցա
Յիսուս, և պատրաստեցին զզատիկն։
20 Եւ իբրև երեկոյ եղև՝ կայր բազմեալ
21 ընդ երկոտասան աշակերտսն։ Եւ
մինչդեռ ուտէին նոքա, ասէ. ամէն
ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատ-
22 նելոց է զիս։ Եւ տրտմեցան յոյժ.
սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք ի

23 նոցանէ, միթէ ես իցեմ Տէր: Նա
պատասխանի ետ և ասէ. որ մխեաց
ընդ իս զձեռն իւր ի սկաւառակս՝ նա
24 մատնելոց է զիս: Որդի մարդոյ երթայ՝
որպէս և գրեալ է վասն նորա. բայց
վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն Որդի
մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝ թէ
25 չէր ծնեալ մարդն այն: Պատասխանի
ետ Յուդա՝ որ մատնելոցն էր զնա՝
և ասէ. միթէ ես իցեմ վարդապետ.
26 ասէ ցնա՝ դու ասացեր: Եւ մինչդեռ
ուտէին նոքա, առ Յիսուս հաց՝ օրհ-
նեաց և եբեկ, և ետ աշակերտացն՝
և ասէ. առէք կերայք՝ այս է մարմին
27 իմ: Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ
նոցա և ասէ. արբէք ի դմանէ ամե-
28 նեքին: Զի այդ է արիւն իմ նորոյ
ուխտի, որ ի վերայ բազմաց հեղանի
29 ի թողութիւն մեղաց: Բայց ասեմ
ձեզ, ոչ ես արբից յայսմհետէ ի բե-
ւոյ որթոյ մինչև ցօրն ցայն՝ յորժամ
արբից զդա ընդ ձեզ նոր յարքայու-
30 թեան Հօր իմոյ: Եւ օրհնեցին, և ելին
31 ի լեառն Ձիթենեաց: Յայնժամ ասէ
ցնոսա Յիսուս. ամենեքին դուք գայ-
թակղելոց էք յինէն յայսմ գիշերի.

զի գրեալ է՝ թէ հարից զհովիւն՝ և
32 ցրուեսցին ոչխարք հօտին: Եւ յետ
յառնելոյն իմոյ, յառաջեցից քան
33 զձեզ ի Գալիլեա: Պատասխանի ետ
Պետրոս և ասէ ցնա. թէպէտ և ամե-
նեքեան գայթակղեսցին ի քէն, սա-
34 կայն ես ոչ գայթակղեցայց. Ասէ
ցնա Յիսուս. ամէն ասեմ ձեզ, զի
յայսմ գիշերի մինչչև հաւու խօսեալ
35 իցէ, երիցս ուրասցիս զիս: Ասէ ցնա
Պետրոս. թէ մեռանել հասանիցէ ընդ
քեզ, զքեզ ոչ ուրացայց. Նոյնպէս և
36 ամենայն աշակերտքն ասէին: Յայն-
ժամ գայ Յիսուս ընդ նոսա ի գիւղ
մի՝ որում անունն էր Գեթսեմանի,
և ասէ ցնոսա. նստարուք այդր, մինչև
37 երթայց կացից յաղօթս: Եւ առեալ
ընդ իւր զՊետրոս՝ և զերկուս որդիսն
Զեբեդեայ, սկսաւ տրտմել և հոգալ:
38 Յայնժամ ասէ ցնոսա. տրտում է ոգի
իմ մինչև ի մահ, կացէք աստ՝ և հս-
39 կեցէք ընդ իս: Եւ մատուցեալ յա-
ռաջ սակաւիկ մի՝ անկաւ ի վերայ
երեսաց իւրոց, եկաց յաղօթս՝ և ասէ.
Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս
այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ,

40 այլ որպէս դու։ Գայ առ աշակերտսն,
և գտանէ զնոսա ի քուն, և ասէ ցՊետ-
րոս. այդպէս ոչ կարացէք մի ժամ
41 արթուն կալ ընդ իս։ Արթուն կացէք
և աղօթս արարէք՝ զի մի անկանիցիք
ի փորձութիւն. հոգիս յօժար է՝ բայց
42 մարմինս տկար։ Դարձեալ երկրորդ
անգամ չոգաւ՝ եկաց յաղօթս Յիսուս՝
և ասէ. Հայր իմ, եթէ հնար իցէ ան-
ցանել յինէն բաժակիս այսմիկ. ապա
թէ ոչ՝ արբից զսա, եղիցին կամք
43 քո։ Եւ եկեալ միւսանգամ եգիտ
զնոսա ի քուն, զի էին աչք իւրեանց
44 ծանրացեալք։ Եթող զնոսա և գնաց.
եկաց յաղօթս երրորդ անգամ. և
45 դարձեալ զնոյն բան ասաց։ Յայնժամ
գայ առ աշակերտսն և ասէ ցնոսա.
Ննջեցէք այսուհետև և հանգերուք.
զի ահա հասեալ է ժամ. և Որդի
մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց։
46 Արիք երթիցուք աստի, զի ահաւասիկ
47 եհաս՝ որ մատնելոցն է զիս։ Եւ մինչ-
դեռ նա զայն խօսէր, ահա Յուդա մի
յերկոտասանիցն եկն, և ընդ նմա
ամբոխ բազում սրովք և բրօք՝ ի քա-
հանայապետիցն և ի ծերոց ժողովըր-

48 դեանն։ Եւ որ մատնելոցն էր զնա,
ետ նոցա նշան և ասէ. ընդ որում
ես համբուրեցից՝ նա է, զնա ունի-
49 ցիք։ Եւ վաղվաղակի մատուցեալ առ
Յիսուս՝ ասէ. ողջ լեր վարդապետ. և
50 համբուրեաց զնա։ Եւ Յիսուս
ասէ ցնա. ընկեր, վասն որոյ եկիր.
յայնժամ մատուցեալ արկին ձեռս
51 ի Յիսուս, և կալան զնա։ Եւ ահա
մի ոմն յայնցանէ՝ որ էին ընդ Յի-
սուսի, ձգեաց զձեռն և եհան զսուր
իւր՝ և եհար զծառայ քահանայապե-
տին, և ի բաց եհան զունկն նորա։
52 Յայնժամ ասէ ցնա Յիսուս. դարձո
զսուր քո ի տեղի իւր, զի ամենե-
քեան՝ որ առնուն սուր՝ սրով
53 անկանիցին։ Թէ համարիցիս՝ թէ ոչ
կարեմ աղաչել զՀայր իմ, և հասու-
ցանիցէ ինձ այժմ այսր՝ աւելի քան
զերկոտասան գունդս հրեշտակաց։
54 Այլ զիարդ լնուցուն գիրք՝ թէ այս-
55 պէս պարտ է լինել։ Յայնժամ ասաց
Յիսուս ցամբոխն. իբրև ի վերայ
աւազակի ելիք սուսերօք և բրօք՝
ունել զիս. հանապազ առ ձեզ ի տա-
ճարին նստէի և ուսուցանէի, և ոչ

56 կալայք զիս։ Այլ այս ամենայն եղեւ՝
զի լցցին գիրք մարգարէիցն. յայն-
ժամ աշակերտքն ամենեքին թողին
57 զնա և փախեան։ Իսկ նոցա կալեալ
զՅիսուս՝ ածին առ Կայիափա քա-
հանայապետ՝ ուր դպիրքն և ծերք
58 ժողովեալ էին։ Եւ Պետրոս զհետ
նորա երթայր բացագոյն մինչև ի
սրահ քահանայապետին. և մտեալ ի
ներքս նստէր ընդ սպասաւորսն տե-
59 սանել զկատարածն։ Իսկ քահանա-
յապետքն և ամենայն ատեանն խնդ-
րէին սուտ վկայութիւն զՅիսուսէ,
60 զի սպանցեն զնա։ Եւ ոչ գտանէին
ի բազմաց սուտ վկայիցն մատուցե-
լոց. յետոյ մատուցեալ երկու սուտ
61 վկայք։ Ասէին, թէ սա ասէր՝ կարող
եմ քակել զտաճարն Աստուծոյ, և
62 զերիս աւուրս շինել։ Եւ յարուցեալ
քահանայապետն ասէ ցնա. չտա՞ս ինչ
պատասխանի, զինչ դոքա ամբաս-
63 տանեն զքէն։ Եւ Յիսուս լուռ կայր.
պատասխանի ետ քահանայապետն և
ասէ ցնա. երդմնեցուցանեմ զքեզ
յԱստուած կենդանի, զի ասասցես
մեզ՝ թէ դու ես Քրիստոսն Որդի

64 Աստուծոյ։ Ասէ ցնա Յիսուս, դու
ասացեր. բայց ասեմ ձեզ. յայսմհետէ
տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ
աջմէ զօրութեան՝ և եկեալ ընդ ամպս
65 երկնից։ Յայնժամ քահանայապետն
պատառեաց զհանդերձս իւր, և ասէ.
հայհոյեաց, զի՞ ևս պիտոյ են մեզ
վկայք. ահա արդ լուայք զհայհոյու-
66 թիւն դորա։ Զի՞նչ հաճոյ է ձեզ. նոքա
պատասխանի ետուն և ասեն. մահա-
67 պարտ է։ Յայնժամ թքին ընդ երեսս
նորա, և կափեցին զնա. և ոմանք
68 ապտակեցին, և ասեն. մարգարէա՛ց
մեզ, Քրիստո՛սդ, ո՛վ է՝ որ եհարն զքեզ։
69 Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի գաւ-
թին. մատեաւ առ նա աղախին մի,
և ասէ. Եւ դու ընդ Յիսուսի Գալի-
70 լեացւոյ էիր։ Նա ուրացաւ առաջի
ամենեցուն և ասէ, թէ ո՛չ գիտեմ
71 զի՛նչ խօսիդ։ Եւ իբրև ել նա արտաքս
քան զդուռնն՝ ետես զնա այլ կին մի,
և ասէ ցայնոսիկ՝ որ անդն կային. և
սա ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր։
72 Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ, թէ
73 ո՛չ գիտեմ զայրն։ Եւ յետ սակաւ
միոյ մատուցեալ որք կայինն անդ,

ասեն ցՊետրոս. արդարև և դու ի
նոցանէ ես, քանզի և խօսք քո յայտ
74 առնեն զքեզ։ Յայնժամ սկսաւ նզովել
և երդնուլ, թէ ոչ գիտեմ զայրն. և
75 իսկոյն հաւ խօսեցաւ։ Եւ յիշեաց
Պետրոս զբանն Յիսուսի զոր ասաց,
թէ մինչչև հաւու խօսեալ իցէ՝ երիցս
ուրասցիս զիս. և ելեալ արտաքս՝
ելաց դառնապէս։

ԳԼՈՒԽ ԻԷ.

1 Իբրև այգ եղև, խորհուրդ արարին
ամենայն քահանայապետքն և ծերք
ժողովրդեանն վասն Յիսուսի սպա-
2 նանել զնա։ Կապեցին զնա, և ածին
գնացին, և ետուն ի ձեռս Պոնտացւոյ
3 Պիղատոսի դատաւորի։ Յայնժամ
տեսեալ Յուդայի՝ որ մատնեաց զնա,
թէ պարտաւորեցաւ՝ զղջացաւ. և
դարձոյց զարծաթն առ քահանայա-
4 պետսն և ծերս ժողովրդեանն։ Եւ
ասէ. մեղայ, զի մատնեցի զարիւն
արդար. և նոքա ասեն. մեզ չէ փոյթ,
5 դու գիտես։ Եւ ընկէց զարծաթն ի

տաճարն՝ և գնաց, և չոգաւ խեղդե-
6 ցաւ։ Իսկ քահանայապետիցն առեալ
զարծաթն՝ ասեն. ոչ է արժան ընդու-
նել զայդ ի կորբանն, քանզի գինք
7 արեան են։ Խորհուրդ առեալ, գնեցին
այնու զագարակն բրուտի ի գերեզման
8 օտարաց։ Վասն այնորիկ կոչեցաւ
ագարակն այն, ագարակ արեան՝
9 մինչև ցայսօր։ Յայնժամ լցաւ՝ որ
ասացաւն ի ձեռն Երեմիայ մարգա-
րէի. և առին զերեսուն արծաթին
զգինս վաճառելոյն, զոր արկին յոր-
10 դւոցն Իսրայելի։ Եւ ետուն զնա յա-
գարակն բրուտի. որպէս հրամայեաց
11 ինձ Տէր։ Եւ Յիսուս եկաց առաջի
դատաւորին. եհարց զնա դատաւորն
և ասէ. դո՞ւ ես թագաւորն Հրէից.
12 և Յիսուս ասէ, դու ասես։ Եւ ի չա-
րախօսելն նորա ի քահանայապետիցն
և ի ծերոց, ոչ ինչ ետ պատասխանի։
13 Յայնժամ ասէ ցնա Պիղատոս. ո՞չ
լսես՝ որչափ դոքա հակառակ քո
14 վկայեն։ Եւ ոչ ետ նմա պատասխանի՝
և ոչ բան մի, մինչև զարմանալ դա-
15 տաւորին յոյժ։ Բայց ըստ տօնի սովոր
էր դատաւորն արձակել ժողովրդեանն

16 կապեալ մի՝ զոր կամէին: Ունէին
յայնժամ կապեալ մի նշանաւոր,
որում անուն էր Յեսու Բարաբբա:
17 Իբրև ժողովեցան, ասէ ցնոսա Պիղա-
տոս. զո՞ կամիք յերկուց աստի զի
արձակեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՞
եթէ զՅիսուս զանուանեալն Քրիս-
18 տոս: Քանզի գիտէր՝ թէ առ նախան-
19 ձու մատնեցին զնա: Եւ մինչ նստէր
յատենին, առաքեաց առ նա կինն
իւր՝ և ասէ. չկայ ինչ քո և արդա-
րոյն այնորիկ, զի բազում անցք ան-
ցին ընդ իս այսօր յանուրջս վասն
20 նորա: Իսկ քահանայապետքն և ծերք
հաւանեցուցին զժողովուրդսն, զի
խնդրեսցեն զԲարաբբայն՝ և զՅիսուս
21 կորուսցեն: Պատասխանի ետ դատա-
ւորն և ասէ ցնոսա. զո՞ կամիք զի
արձակեցից ձեզ յերկուց այտի. և
22 նոքա ասեն. զԲարաբբա: Ասէ ցնոսա
Պիղատոս. իսկ զի՞ արարից զՅիսուս
23 զանուանեալն Քրիստոս: Ասեն ամե-
նեքեան՝ խաչեսցի. և նա ասէ, զինչ
չար արար. և նոքա առաւել ևս աղա-
24 ղակէին և ասէին, խաչեսցի: Եւ տե-
սեալ Պիղատոսի՝ թէ ոչ ինչ օգնէ,

այլ առաւել խռովութիւն լինի, առեալ
ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովր-
դեանն և ասէ. Քաւեալ եմ ես յարենէ
արդարոյդ այդորիկ, դուք գիտասջիք:
25 Պատասխանի ետ ամենայն ժողովուր-
դըն և ասէ. Արիւն դորա ի վերայ
26 մեր և ի վերայ որդւոց մերոց: Յայն-
ժամ արձակեաց նոցա զԲարաբբայն,
և զՅիսուս դան հարեալ ետ ի ձեռս՝
27 զի խաչեսցի: Յայնժամ զինուորք
դատաւորին առին զՅիսուս յապա-
րանս և ժողովեցին ի վերայ նորա
28 զամենայն զգունդն: Մերկացին զնա
և արկին զնովաւ քղամիդ կարմիր՝
29 Եւ բոլորեալ պսակ ի փշոց՝ եդին ի
գլուխ նորա, և եղէգն յաջոյ ձեռին
նորա, ի ծունր իջեալ առաջի նորա՝
կատակէին և ասէին. Ողջ եր, թա-
30 գաւոր Հրէից, Եւ թքեալ ի նա՝ առ-
նուին զեղէգնն և ծեծէին զգլուխ նորա:
31 Եւ յորժամ ձաղեցին զնա, մերկա-
ցուցին ի նմանէ զքղամիդն և ազու-
ցին նմա զիւր հանդերձն, և տարան
32 զնա ի խաչ հանել: Եւ ելեալ ար-
տաքս՝ գտին այր մի Կիւրենացի,
անուն Սիմոն. զնա կալան պահակ՝

33 զի բարձցէ զխաչն նորա։ Եւ եկեալ
ի տեղին անուանեալ Գողգոթա, որ
34 է տեղի կառափելոյ, ետուն նմա ըմ-
պել գինի ընդ լեղւոյ խառնեալ. և իբրև
35 ճաշակեաց, ոչ կամէր ըմպել։ Եւ հա-
նեալ զնա ի խաչ, բաժանեցին զհան-
դերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն՝
որ ասացաւ ի մարգարէէն. Բաժանե-
ցին զհանդերձս իմ յիւրեանս, և ի
վերայ պատմուճանի իմոյ վիճակս
36 արկանէին։ Եւ նստեալ պահէին զնա։
37 Եւ եդին ի վերայ գլխոյ նորա գրեալ
զվնաս նորա, թէ այս է Յիսուս թա-
38 գաւորն Հրէից։ Յայնժամ հանին ընդ
նմա ի խաչ երկուս աւազակս, մի
39 յաջմէ նորա և մի յահեկէ։ Եւ որ
անցանէինն՝ հայհոյէին զնա, շարժէին
40 զգլուխս իւրեանց և ասէին. Վա՜հ, որ
քակէիր զտաճարն և զերիս աւուրս
շինէիր զնա, ապրեցո՛ զքեզ, եթէ Որդի
41 ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ։ Նոյնպէս
և քահանայապետքն ձաղէին հանդերձ
42 դպրօքն և ծերովք և ասէին. Զայլս
ապրեցոյց, զանձն ոչ կարէ ապրե-
ցուցանել. եթէ թագաւոր է Իսրայելի՝
իջցէ այժմ ի խաչէդ, և հաւատասցուք

43 զնա. Եթէ յուսացաւ յԱստուած,
փրկեսցէ այժմ զդա՝ եթէ կամի զդա.
քանզի ասաց, եթէ Աստուծոյ Որդի
44 եմ։ Զնոյն և աւազակքն՝ որ խաչեալ
45 էին ընդ նմա, նախատէին զնա։ Եւ
ի վեց ժամէ աւուրն խաւար եղև ի
վերայ ամենայն երկրի մինչև ցինն
46 ժամ։ Եւ զինն ժամուն կոչեաց Յի-
սուս ի ձայն մեծ և ասէ. Էլի՛, Էլի՛,
լա՛մա սաբաքթանի. այսինքն է, Աս-
տուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ընդէր թո-
47 ղեր զիս։ Ոմանք յայնցանէ որ անդն
կային, իբրև լուան՝ ասէին. զԵղիա
48 կարդայ դա։ Եւ վաղվաղակի ընթա-
ցաւ մի ոմն ի նոցանէ՝ առ սպունգ
լի քացախով, հարեալ յեղեգան՝ ետ
49 ըմպել նմա։ Եւ կէսքն ասէին. Թո՛ղ
տեսցուք եթէ գա՞յ Եղիա փրկել զդա։
50 Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի
51 ձայն մեծ, և արձակեաց զոգին։ Եւ
ահա վարագոյր տաճարին ցելաւ յեր-
կուս ի վերուստ մինչև ի վայր, և
երկիր շարժեցաւ, և վէմք պատառե-
52 ցան, Եւ գերեզմանք բացան, և բա-
զում մարմինք ննջեցելոց սրբոց յա-
53 րեան. Եւ ելեալ ի գերեզմանաց յետ

յարութեանն նորա, մտին ի քաղաքն
54 սուրբ և երեւեցան բազմաց։ Իսկ
հարիւրապետն և որ ընդ նմա պահէին
զՅիսուս, իբրև տեսին զշարժումն
և զեղեալսն, երկեան յոյժ և ասեն.
55 Արդարև Աստուծոյ Որդի էր սա։ Էին
անդ կանայք բազումք, կային ի հե-
ռաստանէ և հայէին, որք եկին զկնի
Յիսուսի ի Գալիլեէ պաշտել զնա.
56 Յորս էր Մարիամ Մագդաղենացի, և
Մարիամ Յակովբայ և Յովսեայ մայր,
և մայր որդւոցն Զեբեդեայ։
57 Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի
մեծատուն յԱրիմաթեայ՝ որում ա-
նուն էր Յովսէփ, որ և աշակերտեալ
58 իսկ Յիսուսի։ Սա մատուցեալ առ
Պիղատոս, խնդրեաց զմարմինն Յի-
սուսի. յայնժամ Պիղատոս հրամա-
59 յեաց տալ զմարմինն։ Եւ առեալ
զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ
60 կտաւովք, Եւ եդ ի նոր գերեզմանի,
զոր փորեաց ի վիմի, և թաւալեցու-
ցեալ կափարիչ դրան գերեզմանին
61 վէմ մի մեծ՝ գնաց։ Անդ էր Մա-
րիամ Մագդաղենացի և միւս Մա-
րիամն, նստէին հանդէպ գերեզմա-

նին։
62 Եւ ի վաղիւ անդր, որ է յետ
ուրբաթուն, ժողովեցան քահանայա-
պետքն և փարիսեցիքն առ Պիղատոս
63 և ասեն. Տէր, յիշեցաք զի մոլորե-
ցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին
էր, թէ յետ երից աւուրց յառնեմ։
64 Արդ հրամայեա զգուշանալ գերեզ-
մանին մինչև ցերիս աւուրս, գուցէ
եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայ-
ցեն զնա և ասիցեն ժողովրդեանն,
թէ յարեաւ ի մեռելոց, և լինիցի
յետին մոլորութիւնն չար քան զա-
65 ռաջինն։ Ասէ ցնոսա Պիղատոս. Ունիք
զզօրականս, երթայք զգուշացարուք
66 որպէս և գիտէք։ Եւ նոքա երթեալ
զգուշացան գերեզմանին, և կնքեցին
զվէմն հանդերձ զօրականօքն։

ԳԼՈՒԽ ԻԸ.

1 Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում
լուսանայր միաշաբաթին, եկն Մա-
րիամ Մագդաղենացի և միւս Մա-
2 րիամն տեսանել զգերեզմանն։ Եւ
ահա շարժումն մեծ եղև, զի հրեշտակ

Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ
ի բաց թաւալեցոյց զվէմն ի դրանց
3 անտի և նստէր ի վերայ նորա։ Եւ
էր տեսիլ նորա իբրև զփայլակն, և
հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն։
4 Եւ յահէ անտի նորա խռովեցան պա-
հապանքն և եղեն իբրև զմեռեալս։
5 Պատասխանի ետ հրեշտակն և ասէ
ցկանայսն. Մի երկնչիք դուք. գիտեմ
զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք.
6 Չէ աստ, քանզի յարեաւ, որպէս
ասացն. եկայք տեսէք զտեղին ուր
7 կայր։ Եւ վաղվաղակի երթայք ասա-
ցէք աշակերտացն նորա թէ յարեաւ.
և ահա յառաջանայ քան զձեզ ի Գա-
լիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա
8 ասացի ձեզ։ Եւ ելեալ վաղվաղակի
ի գերեզմանէ անտի ահիւ և խնդու-
թեամբ բազմաւ՝ ընթանային պատմել
9 աշակերտացն։ Եւ ահա պատահեաց
նոցա Յիսուս և ասէ. Ողջ էք։ Եւ նոքա
մատուցեալ կալան զոտս նորա և
10 երկիրպագին նմա։ Յայնժամ ասէ
ցնոսա Յիսուս. Մի երկնչիք, երթայք
ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն
ի Գալիլեա, և անդ տեսցեն զիս։

11 Իբրև նոքա գնացին, ահա ոմանք ի
զօրականացն եկին ի քաղաքն և
պատմեցին քահանայապետիցն զա-
12 մենայն որ ինչ եղեն։ Եւ նոքա ժո-
ղովեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ
առեալ արծաթ յոյժ ետուն զօրակա-
13 նացն, Եւ ասեն. Ասասջիք՝ եթէ աշա-
կերտքն նորա եկեալ գիշերի գողա-
14 ցան զնա՝ մինչ մեք ի քուն էաք։ Եւ
եթէ լուր լիցի այդ առ դատաւորն,
մեք հաճեսցուք զնա, և զձեզ անհոգս
15 արասցուք։ Եւ նոցա առեալ զար-
ծաթն, արարին որպէս ուսանն. և ել
համբաւս այս ի հրէից մինչև ցայսօր։
16 Իսկ մետասան աշակերտքն գնացին
ի Գալիլեա, ի լեառնն՝ ուր ժամադիր
17 եղև նոցա Յիսուս. Իբրև տեսին զնա,
երկիրպագին նմա, և ոմանք յերկուա-
18 ցան։ Եւ մատուցեալ Յիսուս խօսե-
ցաւ ընդ նոսա և ասէ. Տուաւ ինձ
ամենայն իշխանութիւն յերկինս և
յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր,
19 և ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսու-
հետև՝ աշակերտեցէք զամենայն հե-
թանոսս, մկրտեցէք զնոսա յանուն
20 Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ու-

սուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ։ Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև ի կատարած աշխարհի։

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մարկոսի· գրեալ է սոյն Մարկոս աշակերտ Պետրոսի եւ ընթացակից Պօղոսի, Գրեաց զաւետարանս զայս, եւ դնէ սկիզբն եւ ասէ· Սկիզբն աւետարանի, ի Յովհաննու քարոզութենէն· եւ զմկրտութիւնն Յովհաննու· եւ առնու վկայութիւն յԵսայեայ մարգարէէ· Նշանակէ եւ զփորձութիւնն ի լերինն, եւ ոչ ասէ զփորձանքն· պատմէ եւ վասն ընտրութեան աշակերտացն, եւ նշանս եւ արուեստս՝ զոր արար, եւ զխորհուրդ մատնութեանն, եւ զկատարածն· եւ որ մատնեցաւ Պիղատոսի, եւ խաչեցաւ մարմնով, եւ զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, եւ զի մարմինն եդաւ ի գերեզմանի եւ յարեաւ երեքօրեայ· եւ զիջանել հրեշտակին եւ երեւել կանանցն, եւ զնոյն պատմել աշակերտացն,

Մարկոս հրամանաւ Պետրոսի վիմի գրեաց զաւետարանս իւր յԱղեքսանդր քաղաքի ի լեզու Եգիպտացի, զկնի ԺԵ ամի համբառնալոյ Փրկչին։

Մարկոս՝ բարձր պատուար, կամ ի վերայ տանեացն։

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

	Գլ.	Համր.
Վասն դիւահարին . .	Ա	23
Վասն Պետրոսի զոքանչին .	Ա	29
Վասն բժշկութեան պէս պէս հիւանդութեանց . . .	Ա	32
Վասն բորոտին . .	Ա	40
Վասն անդամալուծին . .	Բ	3
Վասն Ղեւեայ մաքսաւորի .	Բ	14
Վասն գօսացեալ ձեռինն .	Գ	1
Վասն առաքելոցն ընտրութեան	Գ	13
Վասն սերմանեացն առակի .	Դ	2
Վասն սաստելոյ ջուրցն .	Դ	35
Վասն լէգէովնացն . .	Ե	1
Վասն դստեր ժողովրդապետին	Ե	21
Վասն տեռատեսին . .	Ե	25
Վասն համարոյ առաքելոցն .	Զ	7
Վասն Յովհաննու և Հերովդէի	Զ	14
Վասն հինգ հացից և երկուց ձկանցն	Զ	35
Վասն ի վերայ ծովուն գնալոյ	Զ	47
Վասն անցանելոյն զպատուիրանաւն	Է	5
Վասն ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ	Է	24
Վասն համերն և խլին .	Է	31
Վասն եօթն հացին .	Ը	1
խմորոյ փարիսեցւոցն .	Ը	16

Վասն կուրին . .	Ը	22
Վասն հարցանելոյն ի Կեսարիա	Ը	27
Վասն այլակերպութեանն Տեառն	Թ	1
Վասն լուսնահարին . .	Թ	16
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ իցէ մեծ	Թ	52
Վասն հարցանելոյն՝ թէ պա՞րտ է արձակել զկին . .	Ժ	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս	Ժ	17
Վասն որդւոցն Զեբեդեայ .	Ժ	35
Վասն Բարտիմէոսի . .	Ժ	46
Վասն յաւանակին .	ԺԱ	1
Վասն չորանալոյ թզենւոյն .	ԺԱ	12
Վասն անյիշաչարութեան .	ԺԱ	25
Վասն հարցանելոյ քահանայապետացն զՏէրն . . .	ԺԱ	27
Վասն այգւոյն . .	ԺԲ	1
Վասն հարցանելոյ զդահեկանէն	ԺԲ	13
Վասն սադուկեցւոցն .	ԺԲ	18
Վասն դպրացն . .	ԺԲ	28
Վասն Տեառն հարցանելոյ զփարիսեցին . . .	ԺԲ	35
Վասն երկու լումայիցն .	ԺԲ	41
Վասն կատարածին . .	ԺԳ	3
Վասն աւուրն և ժամուն .	ԺԳ	32
Վասն օծանելոյ կնոջն զՏէրն իւղով	ԺԴ	3
Վասն զատկին . .	ԺԴ	12
Վասն մատնութեանն մարգարէանալոյ	ԺԴ	18
Վասն Պետրոսի ուրացութեանն	ԺԴ	66
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն	ԺԵ	42
Վասն իւղաբեր կանանցն .	ԺԶ	1

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ

ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի
2 Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ։ Որպէս
և գրեալ է ի մարգարէս. Ահաւասիկ
ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի
քո, որ հանդերձեսցէ զճանապարհս
3 քո առաջի քո. Ձայն բարբառոյ յա-
նապատի. պատրաստ արարէք զճա-
նապարհ Տեառն, և ուղիղ արարէք
4 զշաւիղս նորա։ Եւ եղև զի Յովհան-
նէս մկրտէր յանապատի և քարոզէր
մկրտութիւն ապաշխարութեան ի
5 թողութիւն մեղաց։ Եւ երթայր առ
նա ամենայն աշխարհն Հրէաստանի
և Երուսաղեմացիք ամենեքեան, և

մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ՝
6 խոստովանեալ զմեղս իւրեանց։ Եւ
էր Յովհաննէս զգեցեալ ստեւ ուղտու
եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, եւ
կերակուր նորա մարախ եւ մեղր վայ-
7 րենի։ Քարոզէր եւ ասէր. Գայ զօրա-
գոյն քան զիս զկնի իմ,որում չեմ բա-
ւական խոնարհեալ լուծանել զխրացս
8 կօշկաց նորա։ Ես մկրտեցի զձեզ ջրով,
եւ նա մկրտեսցէ զձեզ Հոգւովն սրբով։
9 Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ եկն Յի-
սուս ի Նազարեթէ Գալիլեացւոց, եւ
մկրտեցաւ ի Յովհաննէ ի Յորդանան։
10 Եւ նոյնժամայն ընդ վերանալ ի ջրոյն,
ետես ցելեալ զերկինս, եւ զՀոգին
Աստուծոյ իբրեւ զաղաւնի զի իջանէր
11 ի վերայ նորա։ Ձայն եղեւ յերկնից
եւ ասէ. Դու ես Որդի իմ սիրելի, ընդ
12 քեզ հաճեցայ։ Եւ նոյնժամայն Հոգին
13 հանէ զնա յանապատ։ Եւ էր նա անդ
զաւուրս քառասուն փորձեալ ի սա-
տանայէ, եւ էր ընդ գազանս, եւ հրեշ-
տակք պաշտէին զնա։

14 Եւ յետ մատնելոյն Յովհաննու
եկն Յիսուս ի Գալիլեա, քարոզէր
15 զաւետարանն Աստուծոյ եւ ասէր, Թէ

կատարեալ է ժամանակ եւ հասեալ է
արքայութիւնն Աստուծոյ. ապաշխա-
րեցէք եւ հաւատացէք յաւետարանն։
16 Իբրեւ անցանէր առ ծովեզերբն Գա-
լիլեացւոց, ետես զՍիմոն եւ զԱնդրէ-
աս եղբայր Սիմոնի, զի արկեալ էր
նոցա ուռկանս ի ծով. քանզի ձկնորսք
17 էին։ Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք
զկնի իմ,եւ արարից զձեզ լինել որսորդս
18 մարդկան։ Եւ վաղվաղակի թողեալ
զուռկանսն գնացին զհետ նորա։
19 Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի
յառաջ, ետես զՅակովբոս Զեբեդեայ
եւ զՅովհաննէս զեղբայր նորա, եւ զնո-
սա ի նաւին մինչ կազմէին զուռկանս.
20 եւ կոչեաց զնոսա։ Եւ վաղվաղակի
թողեալ զհայրն իւրեանց զԶեբեդէոս
ի նաւին վարձկանօքն հանդերձ, գնա-
ցին զհետ նորա։

21 Եւ մտանեն ի Կափառնաում. եւ իսկ
եւ իսկ ի շաբաթուն մտեալ ի ժողո-
22 վուրդն, ուսուցանէր զնոսա։ Եւ զար-
մանային ընդ վարդապետութիւն նո-
րա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ
իշխանութեամբ՝ եւ ոչ որպէս դպիրքն։
23 Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի,

յորում այս պիղծ գոյր ի նմա, որ
24 աղաղակեաց և ասէ. Թո՛յլ տուր, զի՞
կայ մեր և քո Յիսուս Նազովրեցի,
եկի՞ր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ
25 ո՛վ ես, սուրբն Աստուծոյ։ Սաստեաց
ի նա Յիսուս և ասէ. Կարկեա՛ց և ե՛լ
26 ի դմանէ։ Եւ զարկոյց զնա այսն
պիղծ, և աղաղակեաց ի ձայն մեծ, և
27 ել ի նմանէ։ Եւ զարմացան ամենե-
քին, մինչև հծծել ընդ միմեանս և
ասել. Զի՞նչ է այս նոր վարդապե-
տութիւն, զի իշխանութեամբ, և այսոց
28 պղծոց սաստէ, և հնազանդին սմա։ Եւ
ել լուր նորա ընդ ամենայն կողմն
29 Գալիլեացւոց։ Եւ վաղվաղակի ելեալ
ի ժողովրդենէն, եկն ի տուն Սիմովնի
և Անդրեայ՝ Յակովբաւ և Յովհաննու
30 հանդերձ։ Եւ զոքանչ Սիմովնի դնէր
ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա
31 վասն նորա։ Եւ մատուցեալ յարոյց
զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող
32 զնա տենդն, և պաշտէր զնոսա։ Եւ
իբրև երեկոյ եղև, ի մտանել արեգա-
կանն, բերէին առ նա զամենայն
33 հիւանդս և զդիւահարս. Եւ էր ամե-
նայն քաղաքն ժողովեալ առ դրունսն։

34 Եւ բժշկեաց զբազում հիւանդս ի պէս
պէս ախտից, և դևս բազումս եհան,
և ո՛չ տայր խօսել դիւացն, զի գիտէին
զնա՝ թէ Քրիստոս է։
35 Եւ ընդ այգն ընդ առաւօտն յա-
րուցեալ՝ ել և գնաց յանապատ տեղի,
36 և անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ
նորա Սիմովն և որ ընդ նմայն էին,
37 Եւ իբրև գտին զնա, ասեն ցնա, թէ
38 ամենեքին խնդրեն զքեզ։ Եւ ասէ
ցնոսա. Եկա՛յք երթիցուք և յայլ մօ-
տաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ
քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ։
39 Եւ քարոզէր ի ժողովուրդսն նոցա
ընդ ամենայն Գալիլեացիս և դևս
40 հանէր։ Գայ առ նա բորոտ մի, աղա-
չէր, ի ծունր իջանէր և ասէր. Տէ՛ր,
եթէ կամիս, կարող ես զիս սրբել։
41 Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն,
մերձեցաւ ի նա և ասէ ցնա. Կամիմ,
42 սրբեա՛ց։ Եւ իբրև ասաց ցնա, վաղ-
վաղակի գնաց ի նմանէ բորոտու-
43 թիւնն, և սրբեցաւ։ Եւ սաստեաց նմա՝
եհան զնա արտաքս վաղվաղակի, և
44 ասէ. Զգո՛յշ լեր, մի՛ ումեք ինչ ասի-
ցես, այլ երթ ցո՛յց զքեզ քահանային

և մատո՛ վասն սրբութեան քո պա-
տարագ, զոր հրամայեաց Մովսէս՝ ի
45 վկայութիւն նոցա։ Եւ նա ելեալ
սկսաւ քարոզել յոյժ և հռչակ հար-
կանել զբանն, մինչ ոչ ևս կարող
լինել նմա յայտնապէս ի քաղաք
մտանել, այլ արտաքոյ յանապատ
տեղիս էր, և գային առ նա յամե-
նայն կողմանց։

ԳԼՈՒԽ Բ.

1 Եւ մտեալ դարձեալ ի Կափառ-
2 նաում յետ աւուրց, լուր եղև եթէ
ի տան է. և ժողովեցան բազումք՝
մինչև տեղի ևս ոչ լինել և ոչ առ
3 դրանն, և խօսէր նոցա զբանն։ Եւ
գային առ նա՝ բերէին անդամալոյծ
4 մի բարձեալ ի չորից։ Եւ իբրև ոչ
կարէին մերձենալ առ նա յամբոխէ
անտի, քակեցին զյարկն ուր էր Յի-
սուս, և բացեալ զառաստաղն՝ իջու-
ցին զմահիճսն յորում կայր անդա-
5 մալոյծն։ Եւ տեսեալ Յիսուսի զհա-
ւատս նոցա, ասէ ցանդամալոյծն.

Որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք
6 քո։ Եւ էին ոմանք ի դպրաց անտի՝
որ անդ նստէին և խորհէին ի սիրտս
7 իւրեանց. Զի՞նչ է այս՝ որ խօսի սա
զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ
8 զմեղս, եթէ ոչ մի Աստուած։ Եւ
գիտաց Յիսուս հոգի իւր՝ թէ այնպէս
խորհին ի սիրտս իւրեանց, և ասէ.
9 Զի՞ խորհիք զայդ ի սիրտս ձեր. Զի՞նչ
դիւրին է ասել ցանդամալոյծն. Թո-
ղեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝
արի՛ ա՛ռ զմահիճս քո և երթ ի տուն
10 քո։ Այլ զի գիտասջիք, եթէ իշխա-
նութիւն ունի Որդի մարդոյ ի վերայ
երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդա-
11 մալոյծն. Քեզ ասեմ, արի՛ ա՛ռ զմա-
12 հիճս քո և երթ ի տուն քո։ Եւ յա-
րեաւ, և վաղվաղակի առեալ զմահիճսն,
ել առաջի ամենեցուն, մինչև զար-
մանալ ամենեցուն և փառաւոր առնել
զԱստուած և ասել, թէ այսպիսի ինչ
երբէք ոչ տեսաք։
13 Եւ ել դարձեալ ի ծովեզրն, և ամե-
նայն ժողովուրդն գայր առ նա, և
14 ուսուցանէր զնոսա։ Եւ մինչդեռ
անցանէր, ետես զՂևի Ալփեայ՝ զի

նստէր ի մաքսաւորութեան, և ասէ
ցնա. Եկ զկնի իմ. և յարուցեալ գնաց
15 զկնի նորա: Եւ եղև ի բազմելն նորա
ի տան նորա, և բազում մաքսաւորք
բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ
աշակերտսն նորա. քանզի էին բա-
16 զումք, որ երթային զհետ նորա: Իսկ
դպիրքն և փարիսեցիք իբրև տեսին՝
թէ ուտէ ընդ մաքսաւորս և ընդ
մեղաւորս, ասեն ցաշակերտսն նորա.
զի ընդ մեղաւորս և ընդ մաք-
17 սաւորս ուտէ և ըմպէ: Իբրև լուաւ
Յիսուս՝ ասէ ցնոսա. Ոչ ինչ է պիտոյ
բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. և ոչ
եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս:
18 Եւ էին աշակերտքն Յովհաննու և
փարիսեցիքն ի պահս. գան և ասեն
ցնա. Ընդէր աշակերտքն Յովհաննու
և փարիսեցիքն պահեն, և քո աշա-
19 կերտքդ ոչ պահեն: Եւ ասէ ցնոսա
Յիսուս. միթէ մարթ ինչ իցէ որդւոց
առագաստի, մինչ ընդ նոսա իցէ փե-
սայն՝ պահել. ցորքան ընդ իւրեանս
ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել:
20 Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ վե-
րասցի ի նոցանէ փեսայն, և ապա

21 պահեսցեն յաւուրն յայնմիկ: Ո՛չ ոք
կապերտ նոր անթափ արկանէ ի վե-
րայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝
առնու լրութեամբն իւրով նորն ի
հնոյ անտի, և չար ևս պատառումն
22 լինի: Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի
տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ
գինին զտիկսն, գինին հեղու և տիկքն
կորնչին. այլ գինի նոր ի տիկս նորս
արկանելի է:
23 Եւ եղև նմա ի շաբաթու անցանել
ընդ արտորայս, և աշակերտքն ի գնալն
իւրեանց սկսան հասկ կորզել և ուտել:
24 Եւ փարիսեցիքն ասեն ցնա. Տե՛ս՝
զինչ գործեն աշակերտն քո ի շաբա-
25 թու՝ զոր չէ արժան: Եւ ասէ ցնոսա
Յիսուս. Ոչ երբէք իցէ ընթերցեալ
ձեր՝ զոր արարն Դաւիթ, յորժամ
պիտոյն եղև՝ և քաղցեաւ նա և որք
26 ընդ նմայն էին: Զիա՞րդ եմուտ ի
տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ
քահանայապետիւ և զհացսն առա-
ջաւորութեան եկեր, և ետ այնոցիկ՝
27 որք ընդ նմայն էին, զորս ոչ էր օրէն
ուտել, բայց միայն քահանայիցն: Եւ
ասէ ցնոսա. Շաբաթ վասն մարդոյ

եղև, և ոչ եթէ մարդ վասն շաբա-
28 թու. Ապա ուրեմն տէր է Որդի
մարդոյ և շաբաթու։

ԳԼՈՒԽ Գ.

1 Եւ եմուտ միւսանգամ ի ժողո-
վուրդն, և էր անդ այր մի՝ որոյ ձեռն
2 գօսացեալ էր. Եւ սպասէին նմա եթէ
բժշկիցէ զնա ի շաբաթուն, զի չարա-
3 խօսեսցեն զնմանէ։ Եւ ասէ ցայրն՝ որոյ
ձեռն գօսացեալ էր. Արի՛, ա՛նց ի մէջ։
4 Եւ ասէ ցնոսա. Զի՞նչ արժան է ի
շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ
չար առնել, ոգի՞ մի ապրեցուցանել՝
եթէ կորուսանել. և նոքա լռեցին։
5 Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի
ցասմամբ, տրտմեալ վասն կուրու-
թեան սրտից նոցա՝ ասէ ցայրն. Ձգեա՛
զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ
ձեռն նորա։
6 Եւ ելեալ արտաքս վաղվաղակի
փարիսեցիքն հերովդիանոսօքն հան-
դերձ, խորհուրդ առնէին վասն նորա
7 թէ զիա՞րդ կորուսցեն զնա։ Իսկ Յի-

սուս աշակերտօքն իւրովք գնաց ի
ծովեզրն. և բազում ժողովուրդ ի
Գալիլեացւոց երթային զհետ նորա,
8 և ի Հրէաստանէ. Եւ յԵրուսաղեմէ
և յայնկոյս Յորդանանու, և որք ի
Տիւրոսէ և ի Սիդովնէ, բազում ժո-
ղովուրդ, իբրև լսէին որչափ ինչ առ-
9 նէր, գային առ նա։ Եւ ասէ ցաշա-
կերտսն իւր, զի նաւակ մի պատրաս-
տական կայցէ նմա վասն ամբոխին՝
10 զի մի՛ նեղեսցեն զնա, Քանզի զբա-
զումս բժշկեաց, մինչ գալ և խռնել
զնովաւ՝ զի մերձեսցին առ նա, որք
11 ունէին ախտս ինչ։ Եւ այսք պիղծք
յորժամ տեսանէին զնա՝ անկանէին
առաջի նորա, աղաղակէին և ասէին,
12 թէ դու ես Որդին Աստուծոյ. և նա
յոյժ սաստէր նոցա, զի մի՛ յայտնի
առնիցեն զնա։
13 Ելանէ ի լեառն, և կոչէ առ ինքն
զորս ինքն կամեցաւ, և չոգան առ նա։
14 Եւ արար երկոտասանս՝ զի իցեն
զնովաւ, և զի առաքեսցէ զնոսա
15 քարոզել Եւ ունել իշխանութիւն
բժշկելոյ զցաւս և հանելոյ զդևս։
16 Եւ եդ անուն Սիմովնի՝ Պետրոս.

17 Եւ Յակովբոս Զեբեդեայ և Յովհան-
նու եղբօրն Յակովբայ՝ եդ նոցա
անուանս Բանէրեգէս, որ է՝ Որդիք
18 որոտման. Եւ զԱնդրէաս և զՓիլիպ-
պոս և զԲարթողոմէոս և զՄատ-
թէոս զմաքսաւորն և զԹովմաս և
զՅակովբոս Ալփեայ և զԹադէոս և
19 զՍիմոն Կանանացի Եւ զՅուդա
Իսկարիովտացի, որ և մատնեացն
զնա։
20 Գան ի տուն, և գայ միւսանգամ
ընդ նոսա ժողովուրդն, մինչ զի և
հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա։
21 Եւ իբրև լուան որ իւրքն էին՝ ելին
ունել զնա. զի համարէին թէ մոլեգ-
22 նեալ իցէ։ Եւ դպիրքն՝ որք յԵրու-
սաղեմէ իջեալ էին, ասէին թէ Բէ-
եղզեբուղ գոյ ի դմա, և իշխանաւ
23 դիւացն հանէ դա զդեւս։ Եւ կոչեցեալ
զնոսա առ ինքն, առակօք խօսէր ընդ
նոսա. Զիարդ կարէ սատանայ զսա-
24 տանայ հանել։ Եւ արդ՝ եթէ թա-
գաւորութիւն յանձն իւր բաժանեսցի,
ոչ կարէ կալ թագաւորութիւնն այն։
25 Եւ եթէ տուն յանձն իւր բաժանեսցի,
26 ոչ կարէ կալ տունն։ Եւ եթէ սատա-

նայ ի վերայ անձին իւրոյ յարեաւ,
և բաժանեալ է, ոչ կարէ կալ, այլ
27 վախճանեալ է։ Այլ ոչ ոք կարէ զկա-
րասի հզօրի մտեալ ի տուն նորա
աւար հարկանել, եթէ ոչ նախ զհը-
զօրն կապիցէ, և ապա զտուն նորա
28 աւար հարկանիցէ։ Ամէն ասեմ ձեզ,
զի ամենայն թողցի որդւոց մարդկան
մեղք և հայհոյութիւնք՝ որչափ և
29 հայհոյիցեն. Բայց որ հայհոյեսցէ
զՀոգին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն
յաւիտեան, այլ պարտապան լիցի
30 յաւիտենից մեղաց։ Զի ասէին, թէ
այս պիղծ գոյ ի նմա։
31 Գան եղբարքն և մայր նորա, և
արտաքոյ կացեալ՝ յղեցին և կոչէին
32 զնա։ Եւ անդ ժողովուրդն շուրջ
զնովաւ նստէր. և իբրև ասացին ցնա,
Ահաւասիկ մայր քո և եղբարք քո
կան արտաքոյ և խնդրեն զքեզ,
33 Պատասխանի ետ նոցա և ասէ. Ով է
34 իմ մայր, կամ եղբարք։ Հայեցաւ
շուրջ զիւրև յաշակերտսն զի նստէին,
և ասէ. Ահաւասիկ մայր իմ և եղբարք
35 իմ։ Զի որ առնիցէ զկամս Աստուծոյ,
նա է իմ եղբայր և քոյր և մայր։

ԳԼՈՒԽ Դ.

1 Դարձեալ սկսաւ ուսուցանել առ
ծովեզերբն. և խռնեցան զնովաւ ժո-
ղովուրդք բազումք, մինչև ի նաւ
մտանել նմա և նստել ի ծովուն,
և ամենայն ժողովուրդն զծովեզերբն
2 զցամաքն ունէին: Եւ ուսուցանէր
զնոսա առակօք բազում ինչ, և ասէր
նոցա ի վարդապետութեան իւրում.
3 Լուարո՛ւք. ահաւասիկ ել սերմանօղ
4 ի սերմանել: Եւ եղև ի սերմանելն
ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն
5 թռչուն և եկեր զնա: Եւ այլն անկաւ
յապառաժի, ուր ո՛չ գոյր հող բազում,
և վաղվաղակի բուսաւ՝ քանզի ո՛չ
6 գոյր հիւթ երկրին. Եւ յորժամ ծա-
գեաց արև՝ ջեռաւ, և զի ո՛չ գոյին
7 արմատք՝ ցամաքեցաւ: Եւ այլն ան-
կաւ ի մէջ փշոց. ելին փուշքն և
8 հեղձուցին զնա, և պտուղ ո՛չ ետ: Եւ
այլն անկաւ յերկիր բարւոք, և ելեալ
աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ
միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն

9 և ընդ միոյ հարիւր: Եւ ասէր. Որ
ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:
10 Եւ իբրև եղև առանձինն, հարցին
ցնա որք զնովաւն էին աշակերտօքն
11 հանդերձ զառակսն: Եւ ասէ ցնոսա.
Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս
արքայութեան Աստուծոյ, բայց նոցա
որ արտաքինքն են՝ ամենայն ինչ
12 առակօք լինի. Զի տեսանելով տես-
ցեն՝ և մի՛ տեսցեն, և լսելով լուիցեն՝
և մի՛ իմասցին, զի մի՛ երբէք դարձ-
13 ցին՝ և թողցի նոցա: Եւ ասէ ցնոսա.
Ոչ գիտէք զառակս զայս, և զիա՞րդ
14 զամենայն առակսն գիտիցէք: Որ սեր-
15 մանէն՝ զբանն սերմանէ: Եւ նոքա
են՝ որք առ ճանապարհաւն, ուր
բանն սերմանի, և յորժամ լսեն զնա,
գայ սատանայ և հանէ զսերմանեալն
16 ի սիրտս նոցա: Եւ նոքա են՝ որք
յապառաժին սերմանեցան, որք յոր-
ժամ լսիցեն զբանն, վաղվաղակի
17 խնդութեամբ ընդունին, Եւ զի ո՛չ
ունին արմատս յանձինս, այլ առ
ժամանակ մի են, ապա ի հասանել
նեղութեան կամ հալածման վասն
բանին վաղվաղակի գայթակղին:

18 Իսկ որ ի մէջ փշոյն սերմանեցան՝
նոքա են, որք իբրեւ զբանն լսեն,
19 Եւ հոգք աշխարհիս և պատրանք մե-
ծութեան մտանեն և հեղձուցանեն
20 զբանն, և անպտուղ լինի։ Եւ նոքա
են՝ որք յերկիրն բարւոք սերմանե-
ցան, որք լսեն զբանն և ընդունին,
և տան պտուղ՝ ընդ միոյ երեսուն
և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ
հարիւր։
21 Եւ ասէ ցնոսա. Մի եթէ գայ ճրագ,
զի ընդ գրուանաւ դնիցի կամ ընդ
մահճօք. ոչ ապաքէն ի վերայ աշտա-
22 նակի դնիցի։ Զի չէ ինչ ի ծածուկ՝
որ թէ ոչ յայտնեսցի. և ոչ եղև ինչ
23 գաղտնի, եթէ ոչ ի յայտ գայցէ։ Եթէ
ոք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։
24 Եւ ասէ ցնոսա. Տեսէք զինչ լսէքդ,
և յաւելցի ձեզ՝ որոց լսէքդ։ Որով
չափով չափէք՝ նովին չափեսցի ձեզ։
25 Որ ոք ունիցի՝ տացի նմա. և որ ոչն
ունիցի՝ և զոր ունիցին բարձցի ի
նմանէ։
26 Եւ ասէր. Այսպէս է արքայութիւն
Աստուծոյ, որպէս զի այր մի արկա-
27 նիցէ զսերմանիս յերկիր, Եւ ննջիցէ

և յառնիցէ զցայգ և զցերեկ, և սեր-
մանիքն բուսանիցին և աճիցեն, և
28 նա ոչ գիտէ, թէ երկիրն ինքնին
բերէ զպտուղ. նախ զխոտն, և ապա
զհասկն, և ապա ցորեան ատոք ի
29 հասկին։ Այլ յորժամ տայցէ զպտուղն,
վաղվաղակի առաքէ մանգաղ, զի
30 հասեալ են հունձք։ Եւ ասէր. Ո՞ւմ
նմանեցուսցուք զարքայութիւնն Աս-
տուծոյ, կամ որո՞վ առակաւ առա-
31 կեսցուք զնա։ Որպէս հատն մանանխոյ,
որ յորժամ սերմանիցի յերկրի, փոք-
րագոյն է քան զամենայն սերմանիս՝
32 որք են յերկրի, Եւ յորժամ սերմա-
նիցի, բուսանի և լինի մեծ քան
զամենայն բանջար, և արձակէ ոստս
մեծամեծս, մինչև բաւական լինել
ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից
33 բնակել։ Եւ այնպիսի առակօք խօսէր
ընդ նոսա զբանն, որպէս կարող
34 լինէին լսել. Եւ առանց առակի ոչ
ինչ խօսէր ընդ նոսա, բայց առան-
ձինն աշակերտացն իւրոց մեկնէր
զամենայն։
35 Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ՝
իբրև ընդ երեկս լինէր. Եկայք անց-

36 ցուք յայն կողմն։ Թողուն զժողո-
վուրդն և առնուն զնա նաւաւն
հանդերձ, և զայլ ևս նաւսն որ էին
37 ընդ նմա։ Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ,
և զալիսն ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ
38 լի իսկ լինել։ Եւ ինքն ննջէր ի խելս
նաւին ի վերայ բարձի. զարթուցա-
նէին զնա և ասէին. Վարդապետ,
ո՞չինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք
39 աւասիկ։ Եւ զարթուցեալ սաստեաց
հողմոյն և ծովուն՝ ասէ. Դադարեա՛,
կարկեա՛ց. և դադարեաց հողմն, և
40 եղև խաղաղութիւն մեծ։ Եւ ասէ
ցնոսա. Ընդէ՞ր այդպէս վատասիրտ
էք. չև ևս ունիք հաւատս։ Եւ երկեան
երկիւղ մեծ, և ասէին ցմիմեանս.
Ո՞ ոք արդեօք իցէ սա, զի և հողմ և
ծով հնազանդին նմա։

ԳԼՈՒԽ Ե.

1 Եւ եկն յայնկոյս ծովուն յաշ-
2 խարհն Գերգեսացւոց։ Եւ ընդ ելա-
նելն նորա ի նաւէ անտի, պատահեաց
նմա այր մի ի գերեզմանացն՝ զոր

3 ունէր այս պիղծ, Որոյ և բնակութիւնն
իւր իսկ ի գերեզմանս էր, և ո՛չ շղ-
թայիւք ոք ևս կարէր կապել զնա,
4 Վասն բազում անգամ ոտնակապօք
և շղթայիւք կապելոյ, և խզելոյ ի
նմանէ զշղթայսն և զոտնակապսն
խորտակելոյ, և ոչ ո՛ք կարէր պարտել
5 զնա, Քանզի հանապազ զցայգ և
զցերեկ ի գերեզմանս և ի լերինս
աղաղակէր և կոծէր զանձն իւր
6 քարամբք։ Իբրև ետես զՅիսուս ի
հեռաստանէ,ընթացաւ և երկիր եպագ
7 նմա, Աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ.
Զի՞ կայ իմ և քո, Յիսուս Որդի Ա-
տուծոյ բարձրելոյ. երդմնեցուցանեմ
զքեզ յԱստուած, մի՛ տանջեր զիս։
8 Քանզի ասէր ցնա. Ե՛լ այսդ պիղծ ի
9 մարդոյ այտի։ Եւ հարցանէր ցնա՝
թէ զի՞նչ անուն է քո. և ասէ ցնա.
Լէգէոն անուն է իմ, քանզի բազումք
10 եմք։ Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛
առաքեսցէ զնոսա արտաքս քան
11 զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն
երամակ մի խոզից արօտական մեծ.
12 Աղաչեցին զնա ամենայն դևքն և
ասեն. Առաքեա՛ զմեզ ի խոզսն, զի

13 մտցուք ի նոսա։ Եւ հրամայեաց նո-
ցա։ Եւ իբրև ելին այսքն պղծք՝ մտին
ի խոզսն, և դիմեաց երամակն ի դարէ
անտի ի ծովն. էին իբրև երկու հա-
14 զարք, և հեղձնուին ի ծովուն։ Եւ
խոզարածքն փախեան և պատմեցին
ի քաղաքի և յագարակս, և ելին
տեսանել զինչ իցէ որ գործեցաւն։
15 Գան առ Յիսուս, և տեսանեն զդիւա-
հարն՝ զի նստէր զգեցեալ և զգաս-
տացեալ, որ ունէր զլեգէոնն, և զահի
16 հարան։ Եւ պատմեցին նոցա՝ որոց տե-
սեալն էր, թէ զինչ եղև այսահարին և
17 զինչ վասն խոզիցն։ Եւ սկսան աղաչել
18 զնա գնալ ի սահմանաց նոցա։ Եւ իբրև
եմուտ նա ի նաւն, աղաչէր զնա
19 դիւահարն, զի ընդ նմա իցէ։ Եւ
Յիսուս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ
ցնա. Ե՛րթ ի տուն քո առ ընտանիս
քո, և պատմեա նոցա՝ որ ինչ մի-
անգամ Տէր արար քեզ և ողորմեցաւ
20 քեզ։ Եւ չոգաւ, և սկսաւ քարոզել
ի Դեկապօլին, զոր ինչ արար նմա
Յիսուս, և ամենեքին զարմանային։
21 Եւ իբրև անց Յիսուս միւսանգամ
յայն կողմն, ժողովեցաւ առ նա ժո-

ղովուրդ բազում, և էր առ ծովեզերբն։
22 Եւ ահա մի ի ժողովրդապետացն
գայր, որում անուն էր Յայրոս, և
իբրև ետես զնա՝ անկաւ առ ոտս
23 նորա, Աղաչէր զնա յոյժ և ասէր,
թէ դուստր նորա մերձ է ի մահ, զի
եկեալ դնիցէ նմա ձեռն, որպէս զի
24 ապրեսցի և կեցցէ։ Եւ գնաց ընդ
նմա. երթայր և ժողովուրդ բազում
25 զհետ նորա, և նեղէին զնա։ Եւ կին
մի էր ի տեռատեսութեան արեան
26 զերկոտասան ամ, Եւ յոյժ մշտացեալ
ի բազում բժշկաց և ծախեալ զինչս
իւր զամենայն, և չէր ինչ օգտեալ,
27 այլ ևս առաւել զայրացեալ։ Իբրև
լուաւ զՅիսուսէ, եկն ի մէջ ամբոխին
յետոյ և բուռն եհար զհանդերձէ
28 նորա։ Քանզի խորհէր ի միտ, թէ
միայն մերձեցայց ի հանդերձս նորա՝
29 փրկեցայց։ Եւ վաղվաղակի ցամաքե-
ցաւ աղբիւր արեան նորա, և գիտաց
ի մարմին իւր թէ բժշկեցաւ ի տան-
30 ջանացն։ Եւ անդէն վաղվաղակի
գիտաց Յիսուս յանձն իւր զզօրու-
թիւնն՝ որ ել ի նմանէ, դարձաւ
յամբոխն և ասէ. Ո՛վ մերձեցաւ ի

31 հանդերձս իմ: Եւ ասեն ցնա աշա-
կերտքն. Տեսանես, զի ամբոխդ նեղէ
զքեզ, և ասես թէ՝ ո՞վ մերձեցաւ ի
32 հանդերձս իմ: Եւ շուրջ հայէր տե-
33 սանել թէ ո՞վ զայն արար: Եւ կինն
զարհուրեալ և դողացեալ, վասն որոյ
գաղտն արար, քանզի գիտէր զինչ
եղև նմա, եկն անկաւ առաջի նո-
րա և ասաց զամենայն իրսն ստու-
34 գութեամբ: Եւ Յիսուս ասէ ցնա.
Դուստր, հաւատք քո կեցուցին ըզ-
քեզ, երթ ի խաղաղութիւն, և եղի-
35 ջիր ողջ ի տանջանաց քոց: Մինչդեռ
նա զայն խօսէր, գան ոմանք ի
ժողովրդապետէն և ասեն, թէ դուս-
տրն քո մեռաւ, զի՞ ես աշխատ
36 առնես զվարդապետդ: Իսկ Յիսուս
իբրև լուաւ զբանն ասացեալ, ասէ
ցժողովրդապետն. Մի՛ երկնչիր, բայց
37 միայն հաւատա: Եւ ոչ զոք եթող
ընդ իւր երթալ, բայց միայն զՊետ-
րոս և զՅակոբոս և զՅովհաննէս
38 զեղբայրն Յակոբայ: Գայ ի տուն
ժողովրդապետին, և տեսանէ ամբոխ
յոյժ և լալականս և աղաղակս յոյժ,
39 Եւ մտեալ ի ներքս՝ ասէ ցնոսա.

Զի՞ խռովեալ էք և լայք, մանուկն
40 ոչ է մեռեալ, այլ ննջէ: Եւ ծաղր
առնէին զնա. և նորա հանեալ ար-
տաքս զամենեսեան, առնու ընդ իւր
զհայր մանկանն և զմայր և զնոսա՝
որք ընդ նմայն էին, և մտանէ ուր
41 դնէր մանուկն: Եւ կալեալ զձեռանէ
մանկանն՝ ասէ ցնա. Տա՛լիթա, կո՛ւմի,
որ թարգմանի. Աղջի՛կ դու, քեզ ասեմ,
42 արի: Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն
և գնայր. քանզի էր ամաց իբրև եր-
կոտասանից. և զարմացան մեծա-
43 զարմանալեօք: Եւ պատուէր տայր
նոցա յոյժ, զի մի՛ ոք գիտասցէ զայն.
և ասաց տալ նմա ուտել:

ԳԼՈՒԽ Զ.

1 Եւ ել անտի, եկն ի գաւառ իւր,
և երթային զհետ նորա աշակերտքն
2 իւր: Եւ եղև ի շաբաթուն սկսաւ
ուսուցանել ի ժողովրդեանն. և բա-
զումք իբրև լսէին՝ զարմանային ընդ
վարդապետութիւն նորա և ասէին.
Ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ իցէ

իմաստութիւնս, որ տուեալ է սմա,
զի զօրութիւնք այսպիսիք ի ձեռաց
3 սորա լինին։ Ո՞չ սա է մանուկ հիւ-
սանն, և որդին Մարեմայ, եղբայր
Յակովբայ և Յովսեայ և Յուդայի և
Սիմովնի. և չիցեն քորքն դորա աստ
4 առ մեզ. և գայթակղէին ի նա։ Եւ ասէ
ցնոսա Յիսուս.Ո՛չ է մարգարէ անարգ,
բայց եթէ ի գաւառի իւրում և յազ-
5 գատոհմի և ի տան իւրում։ Եւ ոչ
կարէր անդ և ոչ մի ինչ զօրութիւն
առնել, բայց սակաւ ինչ հիւանդաց
6 ձեռն եդեալ՝ բժշկէր զնոսա։ Եւ զար-
մանայր վասն անհաւատութեան
նոցա։

7 Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, և ու-
սուցանէր։ Եւ կոչեաց առ ինքն զեր-
կոտասանսն, և սկսաւ առաքել զնոսա
երկուս երկուս, և տայր նոցա իշխա-
8 նութիւն ի վերայ այսոց պղծոց։ Եւ
պատուիրեաց նոցա զի մի ինչ բարձ-
ցեն ի ճանապարհ, բայց միայն գա-
ւազան, մի պարկ, մի հաց, մի պղինձ
9 ի գօտիս, Այլ ագանել հողաթափս,
և մի զգենուցուք, ասէ, երկուս պա-
10 րեգօտս։ Եւ ասէր ցնոսա. Յոր տուն

մտանիցէք, անդէն օթևանս կալջիք,
11 մինչև ելանիցէք անտի։ Եւ որք ոչ
ընկալցին զձեզ և ոչ լուիցեն ձեզ,
յորժամ ելանիցէք անտի՝ թօթա-
փեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկա-
12 յութիւն նոցա։ Եւ ելեալ քարոզէին՝
13 զի ապաշխարեսցեն, Եւ դևս բազումս
հանէին, և օծանէին իւղով զբազում
հիւանդս և բժշկէին զնոսա։

14 Եւ լուաւ արքայ Հերովդէս, քանզի
յայտնի եղև անուն նորա, և ասէր,
թէ Յովհաննէս մկրտիչ յարեաւ ի
մեռելոց. և վասն այնորիկ զօրու-
15 թիւնք լինին նովաւ։ Այլքն ասէին
թէ Եղիա է. իսկ այլքն թէ մարգարէ
է, կամ թէ իբրև զմի ի մարգարէից։
16 Իբրև լուաւ Հերովդէս՝ ասէ. Զորոյ
ես զգլուխն հատի զՅովհաննու՝ սա է
17 նա, յարեաւ ի մեռելոց։ Զի ինքն
Հերովդէս առաքեաց կալաւ զՅով-
հաննէս և կապեաց զնա և եդ ի բանտի
վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի
եղբօր նորա, զի նա կին արար զնա.
18 Քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս,
թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր
19 քո։ Եւ Հերովդիա ոխացեալ էր ընդ

նմա եւ կամէր սպանանել զնա, եւ ոչ
20 կարէր. Զի Հերովդէս երկնչէր ի
Յովհաննէ, քանզի գիտէր զնա այր
արդար եւ սուրբ, եւ սպասէր նմա, եւ
լուեալ ի նմանէ՝ բազում ինչ առնէր,
21 եւ քաղցրութեամբ լսէր նմա: Իբրեւ
օր մի լինէր պարապոյ, յորժամ
ընթրիս տայր Հերովդէս յաւուր
ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց
եւ հազարապետաց եւ մեծամեծաց
22 Գալիլեացւոց, Եւ ի մտանել դստերն
Հերովդիայ եւ ի կաքաւել, հաճոյ եղեւ
Հերովդի եւ բազմականացն: Ասէ թա-
գաւորն ցաղջիկն. Խնդրեա յինէն զոր
23 ինչ կամիս, եւ տաց քեզ. Եւ երդուաւ
նմա բազում անգամ, թէ զոր ինչ եւ
խնդրեսցես դու յինէն՝ տաց քեզ,
մինչեւ ցկէս թագաւորութեան իմոյ:
24 Նա ելեալ ասէ ցմայր իւր. Զինչ
խնդրեցից. Եւ նա ասէ. Զգլուխն Յով-
25 հաննու մկրտչի: Եւ մտեալ անդրէն
փութանակի առ թագաւորն՝ ասէ.
Կամիմ, զի այժմ տացես ինձ վաղ-
վաղակի ի վերայ սկտեղ զգլուխն
26 Յովհաննու մկրտչի: Եւ տրտմեցաւ
յոյժ թագաւորն, այլ վասն երդմանցն

եւ կոչնականացն ոչ կամեցաւ անար-
27 գել զնա: Եւ առաքեաց վաղվաղակի
թագաւորն դահիճ եւ հրամայեաց
բերել զգլուխն նորա: Եւ չոգաւ գըլ-
28 խատեաց զնա ի բանտին, Եւ եբեր
զգլուխն նորա սկտեղբ եւ ետ աղ-
ջկանն, եւ աղջիկն տարաւ ետ մօր
29 իւրում: Իբրեւ լուան աշակերտքն
նորա, եկին եւ բարձին զմարմինն եւ
եդին ի գերեզմանի:
30 Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս,
եւ պատմեցին նմա զամենայն ինչ՝ զոր
31 արարին եւ զոր ուսուցին: Եւ ասէ
ցնոսա Յիսուս. Եկա՛յք դուք առան-
ձինն յանապատ տեղի եւ հանգիջիք
սակաւ մի. զի էին բազումք՝ որք
երթային եւ գային, եւ հաց անգամ
32 չժամանէին ուտել: Եւ գնացին նաւու
33 յանապատ տեղի առանձինն: Եւ տե-
սին զնոսա զի երթային եւ գգացին
բազումք, եւ հետի յամենայն քաղա-
քաց խուռն ընթանային անդր եւ
34 մերձենային առ նոսա: Եւ ելեալ
ետես ամբոխ բազում, եւ գթացաւ ի
նոսա, զի էին իբրեւ ոչխարք՝ որոց
ոչ էր հովիւ. եւ սկսաւ ուսուցանել

35 զնոսա յոյժ։ Եւ իբրեւ բազում ժամ
եղեւ, մատուցեալ աշակերտքն ասէին.
Տեղիս անապատ է, մինչդեռ աւուր
36 կայ. Արձակեա՛ զժողովուրդդ, զի
երթեալ շուրջ յագարակս եւ ի գեօղս՝
գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն, զի
37 աստ ինչ ուտել ոչ ունին։ Նա պա-
տասխանի ետ եւ ասէ ցնոսա. Դուք
տուք դոցա ուտել։ Ասեն ցնա. Եր-
թիցուք գնեսցուք երկերիւր դահե-
կանի հաց, եւ տացուք դոցա ուտել։
38 Ասէ ցնոսա. Քանի՞ նկանակ ունիք՝
երթայք եւ տեսէք։ Իբրեւ գիտացին՝
ասեն ցնա. Հինգ, եւ երկուս ձկունս։
39 Եւ հրամայեաց նոցա բազմել երա-
խանս երախանս ի վերայ դալար խո-
40 տոյ։ Եւ բազմեցան դասք դասք՝ ուր
41 հարիւր եւ ուր յիսուն։ Եւ առեալ
զհինգ նկանակն եւ զերկուս ձկունսն՝
հայեցաւ յերկինս, օրհնեաց, մանրեաց
զնկանակսն, եւ ետ ցաշակերտսն զի
արկցեն նոցա. եւ զերկուս ձկունսն
42 բաշխեաց ամենեցուն։ Կերան ամե-
43 նեքին եւ յագեցան. Եւ բարձին զնշխ-
արսն երկոտասան սակառի լի, եւ ի
44 ձկանց անտի։ Եւ էին որք կերանն՝

իբրեւ արք հինգ հազար։
45 Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշա-
կերտսն մտանել ի նաւ եւ յառաջա-
գոյն քան զնա երթալ յայնկոյս ի
Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդսն
46 արձակիցէ։ Եւ հրաժարեալ ի նոցա-
47 նէ՝ ել ի լեառն կալ յաղօթս։ Եւ իբրեւ
երեկոյ եղեւ, էր նաւն ի մէջ ծովուն,
48 եւ ինքն ի ցամաքի։ Եւ ետես զնոսա
հողմակոծեալս ի վարելն, զի էր հողմն
ընդդէմ նոցա, եւ զչորրորդ պահու
գիշերոյն գայ առ նոսա գնալով ի
վերայ ծովուն. եւ կամէր զանց առնել
49 առ նոքօք. Նոքա իբրեւ տեսին՝ զի
գնայր ի վերայ ծովուն, համարեցան
թէ առաչօք ինչ լինիցի, եւ զաղա-
50 ղակ բարձին։ Քանզի ամենեքեան
տեսին զնա եւ խռովեցան։ Եւ նա ան-
դէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա
եւ ասէ. Քաջալերացարո՛ւք, ես եմ,
51 մի՛ երկնչիք։ Եւ ել ի նաւն առ նոսա,
եւ դադարեաց հողմն. եւ առաւել եւս
յիմարեալ էին ի միտս իւրեանց, եւ
52 զարմանային յոյժ։ Քանզի ի վերայ
հացին ոչ իմացան, զի էր սիրտ նոցա
53 թմրեալ։ Եւ իբրեւ անցին յայնկոյս,

54 ելին յերկիրն Գեննեսարէթ: Եւ իբրև
ելին ի նաւէ անտի, խել և խել ծա-
նեան զնա արք տեղւոյն այնորիկ,
55 Եւ ընթացեալ այսր անդր ընդ ամե-
նայն գաւառն՝ սկսան մահճօք բերել
զհիւանդս, ուր լսէին թէ անդ իցէ:
56 Եւ ուր և մտանէր ի գեօղս կամ ի
քաղաքս կամ յագարակս, ի հրապա-
րակս դնէին զախտաժէտս, և աղա-
չէին զնա, զի գոնէ ի քղանցս հան-
դերձի նորա մերձենայցեն. և որք
միանգամ մերձեցանն՝ փրկեցան:

ԳԼՈՒԽ Է.

1 Եւ ժողովեցան առ նա փարիսե-
ցիքն և ոմանք ի դպրացն՝ որ եկեալ
2 էին յԵրուսաղեմէ: Եւ տեսեալ զոմանս
յաշակերտաց անտի, զի խառնակ
ձեռօք՝ այսինքն է անլուայ, ուտէին
3 զհաց՝ բամբասեցին. Զի փարիսեցիքն
և ամենայն Հրէայք եթէ ոչ բռնալիր
լուանան զձեռս, հաց ոչ ուտեն. քանզի
4 ունին զաւանդութիւն ծերոցն. Եւ ի
հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ

մկրտիցին, ոչ ուտեն. և այլ ինչ բա-
զում է՝ զոր ընկալան ունել, մկրտու-
թիւնս բաժակաց և ստամանաց և
5 պղնձեաց և մահճաց: Ապա հարցանեն
զնա փարիսեցիքն և դպիրք. թէ ըն-
դէ՞ր աշակերտքն քո ոչ գնան ըստ
աւանդութեան ծերոցն, այլ խառնակ
6 ձեռօք հաց ուտեն: Նա պատասխանի
ետ և ասէ ցնոսա, թէ բարւոք մար-
գարէացաւ Եսայի վասն ձեր կեղծա-
ւորաց, որպէս ասաց. Ժողովուրդս
այս շրթամբք մեծարէ զիս, և սիրտք
նոցա հեռացեալ ի բացեայ են յինէն,
7 Զուր պաշտեն զիս, ուսուցանեն
վարդապետութիւնս զմարդկան պա-
8 տուիրանս: Թողեալ զպատուիրանն
Աստուծոյ՝ ունիք զմարդկան ա-
9 ւանդութիւն: Եւ ասէ ցնոսա.
Բարւոք խոտէք զպատուիրանն Աս-
տուծոյ, զի զձեր աւանդութիւնն
10 հաստատիցէք: Զի Մովսէս ասէ.
Պատուեա զհայր քո և զմայր, և Որ
չարախօսիցէ զհօրէ կամ զմօրէ՝
11 մահու վախճանեսցի: Եւ դուք ասէք
եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր՝
կորբան, որ է պատարագ, զոր յինէն

12 օգտիցիս, Եւ ոչ ևս տայք թոյլ նմա
13 առնել ինչ հօր կամ մօր, Եւ անար-
գէք զբանն Աստուծոյ ձերով աւան-
դութեամբն, զոր աւանդեցէք. և բա-
զում ինչ այլ՝ որ այսմ նման է, առնէք:
14 Եւ կոչեաց առ ինքն զամենայն ժո-
ղովուրդն, ասէ ցնոսա. Լուարո՛ւք ինձ
15 ամենեքեան և ի միտ առէք: Ոչինչ
արտաքուստ ի մարդ մտեալ՝ եթէ
կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ի
նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն:
16 Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:
17 Եւ իբրև եմուտ ի տուն յամբոխէ
անտի, հարցանէին զնա աշակերտքն
18 վասն առակին: Եւ ասէ ցնոսա. Այդ-
պէս և դուք անմիտք էք. ոչ իմանայք
եթէ ամենայն,որ արտաքուստ ի ներքս
մտանէ ի մարդ, ոչ կարէ զնա պղծել.
19 Զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ
յորովայն, և արտաքս ելանէ, և սրբէ
20 զամենայն կերակուրսն: Եւ ասէր, թէ
որ ինչ ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ
21 զմարդ: Զի ի ներքուստ ի սրտէ
մարդկան խորհուրդք չարութեան
ելանեն. շնութիւնք, պոռնկութիւնք,
22 Ագահութիւնք, գողութիւնք, սպա-

նութիւնք, չարութիւնք, նենգու-
թիւնք, գիջութիւն, չարակնութիւն,
հայհոյութիւն, ամբարտաւանութիւն,
23 անզգամութիւն: Այս ամենայն չարիք
ի ներքուստ ելանեն և պղծեն զմարդ:
24 Եւ անտի յարուցեալ՝ եկն ի սահ-
մանս Տիւրոսի և Սիդովնի. և մտեալ
ի տուն ոչ ումեք կամէր յայտնել, և
25 ոչ կարաց ծածկել: Լուաւ կին մի
զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ
էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ առաջի
26 նորա. Եւ կինն էր հեթանոս՝ Փիւնիկ
Ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի
27 զդևն հանցէ ի դստերէ նորա: Եւ Յի-
սուս ասէ ցնա. Թո՛յլ տուր՝ նախ
յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք
առնուլ զհաց մանկանց և արկանել
28 շանց: Նա պատասխանի ետ և ասէ.
Տէր, և շունք ի փշրանաց սեղանոյ
29 մանկանցն կերակրին: Եւ ասէ ցնա.
Վասն այդր բանի երթ, ել դևն ի
30 դստերէ քումմէ: Գնաց ի տուն իւր
և եգիտ ելեալ զդևն, և զդուստրն,
զի անկեալ դնէր ի մահիճս:
31 Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն
Տիւրոսի և Սիդովնի՝ եկն ի ծովեզրն

Գալիլեացւոց ի մէջ սահմանացն ի
32 Դեկապոլիս։ Եւ բերին առաջի նորա
խուլ մի և համր, և աղաչէին զի
33 ձեռն դիցէ ի վերայ նորա։ Եւ առեալ
զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ
զմատունս իւր ընդ ականջս նորա և
եթուք անդր, և կալաւ զլեզուէ նորա,
34 Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան և
35 ասէ ցնա. Եփփաթա՝ որ է բացիր։ Եւ
նոյն ժամայն բացան լսելիք նորա,
և լուծան կապանք լեզուի նորա, և
36 խօսէր ուղիղ։ Եւ պատուիրեաց նոցա՝
զի մի ումեք ասիցեն. և որչափ նա
պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել
37 քարոզէին։ Եւ ևս քան զևս զարմա-
նային և ասէին. Զամենայն ինչ բար-
ւոք գործեաց սա, զի խլից լսել տայ
և համրից խօսիլ։

ԳԼՈՒԽ Ը.

1 Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժո-
ղովուրդ բազում էր, և ինչ ոչ ունէին
ուտել. կոչեաց զաշակերտսն իւր և
2 ասէ ցնոսա. Գթամ ես ի վերայ ժո-

ղովրդեանդ, զի արդ երեք աւուրք
են՝ մինչ առ իս են, և ոչ ունին զինչ
3 ուտիցեն։ Եւ եթէ արձակեմ զդոսա
նօթիս ի տունս իւրեանց, նքթիցեն
ի ճանապարհի. զի ոմանք ի դոցանէ
4 ի հեռաստանէ եկեալ են։ Պատաս-
խանի ետուն նմա աշակերտքն նորա.
Ուստի՞ կարես յագեցուցանել զդոսա
5 հացիւ յանապատի աստ։ Եւ հարցա-
նէր զնոսա. Քանի՞ նկանակ հաց ու-
6 նիք. և նոքա ասեն. Եօթն։ Եւ հրա-
մայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ
երկրի. և առեալ զեօթն նկանակն՝
գոհացաւ, եբեկ և տայր ցաշակերտ-
սըն, զի արկցեն. և արկին առաջի
7 ժողովրդեանն։ Եւ ձկունս սակաւս
ունէին. և զայն ևս օրհնեաց և հրա-
8 մայեաց արկանել։ Կերան և յագե-
ցան, և բարձին զնշխարս կոտորոցն
9 եօթն զամբիւղ։ Եւ էին որ կերանն
իբրև չորք հազարք. և արձակեաց
զնոսա։
10 Եւ նոյն ժամայն մտեալ ի նաւ
հանդերձ աշակերտօքն՝ եկն ի կող-
11 մանս Դաղմանութեայ։ Եկին փարի-
սեցիքն և սկսան վիճել ընդ նմա, և

խնդրէին ի նմանէ նշան յերկնից՝
12 փորձելով զնա։ Եւ զայրացաւ յոգի
իւր և ասէ. Զի՞ է, զի ազգս այս
նշան խնդրէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ
13 տացի նշան ազգիս այսմիկ։ Եթող
զնոսա, դարձեալ եմուտ ի նաւ և
գնաց յայնկոյս։
14 Եւ մոռացան հաց բառնալ, բայց
միայն մի նկանակ ունէին ընդ
15 իւրեանս ի նաւին։ Եւ պատուիրէր
նոցա և ասէր. Զգոյշ եղերուք ի
խմորոյ անտի փարիսեցւոց և ի խմո-
16 րոյ Հերովդիանոսաց։ Եւ խորհէին
ընդ միմեանս և ասէին, թէ զի
17 հացս ոչ ունիմք։ Գիտաց Յիսուս և
ասէ ցնոսա. Զի՞ խորհիք ի սիրտս
ձեր, թերահաւատք, թէ հաց ոչ ու-
նիք. տակաւին ոչ իմանայք և ոչ
յիշէք. ապշութիւն ունի զսիրտս ձեր։
18 Աչք գոն՝ և ոչ տեսանէք, ականջք
են՝ և ոչ լսէք, և ոչ իմանայք տա-
19 կաւին և ոչ յիշէք, Յորժամ զհինգ
նկանակն ի հինգ հազարսն, և քա-
նի՞ սակառի լի բարձիք զկոտո-
20 րոցն. և ասեն, Եօթն։ Եւ յորժամ
զեօթն նկանակն ի չորս հազարսն

քանի՞ զամբիւղ լի բարձիք զկոտորոցն.
21 և նոքա ասեն, Եօթն։ Եւ ասէ ցնոսա.
Իսկ զիա՞րդ ոչ իմանայք։
22 Գան ի Բեթսայիդա. և ածեն առաջի
նորա կոյր մի, և աղաչէին զնա՝ զի
23 մերձեսցի ի նա։ Եւ առեալ զձեռանէ
կուրին՝ եհան արտաքոյ շինին, ե-
թուք յաչս նորա, և ձեռն եդ ի վերայ
նորա, և հարցանէր ցնա՝ թէ տեսա-
24 նիցե՞ ինչ։ Բացաւ և ասէր. Տեսանեմ
զմարդիկս՝ զի շրջին իբրև զծառս։
25 Դարձեալ եդ ձեռս ի վերայ աչաց
նորա, եբաց և տեսանէր, ողջացաւ
և տեսանէր համարձակ զամենայն։
26 Արձակեաց զնա ի տուն իւր և ասէ.
Ի շէնդ մի՛ մտանիցես, այլ երթ ի
տուն քո. և յորժամ ի շէնն մտանի-
ցես՝ մի՛ ումեք ասիցես ի շինին։
27 Եւ ել Յիսուս աշակերտօքն հան-
դերձ ի շէնս Կեսարեայ Փիլիպպեայ.
և ի ճանապարհին հարցանէր ցաշա-
կերտսն և ասէր. Զո՞ ուստեք ասեն
28 զինէն մարդիկն՝ թէ իցեմ։ Նոքա
ետուն պատասխանի և ասեն. ԶՅով-
հաննէս մկրտիչ, և այլք զԵղիա, և
այլք զմի ոք ի մարգարէից անտի։

29 Ասէ ցնոսա. Իսկ դուք զո՞ ուստեք
ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի
ետ Պետրոս և ասէ ցնա. Դու ես
30 Քրիստոսն։ Եւ սաստեաց ի նոսա՝ զի
31 մի՛ ումեք ասիցեն զնմանէ։ Եւ սկսաւ
ուսուցանել զնոսա, թէ պարտ է Որդւոյ
մարդոյ բազում չարչարանս ընդու-
նել, և անարգիլ յերիցանց և ի քա-
հանայապետից և ի դպրաց, և մեռա-
32 նել և յերիր աւուր յառնել։ Եւ հա-
մարձակ զբանն խօսեցաւ։ Եւ առեալ
զնա մեկուսի Պետրոսի՝ սկսաւ սաս-
33 տել նմա։ Եւ նա դարձաւ և ետես
զաշակերտսն, սաստեաց Պետրոսի և
ասէ. Ե՛րթ յետս իմ, սատանայ, զի
ո՛չ խորհիս դու զԱստուծոյն՝ այլ
34 զմարդկանս։ Եւ կոչեցեալ առ ինքն
զժողովուրդն աշակերտօքն հանդերձ՝
ասէ ցնոսա. Եթէ ոք կամի կալ զկնի
իմ՝ ուրասցի զանձն իւր և բարձցէ
35 զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ։ Զի
որ կամիցի ապրեցուցանել զանձն
իւր՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ
զանձն իւր վասն աւետարանին՝ ապ-
36 րեցուսցէ զնա։ Զինչ օգուտ է մարդոյ,
եթէ զաշխարհ ամենայն շահեսցի, և

37 զանձն իւր տուժեսցի. Քանզի զինչ
տացէ մարդ փոխանակ անձին իւրոյ։
38 Զի որ ոք ամօթ համարեսցի զիս և
զբանս իմ ի շնացող և ի մեղաւոր
ազգիս յայսմիկ, և Որդի մարդոյ յա-
մօթ արասցէ զնա, յորժամ եկեսցէ
փառօք Հօր իւրոյ և հրեշտակաց սըր-
39 բոց։ Եւ ասէ ցնոսա. Ամէն ասեմ
ձեզ, զի են ոմանք ի սոցանէ որ աստ
կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչև
տեսցեն զարքայութիւն Աստուծոյ
եկեալ զօրութեամբ։

ԳԼՈՒԽ Թ.

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ
իւր Յիսուս զՊետրոս և զՅակովբոս
և զՅովհաննէս, և հանէ զնոսա ի
լեառն մի բարձր առանձինն. և յայ-
2 լակերպս եղև առաջի նոցա, Եւ ձորձք
նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ,
որպէս թափիչք երկրի ո՛չ կարեն
3 այնպէս սպիտակացուցանել։ Եւ ե-
րևեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հան-
4 դերձ, և խօսէին ընդ Յիսուսի։ Պա-

տասխանի ետ Պետրոս և ասէ ցՅի-
սուս. Ռաբբի, բարւոք է մեզ աստ
լինել, և արասցուք երիս տաղաւարս՝
մի քեզ և մի Մովսեսի և մի Եղիայի։
5 Քանզի ոչ գիտէր զինչ խօսէր, զի
6 զարհուրեալ էին։ Եւ եղև ամպ մի
հովանի ի վերայ նոցա. ձայն եղև
յամպոյ անտի. Դա է Որդի իմ սի-
7 րելի, դմա լուարուք։ Եւ յանկար-
ծակի հայեցեալ այսր անդր՝ ոչ ևս
զոք ուրեք տեսին, բայց միայն զՅի-
8 սուս ընդ իւրեանս։ Եւ մինչդեռ
իջանէին ի լեռնէ անտի, պատուի-
րեաց նոցա զի մի՛ ումեք պատմես-
ցեն զոր տեսինն, բայց յորժամ Որդի
9 մարդոյ ի մեռելոց յարիցէ։ Եւ նոքա
զբանն ի միտ ունէին և խնդրէին
ընդ միմեանս՝ թէ զինչ իցէ ի մե-
10 ռելոցն յառնել։ Հարցին զնա և ասեն.
Զինչ է այն, զոր դպիրքն ասեն, եթէ
11 Նախ Եղիայի պարտ է գալ։ Նա պա-
տասխանի ետ նոցա և ասէ. Եղիա
Նախ եկեալ յարդարեսցէ զամենայն։
Իսկ զիա՞րդ գրեալ է զՈրդւոյ մարդոյ,
զի բազում ինչ չարչարեսցի և ան-
12 գոսնեսցի։ Այլ ես ասեմ ձեզ, եթէ

Եղիա եկն, և արարին ընդ նմա զինչ
և կամեցան, որպէս և գրեալ է վասն
նորա։
13 Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին
ամբոխ շուրջ զնոքօք և զդպիրսն՝ զի
14 վիճէին ընդ նոսա։ Եւ վաղվաղակի
ամենայն ժողովուրդն, իբրև տեսին
զնա՝ զարմացան և ընդ առաջ ընթա-
15 ցեալ ողջոյն տային նմա։ Եւ եհարց
զնոսա, թէ զինչ վիճէիք ընդ նոսա։
16 Պատասխանի ետ մի ոմն ի ժողո-
վրդենէն և ասէ. Վարդապետ, ածի
զորդի իմ առ քեզ, զոր ունի այս
17 համր, Եւ ուր հասանէ՝ զարկուցանէ
զնա, և փրփրէ և կրճտէ զատամունս
իւր և ցամաքի. և ասացի ցաշա-
կերտսն քո զի հանցեն, և ոչ կարա-
18 ցին հանել զնա։ Պատասխանի ետ
նոցա և ասէ. Ո՛վ ազգ անհաւատ,
մինչև յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչև
ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա
19 առիս։ Եւ ածին զնա առ նա. իբրև
ետես զնա այսն, վաղվաղակի չարժ-
լեաց զնա, և անկեալ յերկիր թաւա-
28 լէր և փրփրայր։ Եհարց ցհայր նորա
և ասէ. Քանի՞ ժամանակք են, յոր-

մէ հետէ այդ եղև դմա. և նա ասէ.
21 ի մանկութենէ. Բազում անգամ ի
հուր արկանէ զդա և ի ջուր՝ զի կո-
րուսցէ. արդ եթէ կարող ինչ ես՝
օգնեա՛ մեզ, Տէր, գթացեալ ի վերայ
22 մեր: Եւ Յիսուս ասէ ցնա. Ասացեր՝
թէ կարող ես. ամենայն ինչ հնարա-
23 ւոր է այնմ, որ հաւատայն: Եւ վաղ-
վաղակի աղաղակեաց հայր մանկանն՝
և ասէ. Հաւատամ, օգնեա՛ անհաւա-
24 տութեանս իմում: Իբրև ետես Յիսուս,
եթէ կուտի ժողովուրդն ի վերայ,
սաստեաց այսոյն պղծոյ և ասէ. Հա՛մրդ
և խուլ այս, ես տամ քեզ հրաման,
ել ի դմանէ և այլ ես մի՛ մտանիցես
25 ի դա: Եւ աղաղակեաց և յոյժ ըլկեաց
զնա և ել. և եղև պատանեակն իբրև
զմեռեալ, մինչև բազմաց իսկ ասել
26 թէ մեռաւ: Եւ Յիսուս կալաւ զձե-
ռանէ նորա, յարոյց զնա, և կանգնե-
27 ցաւ: Եւ իբրև եմուտ նա ի տուն,
աշակերտքն առանձինն հարցին ցնա.
Մեք ընդէ՞ր ո՛չ կարացաք հանել զնա:
28 Եւ ասէ ցնոսա. Այդ ազգ ո՛չ իւիք
ելանէ, եթէ ոչ պահովք և աղօթիւք:
29 Եւ անտի ելեալ անցանէին առ

Գալիլեացւովքն, և ո՛չ կամէր եթէ
30 ոք գիտասցէ. Քանզի ուսուցանէր
զաշակերտսն իւր՝ և ասէր ցնոսա,
թէ Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս
մարդկան, և սպանցեն զնա, և իբրև
31 սպանցի՝ յերիր աւուր յառնէ: Եւ
նոքա ո՛չ գիտէին զբանն, և երկնչէին
հարցանել ցնա:
32 Եկն ի Կափառնաում. և իբրև եմուտ
ի տուն, հարցանէր զնոսա. Զի՞նչ
վիճէիք զճանապարհայն ընդ միմեանս:
33 Եւ նոքա լուռ լինէին. քանզի ընդ
միմեանս վիճէին ի ճանապարհին,
34 թէ ո՞վ մեծ իցէ: Եւ իբրև նստաւ՝
կոչեաց զերկոտասանսն, և ասէ ցնո-
սա. Եթէ ոք կամի առաջին լինել,
եղիցի ամենեցուն կրտսեր և ամենե-
35 ցուն պաշտօնեայ: Եւ առեալ մանուկ
մի կացոյց ի մէջ նոցա, և ընկալեալ
36 զնա ի գիրկս իւր, ասէ ցնոսա. Որ
միանգամ յայսպիսի մանկտւոյ ըն-
կալցի յանուն իմ, զիս ընդունի. և
որ զիս ընդունիցի, ո՛չ զիս ընդունի,
37 այլ զայն՝ որ առաքեացն զիս: Պա-
տասխանի ետ նմա Յովհաննէս և
ասէ. Վա՛րդապետ, տեսաք զոմն, զի

յանուն քո դևս հանէր, և զմեր կնի
38 ոչ շրջէր, և արգելաք զնա։ Եւ նա
ասէ. Մի՛ արգելուք զնա. զի ոչ ոք է
որ առնէ զօրութիւնս յանուն իմ
39 և կարիցէ հայհոյել զիս. Զի որ ոչն
է ընդ մեզ հակառակ, ի մեր կոյս է։
40 Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բա-
ժակաւ յանունս յայս, թէ դուք
Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ՝ մի
41 կորուսցէ զվարձս իւր։ Եւ որ ոք
գայթակղեցուսցէ զմի ի փոքրկանցս
որ հաւատան յիս, լաւ էր նմա առաւել
եթէ արկեալ էր ընդ պարանոց նորա
42 երկան իշոյ և ընկեցեալ ի ծով։ Եւ
եթէ գայթակղեցուսցէ զքեզ ձեռն
քո, հա՛տ ընկեա՛ ի քէն. զի լաւ իցէ
քեզ խեղ մտանել ի կեանսն յաւի-
տենից, քան երկուս ձեռս ունել և
երթալ ի գեհեն, ի հուրն անշէջ։
43 Եւ եթէ ոտն քո գայթակղեցուսցէ
զքեզ, հա՛տ ընկեա՛ զնա ի քէն. լաւ
իցէ քեզ կաղ մտանել ի կեանսն յա-
ւիտենից, քան երկուս ոտս ունել և
44 անկանել ի գեհեն։ Եւ եթէ ակն քո
գայթակղեցուսցէ զքեզ, հա՛ն զնա ի
բաց. լաւ իցէ քեզ միով ակամբ

մտանել յարքայութիւն Աստուծոյ,
քան երկուս աչս ունել և անկանել
45 ի գեհեն, Ուր որդն նոցա ոչ մեռանի
46 և հուրն ոչ շիջանի։ Զի ամենայն ինչ
47 հրով յաղեսցի։ Բարւոք է աղ. եթէ
աղն անհամեսցի, իւ համեմեսցի. արդ
դուք կալարուք յանձինս ձեր զաղն
և խաղաղութիւն արարէք ընդ մի-
մեանս։

ԳԼՈՒԽ Ժ.

1 Եւ անտի յարուցեալ գայ ի սահ-
մանս Հրէաստանի, յայնկոյս Յոր-
դանանու, և երթայր դարձեալ խռնեալ
ժողովուրդն առ նա, և որպէս սովոր
էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա։
2 Իսկ փարիսեցիքն մատուցեալ փոր-
ձելով հարցանէին զնա և ասէին, եթէ
արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել։
3 Նա պատասխանի ետ նոցա և ասէ.
Զի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս։
4 Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման ետ
5 գիր մեկնելոյ գրել և արձակել։ Պա-
տասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա.

Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց
6 ձեզ զպատուիրանն զայն։ Այլ ի
սկզբանէ արարածոց արու և էգ ա-
7 րար զնոսա Աստուած, և ասէ. Վասն
այսորիկ թողցէ այր զհայր իւր և
զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ,
8 Եւ եղիցին երկոքին ի մարմին մի,
և այնուհետև ոչ են երկու՝ այլ մար-
9 մին մի։ Արդ՝ զոր Աստուած զու-
10 գեաց, մարդ մի՛ մեկնեսցէ։ Եւ ի տան
դարձեալ աշակերտքն զնոյն հարցին
11 ցնա։ Եւ ասէ ցնոսա. Եթէ այր ար-
ձակեսցէ զկին իւր և արասցէ այլ՝
12 շնայ. Եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ
և եղիցի առն այլում՝ շնա։
13 Եւ մատուցանէին առ Նա մանկտի՝
զի ձեռն դիցէ նոցա. իսկ աշակերտքն
սաստէին այնոցիկ՝ որք մատուցա-
14 նէինն։ Իբրև ետես Յիսուս, բարկա-
ցեալ սաստեաց նոցա և ասէ. Թո՛յլ
տուք մանկտւոյդ գալ առիս, և մի՛
արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է
15 արքայութիւն Աստուծոյ։ Ամէն ասեմ
ձեզ. որ ո՛չ ընկալցի զարքայութիւն
Աստուծոյ իբրև զմանուկ, ո՛չ մտցէ ի
16 նա։ Եւ առեալ զնոսա ի գիրկս՝ ձեռն

եդ ի վերայ և օրհնեաց զնոսա։
17 Եւ ընդ ելանելն Նորա անտի ի
ճանապարհ՝ ահաւասիկ ոմն մեծա-
տուն ընթացեալ ի ծունր իջանէր,
հարցանէր ցնա և ասէր. Վա՛րդապետ
բարի, զի՞նչ արարից, զի զկեանս
18 յաւիտենականս ժառանգեցից։ Եւ
Յիսուս ասէ ցնա. Զի՞ ասես զիս
բարի. չի՛ք ոք բարի՝ բայց մի Աս-
19 տուած։ Զպատուիրանս գիտես. մի՛
շնար, մի՛ սպանաներ, մի՛ գողանար,
մի՛ սուտ վկայեր, պատուեա՛ զհայր
20 քո և զմայր։ Նա պատասխանի ետ
և ասէ ցնա. Վարդապետ, զայդ ամե-
նայն արարի ի մանկութենէ իմմէ,
21 արդ զի՞նչ ևս պակաս իցեմ։ Եւ Յի-
սուս հայեցեալ ի նա՝ սիրեաց զնա
և ասէ ցնա. Մի ինչ պակաս է ի քէն.
եթէ կամիս կատարեալ լինել, երթ,
զոր ինչ ունիս վաճառեա՛ և տո՛ւր
աղքատաց, և ունիցիս գանձս յեր-
կինս, և ա՛ռ զխաչն և եկ զկնի իմ։
22 Եւ նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց
23 տրտում. զի ունէր ինչս բազումս։ Եւ
հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս՝
ասէ ցաշակերտսն. Զի՛արդ դժուա-

րին է՝ որ զինչս ունին, մտանել
24 յարքայութիւն Աստուծոյ։ Եւ աշա-
կերտքն զարմացեալ էին ի վերայ
բանիցն նորա. իսկ Յիսուս դարձեալ
պատասխանի ետ նոցա և ասէ. Որ-
դեակք, որչափ դժուարին է յուսա-
ցելոց յինչս մտանել յարքայութիւն
25 Աստուծոյ. Դիւրին է մալխոյ ընդ
ծակ ասղան անցանել, քան մեծա-
տան յարքայութիւն Աստուծոյ մտա-
26 նել։ Եւ նոքա առաւել ևս զարմա-
նային և ասէին ընդ միմեանս. Իսկ
27 ո՞ կարասցէ ապրել։ Հայեցեալ ընդ
նոսա Յիսուս՝ ասէ. Առ ի մարդկանէ
այդ անհնարին է, այլ ո՛չ առ յԱս-
տուծոյ։
28 Սկսաւ ասել ցնա Պետրոս. Ահա-
ւասիկ մեք թողաք զամենայն և եկաք
29 զկնի քո։ Պատասխանի ետ Յիսուս
և ասէ. Ամէն ասեմ ձեզ, ո՛չ ո՛ք է որ
եթող զտուն կամ զեղբարս, կամ
զքորս կամ զհայր, կամ զմայր կամ
զորդիս, կամ զագարակս վասն իմ
30 կամ վասն աւետարանին, Եթէ ո՛չ
առնուցու հարիւրապատիկ այժմ
յայսմ ժամանակի տունս և եղբարս

և քորս և մարս և որդիս և ագարակս
հալածանօք հանդերձ, և յաշխարհին
որ գալոց է զկեանս յաւիտենականս։
31 Զի բազումք եղիցին առաջինք յե-
տինք և յետինք առաջինք։
32 Եւ էին ի ճանապարհի մինչդեռ
ելանէին յԵրուսաղէմ, և երթայր Յի-
սուս առաջի քան զնոսա, և զարմա-
ցեալ էին որ զհետն երթային՝ և
33 երկնչէին։ Եւ առեալ միւսանգամ
զերկոտասանսն առանձինն՝ սկսաւ
ասել նոցա զինչ անցք անցանելոց իցեն
34 ընդ նա, Թէ ահաւասիկ ելանեմք
յԵրուսաղէմ, և Որդի մարդոյ մատ-
նեսցի քահանայապետիցն և դպրաց,
և դատապարտեսցեն զնա ի մահ և
35 մատնեսցեն զնա հեթանոսաց, Եւ
կատակեսցեն զնովաւ և հարկանիցեն
զնա և թքանիցեն ի նա և սպանցեն,
և յերիր աւուր յարիցէ։
36 Եւ երթային առ նովաւ Յակովբոս
և Յովհաննէս՝ որդիքն Զեբեդեայ, և
ասեն ցնա. Վարդապետ, կամիմք զի
37 զոր ինչ խնդրեսցուք ի քէն՝ արաս-
38 ցես մեզ։ Եւ նա ասէ ցնոսա. Զինչ
կամիք յինէն, զի արարից ձեզ։ Եւ

նոքա ասեն ցնա. Տո՛ւր մեզ՝ զի
նստցուք մի յաջմէ քումմէ և մի յա-
39 հեկէ ի փառսն քում: Պատասխանի
ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ո՛չ գիտէք
զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբա-
ժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ
զմկրտութիւնն մկրտել՝ զոր ես մկր-
40 տելոց եմ: Եւ նոքա ասեն ցնա,
կարեմք: Եւ Յիսուս ասէ ցնոսա.
Զբաժակն զոր ես ըմպելոց եմ՝ ըմ-
պիցէք, և զմկրտութիւնն զոր ես
41 մկրտելոց եմ՝ մկրտիցիք. Այլ նըս-
տուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ
ահեկէ՝ ո՛չ է իմ տալ, այլ որոց
42 պատրաստեալ իցէ: Եւ լուեալ զայն
տասանցն, սկսան բարկանալ Յակով-
43 բայ և Յովհաննու: Եւ Յիսուս կոչեաց
զնոսա առ ինքն և ասէ ցնոսա. Գի-
տէք, զի որ յանուան իշխանքն են
հեթանոսաց տիրեն նոցա և մեծա-
44 մեծք նոցա իշխեն նոցա: Ո՛չ նոյն-
պէս իցէ և ի ձերում միջի. այլ որ
կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի
45 ձեր պաշտօնեայ, Եւ որ կամիցի ի
ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենե-
46 ցուն ծառայ: Քանզի և Որդի մարդոյ

ո՛չ եկն առնուլ պաշտօն, այլ պաշտել
և տալ զանձն իւր փրկանս փոխանակ
բազմաց:
47 Եւ գան յԵրիքով: Եւ ընդ ելանելն
նորա յԵրիքովէ աշակերտօքն և բա-
զում ժողովրդով՝ որդի Տիմէի Բար-
տիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս
48 ճանապարհի: Իբրև լուաւ թէ Յիսուս
Նազովրեցի է, սկսաւ աղաղակել և
ասել. Ո՛րդի Դաւթի Յիսուս, ողոր-
49 մեա՛ց ինձ: Եւ սաստէին նմա բազումք
զի լռեսցէ. և նա առաւել ևս աղաղակէր.
50 Որդի՛ Դաւթի, ողորմեա՛ց ինձ: Զտեղի
էառ Յիսուս և հրամայեաց կոչել զնա:
Կոչեն զկոյրն և ասեն ցնա. Քաջա-
51 լերեա՛ց, արի՛, կոչէ զքեզ: Եւ նորա
ընկեցեալ զձորձս իւր՝ յարեաւ եկն
52 առ Յիսուս: Պատասխանի ետ նմա
Յիսուս և ասէ. Զի՞նչ կամիս՝ թէ
արարից քեզ. ասէ ցնա կոյրն. Ռա՛բ-
53 բունի, զի բացայց: Եւ Յիսուս ասէ
ցնա. Ե՛րթ, հաւատք քո կեցուցին
զքեզ. Եւ վաղվաղակի բացաւ, և եր-
թայր զհետ նորա ի ճանապարհին:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրու-
սաղէմ ի Բեթփագէ և ի Բեթանիա
մօտ ի լեառն Ձիթենեաց, առաքէ
2 երկուս յաշակերտաց անտի Եւ ասէ
ցնոսա. Երթա՛յք դուք ի գեղդ՝ որ
ընդդէմ ձեր կայ, և նոյն ժամայն
իբրև մտանէք ի նա՝ գտանիցէք յա-
ւանակ մի կապեալ, յորոյ վերայ ոչ
ո՛ք ի մարդկանէ նստաւ, լուծէք զնա
3 և ածէք: Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝
եթէ զի՞ լուծանէք զյաւանակդ, ա-
սասջիք՝ թէ Տեառն իւրում պիտոյ է,
և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր:
4 Զոգան և գտին զյաւանակն կապեալ
առ դուրս արտաքոյ ի փողոցի անդ,
5 և լուծին զնա: Եւ ոմանք յորոց անդ
կային ասեն ցնոսա. Զի՞ գործէք, զի՞
6 լուծանէք զյաւանակդ: Եւ նոքա ա-
սեն ցնոսա որպէս ասացն Յիսուս.
7 Եւ թոյլ ետուն նոցա: Ածեն զյաւա-
նակն առ Յիսուս, և արկանեն ի
վերայ նորա հանդերձս, և նստաւ ի

8 վերայ նորա: Եւ բազումք զհան-
դերձս իւրեանց տարածանէին ի վե-
րայ ճանապարհին, և այլք ոստս ի
ծառոց հատանէին և արկանէին զճա-
9 նապարհաւն: Եւ որ առաջին և զկնի
երթային՝ աղաղակէին և ասէին.
10 Ո՛վսաննայ բարձրելոյն, Օրհնեալ որ
գաս յանուն Տեառն, օրհնեալ թա-
գաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւ-
թի, խաղաղութիւն յերկինս և փառք
11 ի բարձունս: Եւ եմուտ Յիսուս յԵ-
րուսաղէմ ի տաճարն, և հայեցեալ
շուրջ զամենեքումբք, և զի էր երե-
կոյացեալ ժամն, ել ի Բեթանիա եր-
կոտասանիւքն հանդերձ:
12 Եւ ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին
13 ի Բեթանիա՝ քաղցեաւ: Եւ ետես
թզենի մի ի բացուստ տերևալից, և
եկն՝ թէ գտանիցէ ինչ ի նմա. և իբրև
եկն ի նա՝ ոչինչ եգիտ, բայց միայն
տերև. զի ո՛չ իսկ էր ժամանակ թզոյ:
14 Պատասխանի ետ և ասէ ցնա. Մի՛ եւ
ոք յաւիտեան ի քէն պտուղ կերիցէ:
15 Եւ լսէին աշակերտքն նորա: Գան
յԵրուսաղէմ. և մտեալ ի տաճար՝
սկսաւ հանել զվաճառականսն և զգը-

նոցա որք էին ի տաճարին, և զսեղանս
հատավաճառացն ցրուեաց և զաթոռս
16 աղաւնեվաճառացն կործանեաց, Եւ
ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ ինչ ան-
17 ցուցանիցէ ընդ տաճարն, Եւ ուսու-
ցանէր և ասէր ցնոսա. Գրեալ է թէ
տուն իմ տուն աղօթից կոչեսցի ա-
մենայն հեթանոսաց, և դուք արարէք
18 զդա այրս աւազակաց։ Լուան քա-
հանայապետքն և դպիրք, և խնդրէին
թէ որպէս կորուսցեն զնա. բայց
երկնչէին ի նմանէ, զի ամենայն ժո-
ղովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն
19 նորա։ Եւ իբրև երեկոյ լինէր՝ արտա-
20 քոյ քան զքաղաքն ելանէին։ Եւ
մինչդեռ այգուցն առ նովաւ անցա-
նէին՝ տեսին զթզենին ցամաքեալ
21 յարմատոց։ Յիշեաց Պետրոս և ասէ
ցնա. Ռաբբի, ահաւասիկ թզենին զոր
22 անիծեր ցամաքեցաւ։ Պատասխանի
ետ Յիսուս և ասէ ցնոսա. Եթէ ու-
23 նիցիք զհաւատսն Աստուծոյ, Ամէն
ասեմ ձեզ,որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝
բարձիր և անկիր ի ծով, և ոչ երկմտիցէ
ի սրտի իւրում, այլ հաւատայցէ թէ
զոր ասէն լինի, եղիցի նմա զոր ինչ

24 և ասիցէ։ Վասն այսորիկ ասեմ ձեզ.
Ամենայն ինչ, վասն որոյ աղօթս ա-
րարեալ խնդրիցէք և հաւատայցէք
25 թէ առնուցուք՝ եղիցի ձեզ։ Եւ յորժամ
յաղօթս կայցէք, թողուցուք եթէ
ունիցէք ինչ զումեքէ. զի և Հայրն
ձեր որ յերկինս է թողցէ ձեզ զյան-
ցանս ձեր։
26 Գան միւսանգամ յԵրուսաղէմ. և
մինչդեռ ի տաճարի անդ զգնայր, գան
առ նա քահանայապետքն և դպիրք
27 և ծերք, Եւ ասեն ցնա. Որո՞վ իշխա-
նութեամբ առնես զայդ, և ո՞վ ետ քեզ
28 զիշխանութիւնդ զայդ։ Պատասխանի
ետ Յիսուս և ասէ ցնոսա. Հարցից
և ես զձեզ բան մի, տո՛ւք ինձ պա-
տասխանի, և ես ասացից ձեզ՝ որով
29 իշխանութեամբ առնեմ զայս։ Մկր-
տութիւնն Յովհաննու յերկնից էր,
եթէ ի մարդկանէ. տո՛ւք ինձ պա-
30 տասխանի։ Խորհէին ընդ միմեանս
և ասէին. Եթէ ասեմք եթէ յերկնից,
ասէ ցմեզ՝ իսկ ընդէ՞ր ոչ հաւատացիք
31 նմա. Այլ եթէ ասեմք ի մարդկանէ,
երկնչիմք ի ժողովրդենէն. զի ամե-
նեքին գիտէին զՅովհաննէս՝ թէ

32 մարգարէ էր։ Պատասխանի ետուն և
ասեն ցՅիսուս. Չգիտեմք։ Եւ Յիսուս
ետ նոցա պատասխանի և ասէ. Եւ
ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ
առնեմ զայս։

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առա-
կօք և ասել. Այր մի տնկեաց այգի,
և ած շուրջ զնովաւ ցանգ և գուբ
հնձանի փորեաց և շինեաց աշտարակ,
և ետ զնա ցմշակս, և գնաց ի տար
2 աշխարհ։ Եւ առաքեաց առ մշակսն
ի ժամանակի ծառայ մի, զի ի մշակաց
3 անտի առցէ ի պտղոյ այգւոյն. Եւ
նոցա կալեալ գան հարին զնա և
4 արձակեցին ունայն։ Դարձեալ առա-
քեաց առ նոսա այլ ծառայ, և զնա
կառափնատեցին և արձակեցին անար-
5 գեալ։ Եւ դարձեալ այլ առաքեաց,
և զնա սպանին, և զբազումս այլս,
զոմանս հարկանէին և զոմանս սպա-
6 նանէին։ Արդ որդի մի էր իւր սի-
րելի. զնա առաքեաց առ նոսա յետոյ

և ասէ, Թերևս ամաչեսցեն յորդւոյ
7 աստի իմմէ։ Իսկ մշակքն իբրև տեսին
զնա թէ գայ՝ ասեն ցմիմեանս. Սա
է ժառանգն. եկա՛յք սպանցուք զսա,
8 և մեր լիցի ժառանգութիւնն։ Եւ
կալեալ զնա սպանին, և հանին ար-
9 տաքոյ այգւոյն։ Արդ՝ զինչ արասցէ
տէր այգւոյն։ Եկեսցէ և կորուսցէ
զմշակսն, և տացէ զայգին ի ձեռս
10 այլոց։ Եւ ոչ զգիրն զայն իցէ ըն-
թերցեալ ձեր, թէ զվէմն զոր անար-
գեցին շինօղքն, նա եղև գլուխ
11 անկեան։ Ի տեառնէ եղև այս և է
12 սքանչելի յաչս մեր։ Եւ խնդրէին
զնա ունել, և երկեան ի ժողովրդենէ
անտի, զի գիտացին թէ առ նոսա
ասաց զառակն. և թողին զնա և
գնացին։

13 Եւ առաքեն առ նա զոմանս ի փա-
րիսեցւոց անտի և ի Հերովդիանոսաց;
14 զի զնա որսասցեն բանիւ։ Եւ նոքա
եկեալ հարցանէին զնա նենգութեամբ
և ասէին. Վարդապետ, գիտեմք զի
ճշմարիտ ես և ոչ ինչ փոյթ է քեզ
զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդ-
կան. այլ ճշմարտութեամբ զճանա-

պարհն Աստուծոյ ուսուցանես. արդ՝
ասա՛ մեզ, արժա՞ն է հարկ տալ կայսեր՝
եթէ ոչ. տացո՞ւք՝ թէ ոչ տացուք։
15 Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն
նոցա, ասէ ցնոսա. Զի՞ փորձէք զիս,
կեղծաւորք. բերէք ինձ դահեկան մի
16 զի տեսից։ Եւ նոքա բերին. և ասէ
ցնոսա. Ո՞յր է պատկերս այս կամ գիր·
17 և նոքա ասեն ցնա. Կայսեր։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Եր-
թա՛յք տուք զկայսերն կայսեր և զԱս-
տուծոյն Աստուծոյ։ Եւ զարմացան
ընդ նա։
18 Գան առ նա սադուկեցիքն, որ ասեն՝
թէ չիք յարութիւն. հարցանէին ցնա
19 և ասէին. Վարդապետ, Մովսէս գրեաց
մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի
և թողուցու կին և որդի ոչ թողուցու,
զի առցէ եղբայր նորա զկին նորա և
20 յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Արդ՝
եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն
ա՛ռ կին, և մեռաւ, և ոչ եթող զաւակ։
21 Եւ երկրորդն առ զնոյն, և մեռաւ, և
ոչ նա եթող զաւակ. նոյնպէս և եր-
22 րորդն առ զնոյն։ Եւ եօթնեքեան իսկ
և ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն

23 մեռաւ և կինն։ Արդ ի յարութեան,
յորժամ յառնիցեն, ո՞յր ի նոցանէ
լինիցի կինն, զի եօթնեքեան կալան
24 զնա կին։ Պատասխանի ետ Յիսուս
և ասէ ցնոսա. Ո՞չ վասն այդորիկ
իսկ մոլորեալ էք, զի ոչ գիտէք զգիրս
25 և ոչ զզօրութիւնն Աստուծոյ։ Զի
յորժամ ի մեռելոց յարիցեն, ոչ արք
կանայս առնեն և ոչ կանայք արանց
լինին, այլ իբրև զհրեշտակս իցեն՝
26 որ յերկինս են։ Այլ վասն յարութեան
մեռելոց, զի յառնեն, ո՞չ իցէ ընթեր-
ցեալ ձեր ի գիրսն Մովսիսի ի մո-
րենւոջն, ո՛րպէս ասաց ցնա Աստուած.
Ե՛ս եմ, ասէ, Աստուած Աբրահամու,
Աստուած Իսահակայ և Աստուած
27 Յակովբայ. Եւ ոչ է Աստուած մե-
ռելոց՝ այլ կենդանեաց. և արդ դուք
յոյժ մոլորեալ էք։
28 Եւ մատուցեալ մի ոմն ի դպրացն՝
լսէր նոցա մինչ վիճէին. իբրև ետես
եթէ բարւոք ետ նոցա զպատասխա-
նին, եհարց ցնա և ասէ. Ո՞ր պատուի-
29 րան է առաջին։ Եւ Յիսուս ասէ ցնա.
Առաջին քան զամենայն՝ լո՛ւր Իսրա-
յէլ, Տէր Աստուած մեր Տէր մի է,

30 Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո
յամենայն սրտէ քումմէ և յամենայն
անձնէ քումմէ և յամենայն մտաց
քոց և յամենայն զօրութենէ քումմէ.
31 այս է առաջին պատուիրան: Եւ երկ-
րորդն նման սմին. սիրեսցես զընկեր
քո իբրև զանձն քո: Մեծ քան զսոսա
32 այլ պատուիրան ոչ գոյ: Եւ ասէ ցնա
դպիրն. Բարւոք է վարդապետ, ճշ-
մարտութեամբ ասացեր՝ թէ մի է
Աստուած և ոչ գոյ այլ բաց ի նմանէ:
33 Եւ սիրել զնա յամենայն սրտէ և
յամենայն զօրութենէ և յամենայն
մտաց, և սիրել զընկերն իբրև զանձն՝
առաւել է քան զողջակէզս և զզոհս:
34 Եւ տեսեալ Յիսուսի, թէ իմաստու-
թեամբ ետ զպատասխանին՝ ասէ ցնա.
Չես հեռի յարքայութենէ Աստուծոյ:
Եւ ոչ ևս ոք իշխէր հարցանել ցնա:
35 Պատասխանի ետ Յիսուս և ասէ՝
մինչ ուսուցանէր ի տաճարին. Զիարդ
ասեն դպիրքն, եթէ Քրիստոս որդի
36 Դաւթի է. Եւ ինքն Դաւիթ Հոգւովն
սրբով ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ.
նիստ ընդ աջմէ իմմէ մինչև եդից
զթշնամիս քո պատուանդան ոտից

37 քոց: Արդ, եթէ ինքն իսկ Դաւիթ
զնա Տէր կոչէ, զիա՞րդ իցէ որդի
նորա. և բազում ժողովուրդ լսէր
նմա քաղցրութեամբ:
38 Եւ ասէր ուսուցանելով ի վարդա-
պետութեան իւրում. Զգո՛յշ լերուք
ի դպրաց անտի, որ կամին ի հան-
դերձս երևելիս շրջել, զնախողջոյնս
39 խնդրել ի հրապարակս Եւ զնախա-
թոռս ի ժողովուրդս և զգահագլուխս
40 յընթրիս. Որ ուտեն զտունս այրեաց
պատճառանօք յերկարելոյ զաղօթս,
զի աւելի ևս դատաստան ընկալցին:
41 Նայր Յիսուս ընդդէմ գանձանա-
կին, տեսանէր զիարդ ժողովուրդն
արկանէր պղինձ ի գանձանակն. և
բազում մեծատունք արկին բազում
42 ինչ. Եկն այրի մի և արկ երկուս լու-
43 մայս, որ է նաքարակիտ մի: Եւ կո-
չեցեալ առ ինքն զաշակերտսն իւր՝
ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, զի այրին
այն տառապեալ շատ արկ քան զա-
մենեսեան՝ որ արկին ի գանձանակն.
44 Քանզի ամենեքին յաւելորդաց իւր-
եանց արկին, այլ նա ի չքաւորութենէ
իւրմէ զամենայն ինչ զոր ունէր արկ,

զոյխ չափ զկեանս իւր։

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Եւ յելանելն նորա ի տաճարէ
անտի, ասէ ցնա մի յաշակերտացն
նորա. Վարդապետ, տես որպիսի են
2 քարինքս և որպիսի շինուածք։ Պա-
տասխանի ետ նմա Յիսուս և ասէ.
Տեսանես զայդ ամենայն շինուածս.
ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի այդր
քար ի քարի վերայ, որ ոչ քակ-
տեսցի։
3 Եւ մինչ նստէր նա ի լերինն Ձի-
թենեաց յանդիման տաճարին, հար-
ցանէին ցնա առանձինն Պետրոս և
Յակոբոս և Յովհաննէս և Անդրէաս.
4 Ասա մեզ, Երբ լինիցի այդ, և զինչ
նշան է՝ յորժամ կատարելոց իցէ այդ
5 ամենայն։ Պատասխանի ետ Յիսուս
և ասէ ցնոսա. Զգոյշ կացէք, մի ոք
6 զձեզ խաբեսցէ։ Զի բազումք եկեսցեն
յանուն իմ և ասիցեն՝ թէ ես եմ
Քրիստոս, և զբազումս մոլորեցու-
7 ցեն։ Այլ յորժամ լսիցէք պատերազ-

մունս և համբաւս պատերազմաց՝ մի
խռովիցիք. զի պարտ է լինել. բայց
8 չև է կատարածն։ Զի յարիցէ ազգ
յազգի վերայ և թագաւորութիւն ի
թագաւորութեան վերայ. և եղիցին
շարժմունք ի տեղիս տեղիս, սովք և
սրածութիւնք և խռովութիւնք. այլ
9 այն ամենայն սկիզբն է երկանց։ Եւ
զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, և
ի ժողովուրդս տանջիցիք և առաջի
դատաւորաց և թագաւորաց կայցէք
վասն իմ, ի վկայութիւն նոցա և
10 ամենայն հեթանոսաց. Բայց նախ
11 պարտ է աւետարանիս քարոզել։ Այլ
յորժամ տանիցեն զձեզ մատնել, մի
յառաջագոյն հոգայցէք և մի զմտաւ-
ածիցէք՝ թէ զինչ խօսիցիք. այլ որ
ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝
զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ
12 խօսիցիքն, այլ Հոգին սուրբ։ Մատ-
նեսցէ եղբայր զեղբայր ի մահ և հայր
զորդի. և յարիցեն որդիք ի վերայ
13 հարց և սպանանիցեն զնոսա։ Եւ ե-
ղիջիք ատեցեալք յամենեցունց վասն
անուան իմոյ. այլ որ համբերեսցէն
14 ի սպառ՝ նա կեցցէ։ Եւ յորժամ տե-

տեսանիցէք զպղծութիւն աւերածին, զի
կայցէ ի տեղւոջ՝ ուր չիցէ արժան,
որ ընթեռնու ի միտ առցէ, յայնժամ
որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի
15 լերինս, Եւ որ ի վերայ տանեացն
իցէ՝ մի իջցէ ի տուն և մի մտցէ
16 բառնալ ինչ ի տանէ իւրմէ, Եւ որ
յագարակին իցէ՝ մի դարձցի յետս
17 առնուլ զձորձս իւր։ Բայց վա՜յ իցէ
յղեաց և ստնտուաց յաւուրսն յայ-
18 նոսիկ։ Յաղօթս կացէք՝ զի մի ձմե-
19 րանի լինիցի այն։ Եղիցին աւուրքն
այնոքիկ նեղութեանց, որպիսի ոչ
եղեն երբէք այնպիսիք ի սկզբանէ
արարածոց մինչև ցայժմ, և մի այլ
20 լիցի։ Եւ եթէ ոչ էր կարճեալ Աս-
տուծոյ զաւուրսն զայնոսիկ վասն
ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն
մարմին. այլ վասն ընտրելոցն, զորս
ընտրեաց կարճեաց զաւուրսն զայ-
21 նոսիկ։ Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ,
եթէ՝ ահաւասիկ է Քրիստոսն կամ
22 աւանիկ, մի հաւատայցէք։ Զի յարի-
ցեն սուտ քրիստոսք և սուտ մար-
գարէք և տացեն նշանս և արուեստս
առ ի մոլորեցուցանելոյ, եթէ հնար

23 ինչ իցէ, և զընտրեալսն։ Բայց դուք
զգոյշ լերուք. ահաւասիկ յառաջագոյն
24 ասացի ձեզ զամենայն։ Այլ յաւուրսն
յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ
արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ
25 տացէ զլոյս իւր, Եւ աստեղք յերկնից
թօթափեսցին, և զօրութիւնք յերկինս
26 շարժեսցին։ Եւ յայնժամ տեսցեն
զՈրդի մարդոյ եկեալ ամպովք՝ զօ-
27 րութեամբ և փառօք բազմօք։ Եւ
յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր
և ժողովեսցէ զընտրեալս իւր ի չորից
հողմոց՝ ի ծագաց երկրի մինչև ի ծագս
28 երկնից։ Բայց դուք ի թզենւոյ անտի
ուսջիք զառակն. յորժամ տակաւ
ոստքն նորա կակղանայցեն և տերև
արձակիցի ի նմա, գիտէք թէ մերձ
29 է ամառն. Նոյնպէս և դուք յորժամ
տեսանիցէք զայս ամենայն եղեալ,
գիտասջիք թէ մերձ է առ դուրս։
30 Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս
31 այս՝ մինչև այս ամենայն եղիցի։ Եր-
կինք և երկիր անցցեն, և բանք իմ
32 ոչ անցանիցեն։ Այլ վասն աւուրն
այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ոչ
հրեշտակք յերկինս և ոչ Որդի, բայց

33 միայն Հայր։ Զգոյշ եղերուք, սկեցէք
եւ կացէք յաղօթս. զի ոչ գիտէք երբ
34 ժամանակն իցէ։ Որպէս այր մի գնա-
ցեալ ի տար աշխարհ թողուցու զտուն
իւր եւ տայցէ ծառայից իւրոց իշխա-
նութիւն, եւ իւրաքանչիւր զգործ իւր.
եւ դռնապանին պատուէր տայցէ, զի
35 արթուն լինիցի։ Արդ արթուն կացէք.
զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ,
յերեկորեայ, եթէ ի մէջ գիշերի, եթէ
ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս։
36 Գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ
38 զձեզ ի քուն։ Բայց զոր ձեզդ ասեմ,
ամենեցուն ասեմ, արթուն կացէք։

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Եւ էր զատիկն եւ բաղարջակերք
յետ երկուց աւուրց. խնդրէին քա-
հանայապետքն եւ դպիրք՝ եթէ զիարդ
զնա նենգաւ կալեալ սպանանիցեն.
2 Բայց ասէին՝ թէ մի ի տօնի աստ,
զի մի խռովութիւն լինիցի ժողո-
վրդեանն։
3 Եւ մինչ էր ի Բեթանիա ի տան

Սիմովնի բորոտի բազմեալ, եկն կին
մի որ ունէր շիշ իւղոյ նարդեան
ազնուի մեծագնոյ, եւ բեկեալ զշիշն՝
4 եհեղ ի վերայ գլխոյ նորա։ Եւ աշա-
կերտքն զչարէին եւ ասէին. Ընդէր
5 եղեւ կորուստ իւղոյդ այդորիկ. Մարթ
էր զայդ իւղ վաճառել աւելի քան
երեք հարիւր դահեկանի եւ տալ աղ-
6 քատաց. եւ զայրանային նմա յոյժ։ Եւ
Յիսուս ասէ ցնոսա. Թոյլ տուք դմա.
զի՞ աշխատ առնէք. զի գործ մի բարի
7 գործեաց դա յիս։ Յամենայն ժամ
զաղքատս ընդ ձեզ ունիք եւ յորժամ
կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս.
այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ
8 ունիք։ Դա զոր ունէրդ՝ արար. յա-
ռաջագոյն խնկեաց զմարմին իմ ի
9 նշան պատանաց։ Ամէն ասեմ ձեզ,
ուր եւ քարոզեսցի աւետարանս այս
ընդ ամենայն աշխարհ, եւ զոր արար
դա՝ խօսեսցի վասն յիշատակի դորին։
10 Եւ Յուդա Սկարիովտացի, մի յեր-
կոտասանից անտի։ գնաց առ քա-
հանայապետսն՝ զի մատնեսցէ զնա
11 նոցա։ Նոքա իբրեւ լուան՝ խնդացին
եւ խոստացան տալ նմա արծաթ. եւ

խնդրէր՝ թէ զիարդ պարապով մատ-
նեսցէ զնա։
12 Եւ յառաջնում աւուր բաղարջա-
կերացն, յորժամ զզատիկն զենուին,
ասեն ցնա աշակերտքն. Ո՞ւր կամիս՝
երթիցուք պատրաստեսցուք, զի կե-
13 րիցես զզատիկն։ Եւ առաքէ երկուս
յաշակերտաց անտի և ասէ ցնոսա.
Երթայք ի քաղաք, և իբրև մտանի-
ցէք ի քաղաքն՝ պատահեսցի ձեզ այր
մի, որ սափոր ջրոյ յուսն ունիցի,
14 երթայք զհետ նորա, Եւ յոր տուն
մտանիցէք՝ ասասջիք տանուտէրն.
Վարդապետ ասէ՝ ուր են իջևանքն,
ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն։
15 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի
մեծ զարդարեալ. անդ պատրաստես-
19 ջիք մեզ։ Եւ գնացին պատրաստել
աշակերտքն նորա, եկին ի քաղաքն
և գտին որպէս ասացն նոցա, և պատ-
րաստեցին զզատիկն։
27 Եւ իբրև երեկոյ եղև՝ գայ երկո-
18 տասանիւքն հանդերձ։ Եւ իբրև բազ-
մեցաւ և դեռ ուտէին ասէ Յիսուս.
Ամէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն ի ձէնջ
մատնելոց է զիս, որ ուտէ ընդ

19 իս։ Եւ նոքա սկսան տրտմիլ և ասել
մի ըստ միոջէ. Միթէ ես իցեմ, և
20 միւսն՝ միթե ես իցեմ։ Նա պատաս-
խանի ետ և ասէ ցնոսա. Մի յերկո-
տասանից այտի, որ մխեաց ընդ իս
21 ի սկաւառակդ։ Այլ Որդի մարդոյ
երթայ, որպէս և գրեալ է վասն նո-
րա. բայց վայ իցէ մարդոյն այնմիկ՝
յոյր ձեռս Որդին մարդոյ մատնեսցի.
լաւ էր նմա՝ թէ չէր իսկ ծնեալ
22 մարդն այն։ Եւ մինչդեռ ուտէին,
առեալ Յիսուսի հաց՝ օրհնեաց և եբեկ՝
ետ նոցա և ասէ. Առէք, այդ է մար-
23 մին իմ։ Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ
ետ նոցա, և արբին ի նմանէ ամե-
24 նեքեան։ Եւ ասէ ցնոսա. Այս է արիւն
իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազ-
25 մաց հեղանի։ Ամէն ասեմ ձեզ, թէ
ոչ ևս յաւելից ըմպել ի բերոյ որթոյ
մինչև յօրն յայն՝ յորժամ արբից
զնա նոր յարքայութեան Աստուծոյ։
26 Եւ գոհացեալ՝ ելին ի լեառն Ձիթե-
նեաց։
27 Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքին
գայթակղելոց էք յինէն յայսմ գիշերի,
զի գրեալ է, թէ հարից զհովիւն, և

28 ոչխարքն ցրուեսցին: Այլ յետ յա-
րութեան իմոյ յառաջագոյն երթայց
29 քան զձեզ ի Գալիլեա: Պատասխանի
ետ Պետրոս և ասէ ցնա. Թէպէտ և
ամենեքին գայթակղեսցին, այլ ես ոչ:
30 Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ
քեզ, թէ դու իսկ յայսմ գիշերի,
մինչչև հաւու խօսեալ իցէ՝ երիցս
31 ուրասցիս զիս: Իսկ Պետրոս առաւել
ևս պնդէր և ասէր. Եթէ մեռանել ևս
հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրա-
ցայց. Նոյնպէս և ամենեքեան ասէին:
32 Գան ի գեօղն՝ որում անուն էր
Գեթսեմանի, և ասէ ցաշակերտսն.
Նստարո՛ւք աստ՝ մինչև ես յաղօթս
33 կացից: Եւ առնու ընդ իւր զՊետրոս
և զՅակովբոս և զՅովհաննէս, և սկսաւ
34 տխրել և հոգալ. Յայնժամ ասէ ցնոսա.
Տրտում է անձն իմ մինչև ի մահ.
35 Մնացէք աստ և արթո՛ւն կացէք: Եւ
մատուցեալ սակաւիկ մի յառաջ, ան-
կաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր,
և կայր յաղօթս, զի եթէ հնար ինչ է
36 անցցէ ի նմանէ ժամն: Եւ ասէ. Աբբա
Հայր, ամենայն ինչ քեզ հնարաւոր է.
անցո զբաժակս զայս յինէն. բայց ոչ

որպէս ես կամիմ՝ այլ որպէս դու
37 կամիս: Եւ գայ գտանէ զնոսա զի
ննջէին, և ասէ ցՊետրոս. Սիմոն,
ննջե՞ս. ոչ կարացեր ժամ մի արթուն
38 կալ: Արթո՛ւն կացէք և յաղօթս կա-
ցէք, զի մի՛ մտջիք ի փորձութիւն.
հոգիս յօժար է, բայց մարմինս տկար:
39 Եւ դարձեալ չոգաւ եկաց յաղօթս և
40 զնոյն բան ասաց: Դարձաւ միւսան-
գամ անդրէն և եգիտ զնոսա ի քուն.
քանզի էին աչք նոցա ծանրացեալ,
և ոչ գիտէին թէ զինչ պատասխանի
41 տայցեն նմա: Գայ երրորդ անգամ
և ասէ ցնոսա. Ննջեցէք այսուհետև
և հանգերո՛ւք, զի հասեալ է վախճան.
եկն ժամ, և ահա մատնի Որդի մարդոյ
42 ի ձեռս մեղաւորաց: Ո՛ն արիք, գնա-
ցո՛ւք. զի ահաւասիկ մերձեցաւ՝ որ
մատնելոցն է զիս:
43 Եւ մինչդեռ նա զայն խօսէր, գայ
Յուդա Սկարիովտացի՝ մի յերկոտա-
սանից անտի, և ընդ նմա ամբոխ
սուսերօք և բրօք՝ ի քահանայապե-
44 տիցն և ի դպրաց և ի ծերոց: Տուեալ
էր նշան մատնիչն և ասէր. Ընդ որում
ես համբուրեցից՝ նա է. կալջի՛ք զնա

45 և տարջի՛ք զգուշութեամբ։ Եւ մա-
տուցեալ վաղվաղակի ասէ ցնա.
Ռաբբի Ռաբբի, և համբուրեաց զնա։
46 Եւ նոքա արկին ի նա ձեռս և կալան
47 զնա։ Եւ մի ոմն յայնցանէ՝ որ զնո-
վաւն կային՝ ձգեաց սուր և եհար
զծառայ քահանայապետին, և ի բաց
48 եհան զունկն նորա։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնոսա. Իբրև ի վերայ
աւազակի ելիք սուսերօք և բրօք
49 ունել զիս. Հանապազ առ ձեզ էի և
ուսուցանէի ի տաճարին, և ոչ կալայք
զիս. այլ զի լցցին գիրք մարգարէիցն։
50 Յայնժամ թողին զնա աշակերտքն
51 ամենեքին և փախեան։ Եւ ոմն երի-
տասարդ զհետ երթայր նորա՝ արկեալ
զիւրև կտաւ մի ի մերկուց. ունէին
52 զնա երիտասարդքն. Եւ նորա թո-
ղեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ի նո-
ցանէ։

53 Եւ տարան զՅիսուս առ քահանա-
յապետն Կայիափա. և գային ընդ
նմա ամենայն քահանայապետքն և
54 դպիրք և ծերք։ Եւ Պետրոս երթայր
ի հեռաստանէ զհետ նորա մինչև ի
ներքս իսկ ի գաւիթ քահանայապե-

տին և նստէր ընդ սպասաւորսն և
55 ջեռնոյր առ լուսն։ Իսկ քահանայա-
պետքն և ամենայն ատեանն խնդրէին
հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ,
զի սպանանիցեն զնա, և ոչ գտա-
56 նէին. Զի բազումք սուտ վկայութիւն
վկայէին զնմանէ. և նման միմեանց
57 ոչ էին վկայութիւնքն։ Այլք յարու-
ցեալ վկայէին սուտ զնմանէ և ասէին,
58 թէ մեք լուաք ի դմանէ՝ զի ասէր.
ես քակեցից զտաճարդ զայդ ձեռա-
գործ և յերիս աւուրս շինեցից այլ
59 առանց ձեռագործի։ Սակայն և այն-
պէս չէր նման վկայութիւնն նոցա։
60 Ապա յարուցեալ քահանայապետն ի
մէջ հարցանէր զՅիսուս և ասէր. Ոչինչ
տաս պատասխանի զինչ դոքա զքէն
61 վկայեն։ Եւ նա լուռ և եթ կայր և
չտայր ինչ պատասխանի։ Դարձեալ
քահանայապետն հարցանէր զնա կր-
կին անգամ և ասէր. Դու ես Քրիստոս
62 Որդի Օրհնելոյն։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնա. Դու ասացեր
թէ ես եմ. բայց տեսանիցէք զՈրդի
մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրու-
թեանն և եկեալ ընդ ամպս երկնից։

63 Եւ քահանայապետն պատառեաց
վաղվաղակի զպատմուճանս իւր և
ասէ. Զի՞նչ ևս պիտոյ են մեզ վկայք.
64 Ահա լուայք ամենեքին զհայհոյութիւն
ի բերանոյ դորա, զի՞արդ թուի ձեզ.
և ամենեքեան դատապարտեցին զնա՝
65 թէ մահապարտ է։ Եւ ոմանք սկսան
թքանել ընդ երեսս նորա, ձորձ ըղ-
գլխով արկանել՝ կափել և ասել.
Մարգարեա՛ց մեզ, Քրիստո՛ս, ո՞վ է
այն, որ եհարն զքեզ. սպասաւորքն
ապտակս հանէին նմա։
66 Եւ Պետրոս մինչդեռ էր ի խոնարհ
ի գաւթին, գայ աղախին մի քահա-
նայապետին, և տեսանէ զնա զի
ջեռնոյր, հայեցաւ ընդ նա և ասէ.
67 Եւ դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ
68 էիր։ Նա ուրացաւ և ասէ. Ո՛չ ճա-
նաչեմ և ո՛չ գիտեմ զինչ դուդ ասես։
Եւ իբրև ել յարտաքին գաւիթն, և
69 հաւ խօսեցաւ։ Դարձեալ ետես զնա
աղախինն և սկսաւ ասել ցայնոսիկ
որ շուրջն կային, թէև սա ի նոցանէ
70 է։ Եւ նա դարձեալ ուրացաւ։ Եւ
յետ սակաւ միոյ դարձեալ որ շուրջն
կային ասեն ցՊետրոս. Արդարև ի

դու ի նոցանէ ես. քանզի Գալիլեացի
71 ես, և խօսքդ իսկ քո նման են։ Եւ
նա սկսաւ նզովել, երդնուլ և ասել,
թէ ո՛չ գիտեմ զայրն՝ զորմէ դուքդ
72 ասէք։ Եւ նոյնժամայն կրկին հաւ
խօսեցաւ։ Եւ յիշեաց Պետրոս զբանն՝
զոր ասաց ցնա Յիսուս, թէ չև իցէ
հաւու երկիցս խօսեալ՝ զի դու երիցս
ուրասցիս զիս. և սկսաւ լալ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն
խորհուրդ արարեալ քահանայապե-
տիցն հանդերձ ծերովքն և դպրօք՝ և
ամենայն ատեանն, կապեցին զՅի-
սուս և տարան մատնեցին Պիղատոսի։
2 Եւ հարց զնա Պիղատոս և ասէ. Դո՞ւ
ես թագաւորն Հրէից. նա պատաս-
3 խանի ետ նմա և ասէ. Դու ասես։ Եւ
չարախօսէին զնմանէ յոյժ քահանա-
յապետքն, և նա ոչինչ տայր պա-
4 տասխանի։ Իսկ Պիղատոս դարձեալ
հարցանէր զնա. Ոչինչ տաս պատաս-
խանի. տես՝ քանի՜ ամբաստանեն

5 զքէն։ Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ
ետ պատասխանի, մինչեւ զարմանալ
6 յոյժ Պիղատոսի։ Բայց ըստ տօնի
արձակէր նոցա զմի ոք կապեալ, զոր
7 ինքեանք խնդրէին։ Եւ էր որում
անուն էր Բարաբբա՝ կապեալ ընդ
խռովիչսն, որոց ի խռովելն այր մի
8 սպանեալ էր։ Ի ձայն բարձր սկսաւ
աղաղակել ամբոխն և խնդրել՝ որպէս
սովոր էր, զի արձակեսցէ նոցա զԲա-
9 րաբբայն։ Պատասխանի ետ Պիղատոս
և ասէ ցնոսա. Կամի՞ք զի արձակեցից
10 ձեզ զարքայն Հրէից։ Քանզի գիտէր
թէ առ նախանձու մատնեցին զնա
11 քահանայապետքն, Որք և զամբոխն
հաւանեցուցին՝ զի արձակեսցէ նոցա
12 զԲարաբբայն։ Դարձեալ պատասխանի
ետ Պիղատոս և ասէ ցնոսա. Իսկ
զի՞նչ կամիք թէ արարից զարքայն
13 Հրէից։ Եւ նոքա դարձեալ աղաղա-
կէին՝ յուղեալք ի քահանայապետից.
14 Ի խա՛չ հան զդա։ Ասէ ցնոսա Պիղա-
տոս. Զի՞նչ ինչ չար արարեալ իցէ
դորա։ Եւ նոքա առաւել ևս աղաղա-
կէին և ասէին. Ի խա՛չ հան զդա։
15 Իսկ Պիղատոս իբրև զմիտս կամեցաւ

հաճել զամբոխին՝ արձակեաց նոցա
զԲարաբբայն, և զՅիսուս տան հա-
րեալ ետ ի ձեռս, զի ի խաչ հանիցէ։
16 Եւ զինուորքն տարան զնա ի ներքս
ի գաւիթն, որ հրապարակն էր, և
կոչեն միանգամայն զամենայն զգուն-
17 դըն։ Եւ զգեցուցանեն նմա քղամիդ
կարմիր և ծիրանիս, և եդին ի գլուխ
18 նորա պսակ արարեալ ի փշոց։ Եւ
սկսան ողջոյն տալ նմա և ասել. Ո՛ղջ
19 եր, արքա՛յդ Հրէից։ Եւ ծեծէին զգը-
լուխն եղեգամբ և թքանէին ընդ
երեսս, և ի ծունր իջեալ երկիրպա-
20 գանէին նմա։ Եւ իբրև կատակեցին
զնա՝ մերկացուցին զքղամիդն և զծի-
րանիս և զգեցուցին նմա զիւր հան-
դերձն, և ածին արտաքս զի ի խաչ
21 հանցեն զնա։ Եւ ունէին պահակ
զՍիմոն Կիւրենացի, որ ընդ այն
անցանէր՝ եկեալ յագարակէ, զհայրն
Աղէքսանդրի և Ռուփայ, զի բարձցէ
22 զխաչափայտն նորա։ Եւ ածեն զնա
ի Գողգոթա՝ տեղի մի, որ թարգմանի
23 տեղի կառափելոյ։ Եւ տային նմա
գինի զմռսեալ, և նա ոչ առ։ Եւ հա-
24 նին զնա ի խաչ։ Եւ բաժանեցին

զհանդերձս նորա, արկեալ վիճակս ի
25 վերայ՝ թէ ո՛ զինչ առնուցու։ Էր ժամ
26 երրորդ՝ և հանին զնա ի խաչ։ Եւ էր
գիր վնասու նորա գրեալ՝ թէ Թա-
27 գաւոր է Հրէից։ Եւ ընդ նմա հանին
ի խաչ երկուս աւազակս, մի ընդ
28 աջմէ և մի ընդ ահեկէ նորա։ Եւ
լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօ-
29 րէնս համարեցաւ։ Եւ որք անցանէինն
հայհոյէին զնա՝ շարժեալ զգլուխս
իւրեանց, և ասէին. Վա՜հ որ քակէիր
զտաճարն և զերիս աւուրս շինէիր,
30 Ապրեցո՛ զանձն քո և էջ ի խաչէդ։
31 Նոյնպէս և քահանայապետքն այպն
արարեալ ընդ միմեանս հանդերձ
դպրօքն՝ ասէին. Զայլս ապրեցոյց,
32 զանձն ո՛չ կարէ ապրեցուցանել. Քրիս-
տոսդ արքայդ Իսրայէլի, իջցէ այժմ
ի խաչէ այդի, զի տեսցուք և հա-
ւատասցուք դմա։ Եւ որ ընդ նմա ի
խաչին ելեալ էին՝ նախատէին զնա։
33 Եւ իբրև վեց ժամ եղև՝ խաւար
կալաւ զամենայն երկիր մինչև ցինն
34 ժամ։ Եւ յիններորդ ժամուն աղա-
ղակեաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ.
Էլի՛ Էլի՛ լա՛մա սաբաքթանի, որ թարգ-

մանի. Աստուած իմ, Աստուած իմ,
35 ընդէ՞ր թողեր զիս։ Եւ ոմանք ի նո-
ցանէ որ շուրջն կային զնովաւ՝ իբրև
36 լուան, ասէին. Զեղիա կարդա։ Եւ
ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ մի
քացախով, և հարեալ յեղեգայն՝ տայր
ըմպել նմա և ասէ. Թո՛յլ տուք տես-
37 ցուք, գա՞յ Եղիա իջուցանել զդա։ Եւ
Յիսուս արձակեաց զձայն մեծ և
38 եհան զոգի։ Եւ վարագոյր տաճարին
պատառեցաւ յերկուս ի վերուստ
39 մինչև ի խոնարհ։ Եւ տեսեալ հա-
րիւրապետին որ կայր անդ՝ եթէ
աղաղակեաց և եհան զոգի, ասէ.
Արդարև այրս այս Որդի Աստուծոյ
40 էր։ Էին և կանայք՝ և հայէին ի հե-
ռաստանէ, յորս էր Մարիամ Մագ-
դաղենացի և Մարիամ Յակոբու
Փոքրկանն և Յովսեայ մայրն և Սա-
41 ղոմէ, Որք յորժամ էրն ի Գալիլիա՝
զհետ շրջէին նորա և պաշտէին զնա,
և այլ բազում կանայք՝ որ ընդ նմա
իսկ ելեալ էին յԵրուսաղէմ։
42 Եւ իբրև երեկոյ եղև, քանզի ուր-
բաթ էր, որ ի շաբաթն մտանէր,
43 Եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր,

այր պարկեշտ նախարար, որ և ինքն
իսկ ակն ունէր արքայութեանն Աս-
տուծոյ, համարձակեցաւ եմուտ առ
Պիղատոս և խնդրեաց զմարմինն Յի-
44 սուսի: Եւ Պիղատոս զարմացաւ՝ թէ
այնչափ վաղ մեռաւ, և կոչեաց առ
ինքն զհարիւրապետն՝ եհարց զնա և
ասէ, թէ արդարև այնչափ վաղ մե-
45 ռաւ. Եւ իբրև ստուգեաց ի հարիւ-
րապետէ անտի, շնորհեաց զմարմինն
46 Յովսեփայ: Եւ Յովսէփ գնեաց կտաւ,
և իջուցեալ զնա՝ պատեաց կտաւովն
և եդ ի գերեզմանի, զոր էր փորեալ
ի վիմէ, և թաւալեցոյց վէմ մի ի
47 դուռն գերեզմանին: Իսկ Մարիամ
Մագդաղենացի և Մարիամ Յակով-
բայ և Յովսեայ տեսին զտեղին ուր
եդաւ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Եւ իբրև անց շաբաթն, Մարիամ
Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ
և Սողոմէ չոգան պատրաստեցին
2 խունկս, զի եկեսցեն օծցեն զնա: Եւ

ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի
3 գերեզմանն ընդ արևագալն: Եւ ասէին
ցմիմեանս. Ո՞վ թաւալեցուցէ մեզ
4 զվէմն ի դրանց գերեզմանին: Եւ հա-
յեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ
էր վէմն ի գերեզմանէն. քանզի էր
5 մեծ յոյժ: Եւ մտեալ ի ներքս ի գե-
րեզմանն՝ տեսին երիտասարդ մի, զի
նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ
պատմուճան սպիտակ, և զարհուրե-
6 ցան: Եւ նա ասէ ցնոսա. Մի երկնչիք.
զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխա-
չեցեալն. յարեաւ, չէ աստ. ահաւա-
7 դիկ տեղին՝ ուր եդին զնա. Այլ եր-
թայք ասացէք ցաշակերտս նորա և
ցՊետրոս, եթէ ահա յառաջագոյն
երթայ քան զձեզ ի Գալիլեա. անդ
տեսանիցէք զնա, որպէս ասացն ձեզ:
8 Եւ իբրև լուան՝ ելին և փախեան ի
գերեզմանէն, քանզի զահի հարեալ
էին, և ոչ ումեք ինչ ասացին, զի
երկնչէին:

9
Յարուցեալ Յիսուս առաւօտուն
առաջին միաշաբաթուն՝ երևեցաւ
Մարիամու Մագդաղենացւոյ, յորմէ

10 հանեալ էր զեօթն դևս։ Եւ նա եր-
թեալ պատմեաց այնոցիկ, որ ընդ
նմայն էին, մինչդեռ սգային և լային։
11 Նոքա իբրև լուան թէ կենդանի է և
12 երևեցաւ նմա, ոչ հաւատացին։ Յետոյ
երևեցաւ այլով կերպարանաւ՝ որք
13 երթային յանդաստան։ Նոքա չոգան
պատմեցին այլոց. և ոչ նոցա հաւա-
14 տացին։ Յետոյ մինչդեռ բազմեալ էին
մետասանքն, երևեցաւ նոցա, և թշ-
նամանեաց զանհաւատութիւն նոցա
և զխստասրտութիւն, զի որ երևեցաւ
նոցա յարուցեալ ի մեռելոց՝ և նոքա
15 ոչ հաւատացին։ Եւ ասէ ցնոսա.
Երթայք յաշխարհ ամենայն և քարո-
զեցէք զաւետարանն ամենայն արա-
16 րածոց։ Որ հաւատայ և մկրտեսցի՝
կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատա-
17 պարտեսցի։ Նշանք այսոքիկ՝ որ հա-
ւատանն երթիցեն զհետ այնոցիկ.
յանուն իմ դևս հանցեն, լեզուօք
18 խօսեսցին։ Ի ձեռս իւրեանց օձս
բարձցեն, և եթէ մահացու ինչ դեղ
արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեսցէ. ի
վերայ հիւանդաց ձեռս դիցեն, և
19 բժշկեսցին։ Եւ ինքն Տէր Յիսուս

յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ
յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր։
20 Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամե-
նայն երկիր՝ Տեառն գործակցու-
թեամբ, և զբանն հաստատէին ամե-
նայն նշանօքն՝ որ երթային զհետ
նոցա։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՂՈՒԿԱՍՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Ղուկայ գրեալ է։ Նոյն ինքն Ղուկաս աշակերտ էր Պետրոսի, եւ ծեռնադրեցաւ ընթացակից Պաւղոսի եւ վկայեցաւ ի նմանէ, սա գրեաց զաւետարանս զայս։ Սկիզբն առնէ ի ծննդենէն Յովհաննու եւ զոր ըստ նմին, պատմէ եւ զմարմնանալ Փրկչին, ազգաթիւ առնէ եւ ելանէ ի Յովսէփայ ի Դաւիթ, եւ ի Դաւթայ մինչեւ յԱդամ։ Պատմէ սա զմկրտութիւնն Յովհաննու եւ լինելով ի լեառնն՝ զփորձիլն ի սատանայէ եւ զընտրութիւն աշակերտացն, եւ այլ եօթանասունս։ Եցոյց նշանս եւ արուեստս բազումս եղեալս, եւ զխորհուրդ մատնութեան եւ զկատարածն՝ որ մատնեցաւ Պիղատոսի Պոնտացւոյ եւ խաչեցաւ մարմնով. զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. եւ որք խաչեցան՝ յերկուց աւազակացն մին ապաշխարեաց խոստովանութեամբ։ Եւ զի մարմին նորա եդաւ ի գերեզմանի եւ յարեաւ յերրորդ աւուրն, եւ յետ այսորիկ համբարձաւ յերկինս՝ տեսանելով հրեշտակացն։

Ղուկաս արուեստիւ բժիշկ գոլով՝ սա աշակերտեցաւ Փրկչին եւ համարեալ կոչեցաւ ի թիւս եօթանասնիցն։ Իսկ յետոյ աշակերտեցաւ Պաւղոսի, վասն որոյ ասի զովութիւն սորա յաւետարանին։ Սա հրամանաւ Պաւղոսի գրեաց զաւետարան իւր յԱնտիոք քաղաքի, ի լեզու ասորի՝ զկնի ժէ. ամի համբառնալոյ Փրկչին։

Ղուկաս՝ Ցառուբիւն։

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱԻՆՑԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

	Գլ.	Համր.
Վասն աշխարհագրին.	Բ	1
Վասն բացօթեայ հովուացն.	Բ	8
Վասն Սիմէոնի.	Բ	25
Վասն մարգարէին Աննայի.	Բ	36
Վասն լինելոյ բանին Աստուծոյ առ Յովհաննէս.	Գ	2
Վասն՝ որոց հարցանէին զՅովհաննէս.	Գ	10
Վասն փորձութեանց Փրկչին.	Դ	2
Վասն՝ որ ունէր զհոգին դիւական.	Դ	33
Վասն զոքանչին Պետրոսի.	Դ	38
Վասն՝ որոց բժշկէին ի պէս պէս հիւանդութեանց.	Դ	40
Վասն որսոյ ձկանց.	Ե	4
Վասն բորոտին.	Ե	12
Վասն անդամալուծին.	Ե	25
Վասն Ղեւեայ մաքսաւորին.	Ե	27
Վասն գօսացեալ ձեռինն.	Զ	6
Վասն առաքելոցն համարոյ.	Զ	13
Վասն երանութեանցն.	Զ	20
Վասն հարիւրապետին.	Է	2

Վասն որդւոյ այրւոյն.	Է	12
Վասն՝ որոց առաքեցան ի Յովհաննէ.	Է	19
Վասն օծանելոյ զՏէրն.	Է	38
Վասն առակի սերմնացանին	Ը	5
Վասն սաստելոյ ջուրցն.	Ը	25
Վասն՝ որ ունէր զլէգէոնն.	Ը	27
Վասն դստեր ժողովրդապետին.	Ը	41
Վասն տեռատես կնոջն.	Ը	43
Վասն առաքելոյ զերկոտասանսն.	Թ	2
Վասն հինգ հացիցն եւ երկու ձկանցն.	Թ	13
Վասն ցաշակերտսն հարցանելոյ.	Թ	18
Վասն այլակերպութեան Յիսուսի.	Թ	29
Վասն լուսնահարին.	Թ	39
Վասն խորհելոյն՝ թէ ով մեծ իցէ.	Թ	46
Վասն չտալոյն հրաման զկնի երթալ.	Թ	57
Վասն երեւեցուցանելոյ զեօթանասունսն.	Ժ	1
Վասն հարցանելոյ օրինականին.	Ժ	25
Վասն անկելոյն ի ձեռս աւազակաց.	Ժ	30
Վասն Մարիամու եւ Մարթայի.	Ժ	38
Վասն յաղօթս կալոյն.	ԺԱ	1
Վասն խուլ դիւին.	ԺԱ	14
Վասն՝ որ կինն ձայն եբարձ ի ժողովրդեանն.	ԺԱ	27
Վասն նշան խնդրելոյն	ԺԱ	29
Վասն՝ որ փարիսեցին կոչեաց զՏէրն.	ԺԱ	37
Վասն վայ տալոյ օրինականացն.	ԺԱ	46
Վասն խմորոյ փարիսեցւոցն.	ԺԲ	1
Վասն բաժանելոյ զինչսն ընդ եղբօրն.	ԺԲ	13
Վասն պտղաբերելոյ անդոյ մեծատանն.	ԺԲ	16
Վասն Գալիլեացւոցն եւ որոց ի Սելովամ, եւ վասն թզենւոյն.	ԺԳ	

Վասն կարկամեալ կնոջն այսահարի.	ԺԳ	11
Վասն առակացն. . .	ԺԳ	19
Վասն՝ թէ սակաւք իցեն, որ ապրելոց իցեն. . .	ԺԳ	23
Վասն՝ որք ասացին ցՅիսուս զՀերովդէէ. . .	ԺԳ	31
Վասն՝ որ ջրգողեալ էր. .	ԺԴ	2
Վասն՝ որք սիրեն զնախագահսն.	ԺԴ	7
Վասն կոչելոյ յընթրիսն .	ԺԴ	12
Վասն շինելոյ աշտարակին .	ԺԴ	28
Վասն հարիւր ոչխարացն .	ԺԵ	4
Վասն անառակ որդւոյն .	ԺԵ	11
Վասն անիրաւ տնտեսին .	ԺԶ	1
Վասն մեծատանն եւ Ղազարու	ԺԶ	19
Վասն տասն բորոտացն .	ԺԷ	12
Վասն անիրաւ դատաւորին .	ԺԸ	2
Վասն փարիսեցւոյն եւ մաքսաւորին.	ԺԸ	10
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս . . .	ԺԸ	13
Վասն կուրին . .	ԺԸ	35
Վասն Զակքէոսի . .	ԺԹ	2
Վասն գնալոյ առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ .	ԺԹ	12
Վասն առնելոյ զտասն մնասն.	ԺԹ	13
Վասն յաւանակին . .	ԺԹ	30
Վասն հարցանելոյ քահանայիցն զՏէր	Ի	1
Վասն առակի այգւոյն .	Ի	9
Վասն դահեկանին . .	Ի	24
Վասն սադուկեցւոցն .	Ի	27
Վասն՝ թէ զիա՞րդ է որդի Դաւթի Քրիստոս . . .	Ի	41
Վասն երկու լումայի այրւոյն.	ԻԱ	2
Վասն հարցման կատարածին.	ԻԱ	7

Վասն զատկին. .	ԻԲ	1
Վասն վիճելոյն՝ թէ ով մեծ իցէ.	ԻԲ	23
Վասն խնդրելոյն սատանայի փորձել զՍիմովն. . .	ԻԲ	31
Վասն նախատանաց Հերովդի զՏէրն.	ԻԳ	11
Վասն կոծելոյ կանանցն. .	ԻԳ	27
Վասն ապաշխարելոյ աւազակին.	ԻԳ	40
Վասն խնդրելոյ զՏէրունական մարմինն. . .	ԻԳ	52
Վասն իւղաբեր կանանցն. .	ԻԴ	1
Վասն Կղէովպեանցն . .	ԻԴ	13
Վասն համբառնալոյն Տեառն.	ԻԴ	50

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ

ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Քանզի բազումք յօժարեցին վեր-
ստին կարգել զպատմութիւն վասն
2 իրացն հաստատելոց ի մե՛զ, Որպէս
աւանդեցին մեզ որ ի սկզբանէ ակա-
նատեսք և սպասաւորք եղեն բանին,
3 կամ եղև և ինձ, որ ի սկզբանէ
զհետ երթեալ էի ամենայնի ճշմար-
տութեամբ կարգաւ գրել քեզ, քա՛ջդ
4 Թէոփիլէ, Զի ծանիցես զբանիցն,
որոց աշակերտեցար՝ զճշմարտու-
թիւննւ
5
Եւ եղև յաւուրս Հերովդի արքայի
Հրէաստանի քահանայ ոմն՝ անուն

Զաքարիա ի դասակարգէ Աբիայ,
և կին նորա ի դստերաց Ահարոնի,
6 և անուն նորա Եղիսաբեթ։ Եւ էին
արդարք երկոքին առաջի Աստուծոյ,
գնային յամենայն պատուիրանս և
7 յիրաւունս Տեառն անարատք։ Եւ ոչ
գոյր նոցա որդեակ, քանզի Եղիսա-
բեթ ամուլ էր, և երկոքեան անցեալ
8 էին զաւուրբք իւրեանց։ Եւ եղև ի
քահանայանալն նորա ըստ կարգի
աւուրցն հասանելոյ առաջի Աստուծոյ,
9 Ըստ օրինի քահանայութեան եհաս
նմա խունկ արկանել՝ մտեալ ի տա-
10 ճարն Տեառն, Եւ ամենայն բազմու-
թիւն ժողովրդեանն կային յաղօթս
11 արտաքոյ՝ ի ժամ խնկոցն։ Եւ երևե-
ցաւ նմա հրեշտակ Տեառն, զի կայր
12 ընդ աջմէ սեղանոյ խնկոցն։ Եւ խռո-
վեցաւ Զաքարիա՝ իբրև ետես, և
13 անկաւ ահ ի վերայ նորա։ Ասէ ցնա
հրեշտակ Տեառն. Մի երկնչիր, Զա-
քարիա, զի լսելի եղեն աղօթք քո,
և կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ
որդի, և կոչեսցես զանուն նորա
14 Յովհաննէս. Եւ եղիցի քեզ ուրա-
խութիւն և ցնծութիւն, և բազումք

15 ի ծննդեան նորա խնդասցեն։ Զի
եղիցի մեծ առաջի Տեառն, և գինի
և օղի մի արբցէ, և Հոգւով սրբով
լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ,
16 Եւ զբազումս յորդւոցն Իսրայելի
դարձուսցէ ի Տէր Աստուած իւրեանց։
17 Եւ ինքն եկեսցէ առաջի նորա հոգւով
և զօրութեամբ Եղիայի, դարձուցա-
նել զսիրտս հարց յորդիս և զանհա-
ւանս յիմաստութիւն արդարոց, պատ-
րաստել Տեառն ժողովուրդ կազմեալ։
18 Եւ ասէ Զաքարիա ցհրեշտակն. Եւ
իւ գիտացից զայդ. զի ես ծեր եմ և
կին իմ անցեալ զաւուրբք իւրովք։
19 Պատասխանի ետ հրեշտակն և ասէ
ցնա. Ես եմ Գաբրիէլ՝ որ կամ ա-
ռաջի Աստուծոյ, և առաքեցայ խօսել
ընդ քեզ և աւետարանել քեզ զայդ.
20 Եւ ահա եղիցիս համր և մի կարաս-
ցես խօսել մինչև ցօրն՝ յորում այդ
լինիցի, փոխանակ զի ոչ հաւատացեր
բանից իմոց՝ որք լցցին ի ժամանակի
21 իւրեանց։ Եւ ժողովուրդն այն ունէր
Զաքարիայ, և զարմանային ընդ յա-
22 մելն նորա ի տաճարին։ Եւ իբրև ել՝
ոչ կարէր խօսել ընդ նոսա, և իմա-

ցան՝ թէ տեսիլ ետես ի տաճարին.
և նա նշանացի խօսէր ընդ նոսա, և
23 կայր պապանձեալ։ Եւ եղև իբրև
լցան աւուրքն պաշտաման նորա,
24 գնաց ի տուն իւր։ Եւ յետ աւուրցն
այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ կին
նորա, և թաքուցանէր զանձն ամիսս
25 հինգ, և ասէր. Զի՞նչ գործ գործեաց
ընդիս Տէր յաւուրս՝ յորս հայեցաւ
յիս բառնալ զնախատինս իմ ի մարդ-
կանէ։

26 Եւ յամսեանն վեցերորդի առաքե-
ցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ
ի քաղաք մի Գալիլեացւոց՝ որում
27 անուն էր Նազարեթ, Առ կոյս խօ-
սեցեալ առն, որում անուն էր Յովսէփ
ի տանէ Դաւթի, և անուն կուսին
28 Մարիամ։ Եւ եկեալ առ նա՝ ասէ.
Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ
29 քեզ։ Եւ նա ընդ բանն խռովեցաւ,
և խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի
30 ինչ իցէ ողջոյնս այս։ Եւ ասէ ցնա
հրեշտակն. Մի՛ երկնչիր, Մարիամ,
31 զի գտեր շնորհս յԱստուծոյ։ Եւ ահա
յղասջիր և ծնցես որդի, և կոչեսցես
32 զանուն նորա Յիսուս։ Նա եղիցի

մեծ և Որդի Բարձրելոյ կոչեսցի, և
տացէ նմա Տէր Աստուած զաթոռն
Դաւթի հօր նորա, և թագաւորեսցէ
ի վերայ տանն Յակովբայ ի յաւի-
33 տեանս։ Եւ թագաւորութեան նորա
34 վախճան մի՛ լիցի։ Եւ ասէ Մարիամ
ցհրեշտակն. Զիարդ լինիցի ինձ այդ,
35 քանզի զայր ոչ գիտեմ։ Պատասխանի
ետ հրեշտակն և ասէ ցնա. Հոգի
սուրբ եկեսցէ ի քեզ, և զօրութիւն
Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ
քո. քանզի և որ ծնանելոցն է՝ սուրբ է
36 և Որդի Աստուծոյ կոչեսցի։ Եւ ահա
Եղիսաբեթ ազգական քո՝ և նա յղի է
ի ծերութեան իւրում, և այս վեցե-
րորդ ամիս է նորա՝ որ ամուլն կո-
37 չեցեալ է. Զի ոչ տկարասցի առ
38 յԱստուծոյ ամենայն բան։ Եւ ասէ
Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին
Տեառն. եղիցի ինձ ըստ բանի քում։
Եւ գնաց ի նմանէ հրեշտակն։

39 Յարուցեալ Մարիամ յաւուրսն
յայնոսիկ՝ գնաց ի լեռնակողմն փու-
40 թապէս ի քաղաքն Յուդայ, Եւ եմուտ
ի տուն Զաքարիայ և ետ ողջոյն
41 Եղիսաբեթի։ Եւ եղև իբրև լուաւ

ղողջոյնն Մարիամու Եղիսաբեթ,
խաղաց մանուկն յորովայնի նորա.
և լցաւ Եղիսաբեթ Հոգւով սրբով.
42 Եւ ի ձայն բարձր աղաղակեաց և
ասէ. Օրհնեալ ես դու ի կանայս, և
43 օրհնեալ է պտուղ որովայնի քո։ Եւ
ուստի է ինձ այս, զի եկեսցէ մայր
44 Տեառն իմոյ առ իս։ Զի ահաւասիկ
իբրև եղև ձայն ողջունի քո յականջս
իմ, խաղաց ցնծալով մանուկս յորո-
45 վայնի իմում։ Եւ երանի որ հաւա-
տայցէ՝ եթէ եղիցի կատարումն ասա-
46 ցելոյս նմա ի Տեառնէ։ Եւ ասէ Մա-
րիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր,
47 Եւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած
48 փրկիչ իմ, Զի հայեցաւ ի խոնար-
հութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա
յայսմհետէ երանիցեն ինձ ամենայն
49 ազգք, Զի արար ինձ մեծամեծս
50 հզօրն. և սուրբ է անուն նորա, Եւ
ողորմութիւն նորա ազգաց յազգս
51 երկիւղածաց իւրոց։ Արար զօրութիւն
բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտա-
52 ւանս մտօք սրտից իւրեանց, Քակեաց
զհզօրս յաթոռոց, և բարձրացոյց
53 զխոնարհս, Զքաղցեալս լցոյց բարու-

թեամբ և զմեծատունս արձակեաց
54 ունայնս։ Պաշտպանեաց Իսրայելի
ծառայի իւրում՝ յիշել զողորմու-
55 թիւնս, Որպէս խօսեցաւ առ հարս
մեր՝ Աբրահամու և զաւակի նորա ի
56 յաւիտեան։ Եկաց Մարիամ առ նմա
իբրև ամիսս երիս, և դարձաւ ի տուն
իւր։
57 Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք
58 ծննդեանն, և ծնաւ որդի։ Եւ լուան
որք շուրջ զնովաւ էին և ազգատոհմ
նորա, զի մեծ արար Տէր զողորմու-
թիւն իւր ընդ նմա, և խնդային ընդ
59 նմա։ Եւ եղև յաւուրն ութերորդի
եկին թլփատել զմանուկն, և կոչէին
զնա յանուն հօր իւրոյ Զաքարիա։
60 Պատասխանի ետ մայր նորա և ասէ.
61 Ո՛չ, այլ կոչեսցի Յովհաննէս։ Եւ
ասեն ցնա. Քանզի ոչ ոք է յազգի
քում՝ որոյ կոչի անուն Յովհաննէս։
62 Ակնարկէին հօրն նորա՝ թէ զի՞նչ
63 կամիցի կոչել զնա։ Եւ խնդրեաց
տախտակ, գրեաց և ասէ. Յովհաննէս
է անուն դորա։ Եւ զարմացան ամե-
64 նեքին։ Եւ բացաւ բերան նորա վաղ-
վաղակի և լեզու նորա, և խօսէր և

65 օրհնէր զԱստուած։ Եւ եղև ահ ի վերայ
ամենեցուն՝ որ լսէին զայս և որ շուրջ
բնակեալ էին զնոքօք, և ընդ ամենայն
լեռնակողմն Հրէաստանի պատմէին
66 ամենայն բանքս այսոքիկ. Եւ եդին
ամենեքեան որ լսէինն՝ ի սիրտս իւր-
եանց, և ասէին. Զի՞նչ լինիցի մա-
նուկս այս։ Եւ ձեռն Տեառն էր ընդ
նմա։
67 Եւ Զաքարիա հայր նորա լցաւ
Հոգւով սրբով, մարգարէացաւ և ասէ.
68 Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի,
զի յայց ել մեզ և արար փրկութիւն
69 ժողովրդեան իւրում, Եւ յարոյց եղ-
ջիւր փրկութեան մեզ ի տան Դաւթի
70 ծառայի իւրոյ. Որպէս խօսեցաւ բե-
րանով սրբոց՝ որ յաւիտենից մար-
71 գարէքն նորա էին, Փրկութիւն ի
թշնամեաց մերոց և ի ձեռաց ամե-
72 նայն ատելեաց մերոց, Առնել ողոր-
մութիւն ընդ հարս մեր և յիշել զուխտ
73 իւր սուրբ, Զերդումն, զոր երդուաւ
Աբրահամու հօր մերում՝ տալ մեզ
74 Առանց երկիւղի, ի ձեռաց թշնամեաց
75 մերոց փրկեալս, Պաշտել զնա սրբու-
թեամբ և արդարութեամբ առաջի

նորա զամենայն աւուրս կենաց մե-
76 րոց։ Եւ դու, մանուկ, մարգարէ
Բարձրելոյ կոչեսցիր. զի երթիցես
առաջի երեսաց Տեառն՝ պատրաստել
77 զճանապարհս նորա, Տալ գիտութիւն
փրկութեան ժողովրդեան նորա՝ ի
78 թողութիւն մեղաց նոցա, Վասն
գթութեանց ողորմութեան Աստուծոյ
մերոյ, որովք այց արասցէ մեզ արե-
79 գակն ի բարձանց՝ Երևել որոց ի
խաւարի և ի ստուերս մահու նստէին,
ուղղել զոտս մեր ի ճանապարհ խա-
ղաղութեան։
80 Եւ մանուկն աճէր և զօրանայր
հոգւով. և էր յանապատս մինչև յօր
երևելոյ նորա Իսրայէլի։

ԳԼՈՒԽ Բ.

1 Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնո-
սիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ՝
աշխարհագիր առնել ընդ ամենայն
2 տիեզերս։ Այս առաջին աշխարհագիր
եղև ի դատաւորութեան Ասորւոց
3 Կիւրենեայ։ Եւ երթային ամենեքեան

մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր
4 քաղաքի։ Ել և Յովսէփ ի Գալիլեէ
ի քաղաքէ Նազարեթէ ի Հրէաստան՝
ի քաղաք Դաւթի, որ կոչի Բեթղե-
հէմ, վասն լինելոյ նորա ի տանէ և
5 յազգէ Դաւթի, մտանել յաշխարհա-
գիր Մարեմաւ հանդերձ՝ զոր խօսեալն
6 էր նմա, և էր յղի։ Եւ եղև ի հաս-
նելն նոցա անդր լցան աւուրք ծնա-
7 նելոյ նորա, Եւ ծնաւ զորդին իւր
զանդրանիկ, և պատեաց զնա ի խան-
ձարուրս և եդ զնա ի մսուր, զի ոչ
գոյր նոցա տեղի իջավանին։
8 Եւ հովիւքն էին ի տեղւոջն յայն-
միկ բացօթեւաք, որ պահէին զպահ-
պանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։
9 Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա,
և փառք Տեառն ծագեցան առ նոսա,
10 և երկեան երկիւղ մեծ։ Եւ ասէ ցնոսա
հրեշտակն. Մի երկնչիք, զի ահաւա-
սիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն
մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդ-
11 դեանն, Զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ,
որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի։
12 Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք
մանուկ պատեալ ի խանձարուրս և

13 եդեալ ի մսուր։ Եւ յանկարծակի եղև
ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազ-
մութիւն զօրաց երկնաւորաց, որք
14 օրհնէին զԱստուած և ասէին. Փառք
ի բարձունս Աստուծոյ և յերկիր
խաղաղութիւն, ի մարդիկ հաճու-
15 թիւն։ Եւ եղև իբրև վերացան ի նո-
ցանէ հրեշտակքն յերկինս, ասեն
ցմիմեանս հովիւքն. Եկա՛յք երթիցուք
մինչև ցԲեթղեհէմ և տեսցուք զինչ է
բանս այս որ եղև, զոր Տէր եցոյց
16 մեզ։ Եւ եկին փութանակի, և գտին
զՄարիամ և զՅովսէփ և զմանուկն
17 եդեալ ի մսուր. Եւ ծանեան վասն
բանին՝ որ ասացաւ նոցա զմանկա-
18 նէն։ Եւ ամենեքեան որ լսէին զար-
մանային վասն բանիցն՝ զոր խօսե-
19 ցան ընդ նոսա հովիւքն։ Եւ Մարիամ
զամենայն զբանս զայսոսիկ պահէր
և խելամուտ լինէր ի սրտի իւրում։
20 Եւ դարձան հովիւքն, փառաւոր առ-
նէին և օրհնէին զԱստուած վասն
ամենայնի՝ զոր լուան և տեսին, որ-
պէս պատմեցաւ նոցա։
21 Եւ իբրև լցան աւուրք ութ թլփա-
տել զնա, և կոչեցաւ անուն նորա

Յիսուս, որ կոչեցեալ էր ի հրեշտա-
կէն, մինչչև յղացեալ էր զնա յորո-
վայնի։
22 Եւ իբրև լցան աւուրք սրբութեան
նոցա ըստ օրինացն Մովսիսի, ածին
զնա յԵրուսաղէմ յանդիման առնել
23 Տեառն, Որպէս և գրեալ է յօրէնս
Տեառն, թէ ամենայն արու որ բանայ
զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեսցի.
24 Եւ տալ պատարագ՝ ըստ ասացելոյն
յօրէնս Տեառն, զոյգս տատրակաց,
25 կամ երկուս ձագս աղաւնեաց։ Եւ
ահա այր մի էր յԵրուսաղէմ, որոյ
անուն էր Սիմէոն, և էր այրն այն
արդար և երկիւղած, և ակն ունէր
մխիթարութեանն Իսրայէլի, և Հոգի
26 սուրբ էր ի նմա. Եւ էր նորա հրաման
առեալ ի Հոգւոյն սրբոյ՝ մի տեսանել
զմահ, մինչև տեսցէ զՕծեալն Տեառն.
27 Եւ եկն Հոգւովն ի տաճարն. և իբրև
ածին ծնողքն զմանուկն Յիսուս առ-
նել նոցա ըստ սովորութեան օրինացն
28 ի վերայ նորա, Եւ նա առ ընկալաւ
զնա ի գիրկս իւր և օրհնեաց զԱս-
29 տուած և ասէ. Արդ արձակես զծա-
ռայս քո, Տէր, ըստ բանի քում ի

30 խաղաղութիւն, Զի տեսին աչք իմ
31 զփրկութիւն քո, Զոր պատրաստե-
ցեր առաջի ամենայն ժողովրդոց,
32 Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց և
փառս ժողովրդեան քում Իսրայէլի։
33 Եւ էին հայրն և մայրն նորա զարմա-
ցեալ ի վերայ բանիցն, որ խօսէին
34 զնմանէ։ Եւ օրհնեաց զնոսա Սիմէոն
և ասէ ցՄարիամ մայր նորա. Ահա
սա կայ ի գլորումն և ի կանգնումն
բազմաց ի մէջ Իսրայէլի, և ի նշան
35 հակառակութեան։ Եւ ընդ քո իսկ
անձն անցցէ սուր, զի յայտնեսցին
36 ի բազում սրտից խորհուրդք։ Եւ անդ
էր Աննա մարգարէ, դուստր Փա-
նուելի, յազգէ Ասերայ. սա ինքն
անցեալ էր զաւուրբք բազմօք, կե-
37 ցեալ ընդ առն ամս եօթն ի կուսու-
թենէ իւրմէ, Եւ էր այրի ամաց իբրև
ութսուն և չորից, որ ոչ մեկնէր ի
38 տաճարէն, այլ պահօք և աղօթիւք
պաշտէր զցայգ և զցերեկ։ Եւ սա ի
նմին ժամու յարուցեալ՝ գոհանայր
զՏեառնէ և խօսէր զնմանէ ընդ ամե-
նեսին՝ որք ակն ունէին փրկութեանն
Երուսաղէմի։

39 Եւ իբրեւ կատարեցին զամենայն
ըստ օրինացն Տեառն, դարձան ան-
դրէն ի Գալիլեա ի քաղաքն իւրեանց
40 Նազարեթ։ Եւ մանուկն աճէր և զօ-
րանայր լի իմաստութեամբ, և շնորհք
Աստուծոյ էին ի վերայ նորա։
41 Եւ երթային ծնօղքն նորա ամի
42 ամի յԵրուսաղէմ ի տօն զատկին։ Եւ
իբրեւ եղեն նորա ամք երկոտասան,
յելանել նոցա յԵրուսաղէմ ըստ սո-
43 վորութեան տօնին, Եւ կատարել
զաւուրսն, և դառնալ անդրէն, մնաց
Յիսուս մանուկն յԵրուսաղէմ, և ոչ
44 գիտացին ծնօղքն նորա։ Կարծէին
զնմանէ՝ թէ ընդ ուղեկիցսն իցէ,
եկին իբրեւ աւուր միոյ ճանապարհ
և խնդրէին զնա ընդ դրացիսն և ընդ
45 ծանօթս, Եւ իբրեւ ոչ գտին, դարձան
անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա։
46 Եւ եղև յետ երից աւուրց գտին զնա
ի տաճարին, զի նստէր ընդ վարդա-
պետսն, լսէր ի նոցանէ և հարցանէր
47 զնոսա։ Զարմանային ամենեքեան որ
լսէին ի նմանէ ընդ իմաստութիւնն
48 և ընդ պատասխանիս նորա։ Եւ իբրեւ
տեսին զնա՝ սքանչացան, և ասէ ցնա

մայրն իւր. Ո՛րդեակ, զի՞նչ գործ
գործեցեր դու ընդ մեզ. ահաւասիկ
հայր քո և ես տառապեալք խնդրէաք
49 զքեզ։ Եւ ասէ ցնոսա. Զի՞ խնդրէիք
զիս. ո՞չ գիտէիք եթէ ի տան Հօր
50 իմոյ պարտ է ինձ լինել։ Եւ նոքա
ո՛չ իմացան զբանն՝ զոր խօսեցաւ ընդ
51 նոսա։ Եւ էջ ընդ նոսա և գնաց ի
Նազարեթ, և էր նոցա հնազանդ։ Եւ
մայր նորա պահէր զամենայն զբանն
52 ի սրտի իւրում։ Եւ Յիսուս զարգա-
նայր իմաստութեամբ և հասակաւ և
շնորհօք յԱստուծոյ և ի մարդկանէ։

ԳԼՈՒԽ Գ.

1 Ի հնգետասաներորդի ամի տէ-
րութեանն Տիբերեայ կայսեր, ի դա-
տաւորութեան Հրէաստանի Պիղա-
տոսի Պոնտացւոյ, և ի չորրորդապե-
տութեան Գալիլեացւոց Հերովդի, և
ի Փիլիպպոսի եղբօր նորա չորրորդ-
պետութեան ի Տիւրացւոց և ի Տրա-
քոնացւոց աշխարհին, և ի չորրորդ-
պետութեան Լիւսանեայ Աբիլենացւ-

2 ւոյ, Եւ ի քահանայապետութեան
Աննայի և Կայիափայ, եղև բան Աս-
տուծոյ ի վերայ Յովհաննու որդւոյ
3 Զաքարիայ՝ յանապատի անդ, Եւ եկն
յամենայն կողմն Յորդանանու՝ քա-
րոզել մկրտութիւն ապաշխարութեան
4 ի թողութիւն մեղաց. Որպէս և գրեալ
է ի գիրս պատգամաց Եսայեայ մար-
գարէի. Ձայն բարբառոյ յանապատի.
պատրաստ արարէք զճանապարհ
Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս
5 նորա. Ամենայն ձորք լցցին և ամե-
նայն լերինք և բլուրք խոնարհեսցին,
և եղիցին դժուարինքն ի դիւրինս և
6 առապարքն ի հարթ ճանապարհս, Եւ
տեսցէ ամենայն մարմին զփրկու-
7 թիւն Աստուծոյ: Եւ ասէ ցժողո-
վուրդսն ելեալս մկրտել ի նմանէ.
Ծնունդք իժից, ո՛ եցոյց ձեզ փախչել
8 ի բարկութենէն՝ որ գալոց է: Արա-
րէք այսուհետև պտուղս արժանի
ապաշխարութեան, և մի՛ սկսանիցիք
ասել, եթէ ունիմք հայր զԱբրահամ.
Զայս ասեմ ձեզ, եթէ կարող է Աս-
տուած ի քարանցս յայսցանէ յա-
9 րուցանել որդիս Աբրահամու: Բայց

ահաւասիկ տապար առ արմին ծառոց
կայ. ամենայն ծառ՝ որ ո՛չ առնէ
զպտուղ բարւոք, հատանի և ի հուր
10 արկանի: Հարցանէին զնա ժողո-
վուրդքն և ասէին. Իսկ արդ զի՞նչ
11 գործեսցուք: Պատասխանի ետ և ասէ
ցնոսա. Որ իցեն երկու հանդերձք՝
տացէ զմին այնմ, որ ոչն գուցէ, և
որ կայցէ կերակուր՝ նոյնպէս արաս-
22 ցէ: Եկին և մաքսաւորք մկրտել և
ասեն ցնա. Վա՛րդապետ, զի՞նչ գոր-
13 ծեսցուք: Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ ինչ
աւելի քան զհրամայեալն ձեզ առ-
14 նիցէք: Հարցանէին զնա և զինուորքն
և ասէին. Եւ մեք զի՞նչ գործեսցուք:
Ասէ ցնոսա. Մի՛ զոք խուիցէք և մի՛
զոք զրպարտիցէք, շա՛տ լիցին ձեզ
15 թոշակքն ձեր: Մինչ ակն ունէր
ժողովուրդն և խորհէին ամենեքեան
ի սիրտս իւրեանց վասն Յովհաննու՝
16 միթէ նա՛ իցէ Քրիստոսն, Պատաս-
խանի ետ ամենեցուն և ասէ. Ես
մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրա-
գոյն քան զիս, զորոյ չեմ բաւական
բառնալ զկօշիկս նորա, նա մկրտեսցէ
17 զձեզ Հոգւով սրբով և հրով: Որոյ

հեծանոցն ի ձեռին իւրում սրբել զկալ
իւր և ժողովել զցորեանն ի շտեմարանս
իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով։
18 Բազում և այլ ինչ մխիթարութեամբ
աւետարանէր ժողովրդեանն։
19 Բայց Հերովդէս չորրորդապետ, յան-
դիմանեալ ի նմանէ վասն Հերովդիայ
կնոջ եղբօր իւրոյ և վասն ամենայն
չարեացն զոր գործեաց Հերովդէս,
20 Յաւել և զայն ևս ի վերայ ամենայնի,
և եդ ի բանտի զՅովհաննէս։
21 Եւ եղև ի մկրտել ամենայն ժողովր-
դեանն և ընդ Յիսուսի մկրտելն և կալ
22 յաղօթս՝ բանալ երկնից, Եւ իջանել
Հոգւոյն Սրբոյ մարմնաւոր տեսլեամբ
իբրև զաղաւնի ի վերայ նորա, և գալ
ձայն յերկնից՝ որ ասէր. Դու ես Որդի
իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ։
23 Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրև
երեսնից սկսեալ՝ որոց, որպէս և կար-
ծէր, որդի Յովսէփայ, որ Յակոբայն,
24 որ Հեղեայն, որ Մատաթեայն, Որ
Ղևեայն, որ Մելքեայն, որ Յան-
25 նեայն, որ Յովսեփայն, Որ Մատ-
թեայն, որ Ամովսայն, որ Նաւումայն,
26 որ Եսղեայն, որ Նանգեայն, Որ Մա-

հաթեայն, որ Մատաթեայն, որ Սեմեան,
27 որ Յովսեքեայն, որ Յովդայն, Որ Յով-
նանայն, որ Ռեսայն, որ Զորոբաբե-
լին, որ Սաղաթիելին, որ Ներեայն,
28 Որ Մելքեայն, որ Ադդեայն, որ
Կովսամայն, որ Եղմովդադայն, որ
29 Երայն, Որ Յեսուայն, որ Եղիազա-
րայն, որ Յովրամայն, որ Մատթայն,
30 որ Ղևեայն, Որ Սիմէոնին, որ Յու-
դային, որ Յովսեփայն, որ Յովնամայն,
31 որ Եղիակիմայն, Որ Մեղթեայն, որ
Մեննայն, որ Մատաթայն, որ Նա-
32 թանայն, որ Դաւթին, Որ Յեսսեայն,
որ Ովբեդայն, որ Բոոսայն, որ Սաղ-
33 մոհնայն, որ Նաասոնին, Որ Ամի-
նադաբայն, որ Արամայն, որ Ադմեայն,
որ Առնեայն, որ Եսրովմայն, որ Փա-
34 րեսին, որ Յուդային, Որ Յակովբայն,
որ Իսահակայն, որ Աբրահամու, որ
35 Թառային, որ Նաքովրայն, Որ Սե-
րուքայն, որ Ռագաւայն, որ Փաղե-
կայն, որ Եբերայն, որ Սաղային,
36 Որ Կայնանայն, որ Արփաքսադայն,
որ Սեմայն, որ Նոյին, որ Ղամէքայն,
37 Որ Մաթուսաղային, որ Ենովքայն,
որ Յարեդին, որ Մաղաղիէլին, որ

38 Կայնանայն, Որ Ենովսայն, որ Սե-
թայն, որ Ադամայն, որ Աստուծոյն։

ԳԼՈՒԽ Դ.

1 Եւ Յիսուս լի Հոգւով սրբով դար-
ձաւ ի Յորդանանէ, և վարէր Հոգւովն
2 յանապատ՝ Աւուրս քառասուն փոր-
ձեալ ի սատանայէ։ Եւ ոչ եկեր և
ոչ արբ յաւուրսն յայնոսիկ, և ի
3 կատարելն նոցա քաղցեաւ։ Եւ ասէ
ցնա սատանայ. Եթէ Որդի ես Ա-
ստուծոյ, ասա քարիդ այդմիկ, զի
4 հաց լիցի։ Պատասխանի ետ նմա
Յիսուս և ասէ. Գրեալ է, եթէ
ոչ հացիւ միայն կեցցէ մարդ,
5 այլ ամենայն բանիւ Աստուծոյ։ Եւ
հանեալ զնա ի լեառն մի բարձր՝
եցոյց նմա զամենայն թագաւորու-
թիւնս աշխարհի ի վայրկեան ժամա-
6 նակի։ Եւ ասէ ցնա սատանայ. Քեզ
տաց զայս ամենայն իշխանութիւն
և զփառս սոցա, զի ինձ տուեալ է,
7 և ում կամիմ՝ տամ զսա. Արդ դու
եթէ անկեալ երկիրպագանիցես ա-

8 ռաջի իմ, քեզ եղիցի ամենայն։ Պա-
տասխանի ետ նմա Յիսուս և ասէ.
Գրեալ է, երկիրպագցես Տեառն Ա-
ստուծոյ քում և զնա միայն պաշտես-
9 ցես։ Եւ ած զնա յԵրուսաղէմ և
կացոյց ի վերայ աշտարակի տաճա-
րին, և ասէ ցնա. Եթէ Որդի ես
Աստուծոյ, արկ զքեզ աստի ի վայր.
10 Զի գրեալ է, եթէ հրեշտակաց իւրոց
պատուիրեալ է վասն քո՝ պահել
11 զքեզ. Զի ի վերայ ձեռաց բարձցեն
զքեզ, մի երբէք հարցես զքարի զոտն
12 քո։ Պատասխանի ետ նմա Յիսուս՝
և ասէ. Ասացեալ է, թէ ոչ փորձես-
13 ցես զՏէր Աստուած քո։ Եւ կատա-
րեալ զամենեան փորձութիւնն սա-
տանայի՝ ի բաց եկաց ի նմանէ առ
ժամանակ մի։

14 Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ
Հոգւոյն ի Գալիլեա. և ել համբաւ
զնմանէ ընդ ամենայն կողմանս գա-
15 ւառին։ Եւ նա ուսանէր ի ժողովուր-
դըս նոցա՝ փառաւորեալ յամենե-
ցունց։

16 Եւ եկն ի Նազարէթ, ուր սնեալն
էր, և եմուտ ըստ սովորութեան

խուռն յաւուրն շաբաթուց ի ժողո-
17 վուրդն։ Եւ ետուն նմա գիր զԵսայեայ
մարգարէի, և յարեաւ ընթեռնուլ. և
իբրև եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի,
18 յորում գրեալն էր. Հոգի Տեառն ի
վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս՝
աւետարանել աղքատաց, առաքեաց
19 զիս։ Քարոզել գերեաց զթողութիւն
և կուրաց տեսանել, արձակել զվի-
րաւորս ի թողութիւն, քարոզել զտա-
20 րեկան Տեառն ընդունելի։ Եւ խփեալ
զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն և նստաւ,
և ամենեցուն որ ժողովրդեանն էին
21 աչք ի նա հայէին։ Եւ սկսաւ ասել
ցնոսա. Այսօր լցան գիրքս այս յա-
22 կանջս ձեր։ Եւ ամենեքին վկայէին
նմա և զարմանային ընդ բանս շնոր-
հացն՝ որ ելանէին ի բերանոյ նորա,
և ասէին. Ո՞չ սա է որդին Յովսե-
23 փայ։ Եւ ասէ ցնոսա. Ապաքէն ասի-
ցէք առ իս զառակս զայս. բժիշկ,
բժշկեա զանձն քո. որչափ լուաք՝
զոր արարեր ի Կափառնայում, արա
24 և աստ ի քում գաւառի։ Եւ ասէ.
Ամէն ասեմ ձեզ, թէ չէ մարգարէ
25 ընդունելի ի քաղաքի իւրում։ Ար-

դարև ասեմ ձեզ, զի բազում այրիք
էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայէլի,
յորժամ փակեցան երկինք զերիս
ամս և զվեց ամիս, և եղև սով մեծ
26 ընդ ամենայն երկիր, Եւ ո՛չ առ մի
ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց
միայն ի Սարեփթա Սիդոնացւոց
27 առ կին մի այրի։ Եւ բազում բորոտք
յԻսրայելի առ Եղիսէիւ մարգարէիւ,
և ո՛չ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց
28 միայն Նէեման Ասորի։ Եւ լցան
ամենեքին բարկութեամբ ի ժողո-
29 վրդեանն՝ իբրև լսէին զայս, Եւ յա-
րուցեալ հանին զնա արտաքոյ քա-
ղաքին, և ածին զնա մինչև յարտևան
լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա
շինեալ էր, գահավէժ առնել զնա.
30 Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա գնայր։
31 Եւ էջ ի Կափառնայում ի քաղաքն
Գալիլեացւոց, և ուսուցանէր զնոսա
32 ի շաբաթսն. Եւ զարմանային ընդ
վարդապետութիւն նորա, զի իշխա-
նութեամբ էր բան նորա։
33 Եւ էր ի ժողովրդեանն այր մի,
34 զոր ունէր այս դևի պղծոյ, և աղա-
ղակեաց ի ձայն մեծ և ասէ. Թուլացո՛,

զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազով-
րեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք
զքեզ ով ես, Սուրբդ Աստուծոյ։
35 Սաստեաց ի նա Յիսուս և ասէ. Պա-
պանձեաց և ել ի դմանէ։ Զգեանեալ
զնա դեւն ի միջի անդ և ել ի նմանէ,
36 և ինչ ոչ վնասեաց նմա։ Եւ եղեն
զարմանալիք ի վերայ ամենեցուն,
խօսէին ընդ միմեանս և ասէին. Զինչ
է բանս այս, զի իշխանութեամբ և
զօրութեամբ սաստէ այսոց պղծոց
37 և ելանեն։ Եւ երթայր հռչակ զնմանէ
ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւա-
ռաւն։
38 Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի՝
39 եմուտ ի տուն Սիմոնի։ Զոքանչ
Սիմոնի տագնապէր ջերմամբ մե-
ծաւ, և աղաչեցին զնա վասն նորա։
40 Եկաց առ նմա, սաստեաց ջերմանն
և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ
և պաշտէր զնոսա։
41 Եւ ընդ արեւն մտանել ամենե-
քեան որոց էին հիւանդք ի պէսպէս
ցաւս բերէին զնոսա առ նա. և նա
իւրաքանչիւր ումեք ի նոցանէ դնէր
42 ձեռս և բժշկէր զնոսա։ Ելանէին և

դեւք ի բազմաց, աղաղակէին և ա-
սէին, եթէ դու ես Որդի Աստուծոյ.
և նա սաստէր և ոչ տայր նոցա թոյլ
խօսել, զի գիտէին զնա թէ Քրիս-
տոսն է։
43 Եւ իբրև տիւ եղև, ել գնաց յանա-
պատ տեղի, և ժողովուրդքն խնդրէին
զնա. եկին մինչև առ նա՝ և արգե-
լուին զնա, զի մի՛ գնասցէ ի նոցանէ։
44 Եւ նա ասէ ցնոսա. Եւ այլոց քա-
ղաքաց պարտ է ինձ աւետարանել
զարքայութիւնն Աստուծոյ, զի յայն
45 իսկ առաքեցայ։ Եւ քարոզէր ի ժո-
ղովուրդսն Գալիլեացւոց։

ԳԼՈՒԽ Ե.

1 Եւ եղև ի խռնել զնովաւ ժողո-
վրդեանն և լսել զբանն Աստուծոյ,
և ինքն կայր առ ծովակին Գեննե-
2 սարեթայ, Եւ ետես երկուս նաւս զի
կային առ ծովակին, և ձկնորսքն
ելեալ ի նոցանէ՝ լուանային զգոր-
3 ծիսն։ Ել նա ի մի նաւուցն, որ էր
Սիմոնի, և աղաչեաց զնա սակաւիկ

մի տանել ի ներքս ի ցամաքէն. նստաւ
և ուսուցանէր ի նաւէ անտի զժողո-
4 վուրդսն։ Եւ իբրև լռեաց ի խօսիցն,
ասէ ցՍիմովն. Խաղացո՛ ի խորն, և
5 արկէք զգործիս ձեր յորս։ Պատաս-
խանի ետ Սիմովն և ասէ ցնա. Վա՛ր-
դապետ, զամենայն գիշերս աշխատ
եղեաք և ոչինչ կալաք. բայց վասն
6 քո բանիդ արկցուք զգործիսս։ Զայս
իբրև արարին՝ փակեցին ի ներքս
բազմութիւն ձկանց յոյժ, մինչև
7 պատառէին ուռկանք նոցա։ Եւ
ակնարկէին որսակցացն ի միւս նաւուն՝
գալ օգնել նոցա. և եկին, և լցին
երկոքին նաւքն, մինչև մերձ ընկղ-
8 մել նոցա։ Իբրև ետես Սիմովն Պետ-
րոս՝ անկաւ առ ծունկս Յիսուսի
և ասէ. Ի բաց գնա յինէն, Տէր, զի
9 այր մեղաւոր եմ ես։ Քանզի ահ
պատեաց զնա և զամենեսեան՝ որ
ընդ նմայն էին, վասն որսոյ ձկանցն
10 զորս ըմբռնեցին, Նոյնպէս և զՅա-
կովբոս և զՅովհաննէս՝ զորդիսն Զե-
բեդեայ, որ էին որսակիցք Սիմովնի։
Եւ ասէ ցՍիմովն Յիսուս. Մի՛ երկնչիր,
յայսմհետէ զմարդիկ որսայցես ի

11 կեանս։ Եւ հանեալ զնաւն ի ցամաք՝
թողին զամենայն և գնացին զհետ
նորա։
12 Եւ եղև ի հասանելն նորա ի մի
ի քաղաքացն, և ահա այր մի լի բո-
րոտութեամբ. իբրև ետես զՅիսուս,
անկեալ ի վերայ երեսաց աղաչեաց
զնա և ասէ. Տէր, եթէ կամիս, կարող
13 ես զիս սրբել։ Ձգեաց զձեռն իւր՝
հասոյց ի նա և ասէ. Կամիմ, սրբեա՛ց.
և վաղվաղակի գնաց ի նմանէ բո-
14 րոտութիւնն։ Եւ նա պատուիրեաց
նմա՝ մի՛ ումեք ասել, այլ թէ երթ
ցոյց զանձն քո քահանային, և մատո՛
պատարագ վասն սրբութեան քո,
որպէս և հրամայեաց Մովսէս՝ ի
15 վկայութիւն նոցա։ Եւ յորդէր առա-
ւել բանն զնմանէ, և ժողովէին ժո-
ղովուրդք բազումք լսել և բժշկել ի
16 հիւանդութեանց իւրեանց. Եւ նա խոյս
տայր յանապատ տեղիս և կայր յա-
ղօթս։
17 Եւ եղև ի միում աւուրց՝ և ինքն
ուսուցանէր, և փարիսեցիքն և օրի-
նացն վարդապետք նստէին, որք ժո-
ղովեալ էին յամենայն քաղաքաց

Գալիլեացւոց և Հրէաստանի և Երու-
սաղէմի. և զօրութիւն Տեառն էր ի
18 բժշկել զնոսա։ Եւ ահա արք բերէին
մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ,
և խնդրէին զնա մուծանել ի ներքս
19 և դնել առաջի նորա։ Եւ իբրև ոչ
գտանէին թէ ընդ որ մուծանիցեն
զնա ի ներքս վասն ամբոխին, ելին
ի տանիս և ի ցուոցն կախեցին զնա
և իջուցին մահճօքն հանդերձ ի մէջ
20 առաջի Յիսուսի։ Եւ տեսեալ զհա-
ւատս նոցա՝ ասէ ցնա. Այր դու,
21 թողեալ լիցին քեզ մեղք քո։ Սկսան
խորհել դպիրքն և փարիսեցիք և ասեն.
Ո՞վ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս.
ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն
22 Աստուած։ Իբրև գիտաց Յիսուս
զխորհուրդս նոցա, պատասխանի ետ
և ասէ ցնոսա. Զի՞ խորհիք ի սիրտս
23 ձեր. Զինչ դիւրագոյն է, ասել՝ թո-
ղեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝
24 արի և գնա։ Այլ զի գիտասջիք՝ եթէ
իշխանութիւն ունի Որդի մարդոյ
յերկրի թողուլ զմեղս, ասէ ցանդա-
մալոյծն. Քեզ ասեմ, արի առ զմա-
25 հիճս քո և երթ ի տուն քո։ Եւ առ-

ժամայն յարուցեալ առաջի ամենե-
ցուն՝ առ զիւրն յորոյ վերայ անկեալ
դնէր, գնաց ի տուն իւր և փառաւոր
26 առնէր զԱստուած։ Զարմանք կալան
զամենեսին, և փառաւոր առնէին
զԱստուած. լի եղեն ահիւ և ասեն,
եթէ տեսաք այսօր նոր նշան։
27 Եւ յետ այնորիկ ել անտի, և ետես
մաքսաւոր մի՝ որում անուն էր Ղեւի,
զի նստէր ի մաքսաւորութեան, և
28 ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ։ Եւ թողեալ
զամենայն՝ յարեաւ գնաց զկնի նորա։
29 Եւ արար ընդունելութիւն մեծ նմա
Ղեւի ի տան իւրում. և էր ժողովուրդ
բազում մաքսաւորաց և այլոց՝ որ
30 էին բազմեալ ընդ նոսա։ Եւ տրտնջէին
փարիսեցիքն և դպիրքն նոցա զնմանէ
առ աշակերտսն նորա և ասէին. Ըն-
դէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղա-
31 ւորս ուտէք և ըմպէք։ Պատասխանի
ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ո՛չ ինչ
են պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւան-
32 դաց. Ո՛չ եկի կոչել զարդարս, այլ
զմեղաւորս յապաշխարութիւն։
33 Եւ նոքա ասեն ցնա. Ընդէ՞ր աշա-
կերտքն Յովհաննու պահեն ստէպ և

խնդրուածս առնեն, նոյնպէս և փա-
րիսեցւոցն, և քոյքդ ուտեն և ըմպեն։
34 Եւ նա ասէ ցնոսա. Միթէ կարո՞ղ էք
մանկանց առագաստի, մինչ փեսայն
ընդ նոսա իցէ, հրաման տալ պահել։
35 Եկեսցեն աւուրք, յորժամ բարձցի ի
նոցանէ փեսայն, ապա պահեսցեն
36 յաւուրսն յայնոսիկ։ Ասաց և առակ
մի առ նոսա, թէ ո՛ք արկանէ ի նոր
հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ.
ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ և
ընդ հնոյն չմիաբանի կապերտն՝ որ
37 ի նորոյն։ Եւ ոչ ո՛ք արկանէ գինի
նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայ-
թուցանէ գինին նոր զտիկսն հինս,
38 ինքն հեղու և տիկքն կորնչին։ Այլ
գինի նոր ի տիկս նորս արկանելի է,
39 և երկոքին պահին։ Եւ ոչ ո՛ք ըմպէ
զհինն՝ և կամիցի զնորն. քանզի ասէ,
եթէ հինն քաղցրագոյն է։

ԳԼՈՒԽ Զ.

1 Եւ եղև ի շաբաթու յերկրորդում
առաջնոյն անցանել նմա ընդ ար-

տորայն, և աշակերտքն նորա կոր-
զէին հասկ, շփէին ընդ ափ և ուտէին։
2 Եւ ոմանք ի փարիսեցւոցն ասեն
ցնոսա. Զի՞նչ գործէք՝ զոր չէ՛ օրէն
3 ի շաբաթու։ Պատասխանի ետ նոցա
Յիսուս և ասէ. Զիցէ՞ ընթերցեալ ձեր
զոր արարն Դաւիթ, յորժամ քաղ-
ցեաւն ինքն և որ ընդ նմայն էին։
4 Զիա՞րդ եմուտ նա ի տունն Աստու-
ծոյ և զհացն զառաջաւորութեան ե-
կեր և ետ այնոցիկ որ ընդ նմայն
էին, զոր ո՛չ էր օրէն ուտել, բայց
5 միայն քահանայապետիցն։ Եւ ասէ
ցնոսա. Տէր է Որդի մարդոյ և շա-
բաթու։
6 Եւ եղև ի միւսում շաբաթուն մտա-
նել նմա ի ժողովուրդն և ուսուցա-
նել. և էր անդ այր մի՝ որոյ ձեռն
7 իւր աջ գօսացեալ էր. Եւ սպասէին
նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ ի
շաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն
8 չարախօսութիւն զնմանէ։ Եւ նա գի-
տէր զխորհուրդս նոցա. ասէ ցայրն՝
որոյ ձեռն գօսացեալ էր. Արի՛ ա՛նց ի
9 մէջ. և նա յարուցեալ եկաց։ Ասէ
ցնոսա Յիսուս. Հարցից ինչ զձեզ,

զի՞նչ արժան է ի շաբաթու, բարի՞
ինչ առնել՝ եթէ չար գործել. ոգի
մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել։
10 Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք
զայրագին՝ ասէ ցնա. Ձգեա՛ զձեռն
քո. և նա ձգեաց, և հաստատեցաւ
11 ձեռն նորա իբրև զմիւսն։ Նոքա լցան
յիմարութեամբ, և խօսէին ընդ մի-
մեանս՝ թէ զինչ առնիցեն Յիսուսի։
12 Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ
ել ի լեառն կալ յաղօթս, և հանէր
զգիշերն ի գլուխ յաղօթս Աստուծոյ։
13 Եւ իբրև այգ եղև, կոչեաց զաշա-
կերտսն իւր՝ և ընտրեաց ի նոցանէ
երկոտասանս, զորս և Առաքեալս
14 անուանեաց. զՍիմովն, զոր և Պետ-
րոս անուանեաց, և զԱնդրէաս զեղ-
բայր նորին, և զՅակովբոս և զՅով-
հաննէս և զՓիլիպպոս և զԲարթու-
15 ղիմէոս Եւ զՄատթէոս և զԹովմաս
և զՅակովբոս Ալփեայ, և զՍիմովն՝
16 զկոչեցեալն նախանձայոյզ, Եւ զՅու-
դա Յակովբեայ, և զՅուդա Իսկարի-
17 ովտացի, որ եղև իսկ մատնիչ. Եւ
իջեալ նոքօք հանդերձ ի տեղի մի
տափարակ, և ժողով աշակերտացն

նորա, և բազմութիւն յոյժ ժողովըր-
դեանն յամենայն Հրէաստանէ և
յԵրուսաղեմէ և յայնմ կողմանէ և
ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդովնի,
18 Որ եկին լսել ի նմանէ և բժշկել ի
հիւանդութենէ իւրեանց, և նեղեալքն
19 յայսոց պղծոց բժշկէին. Եւ ամենայն
ժողովուրդն խնդրէր մերձենալ ի նա,
զի զօրութիւն բազում ելանէր ի
նմանէ և բժշկէր զամենեսին։
20 Եւ նա ամբարձ զաչս իւր յաշա-
կերտսն իւր և ասէ. Երանի աղքա-
տացդ հոգւով, զի ձեր է արքայութիւն
21 Աստուծոյ։ Երանի որ քաղցեալ են
այժմ, զի յագեսցին։ Երանի որ լան
22 այժմ, զի ծիծաղեսցին։ Երանի է ձեզ
յորժամ ատիցեն զձեզ մարդիկ, և
յորժամ որոշիցեն զձեզ և նախատի-
ցեն և հանիցեն անուն չար զձէնջ
23 վասն Որդւոյ մարդոյ։ Ուրա՛խ լիջիք
յաւուր յայնմիկ և ցնծասջի՛ք, զի
ահա վարձք ձեր բազում են յերկինս.
ըստ զմին օրինակի առնէին մարգա-
24 րէիցն հարքն իւրեանց։ Բայց վա՛յ ձեզ
մեծատանցդ, զի ընկալայք զմխիթա-
24 րութիւն ձեր։ Վա՛յ ձեզ, որ յագեալդ

էք այժմ, զի քաղցիցէք։ Վա՜յ ձեզ,
որ ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք և
26 լայցէք։ Վա՜յ ձեզ յորժամ բարի
ասիցեն զձէնջ ամենայն մարդիկ. զի
այդպէս առնէին սուտ մարգարէիցն
27 հարք նոցա։ Այլ ձեզ ասեմ որ լսէքդ.
սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արա-
28 րէք ատելեաց ձերոց, Օրհնեցէք զա-
նիծիչս ձեր, աղօթս արարէք ի վերայ
29 նեղչաց ձերոց։ Որ հարկանէ զծնօտ
քո՝ մատո՛ նմա և զմիւսն. և որ հանէ
ի քէն զբաճկոն քո՝ մի՛ արգելուր ի
30 նմանէ և զշապիկս։ Ամենայնի որ
խնդրէ ի քէն՝ տո՛ւր, և զոր ինչ հանէ
31 ոք ի քէն՝ մի՛ պահանջեր։ Եւ որպէս
կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ,
32 այնպէս արասջիք և դուք նոցա։ Եւ
եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր, զի՞նչ
շնորհ է ձեր. զի և մեղաւորք սիրեն
33 զսիրելիս իւրեանց։ Եւ եթէ բարի
առնէք բարերարաց ձերոց, ո՞ր շնորհ
է ձեր. զի և մեղաւորք զնոյն գոր-
34 ծեն։ Եւ եթէ տայք փոխ այնոցիկ՝
յորոց ակն ունիք առնուլ, ո՞ր շնորհ է
ձեր. քանզի և մեղաւորք մեղաւորաց
փոխ տան, զի առցեն անդրէն զկը-

35 շիռն։ Բայց սիրեցէք զթշնամիս ձեր
և բարի արարէք ատելեաց ձերոց,
և տո՛ւք փոխ՝ ուստի ո՛չ ակն ունիցիք
առնուլ. և եղիցին վարձք ձեր բա-
զում, և եղիջիք որդիք Բարձրելոյ,
զի նա քաղցր է ի վերայ չարաց և
36 ապաշնորհաց։ Եղերո՛ւք գթածք, որ-
37 պէս և Հայրն ձեր գթած է։ Մի՛ դա-
տէք, և ո՛չ դատիցիք. մի՛ պատժէք,
և ո՛չ պատժիցիք. արձակեցէք, և ար-
38 ձակիցիք. Տո՛ւք, և տացի ձեզ. չափ
բարւոք թաթաղուն շարժուն զեղուն
տացին ի գոգս ձեր. նովին չափով
39 որով չափէք՝ չափեսցի ձեզ։ Ասաց
և առակ մի առ նոսա. միթէ կարիցէ՞
կոյր կուրի առաջնորդել. ո՛չ ապաքէն
երկոքին ի խորխորատ անկանիցին։
40 Ո՛չ է աշակերտ լաւ քան զվարդապետ
իւր. ամենայն կատարեալն եղիցի
41 իբրև զվարդապետ իւր։ Զի՞ տեսանես
զշիւղ յական եղբօր քո, և ի քում
42 ական զգերանդ ո՛չ նշմարես։ Կամ
զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո.
Եղբայր, թո՛ղ հանից զշիւղդ յականէ
քումմէ, և դու ի քում ական զգե-
րանդ ո՛չ տեսանես. կեղծաւոր, հա՛ն

նախ զգերանդ յականէ քումմէ, և
ապա հայեսջիր հանել զշիւղ յականէ
43 եղբօր քո։ Զի ոչ է ծառ բարի՝ որ
առնէ պտուղ չար, և ոչ դարձեալ
44 ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի։ Զի
իւրաքանչիւր ծառ ի պտղոյ իւրմէ
ճանաչի. զի ոչ եթէ ի փշոց քաղեն
թուզ, և ոչ ի մորենւոյ կթեն խաղող։
45 Մարդ բարի ի բարի գանձուց սրտի
իւրոյ բղխէ զբարի, և մարդ չար ի
չարէն բղխէ զչար. քանզի ի յաւե-
լուածոյ սրտի խօսի բերան նորա։
46 Զի՞ կոչէք զիս. Տէր, Տէր, և զոր
47 ասեմս ոչ առնէք։ Ամենայն որ գայ
առ իս և լսէ զբանս իմ և առնէ զնո-
48 սա, ցուցից ձեզ ում նման է։ Նման
է առն, որ շինիցէ տուն, որ փորեաց
և խորեաց և եդ հիմն ի վերայ վիմի.
ի յառնել հեղեղաց բաղխեաց գետ
զտունն, և ոչ կարաց շարժել զնա,
զի հաստատեալ էր հիմնն ի վերայ
49 վիմի։ Իսկ որ լսէ զբանս իմ և ոչ առնէ
նման է առն՝ որ շինիցէ տուն ի վերայ
հողոյ առանց հիման, զոր բաղխեաց
գետ, և վաղվաղակի անկաւ, և եղև
կործանումն տանն այնորիկ մեծ։

ԳԼՈՒԽ Է.

1 Եւ իբրև կատարեաց զամենայն
զբանս իւր ի լսելիս ժողովրդեանն,
2 եմուտ ի Կափառնայում։ Հարիւրա-
պետի ուրումն ծառայ չարաչար հի-
ւանդացեալ մերձ էր ի վախճանել,
3 որ էր նմա պատուական։ Իբրև լուաւ
զՅիսուսէ՝ առաքեաց զծերս Հրէից,
աղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ
4 զծառայն նորա։ Եւ նոքա եկեալ առ
Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ և ա-
սէին, թէ արժանի է որում զշնորհս
5 զայս առնես։ Զի սիրէ զազգս մեր,
և զժողովրդանոցն նա շինեաց մեզ։
6 Եւ Յիսուս գնաց ընդ նոսա։ Իբրև
ոչինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց
առ նա հարիւրապետն բարեկամս և
ասէ ցնա. Տէր, մի՛ ինչ աշխատ լինիր.
զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ
7 իմով մտանիցես. Վասն որոյ և ոչ
զանձն համարեցայ արժանի առ քեզ
գալոյ. այլ ասա բանիւ, և բժշկեսցի
8 մանուկս իմ։ Քանզի և ես այր մի

եմ կարգեալ ընդ իշխանութեամբ,
ունիմ ընդ ինև զինուորս, և ասեմ
սմա՝ երթ, և երթայ, և այլում՝ թէ
եկ, և գայ, և ծառայի իմում՝ թէ
9 արա՛ զայս, և առնէ։ Եւ իբրև լուաւ
զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ
առ ժողովուրդն, որ երթային զհետ
նորա՝ և ասէ. Ամէն ասեմ ձեզ, թէ
և ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս
10 գտի։ Եւ դարձան անդրէն պատգա-
մաւորքն ի տուն և գտին զծառայն
հիւանդ բժշկեալ։
11 Եւ եղև ի վաղիւն երթայր ի քաղաք
մի, որում անուն էր Նային. երթային
ընդ նմա և աշակերտքն նորա և ժո-
12 ղովուրդք բազում։ Իբրև մերձ եղև
ի դուռն քաղաքին, և ահա ելանէր
մեռեալ մի, որդի միամոր մօր իւրոյ,
և նա էր այրի, և ժողովուրդ բազում
13 քաղաքին էր ընդ նմա։ Իբրև ետես
զնա Տէր՝ գթացաւ ի նա և ասէ. Մի՛
14 լար։ Եւ մատուցեալ մերձեցաւ ի
դագաղն, և որք բարձեալն տանէին
զտեղի առին, և ասէ. Պատանի՛ դու,
15 քեզ ասեմ, արի՛։ Կանգնեցաւ և նըս-
տաւ մեռեալն և սկսաւ խօսել, և ետ

16 զնա ցմայր իւր։ Եւ ահ կալաւ զա-
մենեսին, և փառաւոր առնէին զԱս-
տուած և ասէին, թէ Մարգարէ ոմն
մեծ յարուցեալ է ի միջի մերում, և
թէ այց արար Աստուած ժողովրդեան
17 իւրում ի բարութիւն։ Եւ ել զրոյցս
այս ընդ ամենայն Հրէաստան վասն
նորա, և ընդ ամենայն կողմանս աշ-
խարհին։
18 Եւ պատմեցին Յովհաննու աշա-
կերտքն իւր վասն ամենայնի այսո-
19 րիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս
ոմանս յաշակերտացն իւրոց Յովհան-
նէս, առաքեաց առ Տէր և ասէ. Դո՞ւ
ես որ գալոցն ես, եթէ այլում ակն
20 կալցուք։ Եւ եկեալ արքն առ նա՝
ասեն. Յովհաննէս մկրտիչ առաքեաց
զմեզ առ քեզ և ասէ. դո՞ւ ես որ
գալոցն ես, եթէ այլում ակն կալ-
21 ցուք։ Եւ ի նմին ժամու բժշկեաց
զբազումս ի հիւանդութեանց և ի
հարուածոց և յայսոց չարաց, և կու-
րաց բազմաց շնորհեաց տեսանել։
22 Պատասխանի ետ նոցա և ասէ. Եր-
թա՛յք պատմեցէք Յովհաննու զոր
տեսէքդ և լուայք, զի կոյրք տեսա-

նեն, կաղք գնան, բորոտք սրբին,
խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղ-
23 քատք աւետարանին. Եւ երանի իցէ՝
24 որ ոչ գայթակղեսցի յիս: Եւ իբրև
գնացին հրեշտակքն Յովհաննու, ըս-
կսաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն
Յովհաննու. Զի՞նչ ելէք յանապատ
տեսանել. եղէգն շարժուն ի հողմոյ:
25 Այլ զի՞նչ ելէք տեսանել. այր ի հան-
դերձս փափկութեան զարդարեալ.
ահաւասիկ, որք ի հանդերձս երևելիս
և ի փափկութեան են՝ յարքունիս
26 են: Այլ զի՞նչ ելէք տեսանել. մար-
գարէ. այո, ասեմ ձեզ, առաւել ևս
27 քան զմարգարէ: Զի սա է՝ վասն
որոյ գրեալն է, թէ ահա առաքեմ
զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց,
որ յարդարեսցէ զճանապարհ քո
28 առաջի քո: Ամէն ասեմ ձեզ. մեծ ի
ծնունդս կանանց մարգարէ քան
զՅովհաննէս ոչ ոք է. բայց փոքրիկն
յարքայութեան Աստուծոյ մեծ է քան
29 զնա: Եւ ամենայն ժողովուրդն իբրև
լուաւ և մաքսաւորքն արդարացուցին
զԱստուած, զի մկրտեցան ի մկրտու-
30 թիւնն Յովհաննու. Իսկ փարիսեցիքն

և օրինականքն զխորհուրդն Աստուծոյ
անարգեցին յանձինս իւրեանց, զի
31 ոչ մկրտեցան ի նմանէ: Արդ ո՞ւմ
նմանեցուցից զմարդիկ ազգիս այսո-
32 րիկ, և ո՞ւմ իցեն նմանողք: Նման
են մանկտւոյ՝ որ ի հրապարակս
նստիցին, կարդայցեն զմիմեանս և
ասիցեն. փողս հարաք ձեզ՝ և ոչ կա-
33 քաւեցիք, ողբացաք՝ և ոչ լացիք: Եկն
Յովհաննէս Մկրտիչ՝ ոչ ուտէր և ոչ
ըմպէր, և ասէիք. դև գոյ ի նմա:
34 Եկն Որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ,
և ասէք. ահա այր կերող և արբեցող,
բարեկամ մաքսաւորաց և մեղաւո-
35 րաց: Եւ արդարացաւ իմաստութիւն
յորդւոց իւրոց:

36 **Ա**ղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն՝
զի կերիցէ հաց ընդ նմա. և մտեալ
37 ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ: Եւ
կին մի էր ի քաղաքի մեղաւոր. իբրև
գիտաց թէ բազմեալ է ի տան փա-
րիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ ազ-
38 նուի՝ Կայր յետոյ առ ոտս նորա,
լայր և արտասուօքն սկսաւ թանալ
զոտս նորա և հերով գլխոյ իւրոյ
ջնջէր, և համբուրէր զոտս նորա և

39 օծանէր կնոջն: Եւ տեսեալ փարի-
սեցւոյն՝ որ կոչեացն զնա, ասէ ընդ
միտս իւր. սա թէ մարգարէ ոք էր,
ապա գիտէր թէ ով և որպիսի ոք
կին մերձենայ ի սա, զի մեղաւոր է:
40 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա.
Սիմոն, ունիմ ինչ ասել քեզ: Եւ
նա ասէ. Ասա՛ վարդապետ: Եւ ասէ.
41 Երկու պարտապանք էին ուրումն
փոխատուի. մին պարտէր հինգ հա-
42 րիւր դահեկան, և միւսն յիսուն: Եւ
իբրև ոչ գոյր նոցա հատուցանել,
երկոցունց շնորհեաց: Արդ ասա՝ ով
43 առաւել սիրեսցէ զնա: Ասէ Սիմոն.
Ինձ այսպէս թուի՝ եթէ որում զբա-
զումն շնորհեաց: Եւ նա ասէ ցնա.
44 Ուղիղ դատեցար: Եւ դարձեալ ի
կինն կողմն, ասէ ցՍիմոն. Տեսանես
զայս կին՝ մտի ի տուն քո՝ ջուր
ոտից իմոց ոչ ետուր. իսկ սա արտա-
սուօք իւրովք եթաց զոտս իմ և
45 հերով իւրով ջնջեաց: Համբոյր մի
դու ոչ ետուր ինձ. սա աւասիկ յորմէ
հետէ մտեալ եմ ոչ դադարեաց ի
46 համբուրելոյ զոտս իմ: Իւղով զգլուխ
իմ ոչ օծեր. սա իւղով անուշիւ օծ:

47 Վասն որոյ, ասեմ քեզ, թողեալ լիցին
սմա մեղք իւր բազում, զի յոյժ
սիրեաց. զի որում շատ թողուցու՝
շատ սիրէ, և որում սակաւ՝ սակաւ:
48 Եւ ասէ ցնա. Թողեալ լիցին քեզ
59 մեղք քո: Եւ սկսան՝ որ բազմեալն
էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւր-
եանց. Ո՞վ է սա՝ որ և զմեղս թողու:
50 Եւ նա ասէ ցկինն. Հաւատք քո կե-
ցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն:

ԳԼՈՒԽ Ը.

1 Եւ եղև յետ այնորիկ և ինքն
շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս,
քարոզէր և աւետարանէր զարքայու-
թիւն Աստուծոյ, և երկոտասանքն ընդ
2 նմա, Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ
էին յայսոց չարաց և ի հիւանդու-
թեանց. Մարիամ՝ որ կոչէր Մագ-
դաղենացի, յորմէ եօթն դև ելեալ
3 էր, Եւ Յոհաննա կին Քուզայ՝ հա-
զարապետին Հերովդի, և Շուշան և
այլք բազումք, որք պաշտէին զնա
4 յընչից իւրեանց: Եւ ի ժողովել բա-

զումն ժողովրդոց և ըստ քաղաքայ
քաղաքացն եկելոց առ նա՝ ասէ ա-
5 ռակաւ. Ել սերմանացան սերմանել
զսերմանիս իւր. և ի սերմանելն իւ-
րում էր որ անկաւ առ ճանապարհաւ,
և եղև կոխան, և թռչունք երկնից
6 կերին զնա. Եւ այլն անկաւ յապա-
ռաժի, և ընդ բուսանելն չորացաւ,
7 առ ի չգոյէ հիւթոյ. Եւ այլն անկաւ
ի մէջ փշոց, և ընդ նմին բուսեալ
8 փշոցն՝ հեղձուցին զնա: Եւ այլն ան-
կաւ յերկիր բարի և պարարտ, և
բուսեալ՝ արար պտուղ հարիւրա-
պատիկ: Զայս իբրև խօսեցաւ, ասէ.
Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:
9 Հարցանէին զնա աշակերտքն, թէ
10 զի՞նչ իցէ առակն: Եւ նա ասէ. Ձեզ
տուեալ է գիտել զխորհուրդս արքա-
յութեան Աստուծոյ, բայց այլոցն ա-
ռակօք. զի տեսցեն՝ և մի՛ տեսցեն,
11 և լուիցեն՝ և մի՛ իմասցին: Բայց
առակն այս ինչ է: Սերմն բանն Աս-
12 տուծոյ է: Եւ որք առ ճանապարհաւն՝
այնոքիկ են, որք լսենն՝ և ապա գայ
սատանայ և հանէ զբանն ի սրտից
նոցա, զի մի՛ հաւատասցեն և ապ-

13 րեսցին: Եւ որք յապառաժին, որք
յորժամ՝ լսիցեն՝ խնդութեամբ ըն-
դունին զբանն, և արմատս ոչ ունի-
ցին. որք առ ժամանակ մի հաւատան,
և ի ժամանակի փորձութեան հե-
14 ռանան: Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝
նոքա են, որք իբրև լսեն զբանն, և
ի հոգս և ի մեծութիւն և ի ցանկու-
թիւն աշխարհիս զբաղեալ՝ հեղձնուն
15 և անպտուղ լինին: Իսկ որ յերկիրն
պարարտ, որոց բարւոք և զուարթա-
գին սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին
16 և տան պտուղ համբերութեամբ: Ոչ
ոք լուցանէ ճրագ և թաքուցանէ ընդ
կարասեաւ, կամ դնէ ընդ մահճօք,
այլ ի վերայ աշտանակի դնէ, զի որ
17 մտանեն զլոյսն տեսցեն: Զի՞ք ինչ
ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի, և ոչ գաղ-
տնի՝ որ ոչ ծանիցի և եկեսցէ ի յայտ:
Տեսէ՛ք այսուհետև զիա՞րդ լսէք. զի
որ գուցէ՝ տացի նմա, և որ ոչն
գուցէ, և զոր կարծէն թէ ունիցի՝
բարձցի ի նմանէ:
19 Եկին առ նա մայրն և եղբարք իւր,
և ոչ կարէին հասանել ի նա վասն
20 բազմութեանն: Ազդ եղև նմա և ա-

սեն. Մայր քո և եղբարք քո կան
արտաքոյ և կամին զքեզ տեսանել։
21 Եւ ասէ ցնոսա. Մայր իմ և եղբարք
իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ
լսեն և առնեն։
22 Եւ եղև ի միում աւուրց ինքն ել
ի նաւ և աշակերտքն նորա, և ասէ
ցնոսա. Եկա՛յք անցցո՛ւք յայնկոյս
23 ծովակիս. և գնացին։ Եւ մինչդեռ
նաւէին՝ ի քուն եմուտ. և էջ մրրիկ
հողմոյ ի ծովակն՝ և ուռնոյր, և տագ-
24 նապէին։ Մատուցեալ զարթուցին
զնա և ասեն. Վարդապետ վարդա-
պետ, կորնչիմք աւասիկ։ Եւ նա յա-
րուցեալ սաստեաց հողմոյն և խռո-
վութեան ջրոցն. և հանդարտեցին,
25 և եղև խաղաղութիւն։ Ասէ ցնոսա.
Ո՞ւր են հաւատք ձեր։ Եւ զահի հա-
րեալ զարմացան, և ասէին ցմիմեանս.
Ո՞վ արդեօք իցէ սա, զի և հողմոց
և ջրոց հրաման տայ, և հնազանդին
սմա։
26 Եւ նաւեցին իջին յաշխարհն Գեր-
գեսացւոց, որ է յայնկոյս հանդէպ
27 Գալիլեայ։ Եւ ընդ ելանելն նորա ի
ցամաք պատահեաց այր մի ի քա-

ղաքէն՝ յորում էին դևք, և բազում
ժամանակս չէր հանդերձ զգեցեալ,
և ո՛չ ի տան բնակեալ, այլ ի գերեզ-
28 մանս։ Եւ տեսեալ զՅիսուս, աղաղա-
կեաց և անկաւ առաջի նորա, և ասէ
մեծաձայն. Զի՞ կայ իմ և քո, Յիսուս
Որդի Աստուծոյ բարձրելոյ, աղաչեմ
29 զքեզ՝ մի՛ տանջեր զիս։ Քանզի հրա-
ման տայր այսոյն պղծոյ՝ ելանել ի
մարդոյ անտի. զի բազում ժամա-
նակս յափշտակեալ էր զնա, և կապէր
ի շղթայս և պահէր յերկաթս, և խզէր
զկապանսն և վարէր ի դիւէն յանա-
30 պատս։ Եհարց ցնա Յիսուս և ասէ.
Զի՞նչ անուն է քեզ։ Եւ նա ասէ.
Լեգէո՛ն. զի դևք բազումք մտեալ
31 էին ի նա։ Եւ աղաչէին զնա՝ զի մի՛
հրաման տացէ նոցա երթալ յան-
32 դունդս։ Եւ էր անդ երամակ մի
խոզից բազմաց արօտական ի լերինն,
և աղաչեցին զնա՝ զի հրաման տացէ
նոցա մտանել ի նոսա. և հրամայեաց
33 նոցա։ Եւ ելեալ դևքն յառնէն՝ մտին
ի խոզեանն, և դիմեաց երամակն ի
գահէ անտի ի ծովակն և հեղձաւ։
34 Իբրև տեսին խոզարածքն զիրսն որ

եղեն՝ փախեան և պատմեցին ի քա-
35 ղաքին յագարակսն։ Եւ ելին
տեսանել զգործսն, և եկին առ Յի-
սուս, և գտին զայրն՝ ուստի դեւքն
ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ
նստէր առ ոտսն Յիսուսի, և երկեան։
36 Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝
37 թէ զիարդ փրկեցաւ դիւահարն։ Եւ
աղաչէր զնա ամենայն բազմութիւնն
շուրջ զկողմամբքն Գերգեսացւոց՝
գնալ ի սահմանացն նոցա, քանզի
ահիւ մեծաւ տագնապէին. և նա
38 մտեալ ի նաւ, դարձաւ անդրէն։ Ա-
ղաչէր զնա այրն, ուստի դեւքն ելեալ
էին՝ շրջել ընդ նմա. արձակեաց զնա
39 և ասէ. Դարձ ի տուն քո, և պատ-
մեա զոր միանգամ՝ արար քեզ Ա-
տուած։ Գնաց ի քաղաքն՝ և քարոզէր
զոր ինչ արար նմա Յիսուս։
40 Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս,
ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի
41 ամենեքեան ակն ունէին նմա։ Եւ
ահա եկն այր մի՝ որում անուն էր
Յայրոս, և նա էր իշխան ժողովր-
դեանն. անկեալ առ ոտսն Յիսուսի՝
աղաչէր զնա մտանել ի տուն նորա,

42 Զի դուստր միամօր էր նորա՝ ամաց
իբրև երկոտասանից, և էր մերձ ի
մահ։ Եւ ընդ երթալն նորա՝ ժողո-
43 վուրդքն նեղէին զնա։ Եւ կին մի էր
ի տեռատեսութեան արեան յամաց
երկոտասանից, որում ոչ էր լեալ
44 հնար յումեքէ բժշկել, Մատուցեալ
յետոյ մերձեցաւ ի քղանցս հանդերձի
նորա, և նոյնժամայն եկաց բղխումն
45 արեան նորա։ Եւ ասէ Յիսուս. Ո՞վ է
որ մերձեցաւն յիս։ Իբրև ամենեքեան
ուրանային, ասէ Պետրոս և որ ընդ
նմա էին. Վարդապետ, ժողովուրդքդ
46 անդէն և նեղեն զքեզ։ Եւ ասէ Յի-
սուս. Ոմն մերձեցաւ յիս, քանզի
գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն։
47 Իբրև ետես կինն՝ թէ ոչ ծածկեցաւ
ի նմանէ, եկն դողալով և անկաւ
առաջի նորա, թէ վասն որոյ իրաց
մերձեցաւ ի նա՝ պատմեաց առաջի
ամենայն ժողովրդեանն, և թէ որպէս
48 բժշկեցաւ առժամայն։ Եւ նա ասէ
ցնա. Քաջալերեաց, դուստր, հաւատք
քո կեցուցին զքեզ, երթ ի խաղա-
49 ղութիւն։ Եւ մինչդեռ նա խօսէր,
գայ ոմն ի տանէ ժողովրդապետին

և ասէ ցնա. Մեռաւ դուստրն քո,
50 մի ինչ աշխատ առներ զդա: Իսկ
Յիսուս իբրև լուաւ, պատասխանի
ետ նմա և ասէ. Մի երկնչիր, միայն
51 հաւատա՛՝ և կեցցէ: Եւ մտեալ ի տունն՝
ո՛չ զոք եթող մտանել, բայց միայն
զՊետրոս և զՅակովբոս և զՅովհան-
նէս և զհայր մանկանն և զմայր նորա:
52 Լային ամենեքեան և կոծէին զնա.
և նա ասէ. Մի լայք, զի չէ մեռեալ,
53 այլ ննջէ: Եւ նոքա ծաղր առնէին
54 զնա, զի գիտէին թէ մեռաւ: Եւ նորա
55 հանեալ զամենեսին արտաքս՝ կալաւ
զձեռանէ նորա, բարբառեցաւ և ասէ.
56 Արի՛ կա՛ց, մանո՛ւկ դու: Եւ դարձաւ
ոգի նորա, և կանգնեցաւ վաղվաղակի,
57 և հրամայեաց տալ նմա ուտել: Եւ
զարմացան ծնօղքն նորա. և նա
պատուիրէր՝ մի ումեք ասել որ ինչ
եղեն:

ԳԼՈՒԽ Թ.

1 Եւ կոչեցեալ զերկոտասան առա-
քեալսն՝ ետ նոցա զօրութիւն և իշ-

խանութիւն ի վերայ ամենայն դիւաց,
2 և բժշկել զհիւանդութիւնս: Եւ առա-
քեաց զնոսա քարոզել զարքայու-
թիւնն Աստուծոյ և բժշկել զախտա-
3 ժէտս: Եւ ասէ ցնոսա. Մի ինչ բառ-
նայք ի ճանապարհ, մի գաւազան և
մի մախաղ, մի հաց և մի արծաթ,
4 մի երկուս հանդերձս ունիցիք: Եւ
յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք
5 և անտի գնայցէք: Եւ որք ոչ ընդու-
նիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի
քաղաքէն յայնմանէ՝ զփոշի ոտից
ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն
6 նոցա: Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս
և ընդ գեօղս, աւետարանէին և բժըշ-
կէին ընդ ամենայն տեղիս:
7 Լուաւ Հերովդէս չորրորդապետ
զգործսն ամենայն, և զարմանայր
8 վասն ասելոյն յոմանց, եթէ Յովհան-
նէս յարեաւ ի մեռելոց, և յոմանց՝
թէ Եղիա յայտնեցաւ, և յայլոց՝ թէ
մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ:
9 Ասէ Հերովդէս. ԶՅովհաննէս ես
գլխատեցի. իսկ սա ո՞վ իցէ, զորմէ
այսպիսի իրս լսեմ. և խնդրէր տե-
սանել զնա:

10 Դարձան առաքեալքն և պատմեցին
նմա զամենայն՝ զոր արարին։ Եւ
առեալ զնոսա խուսեաց առանձինն
ի տեղի անապատ քաղաքի միում,
11 որում անուն էր Բեթսայիդա։ Եւ
ժողովուրդքն իբրև գիտացին, գնացին
զհետ նորա. և ընկալեալ զնոսա՝
խօսէր ընդ նոսա վասն արքայութեան
Աստուծոյ, և որոց պէտք էին բժշ-
12 կութեան բժշկէր։ Եւ օրն սկսաւ
տարաժամիլ. մատեան երկոտասանքն
և ասեն ցնա. Արձակեա զժողովուրդ-
սդ, զի երթեալ շուրջ ի գեօղսն և
յագարակս հանգիցեն և գտցեն կե-
րակուր, զի աստ յանապատի տեղւոջ
13 եմք։ Ասէ ցնոսա. Դուք տուք դոցա
ուտել։ Եւ նոքա ասեն. Ո՛չ գոյ մեր
աւելի քան զհինգ նկանակ և զեր-
կուս ձկունս, բայց եթէ երթիցուք
գնեսցուք բաւական ժողովրդեանդ
14 կերակուր։ Քանզի էին արք իբրև
հինգ հազար։ Ասէ ցաշակերտսն.
Բազմեցուցէք զդոսա դասս դասս,
15 յիսուն յիսուն։ Եւ արարին այնպէս
16 և բազմեցուցին զամենեսեան։ Եւ
առեալ զհինգ նկանակսն և զերկուս

ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց
և եբեկ, և տայր ցաշակերտսն ար-
17 կանել ժողովրդեանն։ Կերան և յագե-
ցան ամենեքեան, և բարձին զնշխարս
կոտորոցն երկոտասան սակառի։
18 Եւ եղև ի կալն նորա յաղօթս ա-
ռանձինն էին ընդ նմա և աշակերտքն
նորա, եհարց զնոսա և ասէ. Զո՞ ոք
ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ։
19 Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն.
ԶՅովհաննէս մկրտիչ, և այլք՝ զԵղիա,
իսկ այլք՝ թէ Մարգարէ ոք յառաջ-
20 նոցն յարեաւ։ Ասէ ցնոսա. Իսկ դուք
զո՞վ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պա-
տասխանի ետ Պետրոս և ասէ. ԶՔրիս-
21 տոսն Աստուծոյ։ Նա սաստեաց ի
նոսա և պատուիրեաց մի ումեք ասել
23 զայն. Եւ ասէ, թէ պարտ է Որդւոյ
մարդոյ բազումս չարչարել և անար-
գել ի քահանայապետից և ի ծերոց
և ի դպրաց, և սպանանել և յերիր
աւուր յառնել։
23 Եւ ասէր առ ամենեսին. Եթէ ոք
կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն
և առցէ զխաչ իւր հանապազ, և ե-
24 կեսցէ զհետ իմ։ Զի որ կամիցի

զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ
զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն
25 իմ՝ կեցուսցէ զնա։ Զինչ օգուտ է
մարդոյ՝ եթէ զաշխարհ շահեսցի, և
զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի։
26 Զի որ ամօթ համարեսցի զիս և
զբանս իմ, զնա և Որդի մարդոյ յա-
մօթ արասցէ՝ յորժամ գայցէ փա-
ռօք իւրովք և Հօր և հրեշտակաց
27 սրբոց։ Բայց արդարև ասեմ ձեզ,
եթէ են ոմանք ի դոցանէ որ այդր
կան, որք մի ճաշակեսցեն զմահ,
մինչև տեսցեն զարքայութիւնն Ա-
տուծոյ։
28 Եւ եղև յետ այսց բանից իբրև
աւուրք ութ, առեալ զՊետրոս և
զՅակովբոս և զՅովհաննէս՝ ել ի
29 լեառն կալ յաղօթս։ Եւ ի կալն նմա
յաղօթս եղև տեսիլ երեսաց նորա
այլակերպ և փոխեցաւ հանդերձ նորա
30 և եղև սպիտակ փայլուն։ Եւ ահա
արք երկու խօսէին ընդ նմա, որ էին
31 Մովսէս և Եղիա, Երևեալ փառօք,
և ասէին զելիցն նորա, զոր կատա-
32 րելոց էր յԵրուսաղէմ։ Իսկ Պետրոս
և որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք

ի քնոյ, զարթեան տեսին զփառսն
նորա և զերկուս արսն, որք կային
33 առ նմա։ Եւ եղև ի մեկնելն նոցա
ի նմանէ ասէ Պետրոս ցՅիսուս.
Վա՛րդապետ, բարւոք է մեզ աստ
լինել, և արասցուք երիս տաղաւարս,
մի քեզ և մի Մովսիսի և մի Եղիայի.
34 և ո՛չ գիտէր զինչ խօսէր։ Եւ իբրև
զայս ասաց՝ եկն ամպ և հովանի եղև
ի վերայ նոցա. և երկեան ի մտանելն
35 նոցա ընդ ամպովն։ Ձայն եղև յամ-
պոյն և ասէ. Դա՛ է Որդի իմ ընտ-
36 րեալ, դմա լուարո՛ւք։ Եւ ընդ լինել
բարբառոյն գտաւ Յիսուս միայն։
Եւ ինքեանք լռեցին և ո՛չ ումեք
պատմեցին յաւուրսն յայնոսիկ և
ոչինչ յորոց տեսինն։
37 Եւ եղև ի վաղիւն՝ մինչ իջանէին
նոքա ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև
38 նմա ժողովուրդ բազում։ Եւ ահա
այր մի ի ժողովրդենէ անտի աղա-
ղակեաց և ասէ. Վա՛րդապետ, աղա-
չեմ ըզքեզ, հայեա՛ց յորդի իմ, զի
39 միամօր է ինձ, Եւ ահա այս հարկանի
ի նմա, և յանկարծ գոչէ, և զարկու-
ցանէ և թաւալեցուցանէ զնա և փըր-

փրեցուցանէ, և հազիւ մեկնի ի նմանէ՝
40 խորտակեալ զնա: Եւ աղաչեցի զա-
շակերտսն քո զի հանցեն զնա, և ո՛չ
41 կարացին: Պատասխանի ետ Յիսուս
և ասէ. Ո՛վ ազգ անհաւատ և թիւր,
մինչև յե՞րբ եղեց ընդ ձեզ և անսայցեմ
42 ձեզ. մատո՛ այսր զորդին քո: Եւ
մինչդեռ մատչէր՝ զարկոյց զնա դեւն
43 և շարժեաց: Սաստեաց Յիսուս այսոյն
պղծոյ, և բժշկեաց զմանուկն և ետ
44 զնա ցհայր իւր: Եւ զարմանային
ամենեքեան ի վերայ մեծամեծացն
Աստուծոյ: Եւ ի զարմանալն ամենե-
ցուն ի վերայ ամենայնի զոր առնէր,
ասէ ցաշակերտսն իւր. Դի՛ք դուք
ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի
Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս
45 մարդկան: Եւ նոքա ո՛չ գիտէին
զբանն, և էր ծածկեալ ի նոցանէ՝ զի
մի՛ գիտասցեն, և երկնչէին հարցանել
զնա վասն բանին այնորիկ:
46 Եմուտ խորհուրդ ի նոսա, թէ ո՞
47 արդեօք մեծ իցէ ի նոցանէ: Յիսուս
իբրև ծանեաւ զխորհուրդս սրտից
նոցա, ա՛ռ մանուկ մի՝ կացոյց ի մէջ
48 նոցա առ իւր, Եւ ասէ ցնոսա. Որ

ոք ընկալցի զմանուկս զայս յանուն
իմ՝ զիս ընդունի. և որ զիս ընդու-
նիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի որ
փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա
49 եղիցի մեծ: Պատասխանի ետ Յով-
հաննէս և ասէ. Վա՛րդապետ, տեսաք
զոմն որ յանուն քո դևս հանէր, և
արգելաք զնա, զի ո՛չ շրջի ընդ մեզ:
50 Ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ արգելուք
զնա. զի որ ոչն է ձեր թշնամի՝ ի
ձեր կողմն է:
51 Եւ եղև ի կատարել աւուրց վերա-
նալոյ նորա՝ և ինքն զերեսս հաս-
52 տատեաց երթալ յԵրուսաղէմ: Եւ
առաքեաց հրեշտակս առաջի երեսաց
իւրոց: Եւ իբրև չոգան՝ մտին ի գեօղ
մի Սամարացւոց, պատրաստել ինչ
53 նմա. Եւ ո՛չ ընկալան զնա, զի դէմ
եդեալ էր նորա երթալ յԵրուսաղէմ:
54 Իբրև տեսին աշակերտքն Յակովբոս
և Յովհաննէս, ասեն. Տէ՛ր, կամի՞ս
զի ասասցուք, և իջցէ հուր յերկնից
55 և սատակեսցէ զնոսա: Դարձաւ սաս-
տեաց ի նոսա և ասէ. Ո՛չ գիտէք՝
56 որոյ հոգւոյ էք դուք. Զի Որդի մար-
դոյ ո՛չ եկն զոգիս մարդկան կորու-

սանել՝ այլ կեցուցանել: Եւ գնացին
յայլ գեօղ:
57 Եւ մինչդեռ երթային նոքա ի ճա-
նապարհի՝ ասէ ոմն ցնա. Եկից զկնի
58 քո՝ յոր վայր և երթիցես: Ասէ ցնա
Յիսուս. Աղուեսուց որջք գոն և
թռչնոց երկնից դադարք, և Որդւոյ
մարդոյ ո՛չ գոյ ուր դիցէ զգլուխ:
59 Ասէ ցմիւս ևս. Ե՛կ զկնի իմ: Եւ նա
ասէ. Տէր, հրաման տուր ինձ երթալ
60 նախ թաղել զհայր իմ: Ասէ ցնա
Յիսուս. Թո՛ղ զմեռեալսն թաղել
զմեռեալս իւրեանց, և դու երթ և
պատմեա զարքայութիւնն Աստուծոյ:
61 Ասէ և այլ ոմն. Եկից զկնի քո, Տէր,
բայց նախ հրաման տուր ինձ հրա-
62 ժարել ի տանէ իմմէ: Ասէ ցնա Յի-
սուս. Ոչ ո՛ք արկանէ զձեռն զմաճով
և հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ
արքայութեան Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Ժ.

1 Յետ այսորիկ երևեցոյց Տէր և այլս
եօթանասուն և երկուս, և առաքեաց

զնոսա երկուս երկուս առաջի իւր յա-
մենայն քաղաքս և ի տեղիս՝ ուր ինքն
2 երթալոց էր: Եւ ասէ ցնոսա. Հունձք
բազումք են և մշակք սակաւ. արդ
աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ
3 մշակս ի հունձս իւր: Երթա՛յք, ահա
առաքեմ զձեզ իբրև զգառինս ի մէջ
4 գայլոց: Մի՛ բառնայք քսակ, մի՛ մա-
խաղ, մի՛ կօշիկս. և ի ճանապարհի
5 ումեք ողջոյն մի՛ տայցէք: Յոր տուն
մտանիցէք, նախ ասասջիք, Թէ ողջոյն
6 տանս այսմիկ: Եւ եթէ իցէ անդ
որդի ողջունի՝ հանգիցէ ի վերայ
նորա ողջոյնն ձեր. ապա թէ ոչ՝ ի
7 ձեզ դարձցի: Եւ ի նմին տան ա-
գանիջիք, ուտիջիք և ըմպիջիք ի
նոցանէ. զի արժանի է մշակն վարձու
իւրոյ. մի՛ փոխիցիք տանէ ի տուն:
8 Յոր քաղաք մտանիցէք և ընդունիցին
զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն
9 ձեր. Եւ բժշկեսջիք որ ի նմա հիւանդք
իցեն, և ասասջիք նոցա. Մերձեալ է
ի վերայ ձեր արքայութիւն Աստու-
10 ծոյ: Իսկ յոր քաղաք մտանիցէք՝ և
ոչ ընդունիցին զձեզ, իբրև ելանիցէք
11 ի հրապարակս նորա, ասասջիք. Եւ

զփոշիս, որ կոււեալ է ի քաղաքէ
ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք ի
ձեզ. բայց զայս գիտասջիք, զի մեր-
ձեալ է արքայութիւն Աստուծոյ։
12 Ասեմ ձեզ, զի Սոդոմացւոց ընդար-
ձակագոյն լինի յաւուրն յայնմիկ՝
13 քան քաղաքին այնմիկ։ Վա՜յ քեզ,
Քորազին. վա՜յ քեզ, Բեթսայիդա. զի
եթէ ի Տիւրոս և ի Սիդոն եղեալ
էին զօրութիւնքն՝ որ եղեն ի ձեզ,
վաղուց ես արդեօք ի խորգ և ի մոխիր
14 նստեալ ապաշխարեալ էր։ Բայց Տիւ-
րոսի և Սիդոնի ընդարձակագոյն
15 լիցի ի դատաստանի քան ձեզ։ Եւ
դու, Կափառնայում, որ մինչև յեր-
կինս բարձրացեալ ես, մինչև ի դժոխս
16 իջցես։ Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ
զձեզ անարգէ՝ զիս անարգէ. և որ
զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ.
և որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ, որ զիս
առաքեաց։
17 Դարձան եօթանասունն և երկուքն
խնդութեամբ և ասեն. Տէր, և դևք
18 հնազանդին մեզ յանուն քո։ Եւ ասէ
ցնոսա. Տեսանէի զսատանայ անկեալ
19 յերկնից իբրև զփայլակն։ Ահա ետու

ձեզ իշխանութիւն կոխել զօձս և
զկարիճս, և զամենայն զօրութիւն
թշնամւոյն, և ձեզ ոչինչ մեղանչի-
20 ցէ։ Բայց ընդ այն մի՛ խնդայք՝ թէ
այսք հնազանդին ձեզ, այլ խնդացէք՝
զի անուանք ձեր գրեալ են յերկինս։
21 Ի նմին ժամու ցնծայր Յիսուս
Հոգւովն սրբով և ասէ. Գոհանամ
զքէն, Հա՛յր, Տէր երկնից և երկրի,
զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի
գիտնոց, և յայտնեցեր զայս տղայոց.
այո՛, Հա՛յր, զի այսպէս հաճոյ եղև
22 առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ
ի Հօրէ իմմէ, և ո՛չ ոք գիտէ թէ
ո՛վ է Որդի՝ եթէ ոչ Հայր, և ո՛ է Հայր՝
եթէ ոչ Որդի, և ում կամիցի Որդին
23 յայտնել։ Եւ դարձեալ առանձինն առ
աշակերտսն ասէ. Երանի աչացն՝ որ
24 տեսանեն զոր տեսանէքդ։ Ասեմ ձեզ,
զի բազում մարգարէք և թագաւորք
կամեցան տեսանել զոր դուքդ տե-
սանէք՝ և ո՛չ տեսին, և լսել զոր լսէքդ՝
և ո՛չ լուան։
25 Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝
փորձէր զնա և ասէր. Վարդապետ,
զինչ գործեցից զի զկեանս յաւի-

26 տենականս ժառանգեցից։ Եւ նա ասէ
ցնա. Յօրէնս զի՞նչ գրեալ է, ո՞ր-
27 պէս ընթեռնուս։ Նա պատասխա-
նի ետ և ասէ. Սիրեսցես զՏէր
Աստուած քո յամենայն սրտէ
քումմէ և յամենայն անձնէ քումմէ
և յամենայն զօրութենէ քումմէ և
յամենայն մտաց քոց, և զընկեր քո
28 իբրև զանձն քո։ Եւ ասէ ցնա. Ուղիղ
ետուր զպատասխանիդ. զայդ արա,
29 և կեցցես։ Նա իբրև կամեցաւ զանձն
արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս. Եւ
30 ո՞վ է իմ ընկեր։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ. Այր մի իջանէր
յԵրուսաղեմէ յԵրիքով, և անկաւ ի
ձեռս աւազակաց, որք մերկացուցին
զնա և վէրս ի վերայ եդին, թողին
31 կիսամահ և գնացին։ Դէպ եղև քա-
հանայի միոջ իջանել ընդ նոյն ճա-
նապարհ, և տեսեալ զնա՝ զանց արար։
32 Նոյնպէս և Ղևտացի մի եկեալ ընդ
նոյն տեղի, ետես և զանց արար։
33 Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝
եկն ընդ նոյն առ նովաւ և տեսեալ
34 զնա գթացեալ, Եւ մատուցեալ պա-
տեաց զվէրս նորա՝ արկեալ ի վերայ

ձէթ և գինի, և եդեալ ի վերայ գրաս-
տու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի
35 և զարմանեաց զնա։ Եւ ի վաղիւ-
անդր, իբրև ելանէր անտի, հանեալ
ետ ցպանդոկապետն երկուս դահե-
կանս և ասէ. Դարման տար դմա,
և զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւս-
անգամ գալստեան իմում հատուցից
36 քեզ։ Արդ՝ ո՞ յերեցունց ի նոցանէ
թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն
37 ի ձեռս աւազակացն։ Եւ նա ասէ.
Որ արար զողորմութիւնն ի վերայ
նորա։ Ասէ ցնա Յիսուս. Ե՛րթ և դու
արա՛ նոյնպէս։
38 Եւ եղև ի գնալն նոցա և ինքն
եմուտ ի գեօղ մի, և կին ոմն անուն
Մարթա ընկալաւ զնա ի տան իւրում։
39 Եւ նորա էր քոյր մի, որում անուն
էր Մարիամ, որ և եկն նստաւ առ
40 ոտսն Տեառն և լսէր զբանս նորա. Եւ
Մարթա զբաղեալ էր ի բազում սպա-
սու. եկն եկաց առ նմա և ասէ. Տէ՛ր,
ոչի՞նչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ
միայն եթող զիս ի սպասու. արդ
41 ասա՛ դմա զի օգնեսցէ ինձ։ Պատաս-
խանի ետ նմա Յիսուս և ասէ. Մար-

թա՛ Մարթա, դու հոգաս և զբաղում
42 իւիք զբաղեալ ես, Բայց աստ սակաւ
ինչ պիտոյ է. Մարիամ մասն բարի
ընտրեաց, որ ոչ բարձցի ի նմանէ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Եւ եղև ի տեղւոջ ուրեք կալ յա-
ղօթս, և իբրև դադարեաց՝ ասէ ցնա
ոմն յաշակերտացն իւրոց. Տէ՛ր, ուսո՛
մեզ յաղօթս կալ, որպէս և Յովհան-
2 նէս ուսոյց աշակերտաց իւրոց։ Ասէ
ցնոսա. Յորժամ կայցէք յաղօթս,
ասասջիք. Հա՛յր մեր, սուրբ եղիցի
անուն քո. եկեսցէ արքայութիւն քո.
3 Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ
4 զօրըստօրէ՛ն. Եւ թո՛ղ մեզ զմեղս մեր,
զի և մեք թողումք ամենայնի՝ որ
պարտիցի մեզ. և մի՛ տանիր զմեզ ի
5 փորձութիւն։ Եւ ասէ ցնոսա. ո՞վ է
ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, և եր-
թայցէ առ նա ի մէջ գիշերի, և ասիցէ
ցնա. Բարեկա՛մ, տո՛ւր ինձ փոխ երիս
6 նկանակս, Զի բարեկամ իմ եկն առ
իս յուղւոյ և ոչինչ ունիմ դնել ա-

7 ռաջի նորա։ Եւ նա ի ներքուստ տայցէ
պատասխանի և ասիցէ. Մի՛ աշխատ
առներ զիս. զի դուռքդ փակեալ են,
և մանկունքս ընդ ինև կան յանկողնի.
8 ոչ կարեմ յառնել և տալ քեզ։ Ասեմ
ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա
վասն բարեկամութեանն, սակայն
վասն ժտութեանն յարուցեալ տայցէ
9 նմա՝ զինչ և պիտոյ իցէ։ Եւ ես ա-
սեմ ձեզ. Խնդրեցէ՛ք՝ և տացի ձեզ,
հայցեցէ՛ք՝ և գտջիք, բախեցէ՛ք՝ և
10 բացցի ձեզ։ Զի ամենայն որ խնդրէ՝
առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ
11 բախէ՝ բացցի նմա։ Ո՞ ոք ի ձէնջ
հայր խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ
12 փոխանակ ձկան օձ տայցէ նմա։ Եւ
կամ խնդրիցէ ձու, միթէ կարի՞ճ
13 տայցէ նմա։ Իսկ եթէ դուք որ չարքդ
էք գիտէք պարգևս բարիս տալ որդւոց
ձերոց, որչա՞փ ևս առաւել Հայրն ձեր
յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ
խնդրեն ի նմանէ։
14 Եւ հանէր դև մի համր. և եղև յե-
լանել դիւին խօսեցաւ համրն, և
զարմացան ամենայն ժողովուրդքն։
15 Եւ ոմանք ի նոցանէ ասեն. Բէեղզե-

բուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա
16 զդևս։ Եւ այլք փորձէին և նշան
17 յերկնից խնդրէին ի նմանէ։ Իսկ նորա
գիտացեալ զխորհուրդս նոցա՝ ասէ
ցնոսա. Ամենայն թագաւորութիւն
բաժանեալ յանձն՝ աւերի, և տուն
18 բաժանեալ յանձն՝ կործանի։ Ապա
եթէ և սատանայ բաժանեցաւ յանձ-
նէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն
նորա. զի ասէք զինէն՝ եթէ բէեղ-
զեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ
19 դա զդևս։ Եթէ ես Բէեղզեբուղաւ
հանեմ զդևս, որդիքն ձեր իւ հա-
նիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին
20 ձեր դատաւորք։ Իսկ եթէ մատամբ
Աստուծոյ հանեմ զդևս, ապա հա-
սեալ է ի վերայ ձեր արքայութիւն
21 Աստուծոյ։ Յորժամ հզօր վառեալ
պահիցէ ցտուն իւր, ի խաղաղութեան
22 են ինչք նորա։ Բայց եթէ հզօրագոյն
քան զնա ի վերայ եկեալ յաղթեսցէ
նմա, զսպառազինութիւնն նորա հա-
նէ՝ յոր յուսացեալ էր, և զաւար
23 նորա բաշխեսցէ։ Որ ոչ է ընդ իս՝
հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ
24 ընդ իս՝ ցրուէ։ Յորժամ այսն պիղծ

ելանիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին
տեղիս, խնդրէ հանգիստ, և իբրև ոչ
գտանէ՝ ասէ. Դարձայց անդրէն ի
25 տուն իմ ուստի ելի։ Եւ գայ գտանէ
26 մաքրեալ և զարդարեալ։ Յայնժամ
երթայ և առնու եօթն այլ այսս չար
ևս քան զինքն, և մտանէ բնակէ
անդ, և լինի յետինն մարդոյն այնո-
րիկ չար քան զառաջինն։
27 Եւ եղև մինչդեռ խօսէր զայս՝ ձայն
եբարձ կին մի ի ժողովրդենէ անտի
և ասէ. Երանի է որովայնին՝ որ
կրեաց զքեզ, և ստեանցն որ դիե-
28 ցուցին զքեզ։ Եւ նա ասէ. Նա՛ երանի
այնոցիկ է, որ լսեն զբանն Աստու-
ծոյ և պահիցեն։
29 Եւ ի դիզանել ի վերայ նորա ժո-
ղովրդոցն սկսաւ ասել. Ազգս այս
ազգ չար է. նշան խնդրէ, և նշան
յերկնից ոչ տացի սմա՝ բայց նշանն
30 Յովնանու։ Զի որպէս եղև Յովնան
նշան Նինուէացւոց, նոյնպէս եղիցի
31 և Որդի մարդոյ ազգիս այսմիկ։ Դշ-
խոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի
ընդ արս ազգիս այսորիկ և դատա-
պարտեսցէ զսոսա, զի եկն ի ծագաց

երկրէ լսել զիմաստութիւնն Սողոմո-
նի, և ահա առաւել քան զՍողոմոն
32 է աստ։ Արք Նինուէացիք յարիցեն
ի դատաստանի ընդ ազգիս ընդ այ-
միկ և դատապարտեսցեն զսա, զի
ապաշխարեցին ի քարոզութեանն
Յովնանու, և ահա առաւել քան
զՅովնան է աստ։
33 Ո՛չ ոք լուցեալ ճրագ՝ դնէ ի
թաքստեան, և ոչ ընդ գրուանաւ,
այլ ի վերայ աշտանակի, զի որ մտա-
34 նեն՝ լոյս տեսանիցեն։ Ճրագ մարմնոյ
ակն է. յորժամ ակնն առատ է, ա-
մենայն մարմինն լուսաւոր եղիցի.
և երբ ակն չար է, և մարմինն խա-
35 ւարին եղիցի։ Արդ զգո՛յշ լեր, գուցէ
36 լոյսդ որ ի քեզ է խաւար իցէ։ Եթէ
մարմինդ քո ամենայն լուսաւոր է և
չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի
լուսաւոր ամենայն, որպէս յորժամ
ճրագն նշուլիւք լուսաւորեսցէ զքեզ։
37 Եւ մինչդեռ խօսէր զայս, աղաչէր
զնա ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ
առ նմա. և նա մտեալ բազմեցաւ։
38 Իբրև ետես փարիսեցին՝ զարմացաւ,
զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան

39 զճաշ։ Ասէ ցնա Տէր. Այժմ դուք
փարիսեցիք զարտաքին բաժակին և
զպնակին սրբէք. և ներքինն ձեր լի
է յափշտակութեամբ և չարութեամբ։
40 Անմիտք, ո՞չ ապաքէն որ զարտաքինն
41 արար և զներքինն նոյն արար։ Բայց
ա՛ղէ զարժանն իսկ տուք ողորմու-
թիւն, և ահա ամենայն սուրբ է ձեր։
42 Այլ վա՜յ ձեր փարիսեցւոց, զի տա-
սանորդէք զանանուխ և զփեգենա՝
և զամենայն բանջար, և անցանէք
զիրաւամբք և զսիրովն Աստուծոյ.
զայս արժան էր առնել՝ և զայնու ոչ
43 անցանել։ Վա՜յ ձեզ փարիսեցւոց, զի
սիրէք զբարձրագահս ի ժողովուրդս
44 և զողջոյնս ի հրապարակս։ Վա՜յ
ձեզ, զի էք դուք իբրև զգերեզմանս
անյայտս. և մարդիկ գնան ի վերայ
45 և ոչ գիտեն։ Պատասխանի ետ ոմն
յօրինականացն և ասէ ցնա. Վա՜ր-
դապետ, զայդ բանս ասելով և զմեզ
46 թշնամանես։ Եւ նա ասէ. Եւ ձեզ
վա՜յ, օրինականացդ, զի բառնայք
մարդկան բեռինս դժուարակիրս, և
դուք մատամբ միով ի բեռինսն ոչ
47 մերձենայք։ Վա՜յ ձեզ, զի շինէք զշի-

րիմս մարգարէիցն, և հարքն ձեր
48 սպանին զնոսա։ Ապա ուրեմն վկայէք,
եթէ կամակիցք էք գործոց հարցն
ձերոց. զի նոքա կոտորեցին զնոսա,
և դուք զգերեզմանս նոցա շինէք։
49 Վասն այսորիկ և իմաստութիւնն
Աստուծոյ ասաց. Առաքեցից ի նոսա
մարգարէս և առաքեալս, և ի նոցանէ
50 սպանանիցեն և հալածիցեն, Զի
խնդրեսցի արիւն ամենայն մարգա-
րէից՝ հեղեալ ի սկզբանէ աշխարհի՝
51 յազգէ յայդմանէ, Յարենէ Աբելի
մինչև յարիւնն Զաքարիայ կորու-
սելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն.
այո՛ ասեմ ձեզ, խնդրեսցի յազգէ
52 յայդմանէ։ Վայ ձեզ օրէնսականացդ,
զի թաքուցանէք զփականս գիտու-
թեանն. դուք ո՛չ մտանէք և որ մտա-
53 նելոցն են՝ արգելուք։ Եւ ի խօսելն
զայս ամենայն առ նոսա առաջի ա-
մենայն ժողովրդեանն զամօթի հար-
կանէին, և սկսան դպիրքն և փարի-
սեցիք գչարել և գրգռել ընդ նմա
54 վասն բազում իրաց, Եւ սպասել
որսալ ինչ բանս ի բերանոյ նորա,
զի չարախօսեսցեն զնմանէ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Որովք ի կուտել բիւրաւորաց
ժողովրդեանն՝ մինչև կոխել զմի-
մեանս, սկսաւ ասել ցաշակերտան
իւր. Նախ զգո՛յշ լերուք անձանց ի
խմորոյ փարիսեցւոցն, որ է կեղծա-
2 ւորութիւն։ Զի ոչինչ է ի ծածուկ՝
որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ
3 ծանիցի։ Վասն զի զոր ինչ ասիցէք
ի խաւարի լսելի լիցի ի լոյս, և զոր
յունկանէ խօսեցարուք ի շտեմարանս,
4 քարոզեսցի ի վերայ տանեաց։ Բայց
ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի՛ զար-
հուրիցիք յայնցանէ, որ սպանանեն
զմարմին և յետ այնորիկ աւելի ինչ
5 ոչ ունիցին առնել։ Այլ ցուցից ձեզ
յումմէ երկնչիցիք. երկնչիջի՛ք յայն-
մանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշ-
խանութիւն արկանել ի գեհեն. այո՛
ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիջի՛ք։
6 Ո՞չ ապաքէն հինգ ձագ երկուց դան-
գաց վաճառի, և մի ի նոցանէ ոչ է
7 մոռացեալ առաջի Աստուծոյ. Այլ ձեր

և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է։
Մի երկնչիք, զի քան զբազում ձագս
8 լաւ էք դուք։ Ասեմ ձեզ, զի ամենայն
որ խոստովանեսցի յիս առաջի մարդ-
կան, և Որդի մարդոյ խոստովանեսցի
զնմանէ առաջի հրեշտակաց Աստու-
9 ծոյ, Եւ որ ուրասցի զիս առաջի
մարդկան ուրացեալ լիցի առաջի
10 հրեշտակաց Աստուծոյ։ Եւ ամենայն
որ ասէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի
նմա. բայց որ զՀոգին սուրբ հայհո-
11 յիցէ, մի թողցի նմա։ Այլ յորժամ
տանիցեն զձեզ ի ժողովուրդս և ի
պետութիւնս և յիշխանութիւնս, մի
հոգայցէք՝ որպէս թէ զինչ պատաս-
խանի տայցէք կամ զինչ ասիցէք.
12 Զի Հոգին սուրբ ուսուսցէ զձեզ ի
նմին ժաման՝ զինչ պարտ իցէ խօսել։
13 Ասէ ոմն ի ժողովրդենէն ցնա.
Վարդապետ, ասա ցեղբայր իմ բա-
14 ժանել ընդ իս զժառանգութիւնն։ Եւ
նա ասէ ցնա. Ա՛յր դու, ո՞ կացոյց
զիս դատաւոր կամ բաժանարար ի
15 վերայ ձեր։ Եւ ասէ ցնոսա. Տեսէք
և զգոյշ լերուք յամենայն ագահու-
թենէ, զի ոչ եթէ և մթերից ընչից

16 ուրուք իցեն կեանք նորա։ Խօսեցաւ
առ նոսա առակ մի և ասէ. Առն
ուրումն մեծատան եկուն անդք
17 առհմականս. Եւ խորհէր ի միտս իւր
և ասէր. Զի՞ գործեցից, զի ոչ գոյ
տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ։
18 Եւ ասէ. Գիտեմ զինչ արարից. քա-
կեցից զշտեմարանս իմ և ես մեծա-
մեծս շինեցից, և անդր ժողովեցից
ցորեան և զամենայն բարութիւնս իմ,
19 Եւ ասացից ցանձն իմ. Անձն, ունիս
բազում բարութիւնս համբարեալ
ամաց բազմաց. հանգիր, կեր, արբ
20 և ուրախ լեր։ Ասէ ցնա Աստուած.
Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն
ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատ-
21 րաստեցերն՝ ում լինիցի։ Նոյնպէս և
որ գանձէ անձին և ոչ յԱստուած
մեծանայցէ։
22 Ասէ ցաշակերտսն իւր. Վասն այ-
դորիկ ասեմ ձեզ. մի հոգայք ընդ
ոգւոյ՝ թէ զինչ ուտիցէք, և մի ընդ
23 մարմնոյ՝ թէ զինչ զգենուցուք։ Զի
ոգի առաւել է քան զկերակուր և
24 մարմին քան զհանդերձ։ Հայեցարուք
ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն և ոչ

հնձեն, որոց ոչ գոն շտեմարանք և
ոչ համբարանոցք, և Աստուած կե-
րակրէ զնոսա. որչափ ևս առաւել
զձեզ՝ որ լաւ էք քան զթռչունս։
25 Ո՞վ ի ձէնջ առ հոգալ կարիցէ յա-
ւելուլ ի հասակ իւր կանգուն մի։
26 Իսկ արդ՝ եթէ ի փոքուն չէք բա-
ւական, վասն այլոյն զի՞ հոգայցէք։
27 Հայեցարո՛ւք ընդ շուշանն, որպէս
աճէ՝ ո՛չ ջանայ և ո՛չ նիւթէ. ասեմ
ձեզ, և ո՛չ Սողոմոն յամենայն ի փառսն
28 իւր զգեցաւ իբրև զմի ի նոցանէ։ Իսկ
եթէ զխոտն, որ այսօր ի բացի է և
վաղիւ ի հնոց արկանելի՝ Աստուած
այնպէս զգեցուցանէ, որչափ ևս ա-
29 ռաւել զձեզ, թերահաւատք։ Եւ դուք
մի՛ խնդրէք զինչ ուտիցէք կամ զինչ
30 ըմպիցէք, և մի՛ զբաղնուցուք. Զի
զայն ամենայն հեթանոսք աշխարհի
խնդրեն. այլ ձեր հայրն գիտէ՝ զի
31 պիտոյ է այն ամենայն։ Բայց խընդ-
րեցէք զարքայութիւն Աստուծոյ, և
այն յաւելցի ձեզ։
32 Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ, զի հա-
ճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքա-
33 յութիւնն։ Վաճառեցէք զինչս ձեր

և տուք ողորմութիւն. և արարէք ձեզ
քսակս առանց հնանալոյ, գանձ ան-
պակաս յերկինս, ուր ոչ գող մեր-
34 ձենայ և ոչ ցեց ապականէ։ Զի ուր
գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր
35 եղիցին։ Եղիցին գօտիք ձեր պնդեալ
ընդ մէջս և ճրագունք լուցեալք.
36 Եւ դուք նմանողք մարդկան՝ որք
ակն ունիցին տեառն իւրեանց, թէ
երբ դառնայցէ ի հարսանեաց, զի
յորժամ գայցէ և բախիցէ՝ վաղվա-
37 ղակի բանայցեն նմա։ Երանի իցէ
ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ տէրն
գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ,
զի գօտի ընդ մէջ ածցէ և բազմե-
ցուսցէ զնոսա և անցեալ պաշտեսցէ
38 զնոսա։ Եւ եթէ յերկրորդ կամ յեր-
րորդ պահու եկեսցէ և գտցէ այնպէս,
երանելի են ծառայքն անոքիկ.
39 Բայց զայն գիտասջի՛ք, եթէ գիտէր
տանուտէրն յորում ժամու գող գայ՝
չտայր թոյլ ական հատանել ի տան
40 իւրում։ Եւ դուք եղերո՛ւք պատ-
րաստք, զի յորում ժամու ո՛չ կար-
ծիցէք, գայ Որդի մարդոյ։
41 Ասէ Պետրոս. Տէ՛ր, առ մեզ առա-

ցեր զառակդ զայդ՝ եթէ առ ամե-
42 նեսեան։ Եւ ասէ Տէր. Ո՞վ իցէ հա-
ւատարիմ տնտես և իմաստուն, զոր
կացուսցէ տէր իւր ի վերայ գեր-
դաստանի իւրոյ՝ տալ ի ժամու զկե-
43 րակուրս։ Երանի իցէ ծառային այն-
միկ, զոր եկեալ տէր իւր գտանիցէ
44 արարեալ այնպէս։ Արդարև ասեմ
ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից
45 իւրոց կացուսցէ զնա։ Ապա եթէ
ասիցէ ծառայն այն ի սրտի իւրում.
յամէ տէր իմ ի գալ, և սկսանիցի
հարկանել զծառայս և զաղախնայս,
46 ուտել և ըմպել և արբենալ. Եկեսցէ
տէր ծառային այնորիկ յաւուր՝ յո-
րում ակն ոչ ունիցի, և ի ժամու՝
յորում ոչ գիտիցէ, ընդ մէջ կտրեսցէ
զնա, և զմասն նորա ընդ անհաւատս
47 դիցէ։ Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս
տեառն իւրոյ և ոչ պատրաստիցէ
ըստ կամաց նորա, արբցէ գան բա-
48 զում. Եւ որ ոչն գիտիցէ, և արժանի
գանի ինչ գործիցէ, արբցէ գան
սակաւ։ Ամենայնի՝ որում շատ տուաւ,
շատ խնդրեսցի ի նմանէ, և որում
բազում աւանդեցաւ, առաւել ես

49 պահանջեսցեն ի նմանէ։ Հուր եկի
արկանել յերկիր, և զինչ կամիմ
50 թէ արդէն իսկ բորբոքէր։ Եւ մկըր-
տութիւն մի ունիմ մկրտել, և զիա՛րդ
51 փութամ մինչև կատարեսցի։ Համա-
րիք եթէ խաղաղութիւն եկի տալ
յերկիր. ո՛չ, ասեմ ձեզ, այլ բաժինս։
52 Զի եղիցին յայսմհետէ հինգ ի տան
միում բաժանեալք, երեքն յերկուց
53 և երկուքն յերից։ Բաժանեսցի հայր
յորդւոյ և որդի ի հօրէ, մայր ի
դստերէ և դուստր ի մօրէ. սկեսուր
ի հարսնէ և հարսն ի սկեսրէ իւրմէ։
54 Ասաց և ցժողովուրդսն. Յորժամ
տեսանիցէք ամպ ծագեալ յարևմտից,
իսկոյն ասէք թէ անձրև գայ, և լինի
55 այնպէս. Եւ յորժամ հարաւ շնչեալ,
ասէք թէ խորշակ լինի, և լինի
56 այնպէս։ Կեղծաւորք, զերեսս երկնի
և երկրի գիտէք փորձել, իսկ զժա-
մանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք։
57 Ընդէր և յանձանց իսկ ոչ ընտրէք
58 զարժանն։ Յորժամ երթայցես ընդ
ոսոխի քում առ իշխան, ի ճանա-
պարհի տուր զհաշիւն՝ զերծանել ի
նմանէ, զի գուցէ քարշեսցէ զքեզ առ

դատաւորն, և դատաւորն մատնիցէ
զքեզ դահճի, և դահիճն արկանիցէ
59 ի բանտ: Ասեմ քեզ, ո՛չ ելանիցես
անտի՝ մինչև հատուցանիցես զյետին
բնիոնն:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Եկին ոմանք ի նմին ժամանակի
և պատմեցին նմա վասն Գալիլեաց-
ւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառ-
2 նեաց ընդ զոհս նոցա: Պատասխանի
ետ և ասէ ցնոսա. Համարիք եթէ
այն Գալիլեացի՞քն եղեն մեղաւորք
քան զամենայն Գալիլեացիս, զի
3 զայնպիսի անցս կրեցին: Ո՛չ, ասեմ
ձեզ, այլ եթէ ո՛չ ապաշխարիցէք՝
4 ամենեքին նոյնպէս կորնչիջիք: Կամ
նոքա ութուտասանքն, յորոց վերայ
աշտարակն անկաւ ի Սելովամ և
սպան զնոսա. համարիք եթէ նոքա
պարտապա՞նք եղեն քան զամենայն
մարդիկ, որ բնակեալ են յԵրուսա-
5 ղէմ: Ոչ, ասեմ ձեզ, այլ թէ ո՛չ ա-
պաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս

կորնչիջիք:
6 Ասաց և զառակս զայս. Թզենի մի
էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում,
և եկն խնդրել պտուղ ի նմա և ոչ
7 եգիտ: Ասէ ցայգեգործն. Ահա երեք
ամք են՝ յորմէհետէ գամ խնդրել
պտուղ ի թզենւոջդ, և ոչ գտանեմ.
արդ՝ կոտեա զդա, ընդէ՞ր և զերկիրդ
8 խափանէ: Նա պատասխանի ետ և
ասէ. Տէր, թո՛ղ զդա այս ամ ես,
մինչև շուրջ զդովաւ բրեցից և արկից
9 աղբ, Թերևս արասցէ պտուղ. ապա
թէ ոչ՝ յամէ ես հատցես զդա:
10 Եւ ուսուցանէր ի միում ժողովրդա-
11 նոցացն ի շաբաթու: Եւ ահա կին մի՝
զոր ունէր այս հիւանդութեան ամս
ութուտասան, և էր կարկամեալ և
12 ոչ կարէր ամենևին ի վեր հայել: Եւ
տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ
ինքն և ասէ ցնա. Կին դու, արձա-
կեալ ես ի հիւանդութենէ քումմէ.
13 Եւ եդ ի վերայ նորա ձեռն, և առ-
ժամայն ուղղեցաւ. և փառաւոր առ-
14 նէր զԱստուած: Պատասխանի ետ
ժողովրդապետն, ցասուցեալ թէ
ընդէ՞ր ի շաբաթու բժշկեաց Յիսուս,

և ասէ ցժողովուրդն. Վեց օր է՝ յորս
արժան է գործել, յայնս եկայք բժըշ-
կեցարուք, և մի՛ յաւուր շաբաթու։
15 Պատասխանի ետ նմա Տէր և ասէ.
Կեղծաւորք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ
ի շաբաթու ո՞չ արձակէ զեզն իւր
կամ զէշ ի մսրոյ անտի և տանի տայ
16 ջուր։ Իսկ այս դուստր Աբրահամու
էր, զոր կապեաց սատանայ ահաւա-
դիկ ութուտասան ամ, ո՞չ էր արժան
արձակել ի կապանաց անտի ի յաւուր
17 շաբաթու։ Եւ զայս իբրև ասաց՝ յա-
մօթ լինէին ամենեքին, որ հակառակն
կային նմա, և ամենայն ժողովուրդն
ուրախ լինէր ի վերայ ամենայն փա-
ռաւորութեանցն՝ որ գործէին ի
նմանէ։
18 Եւ ասէր. Ո՞ւմ նման է արքայու-
թիւն Աստուծոյ, և որո՞ւմ նմանու-
19 թեան նմանեցուցից զնա։ Նման է
հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝
արկ ի պարտէզ իւր, աճեաց և եղև
ծառ, և թռչունք երկնից բնակեալ
20 էին յոստս նորա։ Եւ դարձեալ ասէ.
Ո՞ւմ նմանեցուցից զարքայութիւն
21 Աստուծոյ. Նման է խմորոյ, զոր ա-

ռեալ կնոջ՝ թաքոյց յալևր երից
գրուից՝ մինչև խմորեցաւ ամենայն։
22 Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ
գեօղս, ուսուցանէր, և ճանապարհ
23 արարեալ յԵրուսաղէմ. Ասէ ոմն ցնա.
Տէ՛ր. եթէ սակա՛ւք իցեն, որ ապրե-
24 լոց իցեն։ Եւ նա ասէ ցնոսա. Ջանա-
ցարո՛ւք մտանել ընդ դուռն նեղ.
ասեմ ձեզ, զի բազումք խնդրեսցեն
25 մտանել՝ և ոչ կարասցեն։ Յորմէհետէ
մտցէ տանուտէրն և փակեսցէ զդրու-
նըն, և սկսանիցի՛ք կալ արտաքոյ և
բաղխել զդուռնն և ասել. Տէր Տէր,
բա՛ց մեզ. և պատասխանի տուեալ
ասիցէ ձեզ. Ո՛չ գիտեմ զձեզ ուստի
26 էք։ Յայնժամ սկսանիջի՛ք ասել. Կե-
րաք առաջի քո և արբաք, և ի հրա-
27 պարակս մեր ուսուցեր։ Եւ ասիցէ.
Ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի
էք. ի բաց կացէք յինէն ամենայն
28 մշակք անիրաւութեան։ Անդ եղիցի
լալ և կրճել ատամանց, յորժամ տե-
սանիցէք զԱբրահամ և զԻսահակ և
զՅակովբ և զամենայն մարգարէս յար-
քայութեան Աստուծոյ, և զձեզ հա-
29 նեալ արտաքս։ Եւ եկեսցեն յարևելից

և յարեւմտից և ի հիւսիսոյ և ի հա-
րաւոյ, և բազմեսցին յարքայութեան
30 Աստուծոյ։ Եւ ահա իցեն յետինք որ
եղիցին առաջինք, և իցեն առաջինք՝
որ լինիցին յետինք։
31 Ի նմին աւուր մատեան ոմանք
փարիսեցիք և ասեն ցնա. Ե՛լ և գնա՛
աստի, զի Հերովդէս կամի սպանա-
32 նել զքեզ։ Եւ ասէ ցնոսա. Երթա՛յք
ասացէք աղուեսուն այնմիկ. ահաւա-
սիկ հանեմ դևս և բժշկութիւնս կա-
տարեմ այսօր և վաղիւ, և յերիր
33 աւուր կատարիմ։ Բայց պարտ է
այսօր և վաղիւ և ի միւսում աւուր
գնալ, զի ոչ է մարթ մարգարէի կո-
րնչիլ արտաքոյ քան զԵրուսաղէմ։
34 Երուսաղէմ Երուսաղէմ, որ կոտորէիր
զմարգարէս և քարկոծ առնէիր զա-
ռաքեալսն առ քեզ, քանիցս անգամ
կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս
հաւ զձագս իւր ընդ թևովք, և ոչ
35 կամեցարուք՝ Ահա թողեալ լիցի ձեզ
տունդ ձեր։ Բայց ասեմ ձեզ, եթէ
ոչ ես տեսանիցէք զիս՝ մինչև աս-
ցէք. օրհնեալ եկեալն յանուն Տեառն։

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Եւ եղև ի մտանելն նորա ի տուն
ուրումն իշխանացն փարիսեցւոց ի
շաբաթու ուտել հաց, և նոքա սպա-
2 սէին նմա։ Եւ ահա այր ոմն էր անդ
3 ջրգողեալ առաջի նորա։ Պատասխանի
ետ Յիսուս և ասէ ցօրինաւորսն և
ցփարիսեցիսն, եթէ արժա՞ն իցէ ի
4 շաբաթու բժշկել։ Եւ նոքա լուռ
եղեն։ Եւ բուռն հարեալ զնմանէ՝
5 բժշկեաց զնա և արձակեաց։ Եւ ասէ
ցնոսա. Ո՞յր ուրուք ի ձէնջ էշ կամ
եզն անկանիցի ի ջրհոր, և ոչ վաղ-
վաղակի հանիցէ զնա յաւուր շաբա-
6 թու։ Եւ ո՛չ կարացին տալ նմա պա-
տասխանի առ այն։
7 Ասաց և առ կոչնականսն առակ
մի, հայեցեալ թէ զիա՞րդ բարձրնտիր
8 լինէին, ասէ ցնոսա. Յորժամ կոչիցէ
ոք զքեզ ի հարսանիս կամ ի կոչունս,
մի՛ բազմիցիս յառաջին բարձին. գու-
ցէ պատուականագոյն ևս քան զքեզ
9 իցէ կոչեցեալն ի նմանէ, Եւ եկեա

որ զքեզն և զնա կոչեաց ասիցէ ցքեզ.
Տո՛ւր սմա տեղի, և ապա սկսանիցիս
10 ամօթով զյետին տեղին ունել: Այլ
յորժամ կոչիցիս, երթիջի՛ր բազմիջի՛ր
ի յետին տեղւոջն, զի յորժամ գայցէ
որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ. Բա՛-
րեկամ, ի վե՛ր մատի՛ր. յայնժամ
եղիցի՛ն քեզ փառք առաջի բազմակ-
11 ցացն քոց: Զի ամենայն որ բարձրա-
ցուցանէ զանձն՝ խոնարհեսցի, և որ
խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրաս-
ցի:
12 **Ա**սէ և ցկոչնատէրն. Յորժամ առ-
նիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր
զբարեկամս քո և մի զեղբարս քո և
մի՛ զազգականս քո և մի՛ զդրացիս
քո և մի՛ զմեծամեծս, զի մի և նոքա
փոխարէն կոչեսցեն զքեզ, և լինիցի
13 քեզ հատուցումն: Այլ յորժամ առ-
նիցես ընդունելութիւն, կոչեա՛ զաղ-
քատս և զխեղս, զկաղս և զկոյրս,
14 Եւ երանելի լինիցիս, զի ոչ ունին
փոխարէն հատուցանելոյ քեզ. և
հատուսցի քեզ փոխարէն ի յարու-
թեան արդարոց:
15 **Ի**բրև լուաւ զայս ոմն ի բազմա-

կանացն՝ ասէ ցնա. Երանի որ կերիցէ
16 ճաշ յարքայութեան Աստուծոյ: Եւ
նա ասէ. Այր ոմն գործեաց ընթրիս,
17 և հրաւիրեաց զբազումս, Եւ առա-
քեաց զծառայս իւր ի ժամու ընթ-
րեացն կոչել զհրաւիրեալսն՝ թէ
եկայք, զի ահաւասիկ պատրաստ է
18 ամենայն ինչ: Եւ սկսան մի ըստ
միոջէ ամենեքեան հրաժարել: Առա-
ջինն ասէ. ագարակ գնեցի, և հարկ
է ելանել տեսանել զնա. աղաչեմ
19 զքեզ, կա՛լ զիս հրաժարեալ: Եւ
միւսն ասէ. լուծս հինգ եզանց գնե-
ցի, և երթամ փորձել զնոսա. աղա-
20 չեմ զքեզ, կա՛լ զիս հրաժարեալ: Եւ
միւսն ասէ. կին առի, և վասն այնո-
21 րիկ ոչ կարեմ գալ: Եւ եկեալ ծա-
ռայն պատմեաց զամենայն տեառն
իւրում: Յայնժամ բարկացեալ տա-
նուտէրն՝ ասէ ցծառայն իւր՝ ե՛լ
վաղվաղակի ի հրապարակս և ի փո-
ղոցս քաղաքիդ, և զաղքատս և զխեղս
22 և զկաղս և զկոյրս մոյծ այսր: Եւ
ասէ ծառայն. տէ՛ր, եղև զոր հրամա-
23 յեցերն, և կայ ևս տեղի: Եւ ասէ
տէրն ցծառայն. ե՛լ ի ճանապարհս և

ի ցանկս և արս՝ այսր մտանել, զի
24 լցցի տուն իմ։ Ասեմ ձեզ, զի ո՛չ ոք
յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթ-
րեաց իմոց։
25 Եւ երթային ընդ նմա ժողովուրդք
26 բազումք. դարձաւ և ասէ ցնոսա. Եթէ
ոք գայ առ իս և ոչ ատեայ զհայր
իւր և զմայր և զկին և զորդիս և
զեղբարս և զքորս, նաև զանձն ևս
իւր, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել։
27 Զի որ ո՛չ բառնայ զխաչ իւր և գայ
զկնի իմ, ո՛չ կարէ իմ աշակերտ լի-
28 նել։ Ո՞վ ոք ի ձէնջ կամիցի շինել
աշտարակ և ոչ նախ նստեալ համա-
րիցի զծախսն՝ եթէ ունիցի՞ բաւական
29 ի կատարումն։ Զի գուցէ իբրև ար-
կանիցէ հիմն և ո՛չ կարիցէ կատարել,
ամենեքին որ տեսանիցեն սկսանիցին
30 ծաղր առնել զնա Եւ ասել, եթէ այս
այր սկսաւ շինել և ո՛չ կարաց կատա-
31 րել։ Կամ ո՞ր թագաւոր երթեալ տայցէ
պատերազմ ընդ այլում թագաւորի,
և ո՛չ նստեալ նախ խորհիցի, եթէ
կարօ՞ղ իցէ տասն հազարաւ զդէմ
ունել այնորիկ՝ որ գայցէ ի վերայ
32 նորա քսան հազարաւ։ Ապա թէ ոչ՝

մինչդեռ հեռագոյն իցէ, հրեշտակու-
թիւն առաքեալ՝ աղաչեսցէ ի խաղա-
33 ղութիւն։ Արդ այսպէս ամենայն ոք
ի ձէնջ, որ ո՛չ հրաժարեսցէ յամենայն
ընչից իւրոց, ո՛չ կարէ իմ աշակերտ
34 լինել։ Բարւոք է աղ. ապա թէ աղն
35 անհամեսցի, իւ համեմեսցի։ Ո՛չ
յերկիր և ո՛չ յաղբ է պիտանացու,
այլ ընկենուլ զնա արտաքս։ Որ ու-
նիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Եւ էին մերձ առ նա ամենայն
մաքսաւորք և մեղաւորք՝ լսել ի նմա-
2 նէ։ Տրտնջէին փարիսեցիքն և դպիրք
և ասէին. Ընդէ՞ր սա զմեղաւորս
3 ընդունի և ուտէ ընդ նոսա։ Ասաց
4 առ նոսա զառակս զայս. Ո՞վ ոք իցէ
ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչ-
խար, և կորուսանիցէ մի ի նոցանէ,
ո՞չ թողուցու զիննսուն և զինն յա-
նապատի և երթիցէ զհետ կորուսե-
5 լոյն՝ մինչև գտանիցէ զնա։ Եւ իբրև
գտանէ՝ դնէ զնա ի վերայ ուսոց

6 իւրոյ խնդալով, Եւ երթայ ի տուն,
կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ
ցնոսա. Ուրախ եղերո՛ւք ընդ իս, զի
7 գտի զոչխարս իմ զկորուսեալ: Ասեմ
ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յեր-
կինս վասն միոյ մեղաւորի որ ապաշ-
խարիցէ, քան վասն իննսուն և ինն
արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշ-
8 խարութիւն: Կամ ո՞վ իցէ կին, որոյ
իցեն դրամք տասն, և եթէ կորու-
սանիցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ
ճրագ և ածիցէ աւել ի տան և խըն-
9 դրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ. Եւ
իբրև գտանէ՝ կոչէ բարեկամս և զդը-
րացիս և ասէ. Ուրա՛խ եղերուք ընդ
իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի:
10 Այսպէս՝ ասեմ ձեզ, ուրախութիւն
եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ
ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշ-
խարիցէ:
11 Եւ ասէ. Առն միոջ էին երկու որ-
12 դիք: Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն.
Հա՛յր, տո՛ւր ինձ բաժին որ արկանի
յընչիցդ. և նա բաժանեաց նոցա
13 զկեանսն: Եւ յետ ո՛չ բազում աւուրց
ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝

գնաց յաշխարհ հեռի, և անդ վատ-
նեաց զինչս իւր, զի կեայր անառա-
14 կութեամբ: Եւ իբրև սպառեաց զա-
մենայն, եղև սով սաստիկ յաշխար-
հին յայնմիկ, և սկսաւ ինքն չքաւո-
15 րել: Եւ գնացեալ յարեցաւ ի մի ումն
քաղաքացւոց աշխարհին այնորիկ,
և յղեաց զնա յագարակ իւր՝ արածել
16 խոզս. Եւ ցանկայր լնուլ զորովայն
իւր յեղջերէն՝ զոր խոզքն ուտէին,
17 և ոչ ո՛ք տայր նմա: Եւ եկեալ ի միտս
իւր ասէ. քանի՜ վարձկանք իցեն ի
տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ
18 սովամահ կորնչիմ: Յարուցեալ գնա-
ցից առ հայր իմ և ասացից ցնա.
Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո,
19 Եւ ո՛չ ես եմ արժանի կոչել որդի
քո. արա՛ զիս իբրև զմի ի վարձկա-
20 նաց քոց: Եւ յարուցեալ եկն առ
հայր իւր: Եւ մինչդեռ հեռագոյն էր,
ետես զնա հայրն և գթացաւ, յարեաւ
և ընթացաւ ընդ առաջ՝ անկաւ զպա-
րանոցաւն նորա և համբուրեաց զնա:
21 Եւ ասէ ցնա որդին. Հա՛յր, մեղայ
յերկինս և առաջի քո, ո՛չ ես եմ
22 արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն

ցծառայս իւր. վաղվաղակի հանէք
զպատմուճանն առաջին և ագուցէք
նմա, և տուք զմատանին ի ձեռն
23 նորա և կօշիկս յոտս նորա, Եւ ածէք
զեզն պարարակ՝ զենէք, կերիցուք
24 և ուրախ լիցուք. Զի այս որդի իմ՝
մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝
և գտաւ. և սկսան ուրախ լինել։
25 Եւ էր երէց որդի նորա յագարակի.
և մինչդեռ գայր և մերձ եղև ի տունն,
26 լուաւ զձայն երգոց և պարուց, Եւ
կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝
27 հարցանէր թէ զի՞նչ իցէ այն։ Եւ նա
ասէ ցնա. զի եղբայր քո եկեալ է,
և եզեն հայր քո զեզն պարարակ, զի
28 ողջամբ ընկալաւ զնա։ Բարկացաւ և
ոչ կամէր մտանել. և հայրն ելեալ
29 արտաքս՝ աղաչէր զնա։ Պատասխանի
ետ և ասէ ցհայրն. այս քանի՞ ամք
են՝ զի ծառայեմ քեզ և երբէք
զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի
երբէք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց
30 ընդ բարեկամս իմ. Յորժամ եկն
որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո
ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պա-
31 րարակ։ Եւ ասէ ցնա. որդեակ, դու

հանապազ ընդ իս ես, և ամենայն
32 որ ինչ իմ է՝ քո է. Այլ ուրախ լինել
և խնդալ պարտ էր, զի եղբայր քո
այս մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ՝
և գտաւ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Եւ ասէ առ աշակերտսն. Այր մի
էր մեծատուն, որոյ էր տնտես. և
եղև զնմանէ ամբաստանութիւն, որ-
2 պէս թէ վատնիցէ զինչս նորա։ Կո-
չեաց և ասէ ցնա. զի՞նչ է այս, զոր
լսեմս զքէն. տուր զհամար տնտե-
սութեան քո, զի ոչ ես կարես լինել
3 տնտես։ Ասէ ընդ միտս իւր տնտեսն.
զի՞նչ գործեցից, զի տէր իմ հանէ
զտնտեսութիւնս. գործել ոչ կարեմ,
4 մուրանալ ամաչեմ։ Գիտեմ զինչ
արարից, զի յորժամ ի բաց լինիցիմ
ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս ի
5 տունս իւրեանց։ Եւ կոչեցեալ առ
ինքն մի ըստ միոջէ ի պարտապա-
նաց տեառն իւրոյ՝ ասէ ցառաջինն.
քանի՞ ինչ պարտիս տեառն իմում։

6 Եւ նա ասէ. հարիւր մար ձիթոյ. ասէ
ցնա. կա՛ զգիր քո և նի՛ստ գրեա՛
7 վաղվաղակի յիսուն։ Դարձեալ ասէ
ցմիւսն. դու քանի՞ ինչ պարտիս. և
նա ասէ. հարիւր քոռ ցորենոյ. և
ասէ ցնա. կա՛ զգիր քո և նի՛ստ գրեա
8 ութսուն։ Եւ գովեաց տէրն զտնտեսն
անիրաւութեան, զի իմաստութեամբ
արար. զի որդիք աշխարհիս այսորիկ
իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ
9 յազգս իւրեանց։ Եւ ես ձեզ ասեմ.
արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ
անիրաւութեան, զի յորժամ պակա-
սիցէ այն՝ ընկալցին զձեզ ի յարկսն
10 յաւիտենականս։ Որ ի փոքուն հա-
ւատարիմ է և ի բազմին հաւատարիմ
է, և որ ի փոքուն անիրաւ է և ի
11 բազմին անիրաւ է։ Իսկ արդ՝ եթէ
յանիրաւ մամոնային չեղէք հաւա-
տարիմք, զճշմարիտն ձեզ ո՞ հաւա-
12 տասցէ։ Եւ եթէ յօտարին չեղէք
հաւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ։
13 Ո՛չ ոք ծառայ կարէ երկուց տերանց
ծառայել. զի եթէ զմին ատիցէ և
զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ
և զմիւսն արհամարհիցէ. ո՛չ կարէք

Աստուծոյ ծառայել և մամոնայի։
14 Լսէին զայս ամենայն փարի-
սեցիքն՝ քանզի արծաթասէրք էին,
15 և անգոսնէին զնա։ Եւ ասէ ցնոսա.
Դուք էք որ արդարացուցանէք զան-
ձինս առաջի մարդկան, սակայն Ա-
տուած գիտէ զսիրտս ձեր. զի որ
առաջի մարդկան բարձր է պիղծ է
16 առաջի Աստուծոյ, Օրէնք և մարգա-
րէք մինչև ցՅովհաննէս. յայնմհետէ
արքայութիւն Աստուծոյ աւետարանի
և ամենայն ոք զնա բռնաբարէ։ Դիւ-
րին իցէ երկնից և երկրի անցանել,
քան յօրինացն միոյ նշանախեցի ան-
18 կանել։ Ամենայն որ արձակէ զկին
իւր և առնէ այլ՝ շնայ, և որ զարձա-
կեալն առնէ՝ շնայ։
19 Այր ոմն էր մեծատուն, և ագանէր
բեհեզս և ծիրանիս, և ուրախ լինէր
20 հանապազ առատապէս։ Եւ աղքատ
ոմն անուն Ղազարոս անկեալ դնէր
21 առ դրան նորա վիրաւորեալ, Եւ
ցանկայր լնուլ զորովայն իւր ի փշ-
րանացն՝ որ անկանէին ի սեղանոյ
մեծատանն. այլ և շունք գային և
22 լեզուին զվէրս նորա։ Եւ եղև մեռա-

նել աղքատին և տանել հրեշտակաց
զնա ի գոգն Աբրահամու. մեռաւ և
23 մեծատունն և թաղեցաւ։ Եւ ի դժոխսն
ամբարձ զաչս իւր, մինչ ի տանջանսն
էր, ետես զԱբրահամ ի հեռաստանէ
և զՂազարոս ի գոգ նորա հանգու-
24 ցեալ։ Եւ նա աղաղակեաց և ասէ.
հայր Աբրահամ, ողորմեա՛ց ինձ և
առաքեա՛ զՂազարոս, զի թացցէ զծագ
մատին իւրոյ ի ջուր և զովացուսցէ
զլեզու իմ, զի պապակիմ ի տապոյ
25 աստի։ Եւ ասէ ցնա Աբրահամ. որ-
դեակ, յիշեա՛ զի ընկալար անդէն
զբարիս քո ի կեանսն քում, և Ղա-
զարոս նոյնպէս զչարչարանս. արդ
սա աստ մխիթարի, և դու այդր
26 պապակիս։ Եւ ի վերայ այսր ամե-
նայնի վիհ մեծ է ընդ մեզ և ընդ
ձեզ, եթէ կամիցին աստի առ ձեզ
անցանել՝ ոչ կարեն, և ոչ այտի ոք
27 առ մեզ անցանել։ Եւ ասէ. արդ
աղաչեմ զքեզ, հայր, զի արձակես-
28 ցես զդա ի տուն հօր իմոյ. Են իմ
անդ եղբարք հինգ, որպէս զի տացէ
նոցա վկայութիւն, զի մի և նոքա
29 գայցեն յայս տեղի տանջանաց։ Եւ

ասէ Աբրահամ. ունին զՄովսէս և
30 զմարգարէսն, նոցա լուիցեն։ Եւ նա
ասէ. ոչ, հայր Աբրահամ, բայց եթէ
ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա, և
31 ապաշխարեսցեն։ Եւ ասէ ցնա. եթէ
Մովսէսի և մարգարէիցն ոչ լսեն, և
ոչ եթէ ի մեռելոց ոք յառնիցէ՝ հա-
ւանեսցին։

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Ասաց և առ աշակերտսն իւր.
Ո՛չ է մարթ չգալ գայթակղութեան,
բայց վա՜յ այնմիկ է՝ յոյր ձեռն գայցէ.
2 Լաւ էր նմա՝ թէ վէմ երկանաքար
կախէր զպարանոցէ նորա և անկա-
նէր ի ծով, քան թէ գայթակղեցու-
ցանէ զմի ոք ի փոքրկանցս յայս-
3 ցանէ։ Զգո՛յշ կացէք անձանց. եթէ
մեղիցէ եղբայր քո, սաստեա՛ նմա,
և եթէ ապաշխարիցէ, թո՛ղ նմա։
4 Եւ եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ
և եօթն անգամ դարձցի ի քեզ և
ասիցէ՝ ապաշխարեմ, թողցես նմա։
5 Եւ ասեն առաքեալքն ցՏէր. Յաւե՛լ

6 մեզ հաւատս։ Եւ ասէ Տէր. Եթէ
ունիցիք հաւատս քան զհատ մա-
նանխոյ և ասիցէք թթենւոյս այսմիկ.
խլեա՛ց և տնկեա՛ց ի ծովու, և հնա-
7 զանդեսցի ձեզ։ Իսկ ո՞վ ոք ի ձէնջ,
որ ունիցի ծառայ հողագործ կամ
հովիւ, որ իբրև մտանիցէ յագարա-
կէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի, թէ
8 անց բազմեաց. Այլ ո՛չ ասիցէ ցնա,
թէ պատրաստեա՛ զինչ ընթրեցից
իցեմ և զօտի ածեալ պաշտեա՛ զիս՝
մինչև կերայց և արբից, և ապա կե-
9 րիցես և արբցես դու։ Միթէ շնո՞րհ
ունիցի ծառային այնմիկ, զի արար
10 զամենայն հրամանսն։ Նոյնպէս և
դուք՝ յորժամ առնիցէք զամենայն
հրամայեալսն ձեզ, ասասջի՛ք թէ ծա-
ռայք անպիտանք եմք, զոր պարտէ-
աքն առնել՝ արարաք։
11 Եւ եղև մինչ երթայր նա յԵրու-
սաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ
12 Սամարեայ և Գալիլեացւոց։ Եւ մինչ-
դեռ մտանէր ի գեօղ ուրեմն, պա-
տահեցան նմա տասն այր բորոտ,
13 որք կացին ի հեռաստանէ, Բարձին
զձայնս և ասեն. Յիսո՛ւս վարդապետ,

14 ողորմեա՛ց մեզ։ Եւ իբրև ետես զնո-
սա, ասէ ցնոսա. Երթա՛յք ցուցէ՛ք
զանձինս քահանայիցն։ Եւ եղև իբրև
15 գնացին, առժամայն սրբեցան։ Մի
ոմն ի նոցանէ, իբրև ետես՝ եթէ
բժշկեցաւ, դարձաւ անդրէն, ի ձայն
մեծ փառաւոր առնէր զԱստուած,
16 Անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ
ոտս նորա և գոհանայր զնմանէ. և
17 ինքն էր Սամարացի։ Պատասխանի
ետ Յիսուս և ասէ. Ո՞չ տասն սոքա
սրբեցան. իսկ արդ ինննուքն ո՞ւր են.
18 Ջի ո՛չ գտան դառնալ տալ փառս
Աստուծոյ, բայց միայն այլազգիս
19 այս։ Եւ ասէ ցնա. Արի՛ գնա՛, զի
հաւատք քո կեցուցին զքեզ։
20 Իբրև հարցաւ ի փարիսեցւոցն՝ թէ
Երբ գայցէ արքայութիւն Աստուծոյ,
պատասխանի ետ նոցա և ասէ. Ո՛չ
գայ արքայութիւն Աստուծոյ խորա-
21 նօք, Եւ չասիցեն թէ ահաւասիկ
աստ է կամ անդ. զի ահա արքայու-
թիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է։
22 Ասաց և առ աշակերտսն. Եկեսցեն
աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրցն
Որդւոյ մարդոյ տեսանել, և ո՛չ տե-

23 սանիցեք։ Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ
ահաւասիկ է կամ անդ, մի երթայ-
24 ցէք զհետ։ Զի որպէս փայլակն փայ-
լատակեալ ի ներքոյ երկնից ընդ
երկնիւք ծագիցէ, նոյնպէս և Որդի
25 մարդոյ յաւուրն իւրում։ Բայց նախ
պարտ է նմա բազում չարչարել և
26 խոտել յազգէս յայսմանէ։ Եւ որպէս
եղև յաւուրսն Նոյի, նոյնպէս եղիցի
27 և յաւուրս Որդւոյ մարդոյ. Ուտէին,
ըմպէին, կանայս առնէին և արանց
լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ
Նոյ ի տապանն, և եկն ջրհեղեղն և
28 կորոյս զամենեսին։ Նոյնպէս և որպէս
յաւուրսն Ղովտայ եղև. ուտէին. ըմ-
պէին, գնէին, վաճառէին, տնկէին,
29 շինէին. Եւ յորում աւուր ել Ղովտ
ի Սոդոմայ, տեղաց հուր և ծծումբ
30 յերկնից և կորոյս զամենեսին։ Ըստ
նմին օրինակի եղիցի և յաւուրն,
յորում Որդի մարդոյ յայտնելոց է։
31 Յայնմ աւուր որ կայցէ ի տանիս և
կարասի իւր ի տան, մի իջցէ առ-
նուլ զայն. և որ յանդի իցէ՝ նոյնպէս
32 մի դարձցի յետս։ Յիշեցէք զկինն
33 Ղովտայ։ Որ խնդրիցէ զանձն իւր

ապրեցուցանել՝ կորուսցէ զնա. և որ
34 կորուսցէ՝ ապրեցուսցէ զնա։ Ասեմ
ձեզ. յայնմ գիշերի թէ եղիցին եր-
կու ի մի մահիճս, մին առցի և միւսն
35 թողցի։ Եւ եթէ եղիցին երկու աղալ
ի միասին, մին առցի և միւսն թողցի.
և եթէ իցեն երկու յանդի, մին առցի
36 և միւսն թողցի։ Պատասխանի ետուն
37 և ասեն ցնա. Յո՞, Տէր։ Եւ նա ասէ
ցնոսա. Ուր մարմին է, անդր և ար-
ծուիք ժողովեսցին։

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Ասաց և առակ մի նոցա առ այն՝
թէ պարտ է յամենայն ժամ կալ
նոցա յաղօթս և մի ձանձրանալ.
2 Ասէ. Դատաւոր մի էր ի քաղաքի
ուրեմն՝ յԱստուծոյ ո՛չ երկնչէր և ի
3 մարդկանէ ո՛չ ամաչէր։ Եւ այրի մի
էր ի նմին քաղաքի, գայր առ նա և
ասէր. Դա՛տ արա ինձ յոսոխէ իմմէ։
4 Եւ ո՛չ կամէր ի բազում ժամանակս.
յետ այնորիկ ասէ ի միտս իւրում. թէ
և յԱստուծոյ ո՛չ երկնչիմ և ի մարդ-

5 կանէ ոչ ամաչեմ, Գոնէ վասն աշ-
խատ առնելոյ զիս այրւոյն արարից
նմա դատ, զի մի իսպառ եկեալ թա-
6 խանձիցէ զիս։ Եւ ասէ Տէր. Լուա-
րո՛ւք զինչ դատաւորն անիրաւութեան
7 ասէր. Իսկ Աստուած ո՞չ առնիցէ
վրէժխնդրութիւն ծառայից իւրոց,
որ աղաղակեն առ նա ի տուէ և ի
գիշերի, և երկայնամիտ միայն լինիցի
8 առ նոսա։ Այո՛, ասեմ ձեզ. զի ա-
րասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղ-
վաղակի։ Իսկ Որդի մարդոյ եկեալ՝
գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի։
9 Ասաց և առ ոմանս պանծացեալս
յանձինս, թէ արդարք իցեն և խո-
10 տիցեն զբազումս զառակս զայս։ Արք
երկու ելին ի տաճարն կալ յաղօթս,
մին փարիսեցի և միւսն մաքսաւոր։
11 Փարիսեցին կայր մեկուսի և զայս
առանձինն աղօթս մատուցանէր.
Աստուա՛ծ իմ, գոհանամ զքէն, զի
ոչ եմ իբրև զայլս ի մարդկանէ,
զյափշտակօղս և զանիրաւս և զշունս,
12 կամ իբրև զայս մաքսաւոր. Այլ
պահեմ երկիցս ի շաբաթու, և տամ
տասանորդս յամենայն ստացուածոց

13 իմոց։ Եւ մաքսաւորն կայր մեկուսի
և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս
ամբառնալ, այլ կոծէր զկուրծս իւր
և ասէր. Աստուա՛ծ, քաւեա՛ զիս զմե-
14 ղաւորս։ Ասեմ ձեզ, էջ սա արդա-
րացեալ ի տուն իւր քան զնա. զի
ամենայն որ բարձրացուցանէ զանձն
իւր խոնարհեսցի, և որ խոնարհեցու-
ցանէ զանձն բարձրասցի։
15 Մատուցանէին առ նա և մանկտի՝
զի մերձենայցէ ի նոսա. իբրև տեսին
16 աշակերտքն՝ սաստէին նոցա։ Իսկ
Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝
ասէ. Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ
իս և մի՛ արգելուք զդոսա. զի այդ-
պիսեացդ է արքայութիւն Աստուծոյ։
17 Ամէն ասեմ ձեզ, որ ոչ ընդունիցի
զարքայութիւն Աստուծոյ իբրև զմա-
նուկ, ոչ մտցէ ի նա։
18 Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ.
Վարդապետ բարի, զի՞նչ գործեցից,
զի զկեանսն յաւիտենականս ժառան-
19 գեցից։ Ասէ ցնա Յիսուս. Զի՞ ասես
զիս բարի. չի՛ք ոք բարի՝ բայց մի
20 Աստուած։ Զպատուիրանս գիտես.
մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի՛ գողա-

նար, մի՛ սուտ վկայեր, պատուեա
21 զհայր քո և զմայր։ Եւ նա ասէ. Զայդ
ամենայն պահեցի ի մանկութենէ
22 իմմէ։ Իբրև լուաւ զայն Յիսուս՝ ասէ
ցնա. Միւս ևս պակաս է քեզ. զա-
մենայն ինչ զոր ունիս վաճառեա և
տո՛ւր աղքատաց, և ունիցիս գանձս
23 յերկինս, և եկ զկնի իմ։ Նա իբրև
լուաւ զայս, տրտմեցաւ. քանզի էր
24 մեծատուն յոյժ։ Իբրև ետես զնա
Յիսուս տրտմեալ, ասէ. Ո՛րպէս
դժուարաւ որ ինչս ունիցին մտանի-
25 ցեն յարքայութիւն Աստուծոյ. Դիւ-
րագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան
անցանել, քան մեծատան յարքայու-
26 թիւն Աստուծոյ մտանել։ Եւ որ
լուանն՝ ասէին. Եւ ո՞ կարիցէ ապրել։
27 Եւ նա ասէ. Անհնարինք առ ի մարդ-
28 կանէ՝ հնարաւորք են յԱստուծոյ։ Եւ
ասէ Պետրոս. Ահաւասիկ մեք թո-
ղաք զամենայն ինչ զմեր և եկաք
29 զկնի քո։ Եւ նա ասէ ցնոսա. Ամէն
ասեմ ձեզ, եթէ ո՛չ ոք է՝ որ եթող
զտուն, կամ զծնօղս, կամ զեղբայրս,
կամ զկին, կամ զորդիս՝ վասն ար-
30 քայութեան Աստուծոյ, Եթէ ոչ առ-

նուցու բազմապատիկ ի ժամանակի
յայսմիկ, և յաշխարհին որ գալոցն է
զկեանսն յաւիտենականս ժառան-
գեսցէ։
31 Եւ առեալ զերկոտասանսն առան-
ձին՝ ասէ ցնոսա. Ահաւասիկ ելանեմք
յԵրուսաղէմ, և կատարեսցին ամե-
նայն գրեալքն մարգարէիւք վասն
32 Որդւոյ մարդոյ. Զի մատնեսցի հե-
33 թանոսաց և կատակեսցի, Եւ հար-
կանիցեն և սպանանիցեն զնա, և
34 յերիր աւուր յարիցէ։ Եւ նոքա ոչինչ
իմացան յայնցանէ, այլ էր բանն ծած-
կեալ ի նոցանէ, և ոչ գիտէին
զասացեալսն։
35 Եւ եղև ի մօտելն նորա յԵրիքով
կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն
36 մուրացիկ։ Իբրև լուաւ զանցանել
ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ
37 իցէ այն։ Եւ պատմեցին նմա, թէ
38 Յիսուս Նազովրեցի անցանէ։ Աղա-
ղակեաց և ասէ. Յիսո՛ւս, Որդի՛ Դաւ-
39 թի, ողորմեա՛ց ինձ։ Եւ որ առաջին
երթային սաստէին նմա զի լռեսցէ.
և նա ևս առաւել աղաղակէր. Որդի՛
40 Դաւթի, ողորմեա՛ց ինձ։ Զանգի էառ

Յիսուս և հրամայեաց ածել զնա առ
իւր. և իբրև մերձ եղև առ նա, եհարց
41 զնա և ասէ. Զի՞նչ կամիս դու՝ զի
արարից քեզ: Եւ նա ասէ. Տէ՛ր, զի
42 բացցին աչք իմ և տեսից: Եւ Յիսուս
ասէ ցնա. Հայեա՛ց, հաւատք քո կե-
45 ցուցին զքեզ: Եւ առժամայն ետես,
և երթայր զհետ նորա և փառաւոր
առնէր զԱստուած: Եւ ամենայն ժո-
ղովրդեանն տեսեալ, տային օրհնու-
թիւն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով:
2 Եւ ահա այր մի անուն կոչեցեալ
Զաքէոս, և նա էր մաքսապետ, և ինքն
3 մեծատուն. Եւ խնդրէր տեսանել՝ թէ
ո՛վ իցէ Յիսուս, և ոչ կարէր ի բազ-
մութենէն, զի կարճ էր հասակաւ:
4 Եւ ընթացեալ յառաջ՝ ել ի ժան-
տաթզենին, զի տեսանիցէ զնա. քան-
5 զի ընդ այն իսկ անցանելոց էր: Իբրև
եկն ի տեղին՝ հայեցաւ ի վեր Յիսուս
և ասէ ցնա. Զա՛քէ, փութա՛ էջ այտի,

զի այսօր ի տան քում արժան է ինձ
6 ագանել: Փութացաւ և էջ, և ընկալաւ
7 զնա ուրախութեամբ: Իբրև տեսին
ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ
առ առն մեղաւորի եմուտ լուծանել:
8 Եկն եկաց Զաքէոս և ասէ ցՏէր.
Տէ՛ր, ահա զկէս ընչից իմոց տամ
աղքատաց, և եթէ զոք զրկեցի, հա-
9 տուցից չորեքկին: Եւ ասէ ցնա Յի-
սուս. Այսօր եղև փրկութիւն տանս
այսմիկ, քանզի և սա որդի Աբրա-
10 համու է: Զի եկն Որդի մարդոյ
խնդրել և կեցուցանել զկորուսեալն:
11 Եւ մինչդեռ նոքա զայն լսէին,
յաւել առակ մի և ասէ, վասն մեր-
ձենալոյ նորա յԵրուսաղէմ և համա-
րելոյ նոցա թէ առժամայն յայտնե-
12 լոց է արքայութիւն Աստուծոյ. Ասէ.
Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ
հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն
13 և դառնալ: Եւ կոչեցեալ զծառայս
իւր՝ ետ նոցա տասն մնաս, և ասէ
ցնոսա. յարդեցէք զայդ մինչև եկից:
14 Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա,
և առաքեցին հրեշտակս զկնի նորա և
ասեն. Թէ ոչ կամիմք թագաւորել

15 զմա ի վերայ մեր: Եւ եղեւ դառնալ
նմա՝ առեալ զթագաւորութիւնն, և
կոչեալ զծառայսն՝ որոց տուեալ էր
զարծաթն, զի գիտասցէ թէ ո՛ զինչ
16 շահեցաւ: Եկն առաջինն և ասէ. տէ՛ր,
17 մնասն քո տասն մնաս արար: Եւ
ասէ ցնա. ազնիւ ծառայ և բարի,
զի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջի՛ր
իշխանութիւն ունել ի վերայ տասն
18 քաղաքի: Եկն երկրորդն և ասէ.
19 մնասն քո արար հինգ մնաս: Ասէ և
ցնա. և դո՛ւ լիջի՛ր ի վերայ հինգ
20 քաղաքաց: Եկն միւսն և ասէ. տէ՛ր,
ահա մնասն քո, զոր ունէի ծրարեալ
21 ի վարշամակի. Երկնչէի ի քէն, զի
այր ստամբակ ես. բառնաս՝ զոր ո՛չ
եդեր, և հնձես՝ զոր ո՛չ սերմանեցեր:
22 Եւ ասէ ցնա. ի բերանոյ քումմէ
դատեցայց զքեզ, ծառա՛յ անհաւատ.
գիտէիր թէ ես այր մի ստամբակ
եմ, բառնամ՝ զոր ո՛չ եդի, և հնձեմ՝
23 զոր ո՛չ սերմանիցի, Եւ ընդէ՞ր ո՛չ
ետուր զարծաթն իմ ի սեղանաւորս,
և եկեալ ես տոկոսեօք պահանջէի:
24 Եւ ասէ ցսպասաւորսն. առէ՛ք ի դմանէ
զմնասն և տարա՛յք տո՛ւք այնմ՝ որ

25 ունիցի զտասն մնասն: Եւ ասեն ցնա.
26 տէ՛ր, ունի տասն մնաս: Ասեմ ձեզ,
եթէ ամենայնի որ ունիցի՝ տացի, և
յայնմանէ, որ ոչն ունիցի, և զոր
27 ունիցին՝ բարձցի ի նմանէ: Բայց
զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն
կամէին զիս թագաւորել ի վերայ
նոցա, ածէ՛ք այսր և սպանէ՛ք առաջի
28 իմ: Եւ իբրև զայս ասաց, գնաց յա-
ռաջ՝ ելանել յԵրուսաղէմ:
29 Եւ եղև իբրև մերձեցաւ ի Բեթ-
փագէ և ի Բեթանիա մօտ ի լեառնն՝
որ կոչի Ձիթենեաց, առաքեաց երկուս
30 յաշակերտացն իւրոց և ասէ. Երթա՛յք
դուք ի գեօղն՝ որ հանդէպ մեր կայ,
յոր իբրև մտանէք՝ գտանիցէք յաւա-
նակ կապեալ, յորում ոք ի մարդ-
կանէ երբէք ո՛չ նստաւ. լուծէ՛ք զնա
31 և ածէ՛ք: Եւ եթէ ոք հարցանիցէ
զձեզ՝ եթէ ընդէ՞ր լուծանէք, այսպէս
ասասջի՛ք ցնա. թէ տեառն իւրում
32 պիտոյ է: Իբրև չոգան որ առաքե-
ցանն, գտին որպէս ասացն ցնոսա՝
33 կայր յաւանակն: Եւ մինչդեռ լուծա-
նէին զյաւանակն, ասեն տեարքն
նորա ցնոսա. Զի՞ լուծանէք զյաւա-

34 նակդ։ Եւ նոքա ասեն. Տեառն իւրում
35 պիտոյ է։ Եւ ածին զնա առ Յիսուս,
և արկին զնովաւ հանդերձս և հե-
36 ծուցին զՅիսուս։ Եւ մինչդեռ երթայր,
զհանդերձս իւրեանց տարածանէին
37 զճանապարհաւն։ Եւ իբրև այն ինչ
մերձ եղև ի զառ ի վայր լերինն Ձի-
թենեաց, սկսաւ ամենայն բազմու-
թիւն աշակերտացն ուրախութեամբ
օրհնել զԱստուած ի ձայն մեծ վասն
ամենայն եղելոց զօրութեանցն՝ զոր
38 տեսին։ Եւ ասէին. Օրհնեալ որ գայ
թագաւորդ յանուն Տեառն. խաղա-
ղութիւն յերկինս, և փառք ի բար-
39 ձունս։ Եւ ոմանք ի փարիսեցւոցն
յամբոխէ անտի ասեն ցնա. Վարդա-
պետ, սաստեա աշակերտացդ քոց։
40 Պատասխանի ետ և ասէ. Ասեմ ձեզ,
զի եթէ դոքա լռեսցեն, քարինքդ
աղաղակեսցեն։

41 Եւ իբրև մերձեցաւ, տեսեալ զքա-
ղաքն՝ ելաց ի վերայ նորա և ասէ.
42 Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս
յայսմիկ զխաղաղութիւնն քո. բայց
43 այժմ ծածկեցաւ յերեսաց քոց։ Զի
եկեսցեն աւուրք ի վերայ քո, և պա-

տեսցեն զքև թշնամիք քո պատնէշ
և պաշարեսցեն զքեզ և նեղեսցեն
44 զքեզ յամենայն կողմանց, Եւ յա-
տակեսցեն զքեզ և զորդիս քո ի քեզ,
և ոչ թողուցուն քար ի քարի վերայ
յամենայնի ի քեզ, փոխանակ զի ոչ
ծանեար զժամանակ այցելութեան
քո։

45 Եւ մտեալ ի տաճարն սկսաւ հանել
զաղաւնեվաճառսն և զգնօղս, և զսե-
46 ղանս հատավաճառացն ցրուեաց։ Եւ
ասէ ցնոսա. Գրեալ է՝ և եղիցի տուն
իմ տուն աղօթից, և դուք արարէք
զդա այրս աւազակաց։

47 Եւ ուսուցանէր զնոսա հանապազ ի
տաճարին. իսկ քահանայապետքն և
դպիրք և գլխաւորք ժողովրդեանն
48 խնդրէին զնա կորուսանել, Եւ ոչ
գտանէին թէ զինչ արասցեն. զի
ժողովուրդն ամենայն կախեալ կային
զնմանէ ի լսել։

ԳԼՈՒԽ Ի.

1 Եւ եղեւ ի միում աւուրցն յայն-
ցանէ, մինչդեռ ուսուցանէր զժողո-
վուրդն ի տաճարի անդ եւ աւետա-
րանէր, հասին ի վերայ քահանայա-
պետքն եւ դպիրք ծերովքն հանդերձ,
2 Եւ ասեն ցնա. Ասա մեզ՝ որով իշ-
խանութեամբ գործես դու զայդ, կամ
ով է՝ որ ետ քեզ զայդ իշխանութիւն։
3 Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Հար-
ցից եւ ես ցձեզ բան մի, եւ ասացէք
4 ինձ. Մկրտութիւնն Յովհաննու յեր-
5 կնից էր՝ եթէ ի մարդկանէ։ Եւ նոքա
խորհեցան ի միտս իւրեանց եւ ասեն.
6 Եթէ ասեմք յերկնից, ասէ. իսկ ըն-
դէ՞ր ոչ հաւատացէք նմա. եւ եթէ
ասեմք ի մարդկանէ, ամենայն ժողո-
վուրդն քարկոծ առնեն զմեզ. զի
հաստատեալ է ի միտս զՅովհաննէ՝
7 թէ մարգարէ է։ Եւ պատասխանի
8 ետուն՝ չգիտել թէ ուստի իցէ։ Եւ
Յիսուս ասէ ցնոսա. Եւ ոչ ես ասեմ
ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ
զայս։

9 Սկսաւ ասել առ ժողովուրդն զա-
ռակս զայս. Այր մի տնկեաց այգի
եւ ետ զնա մշակաց, եւ ինքն գնաց ի
10 ճանապարհ ժամանակս բազումս։ Եւ
ի ժամու առաքեաց առ մշակսն ծա-
ռայ, զի ի պտղոյ այգւոյն տացեն
նմա. եւ մշակքն զան հարին զնա եւ
11 արձակեցին ունայն։ Եւ յաւել միւս
եւս ծառայ յղել. նոքա եւ զնա եւս զան
հարին, անարգեցին եւ առաքեցին
12 ունայն։ Եւ յաւել զերրորդն առա-
քել. նոքա եւ զնա վիրաւորեցին եւ
13 հանին արտաքս։ Ասէ տէր այգւոյն.
Զինչ արարից, առաքեցից զորդի իմ
սիրելի. թերեւս ի սմանէ պատկառես-
14 ցեն։ Իբրեւ տեսին զնա մշակքն, խոր-
հեցան ընդ միմեանս եւ ասեն. սա է
ժառանգն. սպանցուք զսա, զի մեր
15 լինիցի ժառանգութիւնն։ Եւ հանին
զնա արտաքս քան զայգին եւ սպա-
նին։ Արդ զինչ արասցէ ընդ նոսա
16 տէր այգւոյն։ Ո՞չ ապաքէն գայցէ եւ
կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, եւ
տացէ զայգին այլոց։ Իբրեւ լուան՝
17 ասեն. Քաւ, մի լիցի։ Եւ նա հայե-
ցեալ ընդ նոսա՝ ասէ. Իսկ զինչ իցէ

այն որ գրեալն է, եթէ զվէմն զոր
անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ
18 անկեան։ Ամենայն, որ ընդհարցի ընդ
վէմս ընդ այս՝ խորտակեսցի. եւ յորոյ
19 վերայ անկցի՝ հոսեսցէ զնա։ Եւ
խնդրէին դպիրքն եւ քահանայապետք
արկանել ի նա ձեռս ի նմին ժամու,
եւ երկեան ի ժողովրդենէն. զի գի-
տացին՝ թէ առ նոսա ասաց զառակն
զայն։
20 Եւ ապա սպասեցին եւ առաքեցին
զաւանաւս կեղծաւորեալս զանձինս
առ արդարս ունել, զի ըմբռնեսցեն
զնա բանիւք, առ ի մատնել զնա
պետութեան եւ իշխանութեան դա-
21 տաւորին։ Հարցին զնա եւ ասեն.
Վարդապետ, գիտեմք, եթէ ուղիղ
խօսիս եւ ուսուցանես եւ ոչ առնուս
ակն, այլ ճշմարտութեամբ զճանա-
22 պարհն Աստուծոյ ուսուցանես. Ար-
ժան է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ
23 ոչ։ Եւ նայեցեալ ընդ խորամանկու-
24 թիւն նոցա՝ ասէ ցնոսա. Ցուցէք
ինձ զդահեկանն։ Եւ նոքա ցուցին։
Եւ ասէ. Զո՞յր պատկեր եւ զգիր ունի։
Պատասխանի ետուն եւ ասեն. Զկայ-

25 սեր։ Եւ նա ասէ ցնոսա. Արդ եր-
թայք տուք զկայսերն կայսեր եւ
26 զԱստուծոյն Աստուծոյ։ Եւ ոչ կա-
րացին զնա ըմբռնել բանիւք առաջի
ժողովրդեանն, եւ զարմացեալ ընդ
պատասխանիսն նորա՝ լռեցին։
27 Մատուցեալ ոմանք ի սադուկեց-
ւոցն, որք հակառակէին չլինել յա-
28 րութեան, հարցին զնա, եւ ասեն.
Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ,
եթէ ուրուք եղբայր մեռանիցի, որոյ
իցէ կին, եւ նա անորդի իցէ, զի
առնուցու եղբայր նորա զկինն եւ
29 յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Արդ
եօթն եղբարք էին. եւ առաջինն ա-
30 ռեալ կին՝ մեռաւ անորդի. Առ զնա
եւ երկրորդն, մեռաւ եւ նա անորդի.
31 Առ զնա եւ երրորդն, նոյնպէս եւ
32 եօթանեքին, եւ ոչ թողին որդիս։ Մե-
33 ռաւ եւ կինն։ Արդ ի յարութեան
ում ի նոցանէ լինիցի կին. զի եօ-
34 թանեքին կալան զնա կին։ Պատաս-
խանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Որդիք
աշխարհիս այսորիկ կանայս առնեն
35 եւ արանց լինին, իսկ որ արժանի
լինիցին այնմ աշխարհի հասանել եւ

յարութեանն որ ի մեռելոց՝ ոչ կանայս
36 առնեն և ոչ արանց լինին. Քանզի և
ոչ մեռանել ևս կարեն, զի հաւասար
հրեշտակաց են, և որդիք Աստուծոյ՝
37 քանզի յարութեան որդիք են։ Այլ
զի յառնեն մեռեալք, և Մովսէս ցու-
ցանէ ի մորենւոջն, որպէս ասէ
զՏէառնէ Աստուծոյ Աբրահամու և
զԱստուծոյ Սահակայ և զԱստուծոյ
38 Յակովբայ. Եւ Աստուած չէ մեռելոց՝
այլ կենդանեաց. զի ամենեքին նմա
39 կենդանի են։ Պատասխանի ետուն
ոմանք ի դպրացն և ասեն. Վարդա-
40 պետ, բարւոք ասացեր։ Եւ ոչ ևս ոք
իշխէր հարցանել զնա և ոչինչ։
41 Ասէ և առ նոսա. Զիարդ ասեն
զՔրիստոսէ՝ թէ որդի է Դաւթի։
42 Զի ինքն Դաւիթ ասէ ի գիրս Սաղ-
մոսաց. Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ
43 ընդ աջմէ իմմէ, Մինչև եդից զթշ-
նամիս քո պատուանդան ոտից քոց։
40 Իսկ արդ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ,
զիարդ որդի նորա իցէ։
45 Եւ լուիլու ամենայն ժողովրդեանն
46 ասէ ցաշակերտսն. Զգոյշ լերուք ի
դպրացն, որ կամին պատմուճանօք

շրջել և սիրեն ողջոյնս ի հրապարակս
և զնախաթոռս ի ժողովուրդս և զբար-
47 ձերէցս յընթրիս, Որ ուտեն զտունս
այրեաց և պատճառանօք յերկարեն
զաղօթս. նոքա ընկալցին աւելի դա-
տաստան։

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Եւ հայեցեալ ետես զմեծատունսն՝
որ արկանէին զտուրս իւրեանց ի
2 գանձանակն։ Ետես զկին ոմն այրի
աղքատ, որ արկ անդր երկուս լու-
3 մայս, Եւ ասէ. Արդարև ասեմ ձեզ,
զի այրին այն աղքատ աւելի արկ
4 քան զամենեսին. Ամենեքին նոքա ի
մթերից իւրեանց արկին յընծայս
Աստուծոյ, բայց նա ի կարօտութենէ
իւրմէ զամենայն զկեանս իւր զոր
ունէր՝ արկ։
5 Եւ հասել ոմանց զտաճարէն, թէ
զեղեցիկ վիմօք և աշտարակօք զար-
6 դարեալ է՝ ասէ. Զայդ ամենայն զոր
տեսանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ
թողցի այդր քար ի քարի վերայ,
7 որ ոչ քակտեսցի։ Հարցին ցնա և

տսեն. Վարդապետ, երբ լինիցի այդ,
և զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լի-
8 նելոց իցէ։ Եւ նա ասէ. Զգո՛յշ կա-
ցէք, մի՛ խաբիցիք. զի բազումք գայ-
ցեն յանուն իմ և ասիցեն թէ ես
եմ, և մերձեցաւ ժամանակ. մի՛ եր-
9 թայցէք զկնի նոցա։ Եւ յորժամ լսի-
ցէք պատերազմունս և խռովութիւնս՝
մի՛ զարհուրիցիք. զի պարտ է նախ
այնմ լինել, այլ ո՛չ առժամայն կա-
10 տարած։ Յայնժամ ասէ ցնոսա. Յա-
րիցէ ազգ յազգի վերայ և թագաւո-
րութիւն ի թագաւորութեան վերայ,
11 Եւ շարժմունք մեծամեծք և ի տեղիս
տեղիս սովք և սրածութիւնք, եղիցին
արհաւիրք և նշանք մեծամեծք յերկ-
12 նից։ Բայց յառաջ քան զայս ամենայն
մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ և
հալածեսցեն, մատնեսցեն ի ժողո-
վուրդս և ի բանտս, և տանիցին
առաջի դատաւորաց և թագաւորաց
13 վասն անուան իմոյ. Եւ լինիցի ձեզ
14 այն ի վկայութիւն։ Արդ դիք ի սիրտս
ձեր, մի՛ յառաջագոյն կրթել տալոյ
15 պատասխանի. Զի ես տաց ձեզ բերան
և իմաստութիւն, որում ո՛չ կարասցեն

կալ հակառակ կամ տալ պատասխանի
16 ամենայն հակառակորդքն ձեր։ Մատ-
նեսջիք և ի ծնողաց և յեղբարց և
յազգականաց և ի բարեկամաց, և
17 սպանանիցեն ի ձէնջ, Եւ եղիջիք
ատեցեալք յամենեցունց վասն ան-
18 ուան իմոյ։ Եւ մազ մի ի գլխոյ ձերմէ
19 ո՛չ կորիցէ. Եւ համբերութեամբ ձե-
20 րով ստասջիք զոգիս ձեր։ Այլ յոր-
ժամ տեսանիցէք շուրջ պատեալ
զօրօք զԵրուսաղէմ, յայնժամ գի-
տասջիք թէ մերձ է աւեր նորա։
21 Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝
փախիցեն ի լերինս, և որ ի միջի
նորա իցեն՝ խուսեսցեն, և որ ի գա-
22 ւառս իցեն՝ մի՛ մտցեն ի նա։ Զի
աւուրք վրէժխնդրութեան են այնո-
քիկ՝ առ ի կատարելոյ ամենայն
23 գրելոց։ Բայց վա՜յ իցէ յղեաց և
ստնտուաց յաւուրսն յայնոսիկ. զի
եղիցի տագնապ մեծ ի վերայ երկրի
և բարկութիւն ժողովրդեանն այնմիկ։
24 Եւ անկցին ի սուր սուսերի և գե-
րեսցին յամենայն հեթանոսս, և Ե-
րուսաղէմ եղիցի կոխան յազգաց,
մինչև կատարեսցին ժամանակ հե-

25 թանոսաց։ Եւ եղիցին նշանք յա-
րեգակն և ի լուսին և յաստեղս,
և յերկրի տագնապ հեթանոսաց՝
յահեղ բարբառոյ իբրև ծովու և
25 խռովութեան, Ցելանելոյ ոգւոց
մարդկան յերկիւղէ և ի կար-
ծեաց եկելոց ի վերայ տիեզերաց.
զի զօրութիւնք երկնից շարժեսցին։
27 Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ
եկեալ ամպովք զօրութեամբ և փառօք
28 բազմօք։ Եւ յորժամ սկսանիցի այս
լինել, ամբարձջիք և բարձրացուցջիք
զգլուխս ձեր, զի մերձ է փրկութիւն
29 ձեր։ Եւ ասաց առակ մի նոցա. Տե-
սէք զթզենիդ և զամենայն ծառ.
30 Յորժամ ցուցանիցեն զպտուղ իւր-
եանց, տեսանէք և ի նոցանէ ճանա-
31 չէք եթէ մերձ է ամառն։ Նոյնպէս և
դուք՝ յորժամ տեսանիցէք զայս
ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ
32 է արքայութիւնն Աստուծոյ։ Ամէն
ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս,
33 մինչև այս ամենայն լինիցի։ Երկինք
և երկիր անցցեն, և բանք իմ ոչ
34 անցանիցեն։ Զգո՛յշ լերուք անձանց,
գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր

շուայտութեամբ և արբեցութեամբ և
հոգովք աշխարհականօք, և յանկար-
ծակի հասանիցէ ի վերայ ձեր օրն
35 այն. Զի իբրև զորոգայթ հասանիցէ
ի վերայ ամենեցուն. որ բնակեալ են
36 ընդ ամենայն երեսս երկրի։ Արթո՛ւն
կացէք այսուհետև, յամենայն ժամ
աղօթս արարէք, զի արժանի լինի-
ջիք զերծանել յայնմ յամենայնէ որ
լինելոց է, և կալ առաջի Որդւոյ
37 մարդոյ։ Եւ ի տուէ ի տաճարին ու-
սուցանէր, և զգիշերս ելեալ ագանէր
38 ի լերինն՝ որ կոչէր Ձիթենեաց։ Եւ
ամենայն ժողովուրդն կանխէր ընդ
առաւօտս առ նա ի տաճարն՝ լսել ի
նմանէ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

1 Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝
2 որ կոչէր պասքա։ Եւ խնդրէին քա-
հանայապետքն և դպիրք՝ թէ որպէս
սպանանիցեն զնա. բայց երկնչէին
3 ի ժողովրդենէ անտի։ Ապա եմուտ
սատանայ ի Յուդա կոչեցեալն Իս-

կարիովտացի, որ էր ի թուոյ երկո-
4 տասանիցն. Չոգաւ եդ բանս ընդ
քահանայապետսն և ընդ դպիրս և
ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատ-
5 նեսցէ զնա նոցա։ Եւ խնդացին, և
6 խոստացան տալ նմա արծաթ։ Եւ
յանձն էառ, և խնդրէր պարապ
մատնել զնա նոցա մեկուսի յամ-
բոխէն։
7 Եկն օր բաղարջակերացն, յորում
8 օրէն էր զենուլ զպասեքն։ Եւ առա-
քեաց զՊետրոս և զՅովհաննէս և
ասէ. Երթայք, պատրաստեցէք մեզ
9 զպասեքն, զի կերիցուք։ Եւ նոքա
ասեն. Ո՞ւր կամիս զի պատրաստես-
10 ցուք։ Եւ ասէ ցնոսա. Ահա իբրև
մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ
ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ,
երթիջիք զհետ նորա ի տունն՝ յոր
11 մտանիցէ։ Եւ ասասջիք ցտանուտէր
տանն. Վարդապետ ասէ քեզ. Ո՞ւր
են վանքն իմ, յորում զպասեքն
12 ուտիցեմ աշակերտօքս հանդերձ։ Եւ
նա ցուցէ ձեզ վերնատուն մի մեծ
զարդարեալ, և անդ պատրաստեսջիք։
13 Եւ գնացեալ գտին, որպէս և ասացն

նոցա, և պատրաստեցին զպասեքն։
14 Եւ իբրև ժամ եղև՝ բազմեցաւ, և
երկոտասան առաքեալքն ընդ նմա։
15 Եւ ասէ ցնոսա. Ցանկանալով ցան-
կացայ զայս պասեքս ուտել ընդ ձեզ՝
16 մինչչև չարչարեալ իցեմ. Բայց ասեմ
ձեզ, թէ ոչ ևս կերայց ի սմանէ՝ մինչև
17 լցցի յարքայութեան Աստուծոյ։ Եւ
ընկալեալ բաժակ՝ գոհացաւ և ասէ.
Առէք զայդ և բաժանեցէք ի ձեզ.
18 Ասեմ ձեզ, թէ յայսմհետէ ոչ արբից
ի բերոյ որթոյ՝ մինչև եկեսցէ ար-
19 քայութիւն Աստուծոյ։ Եւ առեալ
հաց՝ գոհացաւ, եբեկ և ետ նոցա և
ասէ. Այս է մարմին իմ, որ վասն
բազմաց տուեալ. զայս արասջիք առ
20 իմոյ յիշատակի։ Նոյնպէս և զբաժակն
յետ ընթրեացն առ և ասէ. Այս բաժակ
նոր ուխտ իմով արեամբ՝ վասն ձեր
21 հեղլով։ Բայց ահաւասիկ ձեռն մատնչի
22 իմոյ ընդ իս ի սեղանս։ Եւ որդի մար-
դոյ ըստ սահմանելոյն երթայ, բայց
վայ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն
23 մատնիցի։ Եւ նոքա սկսան խնդրել
ընդ միմեանս, թէ ով է ի նոցանէ՝
որ զայն գործելոց իցէ։

24 Եղև և հակառակութիւն ի մէջ
նոցա, թէ ո՛վ ի նոցանէ համարիցի
25 մեծ։ Եւ նա ասէ ցնոսա. Թագաւորք
ազգաց տիրեն նոցա, և որ իշխենն
26 նոցա բարերարք կոչին։ Այլ դուք ոչ
այնպէս. այլ որ մեծն է ի ձեզ եղիցի
իբրև զկրտսերն, և առաջնորդն իբրև
27 սպասաւորն։ Ո՞վ է մեծ, բազմեալն
եթէ սպասաւորն, ո՞չ ապաքէն բազ-
մեալն, բայց ես եմ ի միջի ձերում
28 իբրև սպասաւոր։ Եւ դուք էք՝ որ
ցանգ կայիք ընդ իս ի փորձութիւնս
29 իմ։ Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս և
հայր իմ ուխտեաց ինձ զարքայու-
30 թիւն։ Զի ուտիջէք և ըմպիջէք ի
սեղան իմ յարքայութեան իմում, և
նստիջիք յերկոտասան աթոռ դատել
զերկոտասան ազգ Իսրայէլի։
31 Եւ ասէ Տէր. Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա
սատանայ խնդրեաց զձեզ խարբալել
32 իբրև զցորեան. Այլ ես աղաչեցի
վասն քո, զի մի՛ պակասեսցեն հա-
ւատք քո. և դու երբեմն դարձցիս և
33 հաստատեսցես զեղբարս քո։ Եւ նա
ասէ ցնա. Տէր, ընդ քեզ պատրաստ
34 եմ և ի բանտ և ի մահ երթալ։ Եւ

նա ասէ ցնա. Ասեմ քեզ, Պետրէ,
չիցէ այսօր հաւու խօսել՝ մինչ ե-
րիցս ուրասցիս զիս չգիտել։
35 Եւ ասէ ցնոսա. Յորժամ առաքեցի
զձեզ առանց քսակի և մախաղի և
կօշկաց, միթէ կարօտացայք իմիք։
36 Եւ նոքա ասեն. Եւ ոչ իմիք։ Ապա
ասէ. Այլ այժմ որ ունի քսակ
բարձցէ, նոյնպէս և մախաղ, և որն
ոչ ունիցի՝ վաճառեսցէ զձորձս իւր
37 և գնեսցէ իւր սուսեր։ Բայց ասեմ
ձեզ, զի այս ևս որ գրեալ է պարտ է
զի կատարեսցի յիս, թէ ընդ անօ-
րէնս համարեցաւ. զի որ վասն իմ
38 ինչ է՝ վճարեալ է։ Եւ նոքա ասեն.
Տէր, ահաւասիկ են աստ երկու սուրք։
Եւ նա ասէ ցնոսա. Բաւական են։
39 Ելեալ գնաց ըստ սովորութեանն ի
լեառն Ձիթենեաց. գնացին զհետ
40 նորա և աշակերտքն։ Իբրև եհաս ի
տեղին՝ ասէ ցնոսա. Յաղօթս կացէք
41 չմտանել ի փորձութիւն։ Եւ ինքն
մեկնեցաւ ի նոցանէ իբրև քարընկէց
42 մի, եդ ծունր, կայր յաղօթս Եւ ա-
սէր. Հա՛յր, եթէ կամիս՝ անցո՛ զբա-
ժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք՝

43 այլ քոյդ լիցին։ Եւ երեւեցաւ նմա
հրեշտակ յերկնից և զօրացուցանէր
զնա։ Եւ էր ի տագնապի, և մտադիւ-
44 րութեամբ եւս կայր յաղօթս։ Եւ հո-
սէին ի նմանէ քրտունք իբրև զկայ-
լակս արեան՝ ոլոռն ոլոռն հեղեալ
45 յերկիր։ Եւ յարուցեալ յաղօթիցն՝
եկն առ աշակերտսն, եգիտ զնոսա
46 ի քուն ի տրտմութենէն, Եւ ասէ
ցնոսա. Զի՞ ննջէք, արի՛ք կացէք յա-
ղօթս, զի մի՛ մտանիցէք ի փորձու-
թիւն։
47 Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ
ամբոխ, և որ կոչէրն Յուդա, մի
յերկոտասանիցն, առաջնորդէր նոցա.
իբրև մերձեցաւ առ Յիսուս՝ համ-
բուրեաց զնա։ Քանզի զայն նշան
տուեալ էր նոցա, թէ ընդ որում ես
համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք։
48 Ասէ ցնա Յիսուս. Յուդա՛, համբու-
49 րելո՞վ մատնես զՈրդի մարդոյ։ Իբրև
տեսին որ զնովաւն էին որ ինչ եղևն,
ասեն ցնա. Տէ՛ր, հարցո՞ւք զնոսա
50 սրով։ Եւ եհար մի ոմն ի նոցանէ
զքահանայապետին ծառայ և ի բաց
51 եհան զաջոյ ունկն նորա։ Պատաս-

խանի ետ Յիսուս և ասէ. Թո՛յլ տուք
մինչև ցայդ վայր։ Եւ մատուցեալ
52 յունկն՝ բժշկեաց զնա։ Եւ ասէ ցե-
կեալսն ի վերայ նորա ցքահանայա-
պետսն և ցիշխանս տաճարին և ցը-
ծերս. Իբրև ի վերայ աւազակի՞ ելիք
53 սուսերօք և բրօք. Հանապազ ընդ
ձեզ էի ի տաճարին, և ոչ ձգեցիք
ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ և իշ-
խանութիւն խաւարի։
54 Եւ կալեալ զնա՝ ածին և մուծին
ի տուն քահանայապետին. և Պետրոս
55 երթայր զկնի նորա հեռագոյն։ Իբրև
լուցին կրակ ի մէջ գաւթին և նստան
շուրջ, նստաւ և Պետրոս ի մէջ նոցա։
56 Ետես զնա աղախին ոմն՝ զի նստէր
առ լոյսն, հայեցաւ ընդ նա և ասէ.
Եւ սա ընդ նոսա էր՝ որք ընդ նմայն
57 էին։ Իսկ Պետրոս ուրացաւ և
58 ասէ. Ոչ գիտեմ զնա, կին դու։ Եւ
յետ սակաւ միոյ այլ ոմն ետես զնա
և ասէ. Եւ դու ի նոցանէ ես։
Եւ Պետրոս ասէ. Ա՛յր դու, չեմ ի
59 նոցանէ։ Եւ իբրև ժամ մի անց ի
վերայ, այլ ոմն վիճէր և ասէր. Ստոյգ
և սա ընդ նմա էր, քանզի Գալի-

60 լեալցի է։ Ասէ Պետրոս. Ա՛յր դու,
չգիտեմ զինչ խօսիսդ։ Եւ առժամայն
մինչդեռ նա զայն ասէր՝ խօսեցաւ
61 հաւ։ Դարձաւ Տէր և հայեցաւ ի
Պետրոս. և յիշեաց Պետրոս զբանն
տեառն, զոր ասաց ցնա. Մինչչև հա-
ւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս
62 չգիտել զիս։ Եւ ելեալ արտաքս՝ ելաց
դառնապէս։
63 Եւ արքն՝ որ պահէին զնա, այպն
առնէին զնովաւ և հարկանէին,
64 Ծածկէին զերեսս նորա և տանջէին, և
հարցանէին ցնա և ասէին. Մարգա-
65 րեա՛ց՝ ո՛վ է, որ եհարն զքեզ։ Եւ այլ
բազում ինչ հայհոյութեամբ խօսէին
ի նա։
66 Եւ իբրև այգ եղև, ժողովեցաւ ծե-
րակոյտ ժողովրդեանն՝ քահանայա-
պետքն և դպիրք, և հանին ածին
զնա յատեանն իւրեանց և ասեն. Եթէ
67 դու ես Քրիստոսն, ասա մեզ։ Ասէ
ցնոսա. Եթէ ասացից ձեզ, սակայն
68 ոչ հաւատայք. Եւ եթէ հարցից ինչ
զձեզ, չտայք ինձ պատասխանի կամ
69 արձակիցէք։ Բայց յայսմհետէ նստցի
Որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեանն

70 Աստուծոյ։ Եւ ասեն ամենեքեան.
Ուրեմն դու ես որդին Աստուծոյ։ Եւ
նա ասէ ցնոսա. Դուք ասէք թէ ես
71 եմ։ Եւ նոքա ասեն. Զինչ ևս պիտոյ
է մեզ վկայութիւն. զի մեզէն իսկ
լուաք ի բերանոյ դորա։

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 Եւ յարուցեալ ամենայն բազմու-
թիւնն նոցա՝ ածին զնա առ Պիղա-
2 տոս։ Եւ սկսան չարախօս լինել
զնմանէ և ասել. Գտաք զսա, զի
թիւրէր զազգս մեր և արգելոյր ի
տալոյ հարկս կայսեր, և ասէր զանձնէ՝
3 թէ Քրիստոսն իցէ թագաւոր։ Իսկ
Պիղատոս եհարց զնա և ասէ. Դո՞ւ
4 ես թագաւորն հրէից։ Նա պատաս-
խանի ետ նմա և ասէ. Դու ասացեր։
Ասէ Պիղատոս ցքահանայապետսն և
5 ցժողովուրդսն. Զգտանեմ ինչ վնաս
յառնս յայսմիկ։ Եւ նոքա պնդէին և
ասէին, թէ խռովէ զժողովուրդս,
ուսուցանէ ընդ ամենայն հրէաստան՝
սկսեալ ի Գալիլեէ մինչև ցայսր։

6 Իսկ Պիղատոս իբրև լուաւ զԳալի-
լէէ, եհարց եթէ Գալիլեացի իցէ
7 այրն, Եւ իբրև գիտաց՝ եթէ յիշխա-
նութենէ Հերովդի է, ետ տանել զնա
առ Հերովդէս. քանզի և նա յԵրու-
8 սաղէմ էր յաւուրսն յայնոսիկ: Եւ
Հերովդէս իբրև ետես զՅիսուս, ու-
րախ եղև յոյժ. զի ցանկայր ի բազում
ժամանակաց տեսանել զնա, քանզի
լսէր բազում անգամ զնմանէ, և ակն
ունէր նշան ինչ լեալ տեսանել ի
9 նմանէ: Հարցանէր զնա բանիւք
բազմօք. և նա ոչինչ ետ նմա պա-
10 տասխանի: Կային քահանայապետքն
և դպիրք և ընդագոյնս չարախօսէին
11 զնմանէ: Արհամարհեաց զնա և Հե-
րովդէս հանդերձ իւրովք զօրակա-
նօքն և այպն արարեալ՝ արկ զնովաւ
հանդերձ սպիտակ և ետ տանել ան-
12 դրէն առ Պիղատոս: Եւ եղեն բարե-
կամք Պիղատոս և Հերովդէս յաւուր
յայնմիկ. քանզի յառաջ թշնամիք էին
միմեանց:
13 Կոչեաց Պիղատոս զքահանայա-
պետսն և զիշխանս և զժողովուրդն
14 Եւ ասէ ցնոսա. Ածիք մատուցիք ինձ

զայրս զայս իբրև զխոտորեցուցիչ
ժողովրդեանն, և ահաւասիկ առաջի
ձեր դատեցայ և վնաս ինչ ոչ գտի
յառնս յայսմիկ՝ զորոց դուք չարա-
15 խօսէքդ զդմանէ: Այլ և ոչ Հերովդէս.
քանզի ետու տանել զդա առ նա, և
արդ՝ ոչինչ մահու արժանի է գոր-
16 ծեալ դորա: Խրատեցից զդա և ար-
17 ձակեցից: Զի հարկ էր մի մի ըստ
18 տօնի արձակել նոցա: Եւ նոքա ա-
ղաղակէին ամենայն բազմութեամբն
և ասէին. Բա՛րձ զդա, և արձակեա՛
19 մեզ զԲարաբբա. Որ էր վասն խռո-
վութեան իրիք եղելոյ ի քաղաքին
և սպանութեան մտեալ ի բանտ.
20 Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսել,
21 քանզի կամէր արձակել զՅիսուս: Եւ
նոքա անդրէն աղաղակէին և ասէին.
22 Ի խա՛չ հան զդա և նա երիցս ասէ ցնո-
սա. Զինչ չար արար սա. ոչինչ վնաս
մահու գտի ի սմա. խրատեցից զսա
23 և արձակեցից: Եւ նոքա ստիպէին
մեծաձայն և խնդրէին զնա ի խաչ
հանել, և զօրանային բարբառք նոցա
24 և քահանայապետիցն: Եւ Պիղատոս
հաւանեցաւ առնել զհայցուածս նոցա:

25 Արձակեաց նոցա զԲարաբբայն՝ զոր
վասն խռովութեան արկեալ էր ի
բանտ, զոր և խնդրէինն իսկ, և Յի-
սուս մատնեաց կամաց նոցա։
26 Իբրև տարին զնա, ըմբռնե-
նեցին զոմն Սիմովն Կիւրենացի՝ որ
գայր յանդէ, եդին ի վերայ նորա
27 զխաչն՝ բերել զկնի Յիսուսի։ Եւ
երթայր զհետ նորա բազմութիւն
ժողովրդեանն և կանանց, որ կոծէին
28 և աշխարէին զնա։ Դարձաւ Յիսուս
և ասէ ցնոսա. Դստե՛րք Երուսաղէմի,
մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացէք ի
վերայ անձանց և ի վերայ որդւոց
29 ձերոց. Զի եկեսցեն աւուրք, յորս
ասիցեն, թէ երանի՛ ամլոց և որովայ-
նից՝ որ ո՛չ ծնան, և ստեանց՝ որ ո՛չ
30 դիեցուցին։ Յայնժամ սկսանիցեն
ասել լերանց՝ թէ անկերո՛ւք ի վերայ
մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէ՛ք զմեզ։
31 Զի եթէ ընդ փայտ դալար զայս
32 առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի։ Ածին
և այլ երկուս չարագործս՝ սպանանել
ընդ նմա։
33 Իբրև չոգան ի տեղին կոչեցեալ
Գագաթն, անդ հանին զնա ի խաչ,

և զչարագործսն զոմն ընդ աջմէ և
34 զոմն ընդ ձախմէ խաչեցին։ Եւ Յի-
սուս ասէ. Հա՛յր, թո՛ղ դոցա, զի ո՛չ
գիտեն զինչ գործեն։ Եւ ի բաժանել
զհանդերձս նորա՝ արկին վիճակս։
35 Եւ կայր ժողովուրդն հայեցեալ. ան-
գոսնէին զնա իշխանքն հանդերձ
նոքօք և ասէին. Զայլս ապրեցոյց,
ապրեցուսցէ և զանձն, եթէ դա է
Քրիստոս Որդի Աստուծոյ ընտրեալն։
36 Այպն առնէին զնա և զինուորքն՝
եկեալ առաջի, մատուցանէին նմա
37 քացախ Եւ ասէին. Եթէ դու ես
թագաւորն հրէից՝ փրկեա՛ զանձն քո։
38 Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա,
յունարէն և դաղմատերէն և եբրայե-
ցերէն գրով, թէ սա՛ է արքայն հրէից։
39 Իսկ մի ոմն ի կախելոց չարագոր-
ծացն հայհոյէր զնա և ասէր. Ո՞չ
դու ես Քրիստոսն. փրկեա՛ զանձն
40 քո և զմեզ։ Պատասխանի ետ ընկերն
սաստելով նմա և ասէ. Չերկնչի՞ցես
դու յԱստուծոյ՝ զի ի նմին պատժի
41 կաս. Եւ մեք յիրաւի, զի արժանի
որոց գործեցաքն առնումք զհատու-
ցումն. և սա ապիրատ ինչ ո՛չ գոր-

42 ծեաց։ Եւ ասէ ցՅիսուս. Յիշեա զիս,
Տէր, յորժամ գայցես արքայութեամբ
43 քով։ Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն
ասեմ քեզ, այսօր ընդ իս լիցիս ի
դրախտին։
44 Եւ էր իբրև վեցերորդ ժամ և
խաւար եղև ի վերայ ամենայն երկրի
45 մինչև ցիններորդ ժամն, խաւարեցաւ
արեգակն և հերձաւ վարագոյր տա-
46 ճարին ընդ մէջ։ Եւ կարդաց Յիսուս
ի ձայն մեծ և ասէ. Հայր, ի ձեռս
քո աւանդեմ զհոգի իմ։ Զայս իբրև
47 ասաց՝ եհան զոգի։ Եւ տեսեալ հա-
րիւրապետին զոր ինչ եղեն՝ փառաւոր
արար զԱստուած և ասէ. Արդարև այրս
48 այս արդար էր։ Եւ ամենայն ժողո-
վուրդքն որ եկեալ էին, և տեսանէին
զտեսիլն զայն և զգործ, բաղխէին
49 զկուրծս և դառնային։ Կային և ա-
մենայն ծանօթքն նորա ի հեռաստա-
նէ, և կանայք որ եկեալ էին զհետ
նորա ի Գալիլեէ՝ տեսանէին զայն։
50 Եւ ահա այր մի անուն Յովսէփ,
որ էր նախարար՝ այր բարեգործ և
51 արդար. Սա չէր միաբանեալ ընդ
խորհուրդս և ընդ գործս նոցա, յԱ-

րիմաթեայ քաղաքէ հրէից, որ և
ինքն իսկ ակն ունէր արքայութեան
52 Աստուծոյ. Սա մատուցեալ առ Պի-
ղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի,
53 Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պաս-
տառակալաւ, և եդ ի կառածոյ գե-
րեզմանի՝ ուր չէր բնաւ զոք եդեալ։
54 Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լու-
55 սանայր։ Եւ երթեալ զհետ նորա
կանայք, որ եկեալ էին ընդ նմա ի
Գալիլեէ. տեսին զգերեզմանն և որ-
56 պէս եդաւ մարմին նորա. Դարձան
պատրաստեցին խունկս և իւղս, և ի
շաբաթուն հանդարտեցին վասն պա-
տուիրանին։

ԳԼՈՒԽ ԻԴ.

1 Բայց ի միաշաբաթուն վաղ քաջ
ընդ առաւօտս եկին ի գերեզմանն,
բերին զխունկսն զոր պատրաստեցին,
2 և այլ կանայք ընդ նոսա։ Եւ գտին
զվէմն թաւալեցուցեալ ի գերեզմանէ
3 անտի, Եւ մտեալ ի ներքս՝ ոչ գտին
4 զմարմինն Տեառն Յիսուսի։ Եւ եղև

ընդ հիանալն նոցա վասն այնորիկ,
և ահա արք երկու հասին առ նոսա
5 ի հանդերձս լուսաւորս. Եւ իբրև
զահի հարան և խոնարհեցուցին զե-
րեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա.
Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս.
6 Չէ՛ աստ, այլ յարեաւ. յիշեցէք որպէս
խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի Գա-
7 լիլեա Եւ ասէր՝ թէ պարտ է Որդւոյ
մարդոյ մատնել ի ձեռս մարդոց մե-
ղաւորաց և ի խաչ ելանել և յերրորդ
8 աւուր յառնել։ Եւ յիշեցին զբանս
9 նորա, Եւ դարձան պատմեցին զայս
ամենայն մետասանիցն և այլոցն
10 ամենեցուն։ Եւ էին Մարիամ Մագ-
դաղենացի և Յովհաննա և Մարիամ
Յակովբայ և այլք ընդ նոսա՝ որ
11 պատմեցին զայս առաքելոցն։ Եւ
երևեցան առաջի նոցա շաղփաղփու-
թիւն բանքն նոցա, և չհաւատային
12 նոցա։ Բայց Պետրոս յարուցեալ ըն-
թացաւ ի գերեզմանն, և հայեցեալ
տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային, և
գնաց ընդ միտս զարմացեալ՝ թէ
զինչ եղև։
13 Եւ ահա երկու ի նոցանէ երթային

ի նմին աւուր ի գեօղ մի, որ հեռի
էր յԵրուսաղեմէ հարիւր և վաթսուն
ասպարիսաւ, և էր անուն նորա Եմ-
14 մաուս. Եւ նոքա խօսէին ընդ միմեանս
15 վասն ամենայն անցիցն անցելոց։ Եւ
եղև ընդ խօսելն նոցա և ընդ վիճել,
և ինքն իսկ Յիսուս մերձեցաւ և եր-
16 թայր ընդ նոսա։ Եւ նոցա աչք կա-
17 լեալ էին առ ի չճանաչելոյ զնա։ Եւ
ասէ ցնոսա. Զինչ են բանքդ, վասն
որոյ վիճիքդ ընդ միմեանս՝ մինչդեռ
18 գնայքդ, և տրտմեալ էք։ Պատասխանի
ետ մի ոմն ի նոցանէ, որում անուն
էր Կղէովպաս, և ասէ ցնոսա. Դո՞ւ
միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գի-
տացեր զինչ գործեցաւ ի նմա յա-
19 ւուրս յայսոսիկ։ Եւ ասէ ցնոսա.
Զինչ։ Եւ նոքա ասեն. ԶՅիսուսէ
Նազովրեցւոյ, որ եղև այր մարգարէ՝
հզօր արդեամբք և բանիւք առաջի
Աստուծոյ և ամեն ժողովրդեանն,
20 Որպէս մատնեցին զնա քահանայա-
պետքն և իշխանքն մեր ի դատաստան
21 մահու և հանին զնա ի խաչ։ Մեք
ակն ունէաք՝ թէ նա է որ փրկելոց
իցէ զԻսրայէլ. այլ և հանդերձ այսու

ամենայնիւ այս երրորդ օր է՝ յորմէ-
22 հետէ այն գործեցաւ։ Այլ և կանայք
ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ,
որք կանխեալ ընդ առաւօտն չոգան ի
23 գերեզմանն, Եւ ոչ գտին զմարմինն նո-
րա. եկին և ասեն, թէ և տեսիլ ևս հրեշ-
տակաց տեսին, որք ասէին զնմանէ՝
24 թէ կենդանի է։ Եւ գնացին ոմանք ի
մէնջ ի գերեզմանն, և գտին նոյնպէս՝
որպէս և կանայքն ասացին, բայց զնա
25 ոչ տեսին. Եւ նա ասէ ցնոսա. Ո՛վ
անմիտք և հեղգասիրտք ի հաւատալ
յամենայնի՝ զոր խօսեցան մարգա-
26 րէքն։ Ո՞չ զնոյնս պարտ էր չարչա-
րել Քրիստոսի և մտանել ի փառս
27 իւր։ Եւ սկսեալ ի Մովսիսէ և յամե-
նայն մարգարէիցն մեկնէր նոցա՝ որ
ինչ յամենայն գիրս գրեալ է
28 զնմանէ։ Իբրև մերձեցան ի գեօղն
յոր երթային, և նա պատճառէր հե-
29 ռագոյն ևս ուրեք երթալ. Եւ բռնա-
դատեցին զնա և ասեն. Առ մեզ ագի՛ր,
զի ընդ երեկս է և տարաժամեալ է
օրս։ Եւ եմուտ ագանել անդ ընդ
30 նոսա։ Եւ եղև ի բազմելն նորա ընդ
նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, եբեկ

31 և ետ նոցա. Եւ նոցա բացան աչք,
և ծանեան զնա. և նա եղև ի նոցանէ
32 աներևոյթ։ Եւ ասեն ցմիմեանս. Ո՞չ
իսկ և սիրտք մեր ճմլէին ի մեզ,
մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն,
33 և որպէս բանայր մեզ զգիրս։ Եւ
յարուցեալ նոյնժամայն դարձան յԵ-
րուսաղէմ, և գտին ժողովեալ զմե-
տասանեան և զորս ընդ նոսայն էին,
34 Եւ ասեն՝ թէ արդարև յարեաւ Տէր
35 և երևեցաւ Սիմովնի։ Եւ նոքա պատ-
մէին զայն որ զճանապարհայնն, և
թէ զիարդ ետ ծանօթս նոցա ի բե-
կանել հացին։

36 Մինչդեռ զայն խօսէին, ինքն իսկ
Յիսուս եկաց ի մէջ նոցա և ասէ
ցնոսա. Խաղաղութիւն ընդ ձեզ, ես
37 եմ, մի՛ երկնչիք։ Եւ զահի հարեալ
երկնչէին և համարէին ոգի ինչ տե-
38 սանել։ Եւ ասէ ցնոսա. Զի՞ խռովեալ
էք, և ընդէ՞ր խորհուրդք ելանեն ի
39 սիրտս ձեր։ Տեսէք զձեռս իմ և զոտս,
զի ես նոյն եմ. շօշափեցէք զիս և
տեսէք, զի ոգի մարմին և ոսկերս ո՛չ
ունի, որպէս զիս տեսանէք՝ զի
40 ունիմ։ Եւ զայս ասացեալ՝ եցոյց

41 Նոցա զձեռսն և զոտս։ Եւ մինչդեռ
տակաւին չհաւատային ի խնդութենէն
և զարմացեալ էին, ասէ ցնոսա. Ու-
42 նի՞ք ինչ կերակուր աստ։ Եւ նոքա
ետուն նմա ձկան խորովելոյ մասն,
43 և խորիսխ մեղու. Եւ էառ եկեր
առաջի նոցա, և զմնացորդսն ետ նո-
44 ցա։ Եւ ասէ ցնոսա. Այս բանք են,
զոր խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզն
էի, թէ պարտ է լնուլ ամենայն գրե-
լոյն յօրէնսն Մովսիսի և ի մարգա-
45 րէս և ի սաղմոսս վասն իմ։ Յայնժամ
եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս,
46 Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս պարտ
էր չարչարել Քրիստոսի և յառնել ի
47 մեռելոց յաւուր երրորդի, Եւ քարո-
զել յանուն նորա ապաշխարութիւն
և թողութիւն մեղաց յամենայն ազգս՝
48 սկսեալ յԵրուսաղեմէ։ Եւ դուք էք
49 վկայք այսոցիկ։ Եւ ահա ես առաքեմ
զաւետիս Հօր իմոյ ի ձեզ. և դուք
նստարուք ի քաղաքիս յԵրուսաղէմ,
մինչև զգենուցուք զօրութիւն ի բար-
ձանց։

50 Եհան զնոսա մինչև ի Բեթանիա,
և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց

51 զնոսա։ Եւ եղև յօրհնելն նորա զնո-
սա՝ մեկնեցաւ ի նոցանէ և վերանայր
52 յերկինս։ Եւ նոցա երկիրպագեալ
նմա՝ դարձան յԵրուսաղէմ ուրա-
53 խութեամբ մեծաւ։ Եւ էին հանա-
պազ ի տաճարին, գովէին և օրհնէին
զԱստուած։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Յովհաննու Աւետարանն գրեալ է Յովհաննու․ որ եղբայր է Յակովբայ Զեբեդեայ․ որ անկաւ ի վերայ լանջացն Տեառն․ նոյն սա գրեաց զաւետարանս զայս․ Եւ սկիզբն առնէ յաստուածական բանէն․ եւ զըստ մարմնոյ ծնունդն յիշատակէ յասելն․ Եւ բանն մարմին եղեւ․ Եւ յիշատակէ զմկրտութիւնն Յովհաննու եւ զընտրութիւն աշակերտացն․ այլ եւ զնշանս եւ զարուեստըս որ եղեն եւ զկատարածն․ որ մատնեցաւ պոնտացւոյ Պիղատոսի եւ խաչեցաւ․ յորում եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա եւ ի վերայ պատմուճանի նորա վիճակ արկին․ եւ մարմին նորա եղաւ ի գերեզմանի եւ յարեաւ յերրորդ աւուր․ երեւեցաւ աշակերտացն ինքն․

Յովհաննէս․ որ եւ որդի Որոտման․

զվերինն որոտալով պատմեաց մեզ․ Սա զկնի յիսներորդի երրորդի ամի համբառնալոյ Փրկչին գրեաց զաւետարանս իւր յեփեսու քաղաքի․ ի խնդրոյ եկեղեցւոյն Ասիայ՝ ի լեզու Յոյն․

Յովհաննէս՝ հնազանդութիւն։

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

	Գլ.	Համր.
Վասն՝ զի անսկիզբն է Բանն Աստուած.	Ա	1
Վասն Յովհաննու վկայելոյն Բանին Աստուծոյ.	Ա	15
Վասն գալոյն առ նա Գառինն Աստուծոյ.	Ա	29
Վասն աշակերտացն առ Յիսուս ագանելոյ.	Ա	39
Վասն գտանելոյն զՄեսիա.	Ա	41
Վասն ի Կանայ հարսանեացն.	Բ	1
Վասն արտաքս հանելոյն ի տաճարէն.	Բ	15
Վասն Նիկոդեմոսի.	Գ	1
Վասն ի Յայենովն մկրտելոյն.	Գ	23
Վասն խնդիր լինելոյ վասն սրբութեան.	Գ	25
Վասն կնոջն Սամարացւոյ.	Դ	7
Վասն թագաւորազնին.	Դ	46
Վասն երեսուն եւ ութամեայ հիւանդին.	Ե	5
Վասն՝ զի Հայր սիրէ զՈրդի.	Ե	20
Վասն հինգ հացին եւ երկու ձկանն.	Զ	9
Վասն գնալոյն ի վերայ ծովուն.	Զ	
Վասն մարտնչելոյն ընդ միմեանս հրէից.	Զ	
Վասն շրջելոյն Յիսուսի ի Գալիլէ, եւ խրատու եղբարցն.	Է	1
Վասն խնդրելոյն Հրէից ունել զՅիսուս.	Է	31
Վասն ի ծնէ կուրին.	Թ	
Վասն դնելոյն Յիսուսի զանձն ի վերայ ոչխարացն.	Ժ	15
Վասն Նաւակատեացն յԵրուսաղէմ.	Ժ	22
Վասն Ղազարու յարութեան.	ԺԱ	1
Վասն օծանելոյն զՏէրն.	ԺԲ	3
Վասն որ ասաց Յուդայ զիւղոյն.	ԺԲ	5
Վասն յաւանակին.	ԺԲ	14
Վասն ելելոց հեթանոսացն առ Տէր.	ԺԲ	21
Վասն հատին ցորենոյ.	ԺԲ	24
Վասն Յիսուսի լոյս գալոյն յաշխարհ.	ԺԲ	46
Վասն ընթրեացն եւ լուանալոյ զոտս աշակերտացն.	ԺԳ	11
Վասն չարչարանացն Յիսուսի եւ սփոփելոյ զաշակերտսն.	ԺԳ	15
Վասն գալոյ Հոգւոյն եւ մխիթարելոյ զաշակերտսն.	ԺԴ	26
Վասն մատնութեանն Յիսուսի.	ԺԸ	5
Վասն ուրացութեանն Պետրոսի եւ հաւուն խօսելոյ.	ԺԸ	25
Վասն ածելոյն զՅիսուս ի վանացն Կայիափայ.	ԺԸ	28
Վասն տանելոյն զՅիսուս ի Գողգոթա.	ԺԹ	17
Վասն աւանդելոյն Յիսուսի զհոգին.	ԺԹ	30

Վասն խնդրելոյն զտէրունական մարմինն. . . ԺԹ 38
Վասն բերելոյն նիկոդիմոսին զմուռս. ԺԹ 39
Վասն գալոյ կանանցն ի գերեզմանն. Ի 1
Վասն դրօքն փակելովք մտանելոյն Յիսուսի առ աշակերտսն. Ի 19
Վասն զԹովմաս հաստատելոյ Տեառն. Ի 27
Վասն ուտելոյն ընդ նոսա եւ հարցմանն զՊետրոս. . . ԻԱ 15
Վասն սիրելւոյ աշակերտին եւ գրելոյ զաւետարանն. . ԻԱ 24

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր
առ Աստուած, և Աստուած էր Բանն։
2 Նա էր ի սկզբանէ առ Աստուած։
3 Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց
նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղեն։
4 Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս
5 մարդկան։ Եւ լոյս ի խաւարի անդ
լուսաւոր է, և խաւար նմա ոչ եղև
6 հասու։ Եղև այր մի՝ առաքեալ յԱս-
7 տուծոյ, անուն նմա Յովհաննէս։ Սա
եկն ի վկայութիւն, զի վկայեսցէ
վասն լուսոյն, զի ամենեքին հաւա-
8 տասցեն նովաւ։ Ոչ էր նա լոյսն, այլ

9 զի վկայեսցէ վասն լուսոյն։ Էր լոյսն
ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամե-
նայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։
10 Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև,
11 և աշխարհ զնա ոչ ծանեաւ։ Յիւրսն
12 եկն, և իւրքն զնա ոչ ընկալան։ Իսկ
որք ընկալան զնա, ետ նոցա իշխա-
նութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց
13 հաւատացեն յանուն նորա, Ոյք ոչ
յարենէ և ոչ ի կամաց մարմնոյ և ոչ
ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։
14 Եւ Բանն մարմին եղև և բնակեցաւ
ի մեզ, և տեսաք զփառս նորա՝ ըզ-
փառս իբրև զմիածնի առ ի հօրէ, լի
15 շնորհօք և ճշմարտութեամբ։ Յովհան-
նէս վկայէ վասն նորա, աղաղակեաց
և ասէ. Սա է՝ զորմէ ասէի. որ զկնի
իմ գալոցն էր առաջի իմ եղև, զի
16 նախ քան զիս էր։ Զի ի լրութենէ
անտի նորա մեք ամենեքին առաք
17 շնորհս փոխանակ շնորհաց. Զի օրէնքն
ի ձեռն Մովսիսի տուան, շնորհքն և
ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի եղեն։
18 ԶԱստուած ոչ ոք ետես երբէք.
բայց միածինն Որդի որ է ի ծոց հօր՝

19 նա պատմեաց։ Եւ այս է վկայու-
թիւնն Յովհաննու, յորժամ առաքե-
ցին առ նա հրեայքն յԵրուսաղեմէ
քահանայս և Ղևտացիս, զի հարցցեն
20 զնա՝ եթէ դու ո՞ ես։ Եւ խոստովան
եղև և ոչ ուրացաւ, խոստովան եղև՝
21 եթէ ես ոչ եմ Քրիստոսն։ Եւ հարցին
զնա. Իսկ ո՞վ ես դու. Եղիա՞ ես. և
ասէ. Ո՛չ եմ. Իսկ մարգարէն ես դու.
22 պատասխանի ետ՝ թէ ոչ։ Իսկ ասա՛
մեզ. Դու ո՞վ ես, զի պատասխանի
տարուք որոց առաքեցինն զմեզ. զի՞
23 ասես վասն քո։ Ասէ. Ես՝ ձայն բար-
բառոյ յանապատի. ուղիղ արարէք
զճանապարհն տեառն, որպէս ասաց
24 Եսայի մարգարէ։ Եւ որք առաքեցանն
25 ի Փարիսեցւոց անտի էին, Հարցին
զնա և ասեն. Իսկ զի՞ մկրտես, եթէ
դու չես Քրիստոսն և ոչ Եղիա և ոչ
26 մարգարէն։ Պատասխանի ետ նոցա
Յովհաննէս և ասէ. Ես մկրտեմ զձեզ
ջրով. ի միջի ձերում կայ, զոր դուքն
27 ոչ գիտէք, Որ զկնի իմ գալոցն է,
որում չեմ արժանի՝ եթէ լուծից
28 զխրացս կօշկաց նորա։ Այս ի Բե-
թաբրայ եղև յայնկոյս Յորդանանու.

ուր էրն Յովհաննէս և մկրտէր։
29 Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս
զի գայր առ նա, և ասէ. Ահաւասիկ
Գառնն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս
30 աշխարհի։ Սա է՝ վասն որոյ ես
ասէի. զկնի իմ գայ այր՝ որ առաջի
իմ եղև, զի յառաջ իսկ էր քան զիս։
31 Եւ ես ոչ գիտէի զնա, այլ զի յայտնի
լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ եկի
32 ես ջրով մկրտել։ Վկայեաց Յովհան-
նէս և ասէ, թէ տեսանէի զՀոգին,
զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից,
33 և հանգչէր ի վերայ նորա։ Եւ ես ոչ
գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս
մկրտել ջրով՝ նա ասաց ցիս. Յոյր
վերայ տեսանիցես զՀոգին, զի իջա-
նիցէ և հանգչիցի ի վերայ նորա, նա
34 է որ մկրտէ Հոգւովն սրբով։ Եւ ես
տեսի, և վկայեցի, եթէ սա է որդին
Աստուծոյ։
35 Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս,
և յաշակերտաց անտի նորա երկու,
36 Եւ նայեցեալ ընդ Յիսուս՝ զի զգը-
նայր, և ասէ. Ահաւասիկ Քրիստոս,
37 Գառնն Աստուծոյ։ Լուան ի նմանէ
երկու աշակերտքն՝ զի խօսէր, և

38 գնացին զհետ Յիսուսի։ Իբրև դար-
ձաւ Յիսուս և ետես զնոսա՝ զի եր-
թային զհետ նորա, ասէ ցնոսա. Զի՞նչ
խնդրէք։ Նոքա ասեն ցնա. Ռա՛բբի.
որ թարգմանեալ կոչի վարդապետ,
39 ո՞ւր են օթեվանք քո։ Ասէ ցնոսա.
Եկա՛յք և տեսէք։ Եկին և տեսին ուր
էին օթեվանք նորա, և առ նմա
ագան այն օր, զի ժամ էր իբրև
40 տասներորդ։ Էր Անդրէաս՝ եղբայր
Սիմովնի Վիմի, մի յերկուց անտի,
որ լուանն ի Յովհաննէ և գնացին
41 զկնի նորա։ Գտանէ սա նախ զեղբայր
իւր զՍիմովն և ասէ ցնա. Գտաք
զՄեսիա՝ որ թարգմանի Քրիստոս։
42 Սա ած զնա առ Յիսուս։ Հայեցեալ
ընդ նա Յիսուսի՝ ասէ. Դու ես Սի-
մովն որդի Յովնանու, դու կոչեսցիս
Կեփաս, որ թարգմանի Պետրոս։
43 Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել
ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, և
44 ասէ ցնա Յիսուս. Ե՛կ զկնի իմ։ Եւ
էր Փիլիպպոս ի Բեթսայիդայ, ի
45 քաղաքէ Անդրեայ և Պետրոսի։ Գտանէ
Փիլիպպոս զՆաթանայէլ և ասէ ցնա.
Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն՝ և

մարգարէքն, գտաք զՅիսուս զորդի
46 Յովսէփայ ի Նազարեթէ։ Ասէ ցնա
Նաթանայէլ. Իսկ ի Նազարեթէ մարթ
ինչ իցէ բարւոյ իմիք լինել։ Ասէ ցնա
47 Փիլիպպոս. Ե՛կ և տես։ Իբրև ետես
Յիսուս զՆաթանայէլ, զի գայր առ
նա, ասէ վասն նորա. Ահա արդարև
Իսրայէլացի, յորում նենգութիւն ոչ
48 գոյ։ Ասէ ցնա Նաթանայէլ. Ուստի
ճանաչես զիս. Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ ցնա. Մինչչև էր Փիլիպ-
պոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր ի ներ-
49 քոյ թզենւոյն, տեսի զքեզ։ Պատաս-
խանի ետ նմա Նաթանայէլ և ասէ.
Ռաբբի, դու ես որդին Աստուծոյ, դու
50 ես թագաւորն Իսրայէլի։ Պատաս-
խանի ետ նմա Յիսուս և ասէ. Փո-
խանակ զի ասացի քեզ՝ թէ տեսի ի
ներքոյ թզենւոյն, հաւատա՞ս. մեծա-
51 մեծս ես քան զայս տեսցես։ Եւ ասէ
ցնոսա. Ամէն ամէն ասեմ ձեզ, տե-
սանիցէք զերկինս բացեալ և զհրեշ-
տակս Աստուծոյ՝ զի ելանիցեն և իջա-
նիցեն ի վերայ Որդւոյ մարդոյ։

ԳԼՈՒԽ Բ.

1 Եւ յաւուրն երրորդի հարսանիք
էին ի Կանա Գալիլեացւոց, և անդ էր
2 մայրն Յիսուսի. Կոչեցաւ և Յիսուս և
3 աշակերտքն նորա ի հարսանիսն։ Եւ ի
պակասել գինւոյն՝ ասէ մայրն ցՅի-
4 սուս. Գինի ոչ ունին։ Եւ ասէ ցնա
Յիսուս. Զի՞ կայ իմ և քո, կին դու.
5 չև է հասեալ ժամանակ իմ։ Ասէ
մայրն նորա ցսպասաւորսն. Որ զինչ
6 ասիցէ ձեզ՝ արասջիք։ Անդ էին թա-
կոյք կճեայք վեց՝ ըստ սրբութեանն
հրէից. տանէին մի մի ի նոցանէ
7 մարս երկուս կամ երիս։ Ասէ ցնոսա
Յիսուս. Լցէք զթակոյկսդ ջրով. և
8 լցին զնոսա մինչև ի վեր։ Եւ ասէ
ցնոսա. Արդ՝ առէք և բերէք տա-
9 ճարապետիդ. և նոքա բերին։ Եւ
իբրև ճաշակեաց տաճարապետն ըզ-
ջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի
իցէ, բայց սպասաւորքն գիտէին՝ որք
արկին զջուրն, խօսի ընդ փեսային
10 տաճարապետն և ասէ. Ամենայն մարդ

զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ,
և յորժամ արբենան՝ յայնժամ զյո-
ռին· դու պահեցեր զանոյշ գինիդ
11 մինչև ցայժմ։ Զայս արար սկիզբն
նշանաց Յիսուս ի Կանա Գալիլեա-
ցւոց, և յայտնեաց զփառս իւր· և
հաւատացին ի նա աշակերտքն նորա։
12 Յետ այսորիկ էջ ի Կափառնայում՝
ինքն և մայր իւր և եղբարք իւր, և
անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս։
13 Եւ էր մերձ զատիկն հրէից, և ել
14 Յիսուս յԵրուսաղէմ։ Եւ եգիտ ի
տաճարին՝ զի վաճառէին զարջառս
և զոչխարս և զաղաւնիս, և զլումա-
15 յափոխսն՝ որ նստէին։ Եւ արար
խարազան չուանեայ և եհան զամե-
նեսին ի տաճարէն, զոչխարսն և
զարջառս, և զպղինձս հատավաճա-
ռացն ցրուեաց և զսեղանսն կործա-
16 նեաց, Եւ որք զաղաւնիսն վաճառէին՝
ասէ ցնոսա. Առէք զայդ աստի, և մի
առնէք զտուն հօր իմոյ տուն վաճառի։
17 Ապա յիշեցին աշակերտքն նորա՝ թէ
գրեալ է· Նախանձ տան քո կերիցէ
18 զիս։ Պատասխանի ետուն հրեայքն և
ասեն ցնա· Զինչ նշան ցուցանես

19 դու մեզ՝ զի զայդ առնես։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Քա-
կեցէք զտաճարդ զայդ, և զերիս ա-
20 ւուրս կանգնեցից զդա։ Ասեն ցնա
հրեայքն. Զքառասուն և զվեց ամ
շինեցաւ տաճարս այս, և դու զերիս
21 աւուրս կանգնես զսա։ Բայց նա
ասէր վասն տաճարի մարմնոյն իւրոյ։
22 Իսկ յորժամ յարեաւն ի մեռելոց,
յիշեցին աշակերտքն նորա, թէ այս է՝
զոր ասացն, և հաւատացին գրոյն և
բանին՝ զոր ասաց Յիսուս։
23 Եւ իբրև էր յԵրուսաղէմ ի զատկին
ի տօնի, բազումք հաւատացին յա-
նուն նորա, զի տեսանէին զնշանսն՝
24 զորս առնէր· Բայց ինքն Յիսուս ոչ
հաւատայր յանձն նոցա, քանզի ինքն
25 գիտէր զամենայն, Եւ զի ոչ էր պի-
տոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մար-
դոյ· զի ինքն իսկ գիտէր՝ զինչ կրէր
ի մարդն։

ԳԼՈՒԽ Գ.

1 Եւ էր այր մի ի Փարիսեցւոց
անտի, Նիկոդիմոս անուն նորա, իշ-
2 խան Հրէից։ Սա եկն առ նա գիշերի
և ասէ ցնա. Ռաբբի, գիտեմք եթէ
յԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի
ո՛չ ոք կարէ զայդ նշանսդ առնել՝ զոր
դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ
3 ընդ նմա։ Պատասխանի ետ Յիսուս
և ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ քեզ,
եթէ ոչ ոք ծնցի վերստին՝ ո՛չ կարէ
տեսանել զարքայութիւն Աստուծոյ։
4 Ասէ ցնա Նիկոդիմոս. Զիա՞րդ կարէ
մարդ ծնանել՝ որ ծեր իցէ. միթէ
մա՞րթ ինչ իցէ անդրէն յորովայն մօր
5 իւրոյ կրկին մտանել և ծնանել։ Պա-
տասխանի ետ Յիսուս և ասէ. Ամէն
ամէն ասեմ քեզ, եթէ ո՛չ ոք ծնցի
ի ջրոյ և ի Հոգւոյ, ո՛չ կարէ մտանել
6 յարքայութիւն Աստուծոյ։ Զի ծնեալն
ի մարմնոյ մարմին է, և ծնեալն ի
7 Հոգւոյ հոգի է։ Դու մի՛ զարմանար,
թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանել

8 վերստին։ Զի հողմ ուր կամի շնչէ,
և զձայնն նորա լսես, այլ ո՛չ գիտես
ուստի գայ կամ յո՛ երթայ. սոյնպէս
9 և ամենայն ծնեալն ի Հոգւոյն։ Պա-
տասխանի ետ Նիկոդիմոս և ասէ
ցնա. Զիա՞րդ մարթի այդմ լինել։
10 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա.
Դու ես վարդապետ Իսրայելի և զայդ
11 ո՛չ գիտես։ Ամէն ամէն ասեմ քեզ,
զի զոր ինչ գիտեմք խօսիմք և զոր
տեսաք վկայեմք, և զվկայութիւնն
12 մեր ո՛չ ընդունիք։ Իսկ արդ՝ եթէ
զերկրաւորս ասացի ձեզ՝ և ո՛չ հա-
ւատայք, զիա՞րդ եթէ զերկնաւորսն
13 ասացից՝ հաւատայցէք։ Եւ ոչ ոք ել
յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից՝
14 Որդին մարդոյ, որ էն յերկինս։ Եւ
որպէս Մովսէս բարձրացոյց զօձն
յանապատին, նոյնպէս բարձրանալ
15 պարտ է Որդւոյ մարդոյ, Զի ամենայն
որ հաւատայ ի նա ընկալցի զկեանսն
16 յաւիտենականս։ Զի այնպէս սիրեաց
Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին
իւր միածին ետ. զի ամենայն որ
հաւատայ ի նա մի՛ կորիցէ, այլ ըն-
17 կալցի զկեանսն յաւիտենականս։ Զի

ո՛չ առաքեաց Աստուած զՈրդի իւր
յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ,
18 այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ։ Որ
հաւատայ ի նա ո՛չ դատապարտեսցի
և որ ո՛չ հաւատայ ի նա արդէն իսկ
դատապարտեալ է, զի ոչ հաւատաց
յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ։
19 Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս
եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ
զխաւար առաւել քան զլոյս, զի էին
20 գործք իւրեանց չարութեան։ Զի
ամենայն որ զչար գործէ ատեայ
զլոյս և ո՛չ գայ առ լոյսն, զի մի
21 յանդիմանեսցին գործքն նորա. Իսկ
որ առնէ զճշմարտութիւն գայ առ
լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա՝
թէ Աստուծով գործեցան։
22 Յետ այսորիկ եկն Յիսուս և աշա-
կերտքն նորա յերկիրն Հրէաստանի,
և անդ շրջէր նոքօք հանդերձ և մկըր-
23 տէր։ Մկրտէր և Յովհաննէս ի Յա-
յենովն մերձ առ Սաղիմ, զի ջուրք
բազումք էին անդ, և գային և մը-
24 կրտէին. Զի չև ևս էր արկեալ զՅով-
25 հաննէս ի բանտ։ Եւ եղև խնդիր
յաշակերտացն Յովհաննու ընդ հրէի

26 վասն սրբութեան։ Եկին առ Յով-
հաննէս և ասեն ցնա. Ռա՛բբի, որ
էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու,
որում դուն վկայեցեր, ահաւասիկ
նա մկրտէ՝ և ամենեքին գան առ նա։
27 Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ.
Ո՛չ կարէ մարդ առնուլ յանձնէ և
ոչինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա
28 յերկնից ի վերուստ։ Դուք ձեզէն
վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ
չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ
29 եմ առաջի նորա։ Որ ունի հարսն
նա է փեսայ. իսկ բարեկամ փեսա-
յին՝ որ կայ և լսէ նմա, ուրախու-
թեամբ ուրախ լինի վասն ձայնի
փեսային. արդ՝ այս ուրախութիւն
30 որ իմս է լցեալ է։ Նմա պարտ է
31 աճել, և ինձ մեղմանալ։ Որ ի վե-
րուստն գայ ի վերոյ է քան զամե-
նայն. որ յերկրէ աստի է յերկրէ է
32 և յերկրէ խօսի։ Որ յերկնիցն գայ՝
զոր ինչ ետես և զոր լուաւ վկայէ,
և զվկայութիւն նորա ոչ ոք ընդունի։
33 Որ ընդունի զվկայութիւն նորա
կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է։
34 Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբա-

նս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ
35 չափով տայ Աստուած զՀոգին։ Հայր
սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ետ ի
36 ձեռս նորա։ Որ հաւատայ յՈրդի
ընդունի զկեանս յաւիտենականս.
և որ ոչն հնազանդի Որդւոյ ո՛չ տեսցէ
զկեանս, այլ բարկութիւն Աստուծոյ
մնայ ի վերայ նորա։

ԳԼՈՒԽ Դ.

1 Իբրև գիտաց Յիսուս, եթէ լուան
փարիսեցիքն՝ եթէ Յիսուս բազում
աշակերտս առնէ և մկրտէ քան զՅով-
2 հաննէս, Քանզի ոչ եթէ Յիսուս
ինքնին մկրտէր, այլ աշակերտքն
3 նորա, Եթող զՀրէաստան երկիր և
4 եկն միւսանգամ ի Գալիլեա։ Եւ էր
5 նմա անցանել ընդ Սամարիա։ Գայ
նա ի քաղաք մի սամարացւոց՝ որում
անուն էր Սիւքար, մերձ ի գեօղն
զոր ետ Յակոբ որդւոյ իւրում Յով-
6 սէփայ։ Եւ անդ էր աղբիւր մի Յա-
կոբայ։ Եւ Յիսուս վաստակեալ ի
ճանապարհէն՝ նստէր ի վերայ աղ-

7 բերն, և էր ժամ իբրև վեցերորդ։ Գայ
կին մի ի Սամարեայ հանել ջուր։
Ասէ ցնա Յիսուս. Տո՛ւր ինձ ըմպել։
8 Զի աշակերտքն նորա երթեալ էին ի
քաղաք անդր, զի կերակուրս գնես-
9 ցեն։ Ասէ ցնա կինն սամարացի. Դու՝
որ հրէայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել
խնդրես՝ ի կնոջէ սամարացւոյ։ Զի
ոչ երբէք խառնակին հրեայք ընդ
10 Սամարացիս։ Պատասխանի ետ նմա
Յիսուս և ասէ. Եթէ գիտէիր դու
զպարգևսն Աստուծոյ, և ո՛վ է որ
ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել,
դու արդեօք խնդրէիր ի նմանէ և
11 տայր քեզ ջուր կենդանի։ Ասէ ցնա
կինն. Տէ՛ր, դու քանզի և դոյլ իսկ
ոչ ունիս, և ջրհորս խոր է. իսկ արդ՝
ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի։
12 Միթէ դու մեծ ինչ ոք իցես քան
զհայրն մեր Յակոբ, որ զայս ջրհոր
ետ մեզ, և ինքն աստի արբ և որդիք
13 նորա և խաշինք նորա։ Պատասխանի
ետ նմա Յիսուս և ասէ. Ամենայն որ
ըմպէ ի ջրոյ յայդմանէ, միւսանգամ
ծարաւէ. բայց որ ըմպէ ի ջրոյն, զոր
ես տաց նմա, մի՛ ծարաւեսցի յա-

14 ւիտեան. Այլ ջուրն՝ զոր ես տաց
նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղ-
15 խելոյ ի կեանսն յաւիտենականս։ Ասէ
ցնա կինն. Տէր, տո՛ւր ինձ զջուրն
զայն, զի մի՛ ծարաւեցայց և մի՛ եկից
16 այսր հանել ջուր։ Ասէ ցնա Յիսուս.
Ե՛րթ կոչեա՛ զայր քո և եկ այսր։
17 Պատասխանի ետ նմա կինն և ասէ.
Ձի՛ք իմ այր։ Ասէ ցնա Յիսուս.
18 Բարւոք ասացեր՝ թէ չի՛ք իմ այր։ Զի
հինգ այր փոխեալ է քո, և զոր այժմ
ունիս չէ՛ քո այր. զայդ արդար ա-
19 սացեր։ Ասէ ցնա կինն. Տէր, թուի
20 ինձ թէ մարգարէ իցես դու։ Հարքն
մեր ի լերինս յայսմիկ երկիր պագին.
և դուք ասէք՝ եթէ յԵրուսաղէմ և
եթ է տեղի, ուր արժան իցէ երկիր
21 պագանել։ Ասէ ցնա Յիսուս. Կի՛ն դու,
հաւատա՛ ինձ, զի եկեսցէ ժամանակ՝
յորժամ ոչ ի լերինս յայսմիկ և ոչ
յԵրուսաղէմ երկիր պագանիցեն Հօր։
22 Դուք երկիր պագանէք որում ոչն
գիտէք, մեք երկիր պագանեմք որում
գիտեմքն, զի փրկութիւն ի հրէից է.
23 Այլ եկեսցէ ժամանակ և այժմ իսկ
է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք

երկիր պագանիցեն Հօր հոգւով և
ճշմարտութեամբ. քանզի և Հայր
այնպիսի երկրպագուս իւր խնդրէ։
24 Հոգի է Աստուած, և երկրպագուացն
նորա հոգւով և ճշմարտութեամբ
25 պարտ է երկիր պագանել։ Ասէ ցնա
կինն. Գիտեմ զի Մեսիա գայ, ան-
ուանեալն Քրիստոս. յորժամ եկեսցէ,
26 նա պատմեսցէ մեզ զամենայն։ Ասէ
ցնա Յիսուս. Ես եմ, որ խօսիմս ընդ
27 քեզ։ Եւ յայն բան եկին աշակերտքն
նորա, և զարմանային զի ընդ կնոջն
խօսէր. բայց ոչ ոք ասաց ի նոցանէ,
թէ զինչ խնդրես կամ զինչ խօսիս
28 ընդ դմա։ Եթող կինն զսափորն իւր
և չոգաւ ի քաղաքն, և ասէ ցմար-
29 դիկն. Եկա՛յք տեսէք զայր մի, որ
ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ
գործեալ է. միթէ նա՛ իցէ Քրիստոսն։
30 Ելին ի քաղաքէն, և գային առ նա։
31 Եւ մինչչև եկեալ էին նոքա, աղաչէին
զնա աշակերտքն և ասէին. Ռա՛բբի,
32 հա՛ց կեր։ Նա ասէ ցնոսա Ես կերա-
կուր ունիմ ուտել, զոր դուքն ոչ
33 գիտէք։ Ասէին աշակերտքն ընդ մի-
մեանս. Միթէ եբեր ինչ ոք դմա

34 ուտել։ Ասէ ցնոսա Յիսուս. Իմ կե-
րակուր այն է, զի արարից զկամս
այնորիկ՝ որ առաքեացն զիս, և կա-
35 տարեցից զգործն նորա։ Ո՞չ դուք
ասէք՝ եթէ այլ ևս չորք ամիսք են և
հունձք գան. ահաւասիկ ես ասեմ
ձեզ. ամբարձէք զաչս ձեր և տեսէք
զարտորայն, զի սպիտակացեալ են և ի
36 հունձս հասեալ։ Եւ որ հնձէն վարձս
առնու և ժողովէ զպտուղ ի կեանս
յաւիտենականս, զի որ սերմանէն և
37 որ հնձէ հասարակ ցնծասցեն։ Յայսմ
իսկ է բանն ճշմարիտ, զի այլ է որ
38 սերմանէ՝ և այլ է որ հնձէ։ Ես առա-
քեցի զձեզ հնձել զոր ոչ դուք վաս-
տակեցէք. այլք վաստակեցին, և դուք
39 ի վաստակս նոցա մտէք։ Եւ ի քա-
ղաքէն յայնմանէ սամարացւոց բա-
զումք հաւատացին ի նա վասն բանի
կնոջն վկայելոյ՝ եթէ ասաց ինձ զա-
40 մենայն որ ինչ իմ գործեալ էր։ Իսկ
իբրև եկին առ նա սամարացիքն,
աղաչէին զնա լինել առ նոսա. և եղև
41 անդ աւուրս երկուս։ Եւ ևս բազումք
հաւատացին ի նա վասն բանին նորա։
42 Եւ ասէին ցկինն, թէ ոչ այսուհետև

վասն քո խօսիցդ հաւատամք. զի
մեզէն իսկ լուաք ի դմանէ, և գիտեմք
եթէ դա է ճշմարտիւ փրկիչ աշխար-
հաց։
43 Եւ յետ երկուց աւուրց ել անտի
44 և գնաց ի Գալիլեա։ Զի ինքն իսկ
Յիսուս վկայեաց, եթէ մարգարէ
յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։
45 Այլ յորժամ եկն նա ի Գալիլեա,
ընկալան զնա գալիլեացիքն, զի տե-
սեալ ևս էր զամենայն նշանսն, զոր
արար յԵրուսաղէմ ի տօնին. քանզի
46 և նոքա եկեալ էին ի տօնն։ Եկն
դարձեալ ի Կանա գալիլեացւոց՝ ուր
արար զջուրն գինի։ Եւ անդ էր թա-
գաւորազն մի, որոյ որդի նորա հի-
47 ւանդ կայր, ի Կափառնաում։ Նա
իբրև լուաւ, եթէ Յիսուս եկեալ է
ի Հրէաստանէ ի Գալիլեա, եկն առ
նա, և աղաչէր զի իջցէ և բժշկեսցէ
զորդի նորա. քանզի մերձ էր ի մե-
48 ռանել։ Ասէ ցնա Յիսուս. Եթէ ոչ
նշանս ինչ և արուեստս տեսանէք՝
49 ոչ հաւատայք։ Ասէ ցնա թագաւո-
րազնն. Տէ՛ր, էջ մինչչև մեռեալ իցէ
50 մանուկն իմ։ Ասէ ցնա Յիսուս. Ե՛րթ,

որդին քո կենդանի է։ Եւ հաւատաց
այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս,
51 և գնայր։ Եւ մինչդեռ իջանէր, ընդ
առաջ եղեն նմա ծառայքն նորա,
աւետիս տուին և ասեն, թէ մանուկն
52 նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա
վասն ժամուն՝ յորում ապաքինեցաւ.
և ասեն ցնա՝ երէկ յեօթներորդ ժա-
53 մու եթող զնա ջերմն։ Գիտաց հայրն
նորա, եթէ յայնմ ժամու՝ յորում
ասացն ցնա Յիսուս, թէ որդին քո
կենդանի է. և հաւատաց ինքն և
54 ամենայն տուն իւր։ Զայս դարձեալ
երկրորդ նշանս արար Յիսուս՝ եկեալ
ի Հրէաստանէ ի Գալիլեա։

ԳԼՈՒԽ Ե.

1 Յետ այսորիկ տօն էր Հրէից, և
2 ել Յիսուս յԵրուսաղէմ։ Եւ էր յԵ-
րուսաղէմ ի Պրոբատիկէ աւազանին,
որ կոչէր եբրայեցերէն Բեթհեզդա,
3 հինգ սրահ։ Ցորս անկեալ դնէր
բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց,
կաղաց, գօսացելոց, որ ակն ունէին

4 ջրոցն յուզելոյ։ Եւ անդ էր այր մի,
որոյ երեսուն և ութ ամ էր ի հիւան-
5 դութեան իւրում. Զնա իբրև ետես
Յիսուս՝ զի անկեալ դնէր, և գիտաց
թէ բազում ժամանակք են այնու-
հետև, ասէ ցնա. Կամիս ողջ լինել։
6 Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէր,
ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն
յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. և
մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս
7 յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յի-
սուս. Արի առ զմահիճս քո և գնա։
8 Եւ ողջացաւ այրն և յարեաւ, առ
զմահիճս իւր և շրջէր. և էր շաբաթ
9 յաւուրն յայնմիկ։ Ասեն հրեայքն
ցբժշկեալն. Շաբաթ է, և ոչ է արժան
10 քեզ առնուլ զմահիճս քո։ Պատաս-
խանի ետ նոցա և ասէ. Որ բժշկեացն
զիս, նա ասաց ցիս. առ զմահիճս քո
11 և գնա։ Հարցին ցնա և ասեն. Ո՞վ է
այրն որ ասացն ցքեզ՝ առ զմահիճս
12 քո և շրջեաց։ Եւ բժշկեալն ոչ գիտէր
թէ ով իցէ. քանզի Յիսուս խոյս ետ
վասն ամբոխին ի տեղւոջէ անտի։
13 Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ի
տաճարին և ասէ ցնա. Ահաւադիկ

ողջացար, մի ևս մեղանչեր, զի մի
14 չար ևս ինչ լինիցի քեզ։ Գնաց այրն
և պատմեաց հրէիցն, եթէ Յիսուս
15 էր որ բժշկեացն զիս։ Եւ վասն այնո-
րիկ հալածէին զՅիսուս հրեայքն, զի
16 զայն առնէր ի շաբաթու։ Եւ Յիսուս
պատասխանի ետ նոցա. Հայր իմ
մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ։
17 Վասն այնորիկ առաւել խնդրէին
հրեայքն սպանանել զնա. զի ոչ միայն
լուծանէր զշաբաթս, այլ և Հայր իւր
կոչէր զԱստուած, և հաւասար առնէր
18 զանձն Աստուծոյ։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնոսա. Ամէն ամէն
ասեմ ձեզ. ոչ կարէ Որդի մարդոյ
առնել յանձնէ և ոչինչ, եթէ ոչ տե-
սանիցէ զՀայրն զի առնէ. զի որ նայն
առնէ, զնոյն և որդին նմին նման
19 գործէ։ Զի հայր սիրէ զորդի և զա-
մենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն
առնէ. և մեծամեծս ևս քան զսոյնս
ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուք
20 զարմանայք։ Զի որպէս Հայր յարու-
ցանէ զմեռեալս և կենդանի առնէ,
նոյնպէս և Որդի զորս կամի կենդանի
21 առնէ։ Եւ ոչ եթէ Հայր դատի զոք,

այլ զամենայն դատաստանն ետ որդւոյ
22 իւրոյ, Զի ամենեքեան պատուեսցեն
զՈրդի, որպէս պատուեն զՀայր։ Որ
ոչ պատուէ զՈրդին. ոչ պատուէ
23 զՀայր՝ զառաքիչն նորա։ Ամէն ամէն
ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ և
հաւատայ այնմ որ առաքեացն զիս՝
ընդունի զկեանս յաւիտենականս, և
ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխե-
24 ցաւ ի մահուանէ ի կեանս։ Ամէն
ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամանակ
և արդէն իսկ է, յորժամ մեռեալք
լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ, և
25 որ լսիցենն կեցցեն։ Զի որպէս Հայր
ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս
ետ և Որդւոյ ունել կեանս յանձին
26 իւրում։ Եւ իշխանութիւն ետ նմա
դատաստան առնել, և զի Որդի մար-
27 դոյ է։ Ընդ այն զի՞ զարմանայք. զի
եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին
որ ի գերեզմանս կայցեն լուիցեն
28 ձայնի նորա, Եւ եկեսցեն արտաքս՝
որոց բարիս գործեալ իցէ ի յարու-
թիւն կենաց, և որոց զչար արարեալ
29 ի յարութիւն դատաստանաց։ Ոչ կա-
րեմ ես յանձնէ առնել և ոչինչ. այլ

որպէս լսեմ դատիմ, և դատաստանն
իմ արդար է, զի ոչ խնդրեմ զկամս
իմ, այլ զկամս այնորիկ որ առաքեացն
30 զիս։ Եթէ ես վկայեմ վասն իմ,
31 վկայութիւնն իմ չէ ճշմարիտ. Այլ է՝
որ վկայէ վասն իմ, և դուք գիտէք՝
եթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր
32 վկայեաց վասն իմ։ Դուք առաքեցէք
առ Յովհաննէս, և վկայեաց ճշմար-
33 տութեանն. Այլ ես ոչ եթէ ի մարդ-
կանէ առնում վկայութիւն, այլ զայս
34 ասեմ՝ զի դուք ապրիջիք։ Նա էր
ճրագն՝ որ լուցեալ էր և ծագէր, և
դուք կամեցարուք ցնծալ առ ժամա-
35 նակ մի ի լոյս նորա։ Այլ ես ունիմ
վկայութիւն մեծ ես քան զՅովհան-
նու, զգործսն՝ զոր ետ ցիս Հայր զի
կատարեցից զնոսա, նոքին իսկ գործքն
զոր գործեմ վկայեն վասն իմ, եթէ
36 Հայր առաքեաց զիս. Եւ որ առա-
քեացն զիս Հայր, նա վկայեաց վասն
իմ. դուք ոչ զձայն նորա երբէք
լուարուք, և ոչ զտեսիլ նորա տեսէք,
37 Եւ ոչ զբան նորա ունիք ի ձեզ բնա-
կեալ, զի զոր նա առաքեաց՝ դուք
38 նմա ոչ հաւատայք։ Քննեցէք զգիրս,

զի դուք համարիք նոքօք ունել
զկեանսն յաւիտենականս, և նոքին
իսկ են՝ որ վկայեն վասն իմ, որովք
39 համարիք ունել զկեանս. Եւ դուք ոչ
կամիք գալ առ իս՝ զի զկեանսն
40 ունիցիք։ Ես փառս ի մարդկանէ ոչ
41 առնում, Այլ գիտեմ զձեզ՝ թէ զսէրն
42 Աստուծոյ ոչ ունիք յանձինս։ Ես եկի
յանուն Հօր իմոյ, և ոչ ընդունիք
զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն,
43 զնա ընդունիցիք։ Զիա՞րդ կարէք դուք
հաւատալ, զի փառս ի միմեանց առ-
նուք, և զփառս զառ ի միոյն Աս-
44 տուծոյ ոչ խնդրէք։ Մի համարիք
եթէ ես չարախօս ինչ լիցեմ զձէնջ
առ Հօր. գոյ որ չարախօս կայ զձէնջ՝
Մովսէս, յոր դուքն յուսացեալ էք։
45 Զի եթէ հաւատայիք դուք Մովսիսի,
հաւատայիք արդեօք և ինձ. զի նա
46 վասն իմ իսկ գրեաց։ Զի եթէ նորա
գրոցն ոչ հաւատայք. զիա՞րդ իմոց
բանիցս հաւատայցէք։

ԳԼՈՒԽ Զ.

1 Յետ այսորիկ գնաց Յիսուս յայն-
կոյս ծովուն Գալիլեացւոց Տիբերեայ.
2 Եւ զհետ երթայր նորա ժողովուրդ
բազում, զի տեսանէին զնշանսն՝ զոր
3 առնէր ի վերայ հիւանդացն։ Ել ի
լեառն Յիսուս, և անդ նստէր աշա-
4 կերտօքն հանդերձ։ Եւ էր մերձ զա-
5 տիկ տօնն հրէից։ Բարձ ի վեր զաչս
իւր Յիսուս և ետես զի ժողովուրդ
բազում գայր առ նա, ասէ ցՓիլիպ-
պոս. Ուստի՞ գնեսցուք հաց՝ զի կե-
6 րիցեն դոքա։ Զայս ասէր փորձելով
զնա՝ այլ ինքն գիտէր զինչ առնելոց
7 էր։ Պատասխանի ետ նմա Փիլիպպոս.
Երկերիւր դահեկանի հաց չէ դոցա
բաւական, թէպէտ և իւրաքանչիւր ոք
8 սակաւ ինչ առնուցու։ Ասէ ցնա մի
յաշակերտացն նորա, Անդրէաս՝ եղ-
9 բայր Սիմովնի վիմի. Է աստ պա-
տանեակ մի, որ ունի հինգ նկանակ
գարեղէն և երկուս ձկունս. այլ այն
10 զինչ է առ այդչափ մարդիկդ։ Ասէ

Յիսուս, Բազմեցուցէք զմարդիկդ։
Եւ էր խոտ յոյժ ի տեղւոջն. և բազ-
մեցան մարդիկն թուով իբրև հինգ
11 հազար։ Եւ առ զհացսն Յիսուս և գո-
հացաւ և բաշխեաց բազմականացն.
նոյնպէս և ձկանցն որչափ և կամե-
12 ցան։ Եւ իբրև յագեցան, ասէ ցա-
շակերտսն. Ժողովեցէք զնշխարեալ
13 կոտորսդ, զի մի ինչ կորիցէ։ Ժողո-
վեցին, և լցին երկոտասան սակառի
զկոտորոցն՝ ի հինգ գարեղէն նկա-
նակէ անտի, որ յաւելաւ ի կերողացն։
14 Իսկ մարդիկն իբրև տեսին զնշանսն
զոր արար՝ ասէին, եթէ սա է ճշմա-
րիտ մարգարէն, որ գալոց էր յաշ-
խարհ։

15 Յիսուս իբրև գիտաց եթէ գալոց
են յափշտակել զնա, զի արասցեն
զնա թագաւոր, գնաց դարձեալ ի
16 լեառն միայն։ Եւ իբրև երեկոյ եղև,
իջին աշակերտքն նորա ի ծովեզրն,
17 Եւ մտեալ ի նաւ՝ գային յայնկոյս
ծովուն ի Կափառնաում. Եւ իբրև
նսեմացաւ, և չև ևս եկեալ էր առ
18 նոսա Յիսուս, Եւ ծովն ի սաստիկ
19 հողմոյ շնչելոյ յուզէր։ Եւ վարեալ

իբրև ասպարէզս քսան և հինգ կամ
երեսուն՝ տեսանէին զՅիսուս, զի
գայր ի վերայ ծովուն և մերձ էր ի
20 նաւն, և զարհուրեցան յոյժ: Եւ նա
21 ասէ ցնոսա. Ես եմ, մի՛ երկնչիք: Եւ
կամէին ընդունել զնա ի նաւն, և
վաղվաղակի եհաս նաւն յերկիրն՝ յոր
երթային:
22 Ի վաղիւ անդր ժողովուրդն որ կայր
յայնկոյս ծովուն տեսանէր թէ այլ
նաւ ոչ գոյր անդ, բայց միայն ի միոյն՝
յոր մտին աշակերտքն Յիսուսի, և զի
չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն
իւր ի նաւն, բայց միայն աշակերտքն
23 նորա գնացին. Իբրև այլ նաւք գային
ի Տիբերեայ մօտ յայն տեղին՝ ուր
24 զհացն կերան: Իսկ իբրև ետես ժո-
ղովուրդն, եթէ Յիսուս ոչ է անդ և
ոչ աշակերտքն նորա, ածին նոքա
զնաւսն և եկին ի Կափառնաում
25 խնդրել զՅիսուս: Եւ իբրև գտին
զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա.
26 Ռաբբի, Երբ եկիր այսր: Պատաս-
խանի ետ նոցա Յիսուս և ասէ. Ամէն
ամէն ասեմ ձեզ, խնդրէք դուք զիս,
իբր ոչ եթէ զի նշանս ինչ տեսէք,

այլ զի կերայք ի հացէ անտի և յա-
27 գեցարուք: Երթա՛յք գործեցէք մի
զկորստական կերակուրն, այլ զկե-
րակուրն՝ որ մնայ ի կեանսն յաւի-
տենականս, զոր Որդին մարդոյ տացէ
ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց, Ա-
28 տուած: Ասեն ցնա. Զի՞նչ առնիցեմք՝
զի զգործնս Աստուծոյ գործեսցուք:
29 Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնոսա. Այս է գործն Աստուծոյ, զի
հաւատասջիք յայն՝ զոր առաքեացն
30 նա: Ասեն ցնա. Զի՞նչ նշան առնիցես,
զի տեսցուք և հաւատասցուք, զի՞նչ
31 գործիցես: Հարքն մեր կերան զմա-
նանայն յանապատի անդ, որպէս և
գրեալ է. Հաց յերկնից ետ նոցա
32 ուտել: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն
ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ Մովսէս ետ
ձեզ զհացն յերկնից, այլ Հայրն իմ
տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ:
33 Զի հաց յԱստուծոյ է, որ իջանէն
յերկնից և կեանս տայ աշխարհի:
34 Ասեն ցնա. Տէ՛ր, յամենայն ժամ տո՛ւր
35 մեզ զհացն զայն: Ասէ ցնոսա Յի-
սուս. Ես եմ հացն կենաց. որ գայ
առ իս ոչ քաղցիցէ, և որ հաւատայ

36 յիս ոչ երբէք ծարաւեսցի։ Այլ ա-
սացի ձեզ՝ եթէ տեսէք զիս և ոչ
37 հաւատայք։ Զամենայն, զոր տայ ինձ
Հայր՝ առ իս եկեսցէ, և որ գայ առ
38 իս ոչ հանից արտաքս, Զի իջի ես
յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից,
այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն
39 զիս։ Այս են կամք Հօր իմոյ, որ
առաքեացն զիս, զի զամենայն զոր
ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ,
այլ յարուցից զնա յաւուրն յետնում։
40 Այս են կամք Հօր իմոյ, զի ամենայն
որ տեսանիցէ զՈրդի և հաւատայցէ
ի նա՝ ընկալցի զկեանսն յաւիտե-
նականս և ես յարուցից զնա յաւուրն
41 յետնում։ Տրտնջէին զնմանէ հրեայքն,
զի ասաց, թէ ես եմ հացն իջեալ
42 յերկնից։ Եւ ասէին. Ո՞չ սա է Յիսուս
որդի Յովսեփու, զորոյ մեք գիտեմք
զհայրն և զմայր. իսկ արդ՝ զիա՞րդ
43 ասէ, թէ ես յերկնից իջի։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Մի՛
44 քրթմնջէք ընդ միմեանս։ Ոչ ոք կարէ
գալ առ իս եթէ ոչ Հայրն, որ զիս
առաքեաց՝ ձգեսցէ զնա, և ես յարու-
45 ցից զնա յաւուրն յետնում։ Գրեալ է

ի մարգարէս. Եւ եղիցին ամենեքեան
ուսեալք յԱստուծոյ. ամենայն որ լսէ
46 ի Հօրէ և ուսանի՝ գայ առ իս։ Իբրև
ոչ եթէ զՀայր ուրուք տեսեալ իցէ,
եթէ ոչ որ էն յԱստուծոյ, նա ետես
47 զՀայր։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի
որ հաւատայ ընդունի զկեանսն յա-
48 ւիտենականս։ Ես եմ հացն կենաց։
49 Հարքն ձեր կերան զմանանայն յա-
50 նապատին՝ և մեռան. Այս է հացն՝
որ յերկնից իջեալ, զի որ ուտիցէ ոք
51 ի սմանէ մի մեռանիցի։ Ես եմ հացն
52 կենդանի, որ յերկնից իջեալ. Եթէ
ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ
ի յաւիտեան. և հացն զոր ես տաց՝
մարմին իմ է, զոր ես տաց վասն
53 կենաց աշխարհի։ Մարտնչէին ընդ
միմեանս հրեայքն և ասէին. Զիա՞րդ
կարէ սա տալ մեզ զմարմին իւր
54 յուտել։ Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն
ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք
զմարմին Որդւոյ մարդոյ և արբջիք
զարիւն նորա, ոչ ունիք կեանս յան-
55 ձինս։ Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ
զարիւն իմ ունի զկեանս յաւիտե-
նականս, և ես յարուցից զնա յաւուրն

56 յետնում։ Զի մարմին իմ ճշմարիտ
կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ
57 ըմպելի է։ Որ ուտէ զմարմին իմ և
ըմպէ զարիւն իմ յիս բնակեսցի, և
58 ես ի նմա։ Որպէս առաքեաց զիս
կենդանին Հայր, և ես կենդանի եմ
վասն Հօր, և որ ուտէն զիս և նա
59 կեցցէ վասն իմ։ Այս է հացն՝ որ
յերկնից իջեալ, ոչ որպէս կերան
հարքն ձեր զմանանայն և մեռան. որ
ուտէ զհացս զայս կեցցէ յաւիտեան։
60 Զայս ասաց ի ժողովրդեանն՝ յու-
սուցանելն ի Կափառնաում։
61 Եւ բազումք յաշակերտացն, իբրև
լուան՝ ասեն. Խիստ է բանդ այդ.
62 ո՞ կարէ լսել դմա։ Իբրև գիտաց Յի-
սուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն
այնորիկ աշակերտքն նորա, ասէ
ցնոսա. Այդ գայթակղեցուցանէ՞ զձեզ։
63 Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զՈրդի
մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառա-
64 ջինն։ Հոգին է կենդանարար, մարմին
ինչ ոչ օգնէ. զբանսն զոր ես խօսե-
ցայ ընդ ձեզ՝ հոգի է և կեանք։
65 Այլ են ոմանք ի ձէնջ՝ որ ոչ հաւա-
տան։ Քանզի գիտէր Յիսուս ի սկզբ-

բանէ, ո՛վ են այնոքիկ՝ որ ոչն հա-
ւատան, և ո՛վ այն է՝ որ մատնելոցն է
66 զնա։ Եւ ասէր. Վասն այնորիկ ասացի
ձեզ՝ թէ ոչ ո՛ք կարէ գալ առ իս,
եթէ ոչ իցէ տուեալ նմա ի Հօրէ։
67 Յայսմանէ բազումք յաշակերտացն
նորա չոգան յետս և ոչ ես շրջէին ընդ
68 նմա։ Ասէ Յիսուս ցերկոտասանսն աշա-
կերտսն. Միթէ և դո՞ւք կամիք եր-
69 թալ։ Պատասխանի ետ նմա Սիմոն
Պետրոս. Տէր, առ ո՞վ երթիցուք.
բանս կենաց յաւիտենականաց ունիս.
70 Եւ մեք հաւատացաք և ծանեաք՝ եթէ
դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ։
71 Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ
ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի,
72 և միդ ի ձէնջ սատանայ է։ Եւ ասէր
զՍիմովնեան Յուդայէ Սկարիովտաց-
ւոյ՝ զի նա իսկ մատնելոց էր զնա,
և մի էր յերկոտասանիցն։

ԳԼՈՒԽ Է.

1 Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ի
Գալիլեա. քանզի ոչ կամէր ի Հրէաս-

տանի շրջել, զի խնդրէին զնա հրեայք
2 սպանանել։ Եւ էր մերձ տօնն հրէից
3 տաղաւարահարաց։ Ասեն ցնա եղ-
բարքն նորա. Գնա՛ աստի և երթ ի
Հրէաստան, զի և աշակերտքն քո
տեսցեն զգործսդ քո՝ զորս գործես.
4 Զի ոչ ոք է որ ի ծածուկ ինչ գործէ
և խնդրէ ինքն համարձակ լինել՝
5 յայտնեա՛ զանձն քո աշխարհի։ Քանզի
և եղբարքն իսկ չէին հաւատացեալ
6 ի նա։ Ասէ ցնոսա Յիսուս. Ժամանակ
իմ չև է հասեալ, բայց ձեր ժամա-
նակ յամենայն ժամու պատրաստ է։
7 Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ, բայց
զիս ատեայ, զի ես վկայեմ վասն
նորա՝ եթէ գործքն իւր չարութեան
8 են։ Դուք երթայք ի տօնն յայն, ես
ոչ երթամ ի տօնն յայն, զի իմ ժա-
9 մանակ չև է լցեալ։ Զայս իբրև ասաց՝
10 ինքն մնաց անդէն ի Գալիլեա։ Իբրև
ելին եղբարքն նորա, ապա և ինքն
ել ի տօնն՝ ո՛չ յայտնի, այլ իբրև ի
11 ծածուկ։ Եւ հրեայքն խնդրէին զնա
ի տօնի անդ և ասէին. Ո՞ւր իցէ նա։
12 Եւ քրթմնջիւն էր զնմանէ ի ժողո-
վուրդսն. կէսքն ասէին՝ թէ բարւոք

է. այլք ասէին՝ ո՛չ, այլ մոլորեցու-
13 ցանէ զժողովուրդն։ Եւ ոչ ոք հա-
մարձակ խօսէր զնմանէ վասն երկիւ-
ղին հրէից։
14 Իբրև տօնն ընդմիջեցաւ, ել Յիսուս
15 ի տաճարն և ուսուցանէր։ Զարմա-
նային հրեայքն և ասէին. Զիա՞րդ
զգիրս գիտէ սա, զի ուսեալ ընաւ
16 չիք։ Պատասխանի ետ նոցա Յիսուս
և ասէ. Իմ վարդապետութիւնս չէ իմ,
17 այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս։ Եթէ
ոք կամի զկամս նորա առնել, գի-
տասցէ վասն վարդապետութեանս,
յԱստուծո՞յ իցէ արդեօք՝ եթէ ես ինչ
18 յանձնէ իմմէ խօսիմ։ Որ յանձնէ
իւրմէ խօսի փառս անձին իւրում
խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս այնո-
րիկ, որ առաքեացն զնա՝ նա ճշմա-
րիտ է և անիրաւութիւն ոչ գոյ ի
19 նմա։ Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնսն,
20 և ոչ ոք ի ձէնջ առնէ զօրէնսն։ Զի՞
խնդրէք զիս սպանանել։ Պատասխանի
ետ ժողովուրդն և ասէ. Դև գոյ ի
քեզ. ո՞վ խնդրէ զքեզ սպանանել։
21 Պատասխանի ետ նոցա Յիսուս և
ասէ. Գործ մի գործեցի, և ամենեքին

22 զարմացեալ էք։ Վասն այնորիկ Մով-
սէս ետ ձեզ զթլփատութիւն, զի ոչ
եթէ ի Մովսիսի էր, այլ ի հարց
անտի, և ի շաբաթու թլփատէք
23 զմարդ։ Իսկ արդ՝ եթէ զթլփատու-
թիւն առնու մարդ ի շաբաթու, զի
մի օրէնքն Մովսիսի լուծցին, ընդիս
ցասուցեալ էք՝ զի զողջոյն իսկ մարդ
24 բժշկեցի ի շաբաթու։ Մի ըստ աչս
դատիք, այլ ուղիղ դատաստան արա-
25 րէք։ Ասէին ոմանք յԵրուսաղէմացւոց
անտի. Ո՞չ նա է սա՝ զոր խնդրէին
26 սպանանել. Եւ ահաւասիկ յայտնապէս
խօսի, և չասեն ինչ ընդ դմա. գուցէ
արդեօք իշխանքն գիտացի՞ն՝ եթէ
27 սա է Քրիստոսն։ Այլ զսա գիտեմք
ուստի է. իսկ Քրիստոսն յորժամ
28 գայցէ, ոչ ոք գիտէ ուստի է։ Աղա-
ղակեաց Յիսուս ի տաճարին, ուսու-
ցանէր և ասէր. Եւ զիս գիտէք և
ուստի եմ գիտէք. և յանձնէ իմմէ
ոչ եմ եկեալ, այլ է ճշմարիտ՝ որ
առաքեացն զիս, զոր դուքն ոչ գիտէք։
29 Ես գիտեմ զնա, զի ի նմանէ իսկ
30 եմ, և նա առաքեաց զիս։ Խնդրէին
զնա ունել, և ել ի ձեռաց նոցա, և

ոչ ոք արկ ի նա ձեռն, զի չև էր
31 հասեալ ժամ նորա։ Եւ բազումք ի
ժողովրդենէն հաւատացին ի նա, և
ասէին. Քրիստոսն յորժամ գայցէ՝
միթէ աւելի՞ ինչ նշանս առնիցէ՝
32 քան զոր սայս առնէ։ Եւ լուան փա-
րիսեցիքն զտրտունջ ժողովրդեանն
զնմանէ, և առաքեցին քահանայա-
պետքն և փարիսեցիքն սպասաւորս՝
33 զի կալցեն զնա։ Ասէ Յիսուս. Փոքր
մի ևս ժամանակ ընդ ձեզ եմ և
երթամ առ այն՝ որ առաքեացն զիս։
34 Խնդրիցէք զիս և ոչ գտանիցէք, և
ուր եմն եմ դուք ոչ կարէք գալ։
35 Ասէին հրեայքն ընդ միմեանս. Իսկ
յո՞ երթայցէ դա, զի մեք ոչ գտա-
նիցեմք զդա. միթէ ի սփիւռս հե-
թանոսաց երթայցէ և ուսուցանիցէ
36 զհեթանոսս։ Զի՞նչ է բանն այն՝ զոր
ասաց. խնդրիցէք զիս և ոչ գտանի-
ցէք, և ուր եմն երթամ՝ դուք ոչ
կարէք գալ։
37 Ի վերջնում աւուր մեծի տօնին
կայր Յիսուս, աղաղակէր և ասէր.
Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ
38 իս և արբցէ։ Որ հաւատայ յիս՝ որ-

պէս և ասեն գիրք, գետք յորովայնէ
նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան։
39 Զայս ասէր վասն Հոգւոյն՝ զոր ըն-
դունելոց էին որ հաւատային ի նա.
զի չև՝ էր Հոգի, քանզի Յիսուս չև
40 էր փառաւորեալ։ Ոմանք ի ժողովր-
դենէ իբրև լսէին զբանս զայս՝ ասէին,
41 Սա է ճշմարիտ մարգարէն։ Այլքն
ասէին. Սա է Քրիստոսն. իսկ կէսքն
ասէին. Միթէ ի Գալիլեէ՞ գալոց իցէ
42 Քրիստոսն։ Ո՞չ գիրք ասեն, եթէ ի
զաւակէ Դաւթի և ի Բեթղեհեմ
գեղջէ, ուր Դաւիթն էր՝ գալոց է
43 Քրիստոսն։ Եւ եղև հերձուած ի մէջ
44 ժողովրդեանն վասն նորա. Եւ ոմանք
ի նոցանէ կամէին ունել զնա, այլ
ոչ ոք մխեաց ի նա ձեռս։
45 Եւ եկին անդրէն սպասաւորքն առ
քահանայապետսն և փարիսեցիս, և ա-
սեն ցնոսա. Ընդէ՞ր ոչ ածէք զնա
46 այսր։ Պատասխանի ետուն սպասա-
ւորքն և ասեն. Ո՛չ երբէք այնպէս խօ-
47 սեցաւ մարդ, որպէս այրն այն։ Պա-
տասխանի ետուն փարիսեցիքն և ա-
48 սեն. Միթէ և դո՞ւք մոլորեցարուք. Մի-
թէ ոք յիշխանացն հաւատա՞ց ի նա՝ կամ

49 ի փարիսեցւոց. Այլ այն ամբոխ՝ որ ոչ
50 գիտէ զօրէնս և նզովեալք են։ Ասէ
Նիկոդիմոս ցնոսա, որ եկեալն էր առ
նա գիշերին յառաջագոյն, և մի էր
51 ի նոցանէ. Միթէ օրէնքն մեր դատի՞ն
զմարդ՝ եթէ ոչ լսեն ինչ նախ ի
նմանէ. կամ գիտեն զինչ գործէ։
52 Պատասխանի ետուն նմա և ասեն.
Միթէ և դո՞ւ ես ի Գալիլեէ իցես.
քննեա և տես, զի մարգարէ ի Գա-
լիլեէ ոչ յառնէ։

ԳԼՈՒԽ Ը.

1 Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա
Յիսուս և ասէ. Ես եմ լոյս աշխար-
հի. որ գայ զկնի իմ ընդ խաւար
մի գնասցէ, այլ ընկալցի զլոյսն
2 կենաց։ Ասեն ցնա փարիսեցիքն. Դու
վասն անձին քո վկայես, և վկայու-
3 թիւն քո չէ՞ ճշմարիտ։ Պատասխանի
ետ Յիսուս և ասէ ցնոսա. Թէպէտ
և ես վկայեմ վասն անձին իմոյ,
վկայութիւն իմ ճշմարիտ է, զի գի-
տեմ ուստի եկի և յո՞ երթամ. բայց

դուք ո՛չ գիտէք ուստի գամ կամ յո՛
4 երթամ։ Դուք ըստ մարմնոյ դատիք.
5 ես ո՛չ դատիմ և ո՛չ զոք։ Թէպէտ և
դատիմ ես զոք, դատաստանն իմ
ճշմարիտ է, զի չեմ միայն, այլ ես և որ
6 առաքեացն զիս Հայր։ Եւ յօրէնսն
իսկ ձեր գրեալ է, թէ երկուց մար-
7 դոց վկայութիւն ճշմարիտ է։ Ես եմ
որ վկայեմ վասն իմ, և վկայէ վասն
8 իմ որ առաքեացն զիս Հայր։ Ասէին
ցնա. Ո՞ւր է Հայր քո։ Պատասխանի
ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ո՛չ զիս
գիտէք և ո՛չ զՀայրն իմ. եթէ զիս
գիտէիք՝ և զՀայրն իմ թերևս գի-
9 տէիք։ Զայս բանս խօսեցաւ ի տան
գանձին, յորժամ ուսուցանէր ի տա-
ճարի անդ. և ոչ ո՛ք կալաւ զնա, զի
չև ևս հասեալ էր ժամ նորա։
10 Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս. Ես
երթամ, և խնդրիցէք զիս, և ի մեղս
ձեր մեռանիցիք. զի ուր ես երթամ՝
11 դուք ո՛չ կարէք գալ։ Ասէին Հրեայքն.
Միթէ զիւրովին երթայցէ, զի ասէ,
թէ ուր ես երթամ՝ դուք ո՛չ կարէք
12 գալ։ Եւ ասէ ցնոսա. Դուք ի ներ-
քուստ աստի էք, և ես ի վերուստ

անտի եմ. դուք յաշխարհէ աստի էք,
13 ես չե՛մ յայսմ աշխարհէ։ Բայց ասացի
ձեզ՝ թէ ի մեղս ձեր մեռանիցիք. զի
թէ ո՛չ հաւատայցէք թէ ես եմ, մե-
14 ռանիցիք ի մեղս ձեր։ Ասեն ցնա.
Դու ո՞վ ես։ Ասէ ցնոսա Յիսուս.
Նախ զի և խօսիմս իսկ ընդ ձեզ։
15 Բազում ինչ ունիմ վասն ձեր խօ-
սել և դատել. այլ որ առաքեացն զիս
ճշմարիտ է, և ես զոր լուայ ի նմանէ,
16 զայն խօսիմ յաշխարհի։ Եւ ո՛չ գի-
17 տացին՝ թէ զՀօրէ ասէր ցնոսա։ Ասէ
ցնոսա Յիսուս. Յորժամ բարձրա-
ցուցանիցէք զՈրդի մարդոյ, յայնժամ
գիտասջիք՝ թէ ես եմ, և յանձնէ
իմմէ ինչ ո՛չ առնեմ, այլ որպէս ու-
18 սոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ։ Եւ
որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ո՛չ
եթող զիս միայն, զի ես զհաճոյս նորա
առնեմ հանապազ։
19 Իբրև զայս խօսեցաւ՝ բազումք հա-
20 ւատացին ի նա։ Եւ ասէր Յիսուս
առ հրեայսն հաւատացեալս. Եթէ
դուք կայջիք ի բանին իմում, ճշմա-
21 րիտ աշակերտք իմ էք, Եւ ծանիջիք
զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն

22 ազատեսցէ զձեզ: Պատասխանի ետուն
նմա և ասեն. Զաւակ Աբրահամու
եմք, և ոչ ումեք երբէք ծառայեցաք.
զիա՞րդ ասես թէ ազատք լինիջիք:
23 Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ամէն
ամէն ասեմ ձեզ. թէ ամենայն որ առնէ
24 զմեղս ծառայ է մեղաց: Եւ ծառայն
ոչ յաւիտեան կայ ի տան. իսկ որ-
25 դին յաւիտեան կայ: Իսկ արդ՝ եթէ
որդին զձեզ ազատեսցուսցէ, ճշմարիտ
26 ազատք լինիջիք: Գիտեմ զի զաւակ
Աբրահամու էք. այլ խնդրէք սպա-
նանել զիս, զի բանին իմոյ չիք տեղի
27 ի ձեզ: Ես զոր տեսի առ Հօր իմում
խօսիմ. և դուք զոր լուարուք ի հօ-
28 րէն ձերմէ առնէք: Պատասխանի
ետուն նմա և ասեն. Հայր մեր Աբ-
րահամ է: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ
որդիք Աբրահամու էիք՝ զգործսն
29 Աբրահամու գործէիք. Այլ այժմիկ
խնդրէք սպանանել զիս, զայր մի՝ որ
ձեզ զճշմարտութիւն խօսեցայ, զոր
լուայ ի Հօրէ իմմէ. զայդ Աբրահամ
30 ոչ արար: Դուք առնէք զգործս հօրն
ձերոյ: Ասեն ցնա. Մեք ի պոռնկու-
թենէ չեմք ծնեալ. մի է Հայր մեր՝

31 Աստուած: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ
Աստուած էր հայր ձեր, սիրէիք ար-
դեօք զիս. զի ես յԱստուծոյ ելի և
եկի. և ոչ եթէ յանձնէ ինչ եկի, այլ
32 նա առաքեաց զիս: Ընդէ՞ր զխօսս իմ
ոչ գիտէք դուք. վասն զի ոչ կարէք
33 լսել զբանն իմ: Դուք ի հօրէ ի սա-
տանայէ էք և զցանկութիւնս հօրն
ձերոյ կամիք առնել. զի նա մար-
դասպան էր ի սկզբանէ և ի ճշմար-
տութեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճշմար-
տութիւն ի նմա: Յորժամ խօսիցի
սուտ՝ յիւրոց անտի խօսի, զի սուտ
34 է և հայր նորա: Իսկ ես՝ զի զճշմար-
տութիւն խօսիմ, ոչ հաւատայք ինձ:
35 Ո՞ ի ձէնջ յանդիմանէ զիս վասն
մեղաց. եթէ զճշմարիտն ասեմ ձեզ,
36 ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ: Որ էն
յԱստուծոյ զբանս Աստուծոյ լսէ. և
դուք վասն այնորիկ ոչ լսէք, զի չէ՞ք
37 յԱստուծոյ: Պատասխանի ետուն
հրեայքն և ասեն ցնա. Ո՞չ բարւոք
ասեմք մեք՝ եթէ Սամարացի ես դու
38 և դև գոյ ի քեզ: Պատասխանի ետ
Յիսուս և ասէ. Յիս դև ոչ գոյ, այլ
պատուեմ զՀայր իմ, և դուք անար-

39 զէք զիս։ Ես ոչ խնդրեմ զփառս իմ.
40 է որ խնդրէ և դատի։ Ամէն ամէն
ասեմ ձեզ, եթէ ոք զբանն իմ պա-
հեսցէ, զմահ մի՛ տեսցէ յաւիտեան։
41 Ասեն ցնա հրեայքն. Արդ՝ գիտացաք
թէ դև գոյ ի քեզ։ Աբրահամ մեռաւ
և մարգարէքն, և դու ասես՝ եթէ ոք
զբանն իմ պահեսցէ, մի՛ ճաշակեսցէ
42 զմահ ի յաւիտեան։ Միթէ դու մեծ
ինչ ոք իցես քան զհայր մեր Աբրա-
համ, որ մեռաւ, և մարգարէքն մե-
ռան. արդ՝ դու զո՞ առնես զքեզ։
43 Պատասխանի ետ Յիսուս. Եթէ ես
փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ
ոչինչ են. է Հայր՝ որ փառաւորէ զիս,
զորմէ դուքն ասէք՝ թէ Աստուած
44 մեր է, և ոչ ճանաչէք զնա. Բայց ես
գիտեմ զնա. և եթէ ասեմ, թէ ո՛չ
գիտեմ զնա, ձեզ նման սուտ լինիմ.
այլ գիտեմ զնա և զբանն նորա պա-
45 հեմ։ Աբրահամ հայր ձեր ցանկացաւ
տեսանել զօր իմ, ետես և ուրախ
46 եղև։ Ասեն ցնա հրեայքն. Յիսուն ամ
չև ևս է քո և զԱբրահա՞մ տեսեր։
47 Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ
ձեզ, յառաջ քան զլինել Աբրահամու

48 եմ ես։ Վէմս առին՝ զի արկցեն ի
վերայ նորա. և Յիսուս խոյս ետ և
ել գնաց ի տաճարէ անտի։

ԳԼՈՒԽ Թ.

1 Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր
2 մի կոյր ի ծնէ։ Եւ հարցին ցնա ա-
շակերտքն նորա և ասեն. Ռա՛բբի,
ո՞յր մեղաւ է, սորա՞ թէ հօր և մօր
3 իւրոյ, զի կոյր ծնցի։ Պատասխանի
ետ Յիսուս. Ո՛չ դորա մեղաւ է և ոչ
հօր և մօր իւրոյ, այլ զի յայտնի
4 լիցին գործքն Աստուծոյ ի դմա։ Եւ
ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝
որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ.
գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ
5 գործել։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս
6 եմ աշխարհի։ Զայս իբրև ասաց, ե-
թուք ի գետին և արար կաւ ի թքոյն,
և ծեփեաց զկաւն ի վերայ աչաց
7 կուրին, Եւ ասէ ցնա. Ե՛րթ լուա՛
յաւազանին Սելովամայ. որ թարգ-
մանի առաքեալ։ Չոգաւ լուացաւ,
8 եկն և տեսանէր։ Իսկ դրացիքն և

որոց տեսեալն էր զնա յառաջագոյն՝
թէ մուրացիկ էր, ասէին. Ո՞չ սա է
9 որ նստէրն և մուրանայր։ Կէսքն
ասէին՝ նա է, այլքն ասէին. Ո՛չ, այլ
նման է նմա. և ինքն ասէր՝ թէ ես
10 եմ։ Ասեն ցնա. Իսկ զիա՞րդ բացան
11 աչք քո։ Նա ետ պատասխանի. Այր
մի՝ որում Յիսուսն ասեն, կաւ արար
և ծեփեաց զաչս իմ և ասէ ցիս. Ե՛րթ
ի Սիլովամ և լուա՛. չոգայ լուացայ
12 և տեսանեմ։ Ասեն ցնա. Ո՞ւր է նա։
Ասէ ցնոսա. Ո՛չ գիտեմ։
13 Ածին առ փարիսեցիսն զնա, որ
14 երբեմն կոյրն էր։ Եւ էր շաբաթ՝
յորժամ զկաւն արար Յիսուս և եբաց
15 զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին
զնա փարիսեցիքն, թէ զիա՞րդ տե-
սանես։ Եւ նա ասէ ցնոսա. Կաւ եդ
ի վերայ աչաց իմոց, և լուացայ և
16 տեսանեմ։ Ասեն ոմանք ի փարիսե-
ցւոցն. Ո՛չ է այրն այն յԱստուծոյ,
որ զշաբաթս ո՛չ պահէ։ Կէսքն ասէին.
Իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր
այսպիսի նշանս առնել։ Եւ էին հեր-
17 ձուածք ի մէջ նոցա։ Ասեն դարձեալ
ցկոյրն. Դու զի՞ ասես վասն նորա՝

զի եբաց զաչս քո։ Եւ նա ասէ՝ թէ
18 մարգարէ է։ Եւ ո՛չ հաւատացին
հրեայքն զնմանէ, թէ կոյր էր և
բացաւ, մինչև կոչեցին զծնօղս բա-
19 ցելոյն։ Հարցին ցնոսա և ասեն. Սա՞
է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք,
եթէ կոյր ծնաւ. արդ զիա՞րդ տեսա-
20 նէ։ Պատասխանի ետուն ծնօղքն նորա
և ասեն. Գիտեմք զի սա է որդին
21 մեր և զի կոյր ծնաւ. Բայց զիա՞րդ
այժմ տեսանէ՝ ո՛չ գիտեմք, կամ թէ
ո՞ եբաց զաչս դորա՝ մեք ո՛չ գիտեմք.
ցդա իսկ հարցէք, ինքնին ի չափ
հասեալ է, ինքն իսկ խօսեսցի վասն
22 իւր։ Զայս ասացին ծնօղքն նորա,
զի երկնչէին ի հրէից. քանզի ուխտ
եդեալ էր հրէից, եթէ ոք խոստովա-
նեսցի զնա Քրիստոս՝ ի բաց կացցէ
23 ի ժողովրդենէն։ Վասն այնորիկ ասա-
ցին ծնօղքն նորա, թէ ինքնին ի չափ
24 հասեալ է, ցնա իսկ հարցէք։ Դարձեալ
կրկին անգամ կոչեցին զայրն՝ որ
կոյրն էր, և ասեն ցնա. Տո՛ւր փառս
Աստուծոյ, մեք գիտեմք՝ զի այրն այն
25 մեղաւոր է։ Եւ նա ասէ. Թէ մեղա-
ւոր է՝ ես ո՛չ գիտեմ. բայց զայս

գիտեմ, զի կոյր էի և արդ տեսանեմ։
26 Դարձեալ ասեն ցնա. Զի՞նչ արար
27 քեզ. զիա՞րդ եբաց զաչս քո։ Պա-
տասխանի ետ նոցա. Այժմ ասացի
ձեզ և ո՛չ լուարուք. զի՞ կամիք միւ-
անգամ լսել. միթէ և դո՞ւք կամիք
28 աշակերտել նմա։ Նոքա հայհոյէին
զնա և ասէին. Դո՛ւ լիջիր նորա աշա-
կերտ, մեք Մովսիսի աշակերտք եմք.
29 Մեք գիտեմք՝ զի ընդ Մովսիսի խօ-
սեցաւ Աստուած. զսա ո՛չ գիտեմք
30 ուստի իցէ։ Պատասխանի ետ այրն
և ասէ ցնոսա. Այդ իսկ են զարմանչե-
լիքն, զի դուք ո՛չ գիտէք ուստի իցէ,
31 և զիմ զաչս եբաց։ Գիտեմք՝ զի Աս-
տուած մեղաւորաց ո՛չ լսէ. բայց եթէ
աստուածապաշտ ոք իցէ և զկամս
32 նորա առնիցէ՝ նմա լսէ։ Ի յաւիտե-
նից ոք ո՛չ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս
33 կուրի ի ծնէ կոյր ծնելոյ. Եթէ ոչ
յԱստուծոյ էր այրն այն՝ ո՛չ կարէր
34 առնել ինչ։ Պատասխանի ետուն և
ասեն ցնա. Ի մեղս իսկ ծնեալ ես
ամենեքին, և դու վարդապետս լինիս
35 մեզ։ Եւ հանին զնա արտաքս։ Լուաւ
Յիսուս՝ եթէ հանին զնա արտաքս,

և իբրև եգիտ զնա՝ ասէ ցնա. Դու
36 հաւատա՞ս յՈրդի Աստուծոյ։ Նա պա-
տասխանի ետ և ասէ. Տէր, ո՞վ է՝ զի
37 հաւատացից ի նա։ Ասէ ցնա Յիսուս.
Եւ տեսեր զնա, և որ խօսիդ ընդ
38 քեզ՝ նա է։ Եւ նա ասէ. Հաւատամ
Տէր. և երկիր եպագ նմա։
39 Եւ ասէ Յիսուս. Ի դատաստան
եկի յաշխարհս յայս, զի որ ոչն տե-
սանեն տեսցեն և որք տեսանենն
40 կուրասցին։ Լուան ոմանք ի փարի-
սեցւոցն՝ որք ընդ նմա էին, և ասեն
41 ցնա. Միթէ և մեք կո՞յրք իցեմք։ Ասէ
ցնոսա Յիսուս. Եթէ կոյրք էիք՝ ո՛չ
էր ձեր մեղ. բայց արդ ասէք՝ եթէ
տեսանեմք, և մեղքն ձեր ի ձեզ հաս-
տատեալ են։

ԳԼՈՒԽ Ժ.

1 Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ոչ
մտանէ ընդ դուռնն ի գաւիթ ոչխա-
րաց, այլ ընդ այլ ելանէ, նա գող է
2 և աւազակ։ Իսկ որ մտանէ ընդ
3 դուռն հովիւ է ոչխարաց։ Նմա դռն-

նաւապանն բանայ, և ոչխարքն ձայնի
նորա լսեն, և զիւր ոչխարսն կոչէ
4 յանուանէ և հանէ զնոսա։ Եւ յորժամ
զիւրն զամենայն հանիցէ, առաջի
նոցա երթայ, և ոչխարքն զհետ նորա
երթան, զի ճանաչեն զձայն նորա.
5 Զօտարի զհետ ոչ երթիցեն, այլ
փախիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչեն
6 զձայն օտարաց։ Զայս առակ ասաց
նոցա Յիսուս, և նոքա ոչ գիտէին՝
զինչ էր որ խօսէրն ընդ նոսա։
7 Դարձեալ ասէ ցնոսա Յիսուս. Ամէն
ամէն ասեմ ձեզ, ես եմ դուռն ոչ-
8 խարաց։ Ամենեքեան՝ որ յառաջ քան
զիս եկին, գողք էին և աւազակք,
9 այլ ոչ լուան նոցա ոչխարքն։ Ես եմ
դուռնն. ընդ իս եթէ ոք մտանիցէ՝
կեցցէ, մտցէ և ելցէ և ճարակ գտցէ։
10 Գող ոչ գայ՝ եթէ ոչ զի գողասցի և
սպանցէ և կորուսցէ. ես եկի զի
զկեանս ունիցին և առաւել ես ունի-
11 ցին։ Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ
զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց.
12 Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ
ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ
զգայլն զի գայ, թողու զոչխարսն և

փախչի, և գայլն յափշտակէ զնոսա
13 և ցրուէ. Քանզի վարձկան է, և չէ
14 փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ
հովիւ քաջ, և ճանաչեմ զիմսն, և
15 ճանաչիմ յիմոցն. Որպէս գիտէ զիս
Հայր, գիտեմ և ես զՀայրն, և զանձն
16 իմ դնեմ ի վերայ ոչխարաց։ Նա և այլ
ես ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ
գաւթէ. և զայնս ես պարտ է ինձ
ածել այսր, և ձայնի իմում լուիցեն.
17 և եղիցին մի հօտ և մի հովիւ։ Վասն
այնորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես
դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից
18 զնա։ Ոչ ոք հանէ զնա յինէն, այլ
ես դնեմ զնա անձամբ իմով. իշխա-
նութիւն ունիմ դնել զնա, և իշխա-
նութիւն ունիմ միւսանգամ առնուլ
զնա. զայս պատուէր առի ի Հօրէ
19 իմմէ։ Դարձեալ հերձուած լինէր ի
մէջ հրէից վասն բանիցս այսոցիկ։
20 Եւ ասէին բազումք ի նոցանէ. Դև
գոյ ի նմա և մոլեգնի, զի՞ ընաւ լսէք
21 նմա։ Կէսքն ասէին. այսպիսի բանք
ոչ դիւահարի են. միթէ դև կարէ՞
զաչս կուրի բանալ։
22 Եղեն յայնժամ նաւակատիքն յԵ-

23 րուսաղէմ, և ձմեռն էր. Եւ շրջէր
Յիսուս ի տաճարին ի սրահին Սո-
24 ղոմոնի։ Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն
և ասեն. Մինչև յերբ թափես զոգիս
մեր. եթէ դու ես Քրիստոսն՝ ասա
25 մեզ համարձակ։ Պատասխանի ետ
նոցա Յիսուս և ասէ. Ասացի ձեզ և
ոչ հաւատայք ինձ. զգործսն՝ զոր ես
գործեմ յանուն Հօր իմոյ, նոքին իսկ
26 վկայեն վասն իմ։ Այլ դուք ոչ հաւա-
տայք, զի չէք յոչխարաց անտի իմոց։
27 Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես
ճանաչեմ զնոսա, և զկնի իմ գան,
28 Եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտե-
նականս, և մի ոք յափշտակեսցէ
29 զնոսա ի ձեռաց իմոց։ Հայրն իմ, որ
ետ ինձ զնոսա, մեծ է քան զամե-
նայն, և ոչ ոք կարէ յափշտակել ի
30 ձեռաց Հօր իմոյ։ Ես և Հայր իմ մի
31 եմք։ Վէմս առին Հրեայքն՝ զի քար-
32 կոծ արասցեն զնա։ Պատասխանի ետ
նոցա Յիսուս. Բազում գործս բարիս
ցուցի ձեզ ի Հօրէ իմմէ. վասն որո՞յ
գործոյ ի նոցանէ քարկոծ առնէք զիս։
33 Պատասխանի ետուն նմա Հրեայքն.
Վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք

զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյու-
թեան, և զի դու մարդ ես, և զանձն
34 քո Աստուած առնես։ Պատասխանի
ետ նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնսն ձեր
գրեալ է. ես ասացի՝ թէ աստուածք
35 էք։ Իսկ եթէ զնոսա աստուածս
ասէ, առ որս բանն Աստուծոյ եղև,
36 և չէ մարթ եղծանել գրոյն. Իսկ զոր
Հայր սրբեաց և առաքեաց յաշխարհս,
դուք ասէք՝ թէ հայհոյես, զի ասացի՝
37 թէ որդի Աստուծոյ եմ։ Եթէ ոչ գոր-
ծեմ զգործս Հօր իմոյ, մի հաւատայք
38 ինձ. Ապա թէ գործեմ, թէև ինձ ոչ
հաւատայք, սակայն գործոյն հաւա-
տացէք, զի գիտասջիք և ծանիջիք՝
39 եթէ Հայր յիս և ես ի Հայր։ Դար-
ձեալ խնդրէին զնա ունել, և ել ի
ձեռաց նոցա։
40 Եւ գնաց միւսանգամ յայնկոյս
Յորդանանու, ի տեղին՝ ուր էր Յով-
հաննէս զառաջինն և մկրտէր, և անդ
41 լինէր։ Եկին բազումք առ նա և ասեն,
զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար,
42 Բայց զամենայն՝ զոր ասաց Յովհան-
նէս վասն նորա՝ ճշմարիտ էր։ Եւ
բազումք հաւատացին ի նա անդ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Եւ էր ոմն հիւանդ՝ Ղազարոս ի
Բեթանիայ. ի գեղջէ Մարեմայ և
2 Մարթայի քեռ նորա։ Այս այն Մա-
րիամ էր, որ օծ զՏէրն իւղով և
ջնջեաց զոտս նորա հերով իւրով.
որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր։
3 Առաքեցին առ նա քորքն նորա և
ասեն. Տէր, ահաւասիկ զոր դուն սի-
4 րէիր հիւանդացեալ է։ Իբրև լուաւ
Յիսուս, ասէ. Այն հիւանդութիւն չէ
ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ,
զի փառաւոր լիցի Որդի Աստուծոյ
5 այնուիկ։ Եւ սիրէր Յիսուս զՄարթա
և զքոյր նորա զՄարիամ և զՂազար։
6 Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է,
զտեղի կալաւ անդէն ուր էրն աւուրս
7 երկուս. Ապա յետ այնորիկ ասէ
ցնոսա. Եկայք երթիցուք միւսանգամ
8 ի Հրէաստան։ Ասեն ցնա աշակերտ-
քըն. Ռաբբի, այժմ ես խնդրէին զքեզ
հրեայքն քարկոծ առնել, և դարձեալ
9 երթաս անդրէն։ Պատասխանի ետ

Յիսուս. Ո՞չ երկոտասան ժամ է
աւուր. եթէ ոք գնայ ի տունջեան՝
ոչ գայթակղի, զի զլոյս աշխարհիս
10 այսորիկ տեսանէ. Ապա թէ ոք գնայ
գիշերի՝ գայթակղի, զի լոյս ոչ գոյ
11 ընդ նմա։ Զայս իբրև ասաց, յետ
այսորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բա-
րեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի
12 զարթուցից զնա։ Ասեն ցնա աշա-
կերտքն. Տէր, եթէ ննջեաց՝ ապա
13 ապրի։ Այլ Յիսուս վասն մահու նորա
ասէր. նոցա այսպէս թուեցաւ՝ թէ
14 վասն ննջելոյ քնոյն ասէր։ Յայնժամ
ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս. Ղա-
15 զարոս մեռաւ, Եւ ես ուրախ եմ
վասն ձեր, զի դուք հաւատասջիք
ինձ, զի ես չէի անդ. բայց արդ եկայք
16 երթիցուք առ նա։ Ասէ Թովմաս՝
անուանեալն երկուորեակ, ցաշակեր-
տակիցսն. Ո՛ն, եկայք և մեք՝ զի ընդ
նմա մեռցուք։

17 Եկն Յիսուս և եգիտ զնա չորեքօ-
18 րեայ ի գերեզմանի։ Եւ էր Բեթանիա
մերձ յԵրուսաղէմ իբրև ապարիսօք
19 հնգետասան։ Բազումք ի հրէից անտի
եկեալ էին առ Մարթա և Մարիամ,

գի մխիթարեսցեն զնոսա վասն եղ-
20 բօրն։ Մարթա իբրև լուաւ՝ եթէ
Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա,
բայց Մարիամ նստէր անդէն ի տան։
21 Ասէ . Մարթա ցՅիսուս. Տէր, եթէ
աստ լեալ էիր եղբայրն իմ չէր մե-
22 ռեալ։ Այլ և արդ գիտեմ, եթէ զոր
ինչ և խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ
23 քեզ Աստուած։ Ասէ ցնա Յիսուս.
24 Յարիցէ եղբայրն քո։ Ասէ ցնա Մար-
թա. Գիտեմ, զի յարիցէ ի յարու-
25 թեան յաւուրն յետնում։ Ասէ ցնա
Յիսուս. Ես իսկ եմ յարութիւն և
կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ և
26 մեռանի՝ կեցցէ. Եւ ամենայն որ կեն-
դանի է և հաւատայ յիս՝ մի՛ մեռցի
ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ։
27 Ասէ ցնա. Այո՛, Տէր, ես հաւատացի՝
եթէ դու ես Քրիստոսն Որդի Աս-
28 տուծոյ, որ յաշխարհ գալոց էիր։ Եւ
զայս իբրև ասաց՝ գնաց և կոչեաց
զՄարիամ զքոյր իւր լռելեայն և ասէ.
Վարդապետն եկեալ է և կոչէ զքեզ։
29 Նա իբրև լուաւ՝ յարեաւ վաղվաղակի
30 և եկն առ նա. Զի ևս էր եկեալ Յի-
սուս ի գեօղն, այլ էր անդէն ի տեղ-

ւոջն՝ ուր ընդ առաջ եղև նմա Մար-
31 թա։ Իսկ հրեայքն՝ որ էին ընդ նմա
ի տան անդ և մխիթարէին զնա,
իբրև տեսին զՄարիամ՝ թէ յարեաւ
վաղվաղակի և գնաց, գնացին և նոքա
զհետ նորա, համարէին թէ ի գերեզ-
32 մանն երթայ՝ զի լացցէ անդ։ Իսկ
Մարիամ՝ իբրև եկն ուր էրն Յիսուս
և ետես զնա, անկաւ առ ոտս նորա
և ասէ. Տէր, եթէ աստ էիր դիպեալ՝
33 ո՛չ էր մեռեալ եղբայրն իմ։ Յիսուս՝
իբրև ետես զնա զի լայր և որ ընդ
նմա էին հրեայքն լային, խռովեցաւ
34 յոգի իւր իբրև զայրացեալ, Եւ ասէ.
Ո՞ւր եդիք զնա։ Ասեն ցնա. Տէր,
35 եկ և տես։ Եւ արտասուեաց Յիսուս։
36 Ասէին հրեայքն. Տեսէք ո՛րչափ սիրէր
37 զնա։ Կէսքն ի նոցանէ ասէին. Ո՞չ
կարէր սա, որ եբաց զաչս կուրին,
38 առնել՝ զի և սա մի՛ մեռցի։ Յիսուս
դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր՝
գայ ի գերեզմանն. և էր այր մի, և
39 վէմ մի եդեալ ի վերայ նորա։ Եւ
ասէ Յիսուս. Ի բա՛ց արարէք զվէմդ։
Ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն.
Տէր, արդ հոտեալ իցէ, քանզի չո-

40 չորեքօրեայ է։ Ասէ ցնա Յիսուս. Ո՞չ
ասացի քեզ, եթէ հաւատայցես՝
41 տեսցես զփառսն Աստուծոյ։ Եւ իբրև
ի վեր առին զվէմն, Յիսուս ամբարձ
զաչս իւր ի վեր և ասէ. Հա՛յր, գո-
42 հանամ զքէն, զի լուար ինձ։ Եւ ես
գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ.
այլ վասն ժողովրդեանս որ շուրջ
կան առնեմ, զի հաւատասցեն՝ թէ
43 դու առաքեցեր զիս։ Զայս իբրև ա-
սաց, ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ.
44 Ղա՛զարէ, արի՛ եկ արտաքս։ Եւ ել
մեռեալն ոտիւք կապելովք և ձեռօքն
երիզապնդօք և երեսօքն վարշամա-
կապատօք. և ասէ ցնոսա Յիսուս.
45 Լուծէք զդա և թողէք երթալ։ Բա-
զումք ի հրէիցն՝ որ եկեալ էին առ
Մարեմանս, իբրև տեսին զոր արարն՝
46 հաւատացին ի նա։ Եւ ոմանք ի նո-
ցանէ գնացին առ փարիսեցիսն և
պատմեցին նոցա՝ զոր արար Յի-
սուս։
47 Ժողովեցին քահանայապետքն և
փարիսեցիքն ատեան, և ասեն. Զի՞նչ
արասցուք, զի այրն այն բազում
48 նշանս առնէ։ Եթէ թողումք զնա

այնպէս, ամենեքին հաւատան ի նա,
և գայցեն Հռոմք և բառնայցեն զազգս
49 մեր և զտեղի։ Մի ոմն ի նոցանէ՝
անուն Կայիափա, որ քահանայապետ
էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա.
50 Դուք ոչինչ գիտէք, Եւ ո՛չ բնաւ
խորհել իսկ, թէ լա՛ւ է մեզ՝ զի այր
մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս
51 և մի՛ ամենայն ազգս կորիցէ։ Զայս
ո՛չ յանձնէ ինչ ասաց, այլ զի քահա-
նայապետ էր տարւոյն այնորիկ,
մարգարէացաւ՝ եթէ մեռանելոց էր
52 Յիսուս ի վերայ ազգին, Եւ ո՛չ ի
վերայ ազգին միայն, այլ զի և զոր-
դիսն Աստուծոյ զցրուեալսն ժողո-
53 վեսցէ ի մի։ Ապա յայնմ օրէ խոր-
հուրդ արարին՝ զի սպանցեն զնա։
54 Եւ Յիսուս այնուհետև ո՛չ եթէ
համարձակ շրջէր ի մէջ հրէիցն, այլ
գնաց անտի յերկիր մի՝ որ մերձ էր
յանապատ, ի քաղաք մի՝ որում անուն
էր Եփրայիմ, և անդ լինէր աշակեր-
55 տօքն հանդերձ։ Եւ էր մերձ զատիկն
հրէից, և բազումք ելին յԵրուսաղէմ
ի գաւառէ անտի յառաջագոյն քան
զզատիկն, զի սրբեսցեն զանձինս

56 իւրեանց։ Խնդրէին զՅիսուս և ասէին
ընդ միմեանս՝ մինչ կային ի տաճա-
րին. Զի՞նչ թուի ձեզ, եթէ ո՛չ
գայցէ ի տօն այսր։ Պատուէր տուեալ
էր քահանայապետից և փարիսեց-
ւոց՝ զի թէ ոք գիտիցէ ուր է՝ գու-
շակեսցէ զնմանէ, զի կալցեն զնա։

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ
քան զզատիկն եկն ի Բեթանիա, ուր
էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն ի
2 մեռելոց։ Եւ արարին անդ նմա ընթ-
րիս, և ի սպասու կայր Մարթա, և
Ղազար մի էր ի բազմելոց ընդ նմա։
3 Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ
նարդեան ազնուի մեծագնոյ՝օծ զոտսն
Յիսուսի և հերով իւրով մաքրէր
զոտս նորա. և տունն լի եղև ի հոտոյ
4 իւղոյն։ Ասէ մի ոմն յաշակերտաց
անտի՝ Յուդա Իսկարիովտացի, որ
5 մատնելոցն էր զնա. Ընդէ՞ր ոչ իւղդ
այդ վաճառեցաւ երեք հարիւր դե-
6 նարի և տուաւ աղքատաց։ Զայս

ասաց՝ ո՛չ զի զաղքատաց ինչ փոյթ
էր նմա, այլ զի գող էր և զարկղն
ինքն ունէր, և որ ինչ անկանէրն՝
7 նա կրէր։ Ասէ Յիսուս. Թո՛յլ տուր
դմա, զի յօրն պատանաց իմոց պա-
8 հեսցէ զայդ։ Զաղքատս յամենայն
ժամ ընդ ձեզ ունիք, զիս ո՛չ հանա-
պազ ընդ ձեզ ունիք։
9 Իբրև գիտաց ժողովուրդ բազում ի
հրէիցն թէ անդ է՝ եկին, ո՛չ միայն
վասն Յիսուսի, այլ զի և զՂազար
տեսցեն, զոր յարոյցն ի մեռելոց։
10 Խորհուրդ արարին քահանայապետքն,
11 զի և զՂազար սպանցեն, Քանզի
բազումք ի հրէից երթային և հաւա-
տային ի Յիսուս։
12 Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում
13 որ եկեալ էր ի տօնն, Իբրև լուան
թէ գայ Յիսուս յԵրուսաղէմ, առին
ոստս արմաւենեաց և ելին ընդ առաջ
նորա, աղաղակէին և ասէին. Ո՛վ-
սաննա, օրհնեալ որ գաս յանուն
14 Տեառն՝ թագաւո՛րդ Իսրայէլի։ Եւ
գտեալ Յիսուսի էշ մի՝ նստաւ ի
15 վերայ նորա, որպէս և գրեալ է. Մի՛
երկնչիր, դուստր Սիովնի, ահաւասիկ

թագաւոր քո գայ նստեալ ի վերայ
16 յաւանակի իշոյ։ Եւ զայն ինչ ոչ
գիտացին աշակերտքն նորա զառա-
ջինն, այլ յորժամ փառաւորեցաւ
Յիսուս, յայնժամ յիշեցին, եթէ այն
էր՝ որ գրեալն էր վասն նորա, և զայն
17 արարին նմա։ Եւ ժողովուրդն վկայէր՝
որ էր ընդ նմա, թէ զՂազար կոչեաց
ևեթ ի գերեզմանէն և յարոյց զնա ի
18 մեռելոց։ Եւ վասն այնորիկ ընդ ա-
ռաջ ելև նմա ժողովուրդն, զի լուան՝
եթէ զայն նշանս արարեալ էր նորա։
19 Իսկ փարիսեցիքն ասէին ընդ մի-
միանս. Տեսանէք, զի ոչինչ օգտիք.
ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի
նորա գնաց։
20 Էին անդ ոմանք և հեթանոսք յե-
լելոց անդր՝ զի երկիրպագանիցեն ի
21 տօնին. Նոքա մատեան առ Փիլիպ-
պոս՝ որ ի Բեթսայիդայ Գալիլեաց-
ւոցն էր, աղաչէին զնա և ասէին.
22 Տէր, կամիմք զՅիսուս տեսանել։ Գայ
Փիլիպպոս և ասէ ցԱնդրէաս. Անդ-
րէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս։
23 Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա
և ասէ. Եհաս ժամ զի փառաւորեսցի

24 որդի մարդոյ։ Ամէն ամէն ասեմ ձեզ,
եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յեր-
կիր մեռանիցի, ինքն միայն կայ.
ապա եթէ մեռանիցի՝ բազում ար-
25 դիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր
արձակէ զնա, և որ ատեայ զանձն
իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանս
26 յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ
ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ,
և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն
իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ,
պատուեսցէ զնա Հայրն իմ։
27 Բայց այժմ անձն իմ խռովեալ է,
և զինչ ասացից, եթէ Հա՛յր, ապրեցո՛
զիս ի ժամէ աստի յայսմանէ. այլ
վասն այնորիկ եկի ի ժամս յայս։
28 Հա՛յր, փառաւորեա՛ զանուն քո։ Եկն
բարբառ յերկնից. Եւ փառաւոր ա-
րարի և դարձեալ փառաւոր արարից։
29 Եւ ժողովուրդն որ կայր և լսէր՝
ասէին որոտումն լինել. կէսքն ասէին.
30 Հրեշտակ խօսեցաւ ընդ նմա։ Պա-
տասխանի ետ Յիսուս և ասէ. Ո՛չ
վասն իմ ինչ եղև բարբառս այս, այլ
31 վասն ձեր։ Այժմիկ դատաստան է
աշխարհիս այսորիկ. այժմիկ իշխան

աշխարհիս այսորիկ ընկեսցի ար-
32 տաքս։ Եւ ես յորժամ բարձրացայց
յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս։
33 Զայս ասէր՝ նշանակեալ թէ որով
34 մահու մեռանելոց իցէ։ Պատասխանի
ետ նմա ժողովուրդն. Մեք լուաք
յօրինաց՝ եթէ Քրիստոսն յաւիտեան
կայ, և դու զիա՞րդ ասես՝ թէ պարտ
է բարձրանալ որդւոյ մարդոյ. ո՞վ է
35 այն որդին մարդոյ։ Ասէ ցնոսա Յի-
սուս. Փոքր միւս ես ժամանակ լոյս
ընդ ձեզ է. գնացէք մինչդեռ զլոյսն
ունիք, զի մի՛ խաւար ձեզ հասցէ.
զի որ գնայ ի խաւարի ոչ գիտէ յո՛
36 երթայ։ Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ
ունիք՝ հաւատացէք ի լոյսն, զի որդիք
լուսոյ եղիջիք։ Զայս խօսեցաւ Յի-
սուս, և չոգաւ թաքեաւ ի նոցանէ։
37 Եւ այնչափ նշանս արարեալ էր ա-
ռաջի նոցա, և նոքա ոչ հաւատային
38 ի նա, Զի լցցի բանն Եսայեայ մար-
գարէի՝ զոր ասացն. Տէ՛ր, ո՞ հաւատաց
ի լուր մեր, և բազուկ Տեառն ո՞ւմ
39 յայտնեցաւ։ Վասն այնորիկ ոչ կա-
րէին հաւատալ, զի միւսանգամ ասէ
40 Եսայի, Թէ կուրացոյց զաչս նոցա և

ապշեցոյց զսիրտ նոցա, զի մի՛ տես-
ցեն աչօք և իմասցին սրտիւք, և
41 դարձցին և բժշկեցից զնոսա։ Զայս
ասաց Եսայի, զի ետես զփառսն նորա,
42 և խօսեցաւ վասն նորա։ Բայց սա-
կայն և յիշխանաց անտի բազումք
հաւատացին ի նա, այլ վասն փարի-
սեցւոցն ոչ յայտնէին, զի մի՛ ի ժո-
43 ղովրդենէն ելանիցեն։ Քանզի սիրե-
ցին զփառս մարդկան՝ առաւել քան
զփառսն Աստուծոյ։
44 Եւ Յիսուս աղաղակէր և ասէր.
Որ հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս,
45 այլ յայն՝ որ առաքեացն զիս, Եւ որ
տեսանէ զիս զայն տեսանէ՝ որ ա-
46 ռաքեացն զիս։ Ես լոյս յաշխարհ եկի,
զի ամենայն որ հաւատայ յիս ի
47 խաւարի մի՛ մնասցէ։ Եւ եթէ ոք
լուիցէ բանից իմոց և ոչ պահիցէ,
ես ոչ դատեմ զնա. քանզի ոչ եկի
թէ դատեցայց զաշխարհ, այլ զի
48 փրկեցից զաշխարհ. Որ անարգէ զիս
և ոչ ընդունի զբանս իմ գոյ որ
դատի զնա. բանն՝ զոր ես խօսեցայ,
նա դատի զնա յաւուրն յետնում։
49 Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ,

այլ որ առաքեացն զիս Հայր՝ նա ետ
ինձ պատուէր՝ զինչ ասացից և զինչ
50 խօսեցայց։ Եւ գիտեմ եթէ պատուէրն
այն կեանք են յաւիտենականք։ Արդ
զոր եսն խօսիմ, որպէս ասաց ինձ
Հայրն՝ այնպէս խօսիմ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յառաջագոյն քան զտօնն զատկի
գիտաց Յիսուս՝ եթէ հասեալ է ժամ
նորա, զի փոխեսցի յաշխարհէ աստի
առ Հայր, սիրեաց զիւրսն՝ որ յաշ-
խարհի աստ էին, ի սպառ սիրեաց
2 զնոսա։ Եւ ի լինել ընթրեացն, սա-
տանայի իսկ արկեալ էր ի սիրտ՝ զի
մատնեսցէ զնա Յուդա Սիմովնի
3 Իսկարիովտացի, Գիտաց Յիսուս, զի
զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա,
և եթէ յԱստուծոյ ել և առ Աստուած
4 երթայ, Յառնէ յընթրեաց անտի և
դնէ զհանդերձսն, և առեալ ղենջակ
5 մի՝ սփածաւ. Եւ ապա առեալ ջուր՝
արկ ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս
աշակերտացն և սրբէր ղենջակաւն՝

6 զոր սփածեալն էր։ Գայ առ Սիմովն
Պետրոս, և նա ասէ ցնա. Տէր, դու
7 զիմ զոտս լուանաս։ Պատասխանի
ետ նմա Յիսուս և ասէ. Զոր ինչ
ես գործեմ՝ դու այժմ ոչ գիտես,
8 բայց ապա գիտասջիր։ Ասէ ցնա
Պետրոս. Ո՛չ լուասցես զոտս իմ յա-
ւիտեան։ Պատասխանի ետ նմա Յի-
սուս. Եթէ ոչ լուացից զքեզ, ոչ
9 ունիս ընդ իս մասն։ Ասէ ցնա Սիմովն
Պետրոս. Տէր, մի՛ միայն զոտս իմ,
10 այլև զձեռս և զգլուխ։ Ասէ ցնա
Յիսուս. Լուացելոյն չէ ինչ պիտոյ,
բայց զի զոտսն լուանայցէ, քանզի
ամենևին սուրբ է. և դուք սուրբ էք,
11 այլ ոչ ամենեքին։ Զի գիտէր զայն՝
որ մատնելոցն էր զնա. վասն այնո-
րիկ ասաց՝ թէ ոչ ամենեքին սուրբ
էք։
12 Եւ յորժամ լուաց զոտս նոցա, ա՛ռ
զհանդերձսն իւր և դարձեալ բազ-
մեցաւ, և ասէ ցնոսա. Գիտէ՞ք զինչ
13 արարի ձեզ։ Դուք կոչէք զիս՝ վար-
դապետ և տէր, և բարի ոք ասէք,
14 քանզի եմ իսկ։ Իսկ արդ եթէ ես
լուացի զոտս ձեր՝ տէրս և վարդա-

պետս, և դուք պարտիք զմիմեանց
15 զոտս լուանալ. Զի օրինակ մի ետու
ձեզ, զի որպէս ես ձեզ արարի և
16 դուք առնիջիք: Ամէն ամէն ասեմ
ձեզ, ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր,
և ոչ առաքեալ մեծ քան զայն՝ որ
17 առաքեայն զնա: Եթէ զայս գիտէք,
երանելի ես էք՝ եթէ առնիցէք զայս:
18 Ոչ վասն ամենեցուն ձեր ասեմ. զի
ես գիտեմ զորս ընտրեցի. այլ զի
լցցի գիրն, թէ որ ուտէր ընդ իս հաց
19 արար ինձ խաբէութիւն: Յայսմհետէ
իսկ ասեմ ձեզ մինչչև եղեալ, զի
յորժամ լինիցի՝ հաւատասջիք թէ ես
20 եմ: Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ըն-
դունի զոր ոք ես առաքեցից՝ զիս
ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի
զայն, որ առաքեացն զիս:
21 Զայս իբրև ասաց Յիսուս, խռովե-
ցաւ յոգի իւր, վկայեաց և ասէ. Ամէն
ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ
22 մատնելոց է զիս: Հայէին ընդ մի-
մեանս աշակերտքն, տարակուսեալք՝
23 թէ զումմէ ասիցէ: Եւ էր մի ոմն
յաշակերտացն բազմեալ առ Յիսու-
24 սիւ, զոր սիրէրն Յիսուս. Ակնարկէ

նմա Սիմովն Պետրոս հարցանել. ո՛վ
25 իցէ՝ վասն որոյ ասէն: Եւ նա անկեալ
զլանջօքն Յիսուսի՝ ասէ ցնա. Տէ՛ր,
26 ո՛վ է: Պատասխանի ետ Յիսուս և
ասէ. Այն է՝ որում ես թացից զպա-
տառն և տաց: Եւ թացեալ զպատառն
27 տայ Յուդայի Իսկարիովտացւոյ: Եւ
յետ պատառոյն՝ ապա եմուտ ի նա
սատանայ: Եւ ասէ ցնա Յիսուս. Արդ
զոր ինչ առնելոցն ես՝ արա՛ վաղվա-
28 ղակի: Եւ զայս ոչ ոք իմացաւ ի
բազմականաց անտի՝ թէ առ ինչ
29 ասաց ցնա. Զի ոմանք համարէին՝
թէ զի զարկղն ունէր Յուդա, ասաց
նմա Յիսուս. գնեա՛ ինչ որ պիտոյ
իցէ մեզ ի տօնիս, և կամ զի աղ-
30 քատաց ինչ տացէ: Իսկ նորա առեալ
զպատառն՝ ել արտաքս վաղվաղակի.
և էր գիշեր:
31 Եւ իբրև ել, ասէ Յիսուս. Այժմ
փառաւորեցաւ որդի մարդոյ, և Աս-
32 տուած փառաւորեցաւ ի նմա: Զի
եթէ Աստուած փառաւորեցաւ ի նմա,
և Աստուած փառաւորեսցէ զնա
յանձն իւր, և վաղվաղակի փառա-
33 ւորեսցէ զնա: Որդեակք իմ, փոքր

ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրի-
ցէք զիս, և որպէս ասացի ցհրեայսն՝
եթէ ուր ես երթամ դուք ոչ կարէք
34 գալ, և արդ ձեզ ասեմ։ Պատուիրան
նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս,
որպէս սիրեցի ես զձեզ՝ զի և դուք
35 սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ գիտաս-
ցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք
36 էք, եթէ սիրեցէք զմիմեանս։ Ասէ
ցնա Սիմոն Պետրոս. Տէր, յո՞վ եր-
թաս։ Պատասխանի ետ Յիսուս. Ուր
ես երթամ՝ դու ոչ կարես այժմ
գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես
37 զկնի իմ։ Ասէ ցնա Պետրոս. Տէր,
ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո.
արդէն զանձն իմ իսկ եդից ի վերայ
38 քո։ Պատասխանի ետ Յիսուս. Զա՞նձն
քո դիցես ի վերայ իմ. ամէն ամէն
ասեմ քեզ, չև իցէ հաւու խօսեալ՝
մինչ դու երիցս ուրասցիս զիս։

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Մի խռովեսցին սիրտք ձեր այլ
հաւատացէք յԱստուած, և յիս հա-

2 ւատացէք։ Ի տան հօր իմոյ օթևանք
բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ
էր իմ ձեզ, եթէ երթամ և պատ-
3 րաստեմ ձեզ տեղի. Եւ եթէ երթամ
և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ
գամ և առնում զձեզ առ իս, զի ուր
4 ես իցեմ և դուք անդ իցէք։ Եւ
ուր երթամն գիտիցէք, և զճանա-
5 պարհն գիտիցէք։ Ասէ ցնա Թովմաս.
Տէր, ոչ գիտեմք յո՞ երթաս, և զիա՞րդ
6 զճանապարհն կարասցուք գիտել։ Ասէ
ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհն և
ճշմարտութիւնն և կեանք. ոչ ո՛ք գայ
7 առ Հայր՝ եթէ ոչ ինև։ Եթէ զիս
գիտէիք, ապա և զՀայր իմ գիտէիք.
և այսուհետև գիտասջիք զնա և տե-
8 սէք զնա։ Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր,
9 ցո՛յց մեզ զՀայր, և շատ է մեզ։ Ասէ
ցնա Յիսուս. Այսչափ ժամանակս
ընդ ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս, Փի-
լիպպէ. որ ետես զիս՝ ետես զՀայրն.
և դու զիա՞րդ ասես, եթէ ցոյց մեզ
10 զՀայրն։ Ո՞չ հաւատաս, եթէ ես ի
Հայր և Հայր յիս է. զբանս՝ զոր ես
խօսիմ ընդ ձեզ, ո՛չ եթէ յանձնէ ինչ
խօսիմ, այլ Հայրն՝ որ յիս բնակեալ

11 է, նա գործէ զգործսն։ Հաւատա՛ք
ինձ, եթէ ես ի Հայր և Հայր յիս.
12 Ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն
հաւատացէք ինձ։ Ամէն ամէն ասեմ
ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործսն՝
զոր ես գործեմ, և նա գործեսցէ, և
մեծամեծս ես քան զնոյնս գործեսցէ.
13 զի ես առ Հայր երթամ, Եւ զոր ինչ
խնդրիցէք յանուն իմ, արարից զայն,
14 Զի փառաւորեսցի Հայր յորդի։
15 Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ
16 պահեսջիք։ Եւ ես աղաչեցից զՀայր,
և այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ
17 ձեզ բնակեսցի ի յաւիտեան, Զհոգին
ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ
կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա
և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճա-
նաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցի
18 և ընդ ձեզ եղիցի։ Ո՛չ թողից զձեզ
19 որբս, գամ առ ձեզ։ Փոքր մի ես՝
և աշխարհս ոչ ես տեսանէ զիս. բայց
դուք տեսանիցէք զիս, զի ես կեն-
դանի եմ և դուք կենդանի լինելոց
20 էք։ Յայնմ աւուր գիտասջիք դուք,
զի ես ի Հօր իմում և դուք յիս և
21 ես ի ձեզ։ Որ ունի զպատուիրանս

իմ և պահէ զնոսա, նա է՝ որ սիրէ
զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի ի
Հօրէ իմմէ, և ես սիրեցից զնա և
22 երևեցուցից նմա զիս։ Ասէ ցնա Յու-
դա՝ ո՛չ Իսկարիովտացին. Տէր, զի՞
եղև՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ և
23 ո՛չ աշխարհի։ Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ ցնա. Եթէ ոք սիրէ զիս՝
զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ
սիրեսցէ զնա, և առ նա եկեսցուք և
24 օթևանս առ նմա արասցուք։ Եւ որ
ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ո՛չ պահէ.
և բանն իմ, զոր լուէք՝ ոչ է իմ, այլ
Հօրն՝ որ առաքեացն զիս։
25 Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ
26 ձեզս եմ. Իսկ մխիթարիչն, Հոգին
սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն
իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն և
յիշեցուսցէ ձեզ զամենայն՝ որ ինչ
27 ասացի ձեզ։ Խաղաղութիւն թողում
ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ.
ո՛չ որպէս աշխարհս տայ՝ տամ ես
ձեզ։ Մի՛ խռովեսցին սիրտք ձեր և
28 մի՛ զանգիտեսցին։ Լուայք զի ասացի
ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ։
Եթէ սիրէիք զիս, ապա ուրախ լեալ

էր ձեր՝ եթէ ես առ Հայր երթամ,
29 զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ
այժմ ասացի ձեզ մինչչև եղեալ, զի
30 յորժամ լինիցի՝ հաւատասջիք։ Ոչ
ես այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ
իշխան աշխարհիս այսորիկ, և յիս
31 ինչ ոչ գտանէ. Այլ զի ծանիցէ աշ-
խարհ՝ եթէ սիրեմ զՀայր, և որպէս
պատուիրեաց ինձ Հայրն՝ այնպէս
առնեմ։ Օ՛ն, արիք, գնասցուք աստի։

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Ես եմ որթն ճշմարիտ, և Հայր
2 իմ մշակ է։ Ամենայն ուռ որ յիս է
և ոչ բերէ պտուղ՝ կտրէ զնա, և
ամենայն որ բերէ զպտուղ՝ սրբէ
զնա, զի առաւել ևս պտղաբեր լիցի։
3 Դուք արդէն իսկ սուրբ էք վասն
4 բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ. Կացէք
յիս, և ես ի ձեզ. որպէս ուռն ոչ
կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ,
եթէ չիցէ հաստատեալ յորթն, նոյն-
պէս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատ-
5 եալ իցէք։ Ես եմ որթ, և դուք ուռ.

որ հաստատեալ է յիս և ես ի նա,
նա բերէ պտուղ յոյժ, զի առանց իմ
6 ոչինչ կարէք առնել։ Եթէ ոք ոչ է
հաստատեալ յիս, ել նա արտաքս
իբրև ուռն և ցամաքեցաւ, և ժողո-
վեն զնա և ի հուր արկանեն, և այրի։
7 Եթէ կայցէք յիս և բանք իմ ի ձեզ
կայցեն, զոր ինչ կամիցիք՝ խնդրես-
8 ջիք, և լինիցի ձեզ։ Ցայսմիկ փա-
ռաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ
բերիցէք և եղիջիք իմ աշակերտք։
9 Որպէս սիրեաց զիս Հայրն իմ, և ես
սիրեցի զձեզ. հաստատո՛ւն կացէք ի
10 սէր իմ։ Եթէ պահիցէք զպատուի-
րանս իմ, կացջիք ի սէր իմ, որպէս
ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի
11 և կամ ի սէր նորա։ Զայս խօսեցայ
ընդ ձեզ, զի ուրախութիւնն իմ ի
ձեզ իցէ և ձեր ուրախութիւնն լցեալ
12 եղիցի։ Այս է պատուէր իմ, զի սի-
րեսջիք զմիմեանս, որպէս ես զձեզ
13 սիրեցի։ Մեծ ևս քան զայս սէր ոչ
ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի
14 վերայ բարեկամաց իւրոց։ Դուք բա-
րեկամք իմ էք, եթէ առնիցէք՝ զոր
15 ես պատուիրեմ ձեզ։ Ոչ ես կոչեմ

զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ
զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ
կոչեցի բարեկամս, զի զամենայն՝ զոր
լուայ ի Հօրէ իմմէ, ծանուցի ձեզ։
16 Ոչ եթէ դուք ընտրեցիք զիս, այլ ես
ընտրեցի զձեզ, և զձեզ՝ զի դուք
երթայցէք և պտղաբերք լինիցիք և
պտուղն ձեր կայցէ, և զոր ինչ խն-
դրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ տացէ
17 ձեզ։ Զայս պատուիրեմ ձեզ. զի սի-
18 րեսջիք զմիմեանս։ Եթէ աշխարհս
զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ
19 զիս ատեաց։ Եթէ յաշխարհէ աստի
էիք, աշխարհ զիւրն սիրէր արդեօք.
բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտ-
րեցի զձեզ յաշխարհէ, վասն այնո-
20 րիկ ատեայ զձեզ աշխարհ։ Յիշեցէք
զբանն՝ զոր ասացի ձեզ, թէ ոչ է
ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ զիս
հալածեցին, ապա և զձեզ հալածես-
ցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա
21 և զձերն պահեսցեն։ Այլ զնոյնս ա-
րասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ,
զի ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն
22 զիս։ Իմ եթէ չէր եկեալ և խօսե-
ցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր

նոցա. բայց արդ չիք ինչ պատճառ
23 վասն մեղաց իւրեանց։ Որ զիս ատեայ՝
24 և զՀայրն իմ ատեայ։ Եթէ զգործսն
չէր գործեալ ի նոսա, զոր ոչ այլ ոք
գործեաց, մեղ ինչ ոչ գոյր նոցա.
բայց արդ՝ տեսին և ատեցին և զիս
25 և զՀայր իմ։ Այլ զի լցցի բանն՝ որ
յօրէնս նոցա գրեալ է, թէ ատեցին
26 զիս տարապարտուց։ Բայց յորժամ
եկեսցէ մխիթարիչն, զոր ես առա-
քեցից ձեզ ի Հօրէ, զՀոգին ճշմար-
տութեան՝ որ ի Հօրէ ելանէ, նա
27 վկայեսցէ վասն իմ։ Եւ դուք վկայէք,
զի ի սկզբանէ ընդ իս էք։

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի մի
2 գայթակղեսջիք։ Ի ժողովրդոց իւր-
եանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ
ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ
զձեզ՝ համարիցի պաշտօն մատուցա-
3 նել Աստուծոյ։ Եւ զայն արասցեն
ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր
4 և ոչ զիս։ Այլ և զայս խօսեցայ ընդ

ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամանակն՝
5 յիշիցէք, թէ ես ասացի ձեզ։ Զայս
ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի
ընդ ձեզ էի։ Բայց արդ երթամ ես
առ առաքիչն իմ, և ոչ ոք ի ձէնջ
6 հարցանէ զիս, թէ յո՞ երթաս։ Այլ
զի զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմու-
7 թիւնն ելից զսիրտս ձեր։ Այլ ես
զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ՝
եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ եր-
թայց, մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ.
8 Ապա եթէ երթամ, առաքեցից զնա
առ ձեզ. և նա եկեալ յանդիմանեսցէ
զաշխարհ վասն մեղաց և վասն ար-
դարութեան և վասն դատաստանի։
9 Վասն մեղաց, զի ոչ հաւատան յիս.
10 Վասն արդարութեան, զի առ Հայր
իմ երթամ և ոչ ևս տեսանէք զիս.
11 Վասն դատաստանի, զի իշխան աշ-
խարհիս այսորիկ դատապարտեալ է։
12 Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ,
այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ.
13 Յորժամ եկեսցէ նա՝ Հոգին ճշմար-
տութեան, առաջնորդեսցէ ձեզ ամե-
նայն ճշմարտութեամբ. զի ոչ եթէ
յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ

խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ։
14 Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ
առնուցու և պատմեսցէ ձեզ.
15 Զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ
է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ
յիմմէ առնու և պատմեսցէ
16 ձեզ։ Փոքր մի՝ և ոչ ևս տեսանիցէք
զիս, և ապա սակաւիկ մի՝ և տեսա-
նիցէք զիս. և ես երթամ առ Հայր։
17 Ասէին ոմանք յաշակերտաց անտի
ցմիմեանս. Զի՞նչ է այս՝ զոր ասէ ցմեզ.
թէ փոքր մի և ոչ տեսանէք զիս, և
դարձեալ սակաւիկ մի և տեսանիցէք
18 զիս. և եթէ ես առ Հայր երթամ։ Եւ
ասէին. Զի՞նչ իցէ այն փոքր միւս
19 ևս. չգիտեմք զինչ խօսի։ Գիտաց
Յիսուս՝ եթէ կամէին զնա հարցա-
նել, և ասէ ցնոսա. Վասն այդորիկ
խնդրէք ընդ միմեանս, զի ասացի,
թէ փոքր մի և ո՛չ տեսանէք զիս, և
դարձեալ սակաւիկ միւս ևս և տե-
20 սանիցէք զիս։ Ամէն ամէն ասեմ
ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք,
և աշխարհս խնդասցէ. դուք տրտ-
մեսջիք, այլ տրտմութիւնն ձեր յու-
21 րախութիւն եղիցի։ Կին յորժամ

ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի
հասեալ է ժամ նորա. այլ յորժամ
ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղու-
թիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ
22 մարդ յաշխարհ: Եւ դուք այժմ
տրտմութիւն ունիք. այլ դարձեալ
տեսից զձեզ. և ուրախ լիցին սիրտք
ձեր. և զուրախութիւնն ձեր ոչ ոք
23 հանիցէ ի ձէնջ: Եւ յայնմ աւուր
զիս ինչ ոչ հարցանիցէք: Ամէն ամէն
ասեմ ձեզ, զի զոր ինչ խնդրիցէք ի
Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ:
24 Մինչև ցայժմ ոչինչ խնդրեցիք յա-
նուն իմ. խնդրեցէք, և առնուցուք,
զի ուրախութիւնն ձեր լցեալ եղիցի:
25 Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ.
եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս
առակօք խօսեցայց ընդ ձեզ, այլ
յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ:
26 Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն
իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղա-
27 չեցից զՀայր վասն ձեր. Զի ինքն
իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս
սիրեցէք և հաւատացիք, եթէ ես
28 յԱստուծոյ ելի: Ելի ի Հօրէ և եկի
յաշխարհ. դարձեալ թողում զաշ-

29 խարհ և երթամ առ Հայր: Ասեն
ցնա աշակերտքն. Ահա արդ յայտ-
նութեամբ խօսիս, և առակ և ոչ մի
30 ինչ ասես: Այժմիկ գիտեմք՝ եթէ
գիտես զամենայն և ոչինչ պիտոյ է՝
եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ
հաւատամք՝ եթէ յԱստուծոյ ելեր:
31 Պատասխանի ետ նոցա Յիսուս և
32 ասէ. Այժմ հաւատայք. Ահա եկեսցէ
ժամ և եկեալ իսկ է, զի ցրուեսջիք
յիւրաքանչիւր տեղիս և զիս միայն
թողուցուք. և չեմ միայն, զի Հայր
33 ընդ իս է: Զայս խօսեցայ ընդ ձեզ,
զի ընդ իս զխաղաղութիւն ունի-
ցիք: Յաշխարհի աստ նեղութիւն
ունիցիք. այլ քաջալերեցարուք, զի ես
յաղթեցի աշխարհի:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Զայս իբրև խօսեցաւ Յիսուս՝
ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ.
Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա
զՈրդի քո, զի և Որդի քո փառաւո-
2 րեսցէ զքեզ. Որպէս ետուր նմա

իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի
ամենայնի՝ զոր ետուր նմա, տացէ
3 զկեանսն յաւիտենականս։ Այս են
յաւիտենական կեանքն, զի ծանիցեն
զքեզ միայն ճշմարիտ Աստուած և
զոր առաքեցեր՝ զՅիսուս Քրիստոս։
4 Ես զքեզ փառաւորեցի յերկրի, ըզ-
գործն կատարեցի, զոր ետուր ցիս՝
5 զի արարից. Եւ այժմ փառաւորեա
զիս, Հայր, առ ի քէն փառօքն՝ զոր
ունէի յառաջ քան զլինելն աշխարհի
6 առ ի քէն։ Յայտնեցի զանուն քո
մարդկան, զորս ետուր ինձ յաշխար-
հէ. քո էին և ինձ ետուր զնոսա,
7 և զբանն քո պահեցին. Արդ գիտա-
ցին՝ եթէ զամենայն ինչ, զոր ետուր
8 ինձ՝ առ իքէն են. Զի զբանն՝ զոր
ետուր ինձ՝ ետու նոցա, և նոքա
ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ՝
թէ առ ի քէն ելի, և հաւատացին՝
9 եթէ դու առաքեցեր զիս։ Արդ՝ ես
վասն նոցա աղաչեմ. և ոչ վասն
աշխարհի աղաչեմ, այլ վասն նոցա՝
10 զորս ետուրն ինձ, զի քո են, Եւ որ
ինչ իմ է՝ ամենայն քո է, և որ ինչ
քո է՝ այն իմ է, և փառաւորեալ եմ

11 ի նոսա։ Եւ ես ոչ ես եմ յաշխարհի,
և նոքա յաշխարհի են, և ես առ քեզ
գամ. Հայր սուրբ, պահեա զնոսա
յանուն քո, որով ետուրն ինձ, զի
եղիցին մի՝ որպէս և մեք մի եմք։
12 Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ես
պահէի զնոսա յանուն քո՝ որով ե-
տուրն ինձ, և պահեցի, և ոչ ոք ի
նոցանէ կորեաւ, բայց որդին կորս-
13 տեան, զի գիրն լցցի։ Բայց արդ առ
քեզ գամ, և զայս խօսիմ յաշխարհի,
զի ունիցին զուրախութիւնն իմ լիով
14 յանձինս իւրեանց։ Ես ետու նոցա
զբանն քո, և աշխարհ ատեաց զնոսա,
զի չեն յաշխարհէ, որպէս և ես չեմ
15 յաշխարհէ։ Ոչ զայս աղաչեմ, զի
բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի
16 պահեսցես զնոսա ի չարէ։ Յաշխարհէ
աստի չեն, որպէս և ես չեմ յաշ-
17 խարհէ։ Սրբեա զնոսա ճշմար-
տութեամբ քով. զի քո բանդ ճշմար-
18 տութիւն է։ Որպէս զիս առաքեցեր
յաշխարհ, և ես առաքեցի զնոսա
19 յաշխարհ. Եւ ի վերայ նոցա ես սուրբ
առնեմ զանձն իմ, զի եղիցին և
20 նոքա սրբեալք ճշմարտութեամբ։ Այլ

ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ
և վասն ամենայն հաւատացելոց բա-
21 նիւն նոցա յիս, Զի ամենեքին մի
իցեն, որպէս դու Հայր յիս և ես ի
քեզ. զի և նոքա ի մեզ իցեն. զի և
աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու ա-
22 ռաքեցեր զիս: Եւ ես զփառսն, զոր
ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի՝
23 որպէս և մեք մի եմք. Ես ի նոսա և
դու յիս, զի եղիցին կատարեալք ի
մի, և գիտասցէ աշխարհ՝ եթէ դու
առաքեցեր զիս. և սիրեցի զնոսա՝
24 որպէս դու զիս սիրեցեր: Հայր, զորս
ետուրն ինձ, կամիմ, զի ուր եսն եմ
և նոքա իցեն ընդ իս, զի տեսանիցեն
զփառսն իմ, զոր ետուրն ցիս, զի
սիրեցեր զիս յառաջ քան զլինել
25 աշխարհի: Հայր արդար, և աշխարհ
զքեզ ոչ ծանեաւ, այլ ես զքեզ ծա-
նեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու
26 առաքեցեր զիս: Եւ ծանուցի նոցա
զանուն քո և ծանուցից, զի սէրն՝
զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ, և ես
ի նոսա:

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Զայս իբրև ասաց Յիսուս՝ ել ա-
շակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն
Կեդրոնի, ուր էր պարտէզ. յոր եմուտ
2 ինքն և աշակերտքն իւր: Գիտէր և
Յուդա, որ զնա մատնելոց էր՝ զտե-
ղին, զի բազում անգամ ժողովեալ
էր անդր Յիսուսի աշակերտօքն հան-
3 դերձ: Եւ Յուդայի առեալ ընդ իւր
զգունդն և ի քահանայապետից և ի
փարիսեցւոց սպասաւորս, դայ անդր
4 ջահիւք և լապտերօք և զինուք: Իսկ
Յիսուս իբրև ետես զայն ամենայն
եկեալ ի վերայ նորա՝ ել և ասէ
5 ցնոսա. Զո՞ խնդրէք: Պատասխանի
ետուն նմա. ԶՅիսուս Նազովրեցի:
Ասէ ցնոսա Յիսուս. Ե՛ս եմ: Կայր
ընդ նոսա և Յուդա՝ որ մատնէրն
6 զնա: Իբրև ասաց՝ թէ ես եմ, յետս
յետս չոգան և դարկան զգետնի:
7 Դարձեալ եհարց զնոսա. Զո՞ խնդրէք:
Եւ նոքա ասեն. ԶՅիսուս Նազով-
8 րեցի: Պատասխանի ետ նոցա՝ Յի-

սուս. Ասացի ձեզ՝ թէ ես եմ. արդ՝
եթէ զիս խնդրէք, թո՛յլ տուք դոցա
9 երթալ: Զի լցցի բանն՝ զոր ասաց,
թէ զորս ետուրն ցիս՝ ո՛չ կորուսից
10 ի նոցանէ և ո՛չ զոք: Իսկ Սիմովն
Պետրոս՝ քանզի ունէր սուր, ձգեաց
զնա և եհար զքահանայապետին
ծառայ և ի բա՛ց ա՛ռ զունկն նորա
զաջոյ. և էր անուն ծառային Մաղքոս:
11 Ասէ Յիսուս ցՊետրոս. Արկ զսուրդ
անդրէն ի պատեանս իւր. զբա-
ժակն, զոր ետ ինձ Հայր՝ ո՛չ ըմպի-
ցեմ զնա:
12 Իսկ զունդն և հազարապետն և
սպասաւորք հրէիցն կալան զՅիսուս
13 և կապեցին, Եւ ածին զնա նախ առ
Աննա որ էր աներ Կայիափայի, որ
քահանայապետ էր տարւոյն այնորիկ.
14 Այս այն Կայիափա էր՝ որ խրատ
ետ հրէից, եթէ լաւ է առն միում
մեռանել ի վերայ ժողովրդեանն:
15 Երթայր զհետ Յիսուսի Սիմովն
Պետրոս և միւս ևս աշակերտն: Եւ
աշակերտն այն քանզի ծանօթ էր
քահանայապետին՝ եմուտ ընդ Յի-
սուսի ի գաւիթ քահանայապետին,

16 Եւ Պետրոս կայր առ դրանն արտա-
քոյ: Ել միւս աշակերտն՝ որ էր ծանօթ
քահանայապետին և ասաց ցդռնա-
պանն, և եմոյծ ի ներքս զՊետրոս:
17 Ասէ աղջիկն որ դռնապանն էր
ցՊետրոս. Միթէ և դո՞ւ յաշակերտաց
առնն այնորիկ իցես: Եւ նա ասէ.
18 Ո՛չ եմ: Կային անդ ծառայքն և սպա-
սաւորք խարոյկ արկեալ, քանզի
ցուրտ էր, և ջեռնուին. կայր ընդ
19 նոսա և Պետրոս և ջեռնոյր: Եւ քա-
հանայապետն եհարց զՅիսուս վասն
աշակերտացն նորա և վասն վարդա-
20 պետութեան նորա: Պատասխանի ետ
նմա Յիսուս. Ես յայտնապէս խօսե-
ցայ յաշխարհի. ես յամենայն ժամ
ուսուցի ի ժողովրդեանն և ի տաճարի
անդ, ուր ամենայն հրեայք ժողովեալ
էին, և ի ծածուկ ինչ ո՛չ խօսեցայ:
21 Զի՞ հարցանես զիս. հա՛րց զայնոսիկ՝
որ լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ
նոսա. ահաւասիկ նոքա գիտեն՝ զինչ
22 ասացի ես: Իբրև նա զայն ասաց, մի
ոմն ի սպասաւորացն որ անդ կայր
ած ապտակ Յիսուսի և ասէ. Այդպէ՞ս
պատասխանի տաս քահանայապե-

23 տիդ։ Եւ Յիսուս ասէ ցնա. Եթէ
չար ինչ խօսեցայ՝ վկայեա վասն
չարին, իսկ եթէ բարի, ընդէ՞ր հար-
24 կանես զիս։ Եւ առաքեաց զնա Աննա
կապեալ առ Կայիափա քահանայապետ։
25 Եւ Սիմովն Պետրոս կայր անդ՝ և
ջեռնոյր։ Ասեն ցնա. Միթէ և դու
յաշակերտաց անտի նորա իցես։ Նա
26 ուրացաւ և ասէ, թէ չեմ։ Եւ ասէ
մի ոմն ի ծառայից քահանայապետին՝
ազգական այնորիկ, զորոյ զունկն
եհատ Պետրոս. Ո՞չ ես իսկ տեսի
զքեզ ի պարտիզի անդ ընդ նմա։
27 Դարձեալ ուրացաւ Պետրոս, և վաղ-
վաղակի հաւ խօսեցաւ։
28 **Ե**ւ ածեն զՅիսուս ի վանացն Կա-
յիափայ յապարանս դատաւորին, և
էր այգուց. և նոքա ոչ մտին յապա-
րանսն, զի մի պղծեսցին, այլ զի
29 ուտիցեն զզատիկն։ Ել առ նոսա
Պիղատոս արտաքս և ասէ. Զինչ
չարախօսութիւն մատուցանէք զա-
30 նէն զայնմանէ։ Պատասխանի ետուն
և ասեն ցնա. Եթէ չէր չարագործ
այրն այն, ապա ոչ մատնէաք զնա
31 քեզ։ Ասէ ցնոսա Պիղատոս. Առէք

դուք և ըստ ձերոց օրինացն դատե-
ցարուք։ Ասեն ցնա հրեայքն. Մեզ
32 ոչ է արժան սպանանել զոք։ Զի լցցի
բանն Յիսուսի, զոր ասաց, նշանա-
կեալ՝ թէ որով մահու մեռանելոց
33 իցէ։ Եմուտ միւսանգամ յապարանսն
Պիղատոս, կոչեաց զՅիսուս և ասէ
ցնա. Դու ես թագաւորն հրէից։
34 Պատասխանի ետ Յիսուս. Ի քէ՞ն ասես
զայդ. եթէ այլք ասացին քեզ զինէն։
35 Պատասխանի ետ Պիղատոս. Միթէ
և ես հրեա՞յ իցեմ. ազգն քո և քա-
հանայապետքն մատնեցին զքեզ ինձ.
36 զինչ գործ գործեալ է քո։ Պատաս-
խանի ետ Յիսուս. Իմ արքայութիւն
չէ՛ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ
աստի էր արքայութիւնն իմ, սպա-
սաւորքն իմ մարտնչէին արդեօք՝
զի մի մատնեցայց հրէից. բայց արդ
37 թագաւորութիւնն իմ չէ՛ աստի։ Ասէ
ցնա Պիղատոս. Ապա թէ այդպէս
իցէ՝ թագաւոր ոմն ես դու։ Պա-
տասխանի ետ Յիսուս. Դու ասես՝
թէ թագաւոր իցեմ։ Բայց ես յայդ
իսկ ծնեալ եմ և ի դոյն իսկ եկեալ
եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմար-

տութեանն. ամենայն՝ որ ի ճշմար-
տութենէ է, լսէ բարբառոյ իմոյ։
38 Ասէ ցնա Պիղատոս. Զինչ է ճշմար-
տութիւն։ Զայս իբրև ասաց, դար-
ձեալ ել առ Հրեայսն և ասէ ցնոսա.
Ես և ոչ մի ինչ պատճառս գտանեմ
39 ի նմա։ Բայց է ձեր սովորութիւն,
զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատ-
կիս. արդ կամի՞ք՝ զի արձակեցից
40 ձեզ զԹագաւորն Հրէից։ Աղաղակե-
ցին ամենեքեան և ասէին. Մի զդա,
այլ զԲարաբբա։ Եւ էր Բարաբբայն
այն աւազակ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս
2 և գան եհար։ Եւ զինուորացն արա-
րեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ
նորա, և զգեցուցին նմա հանդերձ
3 ծիրանի, Եւ գային առ նա և ասէին.
Ո՛ղջ եր, արքա՛յ Հրէից. և հանին
4 նմա ապտակս։ Ել դարձեալ Պիղատոս
արտաքս և ասէ ցնոսա. Ահա ածեմ
զնա արտաքս առ ձեզ, զի գիտաս-

ջիք թէ ես վնաս ինչ ի նմա ոչ
5 գտանեմ։ Ել Յիսուս արտաքս, և
ունէր պսակ ի փշոց և հանդերձ ծի-
րանի։ Եւ ասէ ցնոսա. Ահա այրդ
6 ցձեզ։ Իբրև տեսին զնա քահանայա-
պետքն և սպասաւորք, զաղաղակ
բարձին և ասեն. Ի խա՛չ հան, ի խա՛չ
հան զդա։ Ասէ ցնոսա Պիղատոս.
Առէք զդա ի ձեզ և ձեզէն հանէք ի
խաչ. զի ես ի դմա վնաս ինչ ոչ
7 գտանեմ։ Պատասխանի ետուն նմա
Հրեայքն. Մեք օրէնս ունիմք, և ըստ
օրինաց մերոց պարտի մեռանել, զի
զանձն իւր Որդի Աստուծոյ արար։
8 Իբրև լուաւ զբանս զայս Պիղատոս,
9 առաւել ևս երկեաւ։ Եմուտ դարձեալ
անդրէն յապարանսն և ասէ ցՅիսուս.
Ուստի՞ ես դու։ Եւ Յիսուս ոչ ետ
10 նմա պատասխանի։ Ասէ ցնա Պիղա-
տոս. Ընդ իս ո՞չ խօսիս. ո՞չ գիտես՝
եթէ իշխանութիւն ունիմ հանել
զքեզ ի խաչ և իշխանութիւն ունիմ
11 արձակել զքեզ։ Պատասխանի ետ
Յիսուս. Ո՛չ ունէիր դու իշխանու-
թիւն ի վերայ իմ և ոչ մի, եթէ ոչ
էր տուեալ քեզ ի վերուստ. վասն

այնորիկ որ մատնեացն զիս քեզ՝
12 նորա մեծ մեղք են։ Եւ յայնմանէ
Պիղատոս խնդրէր արձակել զնա. և
հրեայքն աղաղակէին և ասէին. Եթէ
զդա արձակես՝ չես բարեկամ կայ-
սեր, ամենայն ոք՝ որ թագաւոր կոչէ
13 զանձն իւր, հակառակ է կայսեր։ Իսկ
Պիղատոս իբրև լուաւ զբանս զայսո-
սիկ՝ ած զՅիսուս արտաքս, և նստաւ
ի վերայ բեմին, ի տեղւոջն՝ որ կոչէր
Քարայատակ, և եբրայեցերէն Կապ-
14 պաթա։ Էր ուրբաթն զատկի, և էր
ժամ իբրև վեցերորդ։ Եւ ասէ ցհր-
րեայսն. Ահա թագաւորդ ձեր ցձեզ։
15 Եւ նոքա աղաղակեցին. Բարձ ի մէնջ,
բարձ ի մէնջ, և հան զդա ի խաչ։
Ասէ ցնոսա Պիղատոս. Ես զթագա-
ւորդ ձեր ի խաչ հանիցեմ։ Պատաս-
խանի ետուն քահանայապետքն. Ձիք
16 մեր թագաւոր՝ բաց ի կայսերէ։ Յայն-
ժամ ետ զնա ի ձեռս նոցա. զի ի
խաչ ելանիցէ։
17 Եւ նոքա առեալ տանէին զնա, և
բարձեալ էր ինքնին զխաչափայտն
և ելանէր ի տեղին՝ որ անուանեալ
էր Գագաթան, և կոչէր եբրայեցե-

18 րէն Գողգոթա, Ուր և ի խաչ եւս հա-
նին զնա, և ընդ նմա երկուս ևս
այլս աստի և անտի, և ի միջի զՅի-
19 սուս։ Գրեաց և տախտակ Պիղատոս
և եդ ի վերայ խաչին. և էր գրեալ.
ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ
20 ՀՐԷԻՑ։ Զայն տախտակ ընթերցան
բազումք ի հրէից, զի մօտ էր ի
քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն
Յիսուս. և էր գրեալ Եբրայեցերէն,
21 Դաղմատերէն և Յունարէն։ Ասեն
ցՊիղատոս քահանայապետքն հրէից.
Մի գրեր՝ թագաւոր հրէից, այլ թէ
22 նա ասաց՝ թագաւոր եմ հրէից։ Պա-
տասխանի ետ Պիղատոս. Զոր ինչ
գրեցի՝ գրեցի։
23 Իսկ զինուորքն, իբրև հանին ի խաչ
զՅիսուս, առին զհանդերձս նորա, և
արարին չորս մասունս, իւրաքանչիւր
զինուորի մասն։ Իսկ զպատմուճանն՝
քանզի էր առանց կարանի, ի վերուստ
24 փորանկեալ ամենևին, Ասեն ցմի-
մեանս. Մի պատառեսցուք զայդ, այլ
արկցուք վիճակս ի վերայ դորա՝ ում
և իցէ։ Զի լցցի գիրն՝ որ ասէ. Բա-
ժանեցին զհանդերձս իմ յիւրեանս

և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս
արկին։ Զինուորքն զայս ինչ գոր-
25 ծեցին։ Եւ կային առ խաչին Յի-
սուսի մայրն նորա և քոյր մօր նորա,
Մարիամ Կղէովպայ, և Մարիամ
26 Մագդաղենացի։ Յիսուս իբրև ետես
զմայրն և զաշակերտն՝ զոր սիրէր,
զի կայր մօտ, ասէ ցմայրն, Կին դու,
27 ահա որդի քո։ Ապա ասէ ցաշակեր-
տըն. Ահա մայր քո։ Եւ յայնմ ժա-
մանակէ առ աշակերտն զնա առ իւր։
28 Յետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս,
եթէ ահա ամենայն ինչ կատարեալ
է, զի կատարեսցի գիրն, ասէ. Ծա-
29 րաւի եմ։ Եւ անդ կայր աման ինչ
լի քացախով. և նոցա սպունգ լցեալ
քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ եդեալ
զմշտկաւ զոպայի մատուցին ի բերան
30 նորա։ Իբրև առ Յիսուս զքացախն
հանդերձ լեղւովն՝ ասէ. Ամենայն ինչ
կատարեալ է, և խոնարհեցուցեալ
զգլուխն՝ աւանդեաց զոգին։
31 Իսկ հրեայքն՝ քանզի ուրբաթ էր,
զի մի՛ անդէն ի խաչին ագանիցին
մարմինքն մինչև ցշաբաթն, զի էր
օր մեծ շաբաթուն այնորիկ, աղա-

չեցին զՊիղատոս՝ զի խորտակեսցեն
32 զբարձս նոցա, և բարձցին։ Եկին
զինուորքն, և զառաջնոյն խորտակե-
ցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն՝ որ
33 ընդ նմա ի խաչն ելեալ էր. Բայց
իբրև եկին առ Յիսուս՝ և տեսին զի
այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին
34 զբարձս նորա, Այլ մի ոմն ի զինուո-
րացն տիգաւ խոցեաց զկողս նորա,
և ել վաղվաղակի արիւն և ջուր։
35 Եւ որ ետեսն՝ վկայեաց, և ճշմարիտ
է վկայութիւն նորա, և նա գիտէ՝
թէ ճշմարիտ ասէ, զի և դուք հա-
36 ւատասջիք։ Այս եղև՝ զի լցցի գիրն,
37 եթէ ոսկր նորա մի՛ փշրեսցի։ Եւ
դարձեալ միւս գիր ասէ, եթէ հա-
յեսցին ի նա՝ յոր խոցեցինն։
38 Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս
Յովսէփ՝ որ յԱրիմաթեայ էր, աշա-
կերտ Յիսուսի ի ծածուկ՝ վասն ահին
հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսու-
սի. և հրամայեաց Պիղատոս։ Եկին
39 և բարձին զնա։ Եկն և Նիկոդիմոս՝
որ եկեալն էր առ Յիսուս գիշերի
զառաջինն, և եբեր զմուռս խառն
ընդ հալուէս՝ իբրև լտերս հարիւր։

40 Առին զմարմինն Յիսուսի և պատե-
ցին կտաւովք՝ խնկովք հանդերձ,
41 որպէս օրէն էր հրէից պատել։ Եւ
էր ի տեղւոջն, յորում խաչեցաւ՝
պարտէզ, և ի պարտիզի անդ գերեզ-
ման նոր, յորում ոչ ոք երբէք էր
42 եդեալ. Անդ վասն ուրբաթուն հրէից,
զի մօտ էր գերեզմանն, եդին զՅի-
սուս։

ԳԼՈՒԽ Ի.

1 Եւ ի միաշաբաթւոջն Մարիամ
Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ
արշալոյսն ի գերեզման անդր, և տե-
սանէ զվէմն բարձեալ ի դրանց գե-
2 րեզմանին։ Ապա ընթանայ և գայ
առ Սիմոն Պետրոս և առ միւս ա-
շակերտն՝ զոր սիրէրն Յիսուս, և ասէ
ցնոսա. Բարձին զՏէրն ի գերեզմանէ
անտի, և ոչ գիտեմք՝ ուր եդին զնա։
3 Ել Պետրոս և միւս աշակերտն, և
4 գային ի գերեզմանն։ Ընթանային
երկոքեան ի միասին. և միւս աշա-
կերտն յառաջեաց ընթացաւ վաղա-

գոյն քան զՊետրոս և եկն նախ ի
5 գերեզմանն, Եւ խոնարհեալ տեսանէ՝
զի կային անդ կտաւքն, բայց ի ներքս
6 ոչ եմուտ։ Եկն և Սիմոն Պետրոս՝
որ գայրն զկնի նորա, և եմուտ ի
գերեզմանն, և տեսանէ զկտաւսն՝
7 զի կային անդ, Եւ վարշամակն, որ
էր ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն
կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն։
8 Յայնժամ եմուտ ի միւս աշակերտն,
որ եկեալ էր յառաջագոյն ի գերեզ-
9 մանն, ետես և հաւատաց. Զի չև և՛ս
գիտէին զգիրս, թէ պարտ է նմա ի
10 մեռելոց յառնել։ Զոգան դարձեալ
11 առ միմեանս աշակերտքն։ Բայց Մա-
րիամ կայր արտաքոյ գերեզմանին
և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհե-
12 ցաւ ի գերեզմանն, Եւ տեսանէ եր-
կուս հրեշտակս ի սպիտակս, զի
նստէին մի ի սնարից և մի յանոտից
13 ուր կայր մարմինն Յիսուսի։ Եւ նոքա
ասեն ցնա. Կին դու, զի՞ լաս։ Ասէ
ցնոսա. Զի բարձին զՏէրն իմ ի
գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ ուր
14 եդին զնա։ Զայս իբրև ասաց՝ դար-
ձաւ ի թիկունս կոյս, և տեսանէ

զՅիսուս զի կայր, և ոչ գիտէր թէ
15 Յիսուս իցէ։ Ասէ ցնա Յիսուս. Կին
դու, զի՞ լաս, զո՞ խնդրես։ Նմա այս-
պէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն
իցէ, ասէ ցնա. Տէր, եթէ դու բար-
ձեր զնա, ասա ինձ՝ ուր եդեր զնա,
16 զի ես առից զնա։ Ասէ ցնա Յիսուս.
Մարիամ. և նա դարձաւ և ասէ ցնա
եբրայեցերէն. Ռաբբունի, որ թարգ-
17 մանի վարդապետ։ Ասէ ցնա Յիսուս.
Մի մերձենար յիս, զի չեւ ելեալ
եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ
եղբարսն իմ և ասա ցնոսա. ելանեմ
ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր, և
18 Աստուած իմ և Աստուած ձեր։ Գայ
Մարիամ Մագդաղենացի և պատմէ
աշակերտացն, եթէ ետես նա զՏէր,
և զայս ինչ ասաց ցնա։
19 Եւ էր երեկոյ ի միաշաբաթւոջ
աւուրն, և դրօք փակելովք՝ ուր էին
աշակերտքն ժողովեալ վասն ահին
հրէից, եկն Յիսուս՝ և եկաց ի միջի
նոցա, և ասէ ցնոսա. Ողջո՜յն ընդ
20 ձեզ։ Իբրև զայս ասաց՝ եցոյց նոցա
զձեռսն և զկողս իւր. և խնդացին
21 աշակերտքն՝ իբրև տեսին զՏէրն։ Ասէ

ցնոսա դարձեալ. Ողջո՜յն ընդ ձեզ.
որպէս առաքեաց զիս Հայր իմ, և
22 ես առաքեմ զձեզ։ Եւ զայս իբրև
ասաց՝ փչեաց ի նոսա և ասէ. Առէք
23 Հոգի Սուրբ։ Եթէ ումեք թողուցուք
զմեղս՝ թողեալ լիցի նոցա. եթէ
զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։
24 Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն՝
անուանեալն երկուորեակ, ոչ էր ընդ
25 նոսա՝ յորժամ եկն Յիսուս։ Ասէին
ցնա այլ աշակերտքն, եթէ տեսաք
զՏէր. և նա ասէ ցնոսա. Եթէ ոչ
տեսից ի ձեռս նորա զնշան բեւեռացն
և արկից զմատունս իմ ի տեղի բեւե-
ռացն և մխեցից զձեռն իմ ի կողս
26 նորա՝ ոչ հաւատամ։ Եւ յետ ութ
աւուր դարձեալ էին ի ներքս աշա-
կերտքն, և Թովմաս ընդ նոսա։ Գայ
Յիսուս դրօքն փակելովք, և եկաց ի
27 մէջ և ասէ. Ողջո՜յն ընդ ձեզ։ Ապա
ասէ ցԹովմաս. Բե՛ր զմատունս քո՝
և ա՛րկ այսր և տե՛ս զձեռս իմ, և բե՛ր
զձեռն քո և մխեա՛ ի կողս իմ, և մի՛
լինիր անհաւատ, այլ հաւատացեալ։
28 Պատասխանի ետ Թովմաս և ասէ
29 ցնա. Տէր իմ և Աստուած իմ։ Ասէ ցնա

Յիսուս. Այդ զի տեսերդ զիս՝ և
հաւատացեր. երանի որոց ոչ իցէ
տեսեալ և հաւատասցեն։
30 Բազում և այլ նշանս արար Յի-
սուս առաջի աշակերտաց իւրոց, որ
31 ոչ է գրեալ ի գիրս յայսմիկ. Այլ այս
այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատայ-
ցէք եթէ Յիսուս Քրիստոս է Որդի
Աստուծոյ, և զի հաւատայցէք և
զկեանս յաւիտենականս ունիցիք
յանուն Նորա։

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց
զանձն իւր Յիսուս աշակերտացն
իւրոց առ ծովեզերբն Տիբերեայ. և
2 յայտնեաց այսպէս։ Էին ի միասին
Սիմովն Պետրոս և Թովմաս՝ անուան-
եալն երկուորեակ, և Նաթանայէլ՝
որ ի Կանայ Գալիլեացւոց, և որդիքն
Զեբեդեայ և այլք յաշակերտաց անտի
3 Նորա երկու։ Ասէ ցնոսա Սիմովն
Պետրոս. Երթամ ձուկն որսալ։ Ասեն
ցնա. Գամք և մեք ընդ քեզ։ Գնացին

և մտին ի նաւ, և յայնմ գիշերի
4 կալան և ոչինչ։ Իբրև այգ եղև՝
կայր Յիսուս յեզր ծովուն, բայց ոչ
ծանեան աշակերտքն՝ թէ Յիսուս
5 իցէ։ Ասէ ցնոսա Յիսուս. Մանկունք,
միթէ ունիք ինչ ուտելոյ։ Պատաս-
6 խանի ետուն և ասեն ցնա. Ո՛չ։ Ասէ
ցնոսա. արկէք յաջակողմն նաւին
զուռկանդ, և գտանիցէք։ Արկին, և
ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի
7 ձկանցն։ Ասէ աշակերտն այն, զոր
սիրէր Յիսուս՝ ցՊետրոս. Տէր է այն։
Սիմովն Պետրոս իբրև լուաւ՝ թէ Տէր
է, արկաւ զիւրև զսփածանելին,
քանզի մերկ էր, և ընկէց զինքն ի
8 ծովն. Եւ այլ աշակերտքն նաւաւն
իսկ կային, քանզի չէին հեռի ի ցա-
մաքէն, այլ իբրև երկերիւր կանգնաւ,
քարշէին զգործին հանդերձ ձկամբ-
9 քն։ Իբրև ելին ի ցամաք, տեսանեն
կրակետղ կայծականց և ձուկն մի ի
10 վերայ և հաց։ Ասէ ցնոսա Յիսուս.
Բերէք ի ձկանց այտի՝ զոր դուքդ
11 կալարուք այժմիկ։ Եմուտ Սիմովն
Պետրոս և ձգէր զգործին ի ցամաք
լի մեծամեծ ձկամբք՝ հարիւր յիսուն

և երեք. և այնչափ ինչ կայր և ոչ
12 պատառեցաւ գործին։ Ասէ ցնոսա
Յիսուս. Եկա՛յք ճաշակեցէք։ Եւ ոչ ոք
յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ
դու ո՞վ ես. զի գիտէին՝ թէ Տէրն է։
13 Գայ Յիսուս և առնու զհացն և տայ
14 նոցա, նոյնպէս և զձուկնն։ Զայս երիցս
անգամ երևեցաւ Յիսուս աշակեր-
տացն՝ յարուցեալ ի մեռելոց։
15 Եւ իբրև ճաշեցին, ասէ ցՍիմովն
Պետրոս Յիսուս. Սիմովն Յովհաննու,
սիրես զիս առաւել քան զգոսա։ Ասէ
ցնա. Այո՛, Տէր, և դու գիտես զի
սիրեմ զքեզ։ Ասէ ցնա. Արածեա՛
16 զգառինս իմ։ Դարձեալ ասէ ցնա.
Սիմովն Յովհաննու, սիրես զիս։ Ասէ
ցնա. Այո՛, Տէր, և դու գիտես՝ զի
սիրեմ զքեզ։ Ասէ ցնա. Արածեա՛
17 զոչխարս իմ։ Ասէ ցնա երիցս ան-
գամ. Սիմովն Յովհաննու, սիրես զիս։
Տրտմեցաւ Պետրոս՝ զի ասացն ցնա
երիցս, եթէ սիրես զիս, և ասէ ցնա.
Տէ՛ր, դու զամենայն գիտես, և դու
իսկ զամենայն ճանաչես և եթէ սի-
րեմ զքեզ։ Ասէ ցնա Յիսուս. Արա-
18 ծեա՛ զոչխարս իմ։ Ամէն ամէն ասեմ

քեզ, զի մինչ մանուկն էիր, անձամբ
անձին գօտի ածէիր և երթայիր յո՛
և կամէիր. և յորժամ ծերասցիս,
ձեռս ի վեր կալցես, և այլք ածցեն
քեզ գօտի և տարցին ուր ոչն կա-
19 միցիս։ Զայս ասաց նշանակել թէ
նշանակաւ՝ թէ որով մահու փառա2
ւոր առնիցէ զԱստուած. և զայս իբրև
20 ասաց ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ։ Դար-
ձաւ Պետրոս և տեսանէ զաշակերտն՝
զոր սիրէր Յիսուս, զի երթայր զկնի,
որ և անկաւ զլանջօքն նորա և ասէ.
Տէ՛ր, ո՞վ է որ մատնելոցն է զքեզ.
21 Զնա տեսեալ Պետրոսի՝ ասէ ցՅիսուս.
22 Տէ՛ր, իսկ սա՝ զի՞։ Ասէ ցնա Յիսուս.
Եթէ կամիմ զի կացցէ դա՝ մինչև
ես գամ, քեզ զի՞ փոյթ է. դու եկ
23 զկնի իմ։ Եւ ել բանս այս յեղբարս,
և համարեցան՝ թէ աշակերտն այն
ոչ մեռանիցի. և ոչ ասաց նմա Յի-
սուս՝ եթէ ոչ մեռանիցի, այլ թէ
կամիմ ես՝ թէ կացցէ դա մինչև ես
գամ։
24 Այս աշակերտ է՝ որ վկայէ վասն
այսոցիկ, որ և գրեացն իսկ զայսո-
սիկ, և գիտեմք՝ եթէ ճշմարիտ է

25 վկայութիւնն նորա։ Բայց է և այլ
ինչ բազում՝ զոր արար Յիսուս, զոր
եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կար-
ծեմ թէ և ոչ աշխարհս բաւական էր
տանել զգիրսն՝ որ թէ գրեալ էին։

Իրք կնոջն շնացելոյ

(ՅՈՎՀ. ԳԼ. Ը.)

1 Գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի
իւր։ Իսկ Յիսուս գնաց ի լեառն Ձի-
2 թենեաց։ Եւ ընդ առաւօտն դարձեալ
եկն ի տաճարն, և գայր առ նա
ամենայն ժողովուրդն, և նստեալ
3 ուսուցանէր զնոսա։ Ածին քահանա-
պետքն և փարիսեցիք կին մի ըմ-
բռնեալ ի շնութեան, և կացուցեալ
4 զնա առաջի՝ Ասեն ցնա. Վարդապետ,
կինս այս ըմբռնեալ ինքն յայտնա-
5 պէս շնացեալ է։ Եւ յօրէնսն Մովսէս
մեզ պատուիրեաց զայսպիսիս քար-
կոծել. արդ դու զինչ ասես վասն
6 դորա։ Զայս ասէին փորձելով զնա,
զի ունիցին ամբաստանութիւն զնը-

մանէ։ Իսկ Յիսուս ի խոնարհ հայե-
7 լով՝ գրէր մատամբն յերկրի։ Իսկ
իբրև առկպեցին հարցանելով ցնա,
հայեցեալ ի վեր՝ ասէ ցնոսա. Անմեղն
ի ձէնջ՝ նախ նա ընկեսցէ քար ի
8 վերայ դորա։ Եւ դարձեալ ի խոնարհ
9 հայելով՝ գրէր յերկրի։ Եւ լուեալ՝
ելանէին մի ըստ միոջէ, սկսեալ
յառաջնոցն մինչև ի վերջինսն, և
մնաց միայն Յիսուս, և կինն կայր
10 առաջի նորա։ Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ ցնա. Կին դու, ո՞ւր են.
11 ոչ ոք զքեզ դատապարտեաց։ Եւ ասէ.
Ո՛չ, Տէր։ Եւ ասէ Յիսուս. Եւ ոչ
ես դատապարտեմ զքեզ. երթ, յայսմ-
հետէ մի մեղանչեր։

ՀՀ Ազգային գրադարան
NL0159614